5197

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ. ԱՐԱՄ Հ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

ԵՐԱՉԱՀԱՆ

ԾՈՒԽ ԵՒ ԸՆԴՄԱՐՁԱԿ

ԱՌԱՋ ՀԱՅԱՐ ԵՐԱՉԱՆԵՐՈՒ ՀԵՏԵՐՑ ԵՒ ԸՆԴՄԱՐՁԱԿ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ԳՐՍԳԱԼԵՑԻ

Բրօֆ. ՄԵՍՐՈՊ Գ. ԺԱՍԿՈՒՇԵԱՆ

Ով թախանձակի
ԵՐԱՉԱՀԱՆ
ԼՈՒՍԱՒՈՐ ԵՐԿՉԱՒՈՐՈՒՆ
ԳԱՒԱՌԱՆԻՆԵՐԻՆ ՄԱՐՄԱՆԱԽՆԴԻՐ
ԵՒ ՎԽՏԱՆԳԱԿԱՆ

1932
ԹԻՖԼԻՍ – ՄԱՍԻՍՈՒՆԻՔ

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ ԱՐԱՄ Հ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

398.7
Ե-76

ԵՐԱՉԱՀԱՆ

ՃՈԽ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ

ՊԱՏՐԱՍՏԵՑ

Բրօճ. ՄԵՍՐՈՊ Գ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

Եպազահան, Լուսանի Եպազացոյց
- Գուշակութիւն Մարմնահատակի -
եւ Վիճակացոյց

1932
ՏՊԱԳՐ. ՔԱԳԻՈՐ ԽԱՉԻԿԵԱՆ
17, ռիւ տէ Ֆոմինիպէն, 17
ՄԱՐՍԷՅԼ

Երազահանի իրաւունքը վերապահուած է հրատարակիչին:



93050-ԱՀ

1057-

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ընդարձակ երազահան գրքեր չեն պակսիր մեր մէջ, մանաւանդ թէ առատութիւնը կայ անոնց, վիճակացոյցներով եւ բաղդացոյցներով լեցուն: Այդ կարգի բազմաթիւ հրատարակութիւններէ ետք թերեւս սոյն գործս նկատուի իբր աւելորդ աշխատութիւն՝ իր գոյութեան մասնաւոր իրաւունքը չունեցող: Այլ այդպէս չէ՛, ինչպէս պիտի հասկցուի անոր ոգւոյն եւ ուղղութեան եւ զինք բնորոշող յատկութեանց մասին մեր տալիք ծանօթութիւններէն:

Մեր սոյն երազահանը հրապարակի վրայ գտնուած «ընդարձակ երազահան»ներէն միակն է: Հօրեղբայրս (Բրօֆ. Մ. Գ. Ժամկոչեան) ուրթը տարի առաջ պատրաստեց սոյն գործը, եւ ինծի յանձնեց զայն՝ հրատարակելու, յարմար առեն մը:

Մեր երազահանը, հրապարակի վրայ գտնուած երազահաններուն կրկնակ ծաւալը ունենալով, կը խորհիմ թէ, ամէն երազատես գոհ պիտի մնայ գտնելով անոր մէջ իր երազի ճշգրիտ մեկնութիւնը:

Զանց ընելով մոգական եւ գնչուական կախարդութիւններ, որոնք զուրկ են իրականութենէ, սոյն գործին կը միացնեմ հայերէն գրաբար «երազահան»էն «Լուսնի երազացոյց»ը, գուշակութիւն «Մարմնավաղ»ը եւ հաւաքածոյ վիճակացոյց մը:

Արդ, հանրութեան կը թողում զայն քաջալերել՝ որ շատ խնամքով պատրաստուած է:

10 Յունվար 1932

Մարսէյլ

ԱԲԱՄ Հ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

Բրոֆ. ՄԵՍՐՈՊ Գ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

ԵՐԱՁԱՀԱՆ

ՀՈԽ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ

Քաղուած Աշխարհաբար, Գրաբար, եւ Անգլերէն հին եւ արդի փորձական եւ հոգեբանական գրուածքներէ. ընտիր յառաջաբաններ:

1924 Մայիս
Պէյրութ, Սուրիա

Պատրաստեց

ԲՐՕՖ. ՄԵՆՐՈՊ Գ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

ԵՐԿՈՒԹՈՒՆ

ՀԱԲՈՆՑԻՔ ԿԸ ՀԱՍԱՏԱՆ ԹԷ՝ ՎԱՏԱԳԱՍՈՐ Է ԱՐԹՆՑՆԵԼ ՔՆԱՑՈՂԸ, ՉԸԼԼԱՅ ՈՐ ՀՈԳԻՆ ԲԱՐԿԱՑԱԾ ԸԼԼԱՅ:

ԴԵՌ ՈՉ ՈՔ ԳԻՏԷ ԻՐԱԿԱՆԱՊԷՍ ԹԷ Ի՛ՆՉ ԿԸ ՊԱՏԱՀԻ, ԵՐԲ ՄԵՆՔ ԿԸ ՔՆԱՆԱՆՔ. ԲԺԻՇԿՆԵՐԸ Կ'ԸՍԵՆ ԹԷ ԱՐԵԱՆ ՏԸՆՇՈՒՄ Է, ԲԱՅՑ ՉԵՆ ԿՐՆԱՐ ԸՍԵԼ ԹԷ՝ ԻՆՉՈ՛Ւ ՏՆՇՄԱՆ ՊԱԿԱՍԸ ՔՈՒՆ ԿԸ ՊԱՏՃԱՌԷ ՄԵՐ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՅԴ ԽՈՐԻՐԴԱՒՈՐ ՀՐՋԱՆԻՆ ԳՐԵԹԷ ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ ՄԷԿ ԵՐԲՈՐԴ (1/3)Ը:

ՈՄԱՆՔ ԿՐՆԱՆ ԲԱՑԱՅԱՅՏՈՐԷՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒ ԻՐԵՆՑ ՔՆՈՅ ՄԷՋ, ԲԱՅՑ ՏՕՔ. ՄՕՏԱԼԻ ԿԸ ՀԱՍՏԱՏԷ ԹԷ՝ ԴՆԱԽՍՕՍ (ԴԷՄԸ ԽՍՕՍՈՂՆԵՐԸ ԵՒ ՔՆԱՇՐՋԻԿՆԵՐԸ ՉԵՆ ՅԻՇԵՐ ԹԷ՝ Ի՛ՆՉ ԸՐԱԾ ԵՆ ԱՐԹՆՆԱԼԷ ՅԵՏՈՅ: ՊՐԱԼԱՍ Կ'ԸՍԷ ԹԷ՝ ԵՕԹԸ ՏԱՐԵԿԱՆԷ ՎԱՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐՅՈՒՇԵՐ ԻՐԵՆՑ ԵՐԱԶՆԵՐԸ, ԹԷԵՒ ԱՄԷՆ ՄԷԿԸ, ՄԱՆՈՒԿՆԵՐ ԵՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԱՄԷՆՔՆ ԱԼ Կ'ԵՐԱԶԵՆ: ՉԱՓԱՀԱՍ ՄԱՐԴԻԿ ԳՐԵԹԷ 1/3Ը ՉԵՆ ԿՐՆԱՐ ՅԻՇԵԼ ԻՐԵՆՑ ԵՐԱԶՆԵՐԸ: ԲԱՅՑ ԹԷ ԵՐԱԶՆԵՐ ԱԼ ԿԱՆ, ԵՐԱԶՆԵՐ ԱԼ — ԱՄԷՆՔՆ ԱԼ ՎԱՏԱՀԵԼԻ ՉԵՆ, ԻԲՐ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ, ԱՆՇՈՒՇԱ, ՄԻԱԿ ԻՐԱՒ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆ Է ՈՐՈՇԵԼ ԹԷ՝ ԱՐԴԵՕՔ ԹՈՒ ԵՐԱԶԴ ԲԱՐԵԳՈՒՇԱԿ ՊԱՏԳԱՄ ՄԸՆ Է, ԵՒ ԿԱՄ ԹԷ ԿԸ ՎԵՐԱՔԵՐԻ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՄԱՐՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԻ ՄԸ ԵՒ ԲՈԼՈՐՈՎԻՆ ԱՆԻՄԱՍՏ Է:

ՎԱՏԱՀԵԼԻ ՉԷ ԿԱՆՈՒԼՍ ՏԵՍԱԾ ԱՅՍԻՆՔՆ Ո՛Չ ԱՅՆ ԵՐԱԶՈՐ ԿԸ ՊԱՏԱՀԻ ԱՆԿՈՂԻՆ ՄՈՆԵԼՈՒՍ ՊԷՍ, ՔԱՆԻ ՈՐ ՄԱՐՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԻՆՉՊԷՍ, ՄԱՐԱՍՈՂՈՒԹԻՒՆ, ՅԻՒՍՈՒԱԾԻ ՆՈՐՈԳՈՒՄ, ԵՒ ԱՅԼն, ՏԱԿԱՒԻՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ:

Անհանգիստ դիրք մը անկողնի մէջ, պիտի պատճառէ անարժէք երազ մը, սաւանները անմաքրութիւնը, կամ գիշերազգեստները աղտոտութիւնը, դէմքին վրայ ինկած լոյսի ճառագայթ մը, եւ շատ մը ուրիշ նմանօրինակ պարագաներ:

Պէտք է որ նաեւ յիշատակենք թէ սանկ անհեթեթ շահատակութիւններու խառնակոյտ մը նշանակութիւն չունի եւ թէ կարգ մը մարդիկ վստահելի չեն երբէք, բան մը իրենց խառնուածքին մէջ կ'արգիլէ ճշմարիտ երազ մը բացորոշելու զիրենք: Քաջածանօթ է թէ դիտելը կը տարբերի ըստ այն անձին որ կը դիմանայ անոնց — դէտ մը կ'երեւի անպէտ ըլլալ իր տիրոջ, միայն թէ պիտի պահէ կատարեալ ժամանակ երբ կը յոգնի ուրիշ մը: Նոյնն է պարագան երազներու մասին անոնց որոնց հետ դէտերը այսպէս փոփոխակն են, բոլորովին անօգուտ են ճշգրիտը գուշակելու:

Երազները երբ կը տեսնենք արշալոյսին մօտ, անոնք շատ արժէքաւոր են, իբր գուշակութիւն, եւ առհասարակ կ'ընդունուի թէ՝ երբ քնացողը կը պառկի աջ կողմին վրայ, երազը կը պատկանի անցեալին, բայց եթէ անի ձախ կողմին վրայ է, այն ատեն գուշակութիւնը կը վերաբերի ներկային եւ ապագային:

ՔԱՐՕԼ ԼԸՔ.

Թարգմանեց
Բրոֆ ՄԵՍՐՈՊ Դ. ԺԱՄԿՈՉԵԱՆ
10 Ապրիլ 1924
Պէյրութ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Երազները հազուագիւտօրէն յայտնութիւն են. անոնք առհասարակ բնականոն եւ հոգեբանական մեկնութիւն մը ունին: Բայց նկատի առնելու ենք եղանակին եւ օդին վիճակը, ցուրտ եւ խառնակ կամ պայծառ, չոր եւ խաղաղ ըլլալը. անցեալին հին պարագաներն ու եղելութիւնները եւ անհատական պարագաները: Այս հետեւեալ կէտերը նկատի առնելու ենք.

1° Ամէն երազատես իր տեսած երազներուն մեկնութիւն մը տալով, ըստ հաճոյս, կամ երազահանի մը երազին համար տուած գուշակութեան ու մեկնութեան վստահելով յաճախ ունենալու չէ վախ, յոյս, կասկած, ենթադրութիւն եւ հաւատք:

2° Կերակուրէն անմիջապէս ետք, ցորեկ կամ գիշեր ատեն, տեսնուած անկապ, անհեթեթ եւ կնճռոտ երազները առհասարակ անճիշդ են:

3° Քնանալու դիրքը — կռնակի վրայ, աջ կամ ձախ կողմի վրայ պառկելով — տեսնուած երազը նկատի առնելով, ըստ այնմ մեկնելու է զայն. եթէ Ֆիզիքական բնականոն դիրքի մէջ կը քնանանք:

4· Եղանակը, օդին վիճակը անտեսելու չէ երբէք:

5· Մեր ցերեկուան մտածումներն, մտահոգութիւնները, բաղձանքներն ու երկար ատենէ ի վեր անուցած զգացումները քննութեան առնելու է երազին հետ:

6· Մեր մտային, մարմնական ու հոգեկան վիճակը միշտ ուշագրաւ է:

7· Պառկած սենեակը, մահճակալը, սաւաններու մաքրութիւնը կ'ազդեն երազին վրայ:

8· Մարդաբանական ժամանակի նախահայրական, ցեղային, ազգային դէպքերը, պարապմունքները, մշակոյթը, տեղական դիրքը, եւն., կ'ունենան եւ ունեցեր են իրենց ազդեցութիւնները: Երազահաններու, եթէ ոչ ամենքին, շատերուն ալ տուած մեկնութիւնները այս կարգի հին ժամանակի եւ մշակոյթի փորձառութիւններէն քաղուած երազի մեկնութիւններ են:

9· Բնական վիճակի ու նպաստաւոր պայմաններու մէջ տեսնուած երազներէն ոմանք յայտնութիւններ են:

10· Երազատեսին սեռն ու տարիքը նկատելու է: կը տեսնենք թէ՝ ասի քարդ խնդիր մըն է. ամէն երազատես լրջօրէն խորհելու եւ քննելու է. ըստ այնմ ալ հետեւելու է երազահաններու մեկնութեանց ու գուշակութեանց:

ՄԵՍՐՈՊ Գ. ԹԱՄԿՈՉԵԱՆ.

ԵՐԱՁԻ ՄԷՋ ԱՌԱՐԿԱՆԵՐՈՒ ԳՈՅՆԸ

Սպիտակը — *Կը գուցնէ արդարութիւն, առողջութիւն, անմեղութիւն և բարութիւն։*

Դեղինը — *Սուգ, հիւանդութիւն և վտանգ կամ անյաջողութիւն և կորուստ։*

Նարնջագոյնը — *Հրաւէր, խնճոյք և հարսանիք։*

Կարմիրը — *Մրցում, շահ, յառաջդիմութիւն կամ բարկութիւն։*

Մանիշակագոյնը. — *Միրային թոյլ յարաբերութիւն։*

Կանաչը — *Բարի յոյս և մխիթարութիւն, առատութիւն, հարստութիւն և սէր կամ հակառակորդ մէկու մը հետ կռուիլ է։*

Կապոյտը — *Անմեղութիւն, յաջողում, երկարակեցութիւն կամ աւելորդութիւն։*

Թխագոյնը — *Կսկիծ, մեղք, տրտմութիւն եւ վիշտ։*

Սեւը — *Ցաւ, վտանգ և մահ կամ արագութիւն. ըստ ոմանց (*) ալ սիրոյ նշան է։*

Վարդագոյնը — *Միրահարութիւն՝ բայց ոչ տեւական։*

(*) Երալանիս մէջ շատ մը տեղեր « ոմանց » կամ « ոմանք կ'ըսեն թէ » յիշուած է. նոյնը կ'ըսէ նաեւ անգլիացի հեղինակը իր « Ներածութեան » մէջ. — « Կարգ մը մարդիկ վատահելի չեն, եւն. »։

Հարկ սեպեցինք, այն մարդոց ալ գոհացում տալու համար, երկու գուշակութիւններն ալ տալ, առ ի ճոխութիւն Երազահանիս։

ԵՐԱԶԱՀԱՆ

Ա.

Եթէ երազիդ մէջ տեսնես՝

Աբեթ — *Զարնելը՝ կոիւ է, զայն վառելը՝ վտանգ մըն է։*

Ագռաւ — *Աւուտուրդ պիտի զարգանայ, որուն պատճառաւ նախանձոտ թշնամիներ պիտի ունենաս ու դուն աճապարանաց մէջ պիտի իյնաս։ Եթէ կարողանաս բռնել ագռաւը՝ թշնամիներդ պիտի նուաճես։ Սեւ ագռաւը՝ չարագուշակ է։ Եթէ ագռաւը կարկաչէ՝ փաստաբանդ քեզ պիտի խաբէ։*

Ագարակ — *Յաջողութիւնդ տեւական պիտի ըլլայ։*

Ադամ եւ Եւա — *Զանազան զրախտի մէջ տեսնել, մանուկի ծնունդ և ընտանեկան հացկերոյթ է։*

Ադամանդ — *Կարողութիւնդ չարաչար կը գործածես և շատ կը ցանկաս. վերջդ երկիւղալի է։ Տե՛ս Գոհարներ։*

Ազատգեղ — *Տե՛ս Գալարեղիներ։*

Ազգական — *Գործդ և շահդ վտանգի մէջ են։*

Ազդագիր — *Փակցնելը՝ ապերախտութիւն է, կարդալը՝ յաղնութիւն, իսկ խլելը՝ ցաւ։*

Ազդ կարդալ — *Անհաշիւ մէկ գործէդ վնաս պիտի կրես։ Փակցնելը՝ կը ցուցնէ թէ քեզմէ ծանր գործ մը պիտի պահանջեն։*

Ազդր — *Սէր, երջանկութիւն ու ազգականի կարեւոր է։*

Ամար (Գշկուր) — *Հին կեանքէդ կը ձանձրանաս. մի՛ աճապարեր։*

Ամոռ — *Մեծութիւն և բարձրութիւն է կամ հեռաւոր*

պատիւ է սրուն կ'սպասէիր։ Աթոռ նստիլը՝ պատիւի բարձրացում է. բայց ոմանք կ'ըսեն թէ միշտ դժբաղդութիւն է։ Կոտրած աթոռ՝ սպառած բարիքդ ուրիշը կը վայելէ։ Ներկուած աթոռը, յուսերուդ փճացումն ու ցաւ է։ Եթէ աթոռը մէկու մը երկնցնես, հիւրեր պիտի ունենաս։

Ալեկոծում — Անյուսալի շահ մը պիտի ունենաս։ Տե՛ս Ծով։

Ալեւոր — Գործերուդ մէջ շատ պակասաւոր են։ Զինքը ալեւոր տեսնել՝ անակնկալ յաջողութիւն և շահ է։ Ալեւորութենէ զինքը մանուկ տեսնել՝ կեանքի յաւելում է։

Ալիւր — Խելօք գործով կարեւոր շահ մը պիտի ընես, կամ ուժ է. իսկ ամանով ալիւր տեսնել՝ հարստութիւն է։ Ալիւր թափել՝ չքաւորութեան և սովի նշան է։ Սեւ ալիւրը նշան է ընտանեկան ծանր ցաւի։ Եթէ մէկու մը ալիւր տաս, բաղդդ անոր տուած կ'ըլլաս։ Ալիւր շաղելը՝ հին, խառն խնդիրներու խառնուիլ և բարկութիւն է։

Ախոռ — Հիւրընկալութիւն է։ Տե՛ս Եգիպտացորեն։

Ախորժակ — Սաստիկ ախորժակ ունենալը բարեկամի մը կամ ազգականի մը հեռացումը կը նշանակէ։

Ածելի — Զարակամիդ յաղթելու միջոց մը պիտի գտնես, բայց զգուշութիւնդ շատ հարկաւոր է։

Ածիլել — Ազնտալի զգուշութիւն է։

Ածուխներ — Բարեյաջող է եթէ պարապ մառան և մարած կրակ չի տեսնես, որը կը ցուցնէ թէ գաղտնի թշնամի ունիս գործիդ մէջ։ Վառող կարմիր ածուխ տեսնել՝ նշան է յանդիմանութեան և ամօթի։ Մարած ածուխը՝ նախանձ կամ ժան կը ցուցնէ։

Ականջ — Աղջիկ զաւակի կնքման աւետիս է։ Բայց ոմանք կ'ըսեն թէ թշնամական դիտաւորութեամբ, գաղտնի քդ դուրս եկած է։ Կտրուած ականջը՝ կը ցուցնէ թէ, անոր տէրը քեզ պիտի մատնէ։ Ականջ մաքրելը ս և է տեղէ լուր ստանալ է։ Եթէ երազատեսին ականջը կը քա-

շեն կամ կ'ոլրեն, նշան է դէշ լուր ստանալու։ Եթէ ականջդ ճաստուած կամ պատռուած է կը նշանակէ որ բարեկամ մը քեզ պիտի նախատէ։ Իսկ եթէ ականջդ բաւական մը ճեղքուած ու բաժնուած է մարմինէդ՝ զգուշացի՛ր պիտի զըրկըլիս բարեկամներէդ։

Ակ ցրոյ — Տե՛ս ջուր։

Ակիշ — Յաջողութեան միջոց մը պիտի գտնես, բայց պատած արդիւնքդ չպիտի ունենաս։

Ակնաբոյժ — Բարեկամներդ կասկածելի են, մի՛ վըստահիր անոնց, եթէ ոչ յետոյ չարաչար պիտի ճնաստիս և զղջաս։

Ակնոց — Օտարականներ պիտի միջամտեն գործիդ, բայց ոմանք կ'ըսեն թէ երջանիկ ծերութիւն պիտի ունենաս։ Ակնոց գործածել՝ կասկածներդ դոյութիւն ունին. բայց անոնց գաղտնիքը չպիտի կրնաս գտնել. մի՛ յոգնիր։

Ակռայ — Տե՛ս Ատամն, ցաւ։

Աղ — Անհամաձայնութիւն է. գործդ ձախսդ կ'երթայ շատ տառապանքով. կամ մերձաւորներէդ մնաս պիտի կրես։ Սպիտակ աղը՝ դրամ և շահ է։ Սեւ աղը՝ վատ խօսք և արամութիւն է։ Կտրած աղը՝ կռիւդ պիտի խափանի։ Աղ ժողվել՝ վէճի և ցաւի խափանում է։ Աղ ջրի մէջ՝ թեթեւ ճնաստ մը պիտի հանդիպիս։ Եթէ տարածես աղը, ինչքերու կորուստ կ'ունենաս։ Աղի ձուկը՝ կսկիծ և հոգ է։

Աղալ — Ցորեն աղալը՝ առատութիւն. խահուէ աղալը՝ անգործութիւն, պղպեղ աղալը՝ մելամաղձութիւն և փոքնդ-ռալու փափաք։

Աղախին — Կինդ սկսած է քեզ ատել. դուն ալ կասկածելի ընթացք ունիս. բաժանանք է։

Աղաղակներ — Դժուարութիւն և տառապանք է. որոնցմէ պիտի ազատիս յաջող կերպով։ Տե՛ս Աղմուկ, Հառաչանք։

Աղաման — Կասկածելի լուր մը պիտի լսես։

Աղաջուր — Տե՛ս Մոլէք:

Աղաւնիներ — Շնորհք է։ Սիրոյ խնդրին կը վերաբերին ասոնք, շատ անսպասած է մեռած աղաւնի տեսնելը։ Բայց աղաւնիներ սերնդագործելը խաղաղ և երջանիկ կեանք է։ Ճերմակ աղաւնին շատ բարեբաղդ է. մանաւանդ երբ կը տեսնուի երամի մը մէջ. եթէ թռչունը յոգնած երեւի ճամբորդութենէ մը վերջ, սխուր լուր մը պիտի հասնի քեզ, մինչդեռ հաճելի ըլլալ կ'ենթադրես։ Պանդուխտի մը համար աղաւնի տեսնելը՝ ուրախալի լուրեր լսել է, իր հայրենի երկրէն։ Աղաւնի բռնել՝ խնամութիւն, սնուցանելը՝ ապերախտութիւն, իսկ դիտելը՝ քաղցր բարեկամութիւն կը ցուցընեն։ Աղաւնի թռցնել՝ յոյսերդ պարապ պիտի ելլեն։

Աղը — Շահ, առատութիւն և ժառանգութիւն է իր չափովը։ Մարդու աղբը՝ (քաք) ձրի վաստակ կը ցուցնէ։

Աղբիւր — Աղբիւրի մը պլուխ գտնուիլ լաւ նշան է. եթէ ջուրը մաքուր է իրաց շահ կը նշանակէ. բարիք և պատիւ պիտի վայելէս դրացիներէդ։ Սիրահարներուն համար մեծ երջանկութեան հանդիպիլ է ամուսնանալով իր սիրածին հետ։ Այս երազը ցոյց կ'ուտայ թէ սիրահարդ շատ բարի տրամադրութեան տէր անձ է և հաւատարիմ քեզի։ Բայց եթէ աղբիւրին ջուրը պղտոր է, նեղութիւններու և ցաւերու պիտի հանդիպիս, յուսախաբ ըլլալով, մանաւանդ առեւտուրի մէջ. սիրուհիդ քեզ պիտի խաբէ. իսկ եթէ ամուսնացած ես, ամուսնական կեանքդ դժբաղդ պիտի ըլլայ։ Աղբիւրէն ջուր առնել՝ վատ է կամ թեթեւ հիւանդութիւն է։ Աղբիւրէ ջուր խմել՝ շնորհք է, կամ ուրիշներու վաստակին կը մասնակցիս։ Աղբիւրը լուացուիլ՝ առողջութիւն և շահ է։

Աղեղ — Բամբասանք, աղմուկ և փնաս է։ Աղեղ ձգել՝ թշնամիի դատաստան է։

Աղեղնաւոր — Զինքն աղեղով տեսնել՝ թշնամիի չար լեզու է։

Աղէկատ — Ագքատութիւն է առանց ցաւի։ Տե՛ս Բոք:

Աղիս— Բարի վաստակ և յաջող շինութիւն է։ Աղիս շարելը՝ լաւ է. տան շինութիւն կը ցուցնէ։

Աղիք — Երկարատեւ դատաստան է. բայց անվնաս։

Աղկեր (Սառաէլա ծուկ) — Գլխացաւ գործեր ունենալու նշան է։ Որսացողը՝ կը հարստանայ. իսկ ուտողը՝ կծու խօսքեր կը լսէ։

Աղմուկ — Եթէ տարօրինակ ձայներ լսես, անակնկալ ու աննպաստ լուրեր պիտի առնես։ Եթէ աղմուկը արթնցնէ քեզ, գործերուդ մէջ յանկարծական փոփոխում մը պիտի տեսնես, լաւագոյն կամ վատթար ուստի զգոյշ եղիր գործերուդ մէջ։ Տե՛ս Աղաղակ, Հառաչանք։

Աղուէս— Ահ, երկիւղ և հիւանդութիւն է, բայց ոմանք կ'ըսեն թէ շատ միամիտ ես ուրիշներ քեզ կը խաբեն։ Աղուէս որսալ՝ թշնամիդ պիտի յաղթես և խայտառակես։ Աղուէսը եթէ քեզմէ փախչի, քու պարտականդ ալ քեզմէ պիտի փախչի։ Աղուէսի հետ խաղալ՝ ադուոր կնոջ մը հետ պիտի ծանօթանաս։ Աղուէսի հետ խօսիլ՝ չար գործ մը պիտի կատարես։ Աղուէսի հետ կռուիլ՝ շատ խորամանկ հակառակորդի մը հետ պիտի կռուիս, կամ առեւտուրի անյաջողութիւն է։

Աղջիկ — Լաւ է. նշան է խնդութեան. յոյսերդ պիտի իրականանան թէեւ ուշ։ Աղջիկ կաքաւող՝ գործի և ընտանեկան վտանգ է։ Աղջիկ համբուրել՝ յոյսերուդ իրականացումն է։ Աղջիկ իր ծոցը՝ խնդութիւն է։ Երախայ Աղջիկը՝ ցնորք և նեղութիւն է։ Փոքր աղջիկը՝ շահ, բարիք և որտի ուրախութեան նշան է։

Աղքատ — Այսօր կամ վաղը դրամ կը ստանաս։ Զինքը աղքատ տեսնել՝ բաղդի տիրանալ է։ Աղքատի բան տալ՝ կանխանշան գաղջութեան և պարզեւի որ Աստուծմէ քեզի պիտի կատարի և բարի վաստակ է։ Տե՛ս Մուրացկան։

Աղոթել — Ուրիշի հրամանին տակ պիտի ծառայես։

Աղօրիք — Պատիւ և ձրի վաստակ կ'ունենաս։ Տե՛ս Չաղացք։

Ամբաստանել — Մէկը ամբաստանել՝ խիստ փնասակար է. Աստուած օգնէ.

Ամբարանոց — Վտանգի մէջ պիտի իյնաս, բայց բարեկամի մը միջոցաւ պիտի ազատուիս։

Ամբոխ — Առհասարակ լաւ է, բացի անկէ որ շատեր կը կրեն սեւ կամ մութ գոյներ։

Ամուսին — Լաւ է ամուրի անձի համար, իսկ ամուսնացեալի համար վախու նշան է։ Դժբաղդութիւն է եթէ ամուրի կին մը երազէ թէ ամուսնացած է։ Տե՛ս Էրիկ:

Ամուսնանալ — Վատ երեւակայութիւն ունիս, որ յանդուգն խորհուրդներ կ՚ստեղծէ մտքիդ մէջ։ Եթէ հիւանդ մը երազէ թէ կ՚ամուսնանայ օրիորդի մը հետ, նշան է թէ շուտով պիտի մեռնի։

Ամուսնութիւն — Լաւ նշան է ամուսնական թափօրի հեռուէն, միայն թէ քուկդ չ՚ըլլայ։ Եթէ հրաւիրեալները հագած են սեւ կամ մութ գոյներ՝ չարագուշակ է։ Սիրուն կնոջ հետ ամուսնութիւն՝ հեշտասիրութիւն է· կուզի հետ ամուսնութիւն՝ անխուսափելի այէտներ են։ Իր մօր կամ քրոջ հետ ամուսնութիւն՝ ամօթալի բարքեր և գէշ ընթացք կը ցուցնէ։

Ամպ — Խառնակութիւն և պարապ յոյս է։ Ամպեր՝ բարգաւաճում կամ յաջողութիւն է ամէն պատահականութեան առեն։ Սեւ ամպերն են վիշտ և դժուարութիւն. ճերմակները՝ յաջողութիւն են. եթէ արագօրէն կ՚անցնին, փորձեր և դժուարութիւններ կը հետեւին յաջողութեան, եթէ բոլոր ամպերն ալ փարատին։ Երկրէն շատ վեր ամպերը ծովային ճամբորդութիւն են. ածրեւ գալը հիւանդութիւն և ապառողջութիւն է։ Ամպեր տեսնելը շողացող աստղերու հետ, պզտիկ և վաղանցուկ ուրախութիւն է. ամպերու գոռումը բարի չէ։ Ամպերու գետնէն բարձրանալը նշան է ճամբորդութեան կամ հեռաւորի մը գալստեան որ գայանիքներ ունեւան պիտի հանէ։ Կարմիր բոցավառ ամպերը նշան են գէշ հետեւանքի։ Տե՛ս Անձրեւ:

Ամսական — Խիստ վատ է։

Այգի — Օգտակար գործ մը պիտի ընես և պատիւ պիտի արժանանաս։ Այդի գնել՝ մութը մնացած խնդիր մը պիտի լուսաբանես։ Այդիին մէջ մտնել, պտտիլ՝ խիղճդ հանդարտեցնող ու գովասանքի արժանի բարիք մը կ՚ընես։

Այլանդակութիւն մարմնոյ վրայ — Տանդ մէջ վնասակար գործեր կը կատարուին։

Այծ (քոշ) — Թափառականութիւն բոլորովին անօգուտ։ Ճերմակ այծը՝ բարօրութիւն, բայց զոհողութիւն է. սեւը՝ թշուառութիւն, դատապարտութիւն է։ Այծերու հօտ՝ հարբստութեան պիտի տիրանաս և առատութեան մէջ պիտի ապրիս։

Այծտերեւ — Շատ բարեգուշակ է։

Այտեր — Յոյսիւն է։ Տե՛ս Գիրնալ, Նիհարնալ։

Այր (խոռոչ) — Շատ մը անձկութիւններ պիտի դան քեզի։

Այրել — Այրել կամ աւրել իւր տունն՝ չարագուշակ է. հնաս կը ցուցնէ։

Այրիլ — Ո և է մէկ տեղդ այրիլը՝ բաղդաւորութեան նշան է. ձեռքդ այրիլը կը ցուցնէ յաջողութիւն մը որ բարեկամներէ պիտի գայ. ոտքդ այրիլը կը ցուցնէ թէ յաջողութիւնը պիտի գայ՝ բուն իսկ քու ջանքերովդ։ Տե՛ս Վառիլ։

Այցելութիւն — Այցելել կամ այցելութիւն ընդունելն բարեբաղդ է. բայց եթէ բարեկամդ հագուած է սեւ, ճերմակ կամ մութ գոյն՝ գէշ հիւանդութեան մը ենթարկուիլդ կը ցուցնէ։ Իսկ սմանք կ՚ըսեն թէ այս երազը բամբասանք է ու վշտանալ կը ցուցնէ։

Անմնաս — Շատ բարեգուշակ է և կը ցուցնէ խաղաղութեան և երջանկութեան խոստում։ Տե՛ս Պտուղներ։

Անապատ — Ընկերներէդ շատ ձանձրացած ես, բայց մինչեւ մի որոշ ժամանակ ազատում չունիս։ Անապատի մէջ

(5197)

նատիլ՝ հիւանդութիւն կը ցուցնէ. ընակիլը՝ կը նշանակէ թէ օտարներ վաստակդ պիտի վայելեն։

Անաւակութիւն — Եթէ երազիդ մէջ անառակութիւն կ'ընես (անբարոյականութիւն), գիտցիր որ վէճերու պիտի հանդիպիս։ Իսկ եթէ դիմադրես այդ փորձութեան, ատի կ՝ նշանակէ որ թշնամիներուդ պիտի յաղթես։

Անասուն — Վաստակ և խնդութիւն է. գուշաւորի ծնիլը վատ է։ Տե՛ս կենդանիներ։

Անգթութիւն — Բարեկամէ մը խաբուելով պիտի զա, մանաս։

Անգդ — Ծնողքդ կամ ընտանիքէդ մէկը պիտի մեռնի։ Երկու անգդերու թռչիլը տեսնել՝ մօտաւոր ազգականիդ մէկը կը մեռնի։

Անդամալոյծ — Վիճակդ լաւանալու վրայ է։ Անդամալոյծ ըլլալ՝ մեծ անուն պիտի հանես ու պիտի խնդաս։

Անդաստան — Բարութեան ժամանակ և վաստակ է։

Անդունդ — Անդունդին մէջ նայիլը՝ կորուստ է դրամի կամ շատ տհաճելի հոգեր և կոիւներ պիտի ըլլան։ Եթէ անոր մէջ իյնաս՝ յուսալքումը պիտի ըլլայ կատարեալ և վերջնական։ Ուրիշ մը ձգելը՝ բարեկամի մը մատնութիւն է։ Տե՛ս խորխորատ։

Աներ — Թշնամիդ մէկը քեզի չարիք ընել պիտի ուզէ. բայց, ընդհակառակը, բարիք պիտի վայելես։ Աներդ մեռած տեսնել՝ գէշ նշան է։

Անթացուալ — Անթացուալով պտտիլ՝ չարագործի հանդիպիլ կը նշանակէ. կամ շղթայուիլ և բանտ նետուիլ է։ Եթէ երազատեսը ուրիշի մը համար կը տեսնէ՝ կը նշանակէ թէ այդ անձը պիտի հիւանդանայ կամ թափառական պիտի դառնայ։

Անիւ — Գործերդ սկսած են վտանգաւոր դառնալ։

Անծանօթ — Բոլորովին անծանօթ մարդոց հանդիպիլը լաւ է կամ վատ, դէմքին համաձայն. եթէ հաճոյատեսիլ և

զուարթ են, անսպասելի յաջողութիւն մը կրնաս յուսալ, իսկ եթէ անոնք տգեղ և տձեւ են, ատիկա կրնաս գուշակել տագնապ։ Երբ ինքզինքդ ապրելքի մը առջեւ կը գտնես, ոևէ գաղտնիքով մը, կը նշանակէ թէ տագնապի պիտի մատնուիս օտարականներէ. յաճախ իբր զեկոյց կը դրկուի քեզի։ Անծանօթի հետ խօսիլ՝ շահ և փառք է։

Անկողին — Կանոնաւոր կեանքի և լաւ շահու նշան է. երկայ ընթացքդ շարունակելով շատ լաւ պիտի կրնաս ապրիլ։ Անկողին շտկելը՝ նոր սիրահար մը ունենալ կը ցուցնէ և անոր մէջ գտնուիլը՝ կը ցուցնէ անակնկալ բարեկամի մը այցը։ Անկողինը երբ մաքուր և ճերմակ է, հոգէ ազատիլ է. ոմանք ամուսնութեան կը վերագրեն անկողնոյ մէջ պառկիլը. եթէ երազատեսը ամուրի է, ոմանք կը խորհին թէ ասի երազատեսին չի վերաբերիր, թերեւս անակնկալ ամուսնութիւն է բարեկամի մը որ ամուրի է։ Տակն ու վրայ եղած անկողինը՝ ուղեղի շփոթութիւն է։

Անկում — Ըմպելիքէ զգուշացիր, նոյնպէս վատ խօսելէ. դէշ ընթացք՝ յուսահատութիւն կը ցուցնէ։ Եթէ երազիդ մէջ ինկեր ես և կը փորձես ոտքի ելլել բայց չես յաջողիր, կը նշանակէ թէ անձի մը առջեւ ունեցած պատիւդ պիտի կորսնցնես և ի զուր պիտի աշխատիս ձեռք բերելու նորէն։

Անհաւատարմութիւն — Դիրքդ պիտի խախտի, զգո՛յշ։

Անհետացում — Հեշտասիրութիւն է։

Անմնասպանութիւն — Նեղ օրիդ օգնութիւն պիտի գըտնես, չի հաւնած բարեկամէդ։

Անձրեւ — Եթէ երազես կակուղ անձրեւ առանց փոթորիկի, կը նշանակէ մեծ յաջողութիւն ունենալդ մօտ ատենէն։ Հաւասարապէս բարեբաղդ է, եթէ գուն զերծ ես կամ կը դիտես պատուհանէն. բայց լաւ չէ հարկաւ եթէ սոսկ կը դիտես պատուհանէն և ատի կրնայ աղդել գործերուդ վրայ։ Շատ փոթորկալի անձրեւները դժբաղդ են. երկարատեւ, կարկտախառն և որոտագին անձրեւները կորուստ և

վտանգ կը ցուցնեն. բայց լաւ է փայլակը մ'իայն թէ չզարնէ քեզի։ Տե՛ս Ամպեր, ցեղատարափ։

Անմուխ կամ Աղի անմուխ — Անուշ և բարի խօսք է։

Անորոշ — Եթէ երազիդ մէջ տեսած առարկաներդ անորոշ են, զգուշանալու ես։

Անուշ — Ուտելը՝ ինչ որ ալ ըլլայ, արդար վաստակ և անուշ խօսակցութիւն է. բայց ոմանք կ'ըսեն թէ ուրախութիւն և ապա կոիւ է։

Անուշահոտ — Անուշահոտ իրքն լաւ է. արդար վաստակ կը ցուցնէ։ Տե՛ս Բոյր։

Անուշեղէն — Դրամագլուխի փճացում։

Անտառ — Սկսած ես տարբեր սեռէ հրապուրուիլ։ Անտառին մէջ ճամբան կորսնցնել՝ դրամական տագնապ պիտի ունենաս։ Եթէ կը պտտիս անտառի մը մէջ, նեղութիւններու մէջ պիտի իյնաս կնոջդ պարագաներուն կողմէ. իսկ եթէ երազատեսը կին է, ամուսինին մտրիկ բարեկամներուն կողմէ. եթէ երազատեսը դեռատի աղջիկ մըն է, հեռուէն դեղեցիկ տղայ մը պիտի դայ իր ձեռքը խնդրելու, բայց ծնողքէն պիտի մերժուի, ինչ որ վիշտ պիտի պատճառէ երազատես աղջկան։

Անցագիր — Վախ պիտի կրես, բայց առանց վնասի։

Անութենալ — Սկսած ես ուրիշներու վրայ նախանձիլ։ Անութի մնալ, եթէ ախորժակդ կ'ուզէ ուտել, աշխատանքդ պիտի արդիւնաւորի և բաղդաւորութեան նշան է։ Տե՛ս Ուտել։

Անօրէն — Անօրէն անձի հետ խօսիլ՝ սրբութեան նշան է։

Աշակերտ — Աշակերտ առնել՝ առատ վաստակ և խընդութիւն է։ Աշակերտ ըլլալ՝ թշնամիդ սկսած է զօրանալ։

Աշխատանոց — Երկարատեւ հիւանդութիւն է։

Աղուն — Քեզի յաջողութիւն կ'ուզայ ուրիշներու ջանքով։ Այս եղանակին մէջ ամուսնանալ երազելը, հարկաւ լաւ նշան է. զուարթ ընտանիք մը կազմել կը գուշակէ։

Աշտանակ — Փառասէր ես, ուստի չես յարգուիր։ Եթէ վրան մամ կամ ճրագ կայ վառուած, ընդհանուր զոհունակութիւն է. իսկ եթէ մարած է, տխրութիւն և հիւանդութիւն է։

Աշտարակ — Օգնութիւն չպիտի գտնես սպասած տեղէդ։

Աչք — Գանձի շատութիւն է, կամ սիրոյ զգացումդ պիտի շատնայ։ Շատ աչք տեսնել՝ հարստութիւն է։ Մեծ աչք ունենալ՝ կեանքի յաւելում է։ Աչք հանել՝ կինդ կամ որդիդ պիտի մեռնի կամ թէ սէրդ պիտի խափանի և վշտանայ։ Բայց ոմանք կ'ըսեն թէ աչք տեսնելը՝ կ'զգուշացնէ քեզ վնասուելէ, եթէ սիրահարի է՝ մրցորդ կը ցուցնէ. աչքին ինչ գոյն ունենալը կարեւոր չէ։ Աչքերդ կորսնցնելդ կը նշանակէ թէ խօսքդ պիտի դրժես և կամ դուն կամ զաւակներուդ մէկ մասը վտանգի մէջ են։ Կապոյտ աչքը՝ սիրուելու, սևը՝ կրքոտութեան և հաճոյակատարութեան, կանաչը՝ չար մարդու հետ ընկերութեան նշան են։

Ապակի — Ձախորդութիւն է. ազդեցութիւն ունի սիրային խնդիրներու մէջ։ Եթէ կը նայիս (պատուհանի) ապակիէն ակնկալէ դառն յուսահատութիւններ։ Ապակի ընդունիլ կամ նուէր առնելը կը նշանակէ անյաջողութիւն։

Ապաշխարել — Շրջահայեաց եղիր, որովհետեւ գործերդ լաւ չեն երթար։ Ապաշխարող տեսնել՝ իւր հաւատքն է։

Ապաստան — Գտնելը՝ մեծ վտանգ մը անցնել է. փընտրելը՝ գործի և շահու նուազութիւն է։

Ապարանջան — Պատիւ և աստիճան է, սակայն ներքնապէս մտատանջութիւն և յաճախ զղջում է։ Ապարանջան այր մարդուն՝ մեծութիւն է, կին մարդուն համար սակայն, եթէ այրի է, պիտի ամուսնայ, թէ այր ունի, զաւակ պիտի ունենայ։

Ապերախտութիւն — Մեծ պաշտպան մը պիտի ունենաս։

Ապուխտ — Ապուխտ կտրելը կը նշանակէ թէ մէկը պիտի մեռնի. ապուխտ կամ աղցած միս ուտելը՝ տրտունջներ լսելու նշան է։

Ապտակ — Ապտակ զարնել՝ ուժգ ու յոյսդ սկսած են պակսիլ. ապտակ ուտել՝ լաւ բարեկամներ ունիս, անհոգ եղիր։

Ապրիլ (ամիս) — Շատ հաճոյք և երջանկութիւն կը նշանակէ. եթէ օդը գէշ ըլլայ, նշան մըն է թէ դժբաղդ պիտի անցնի։

Ապրշում — Լաւ է. շահ և վաստակ կը ցուցնէ. համբերութեամբ շատ առաջ պիտի երթաս։ Տե՛ս Մետաքս։

Առատութիւն — Թշնամիներէ շրջապատուած ես. թշուառութիւն է։ Լիաբուռն ստանալը՝ նիւթական բարգաւաճում է, բայց կասկածելի ընտանեկան երջանկութեան։

Առաւօտ — Ջինջ արշալոյս տեսնելը՝ բարեդուշակ է. ամէնը լաւ պիտի վարուին քեզի հետ, բայց եթէ առաւօտը ամպոտ և մթագնած է, դուն պիտի ունենաս դժուար պայքար որը, հաւանաբար, յաղող չպիտի ըլլայ։

Առեւտուր — Ընել՝ շատեր սկսած են քեզ բամբասել։ Առեւտրական գործի մը վարիչ ըլլալ՝ շատ մը արդելքներու հանդիպիլ է։

Առիւծ — Միշտ բարեբաղդ նշան է և կը ցուցէ յաղողութիւն առանց քու կամքիդ։ Կամ տկար բարեկամ է որ սակայն պիտի օգնէ քեզի։ Վանդակուած առիւծներ, սակայն, կը նշանակեն հակառակութիւններ, միշտ ուշադրութեան առնուելիք։ Առիւծին մորթը նոյնպէս բարեբաղդ է։ Եթէ երկու առիւծ իրարու հետ կռուին, երկու թագաւոր կամ երկու մեծ մարդիկ իրարու հետ պիտի կռուին։ Եթէ առիւծի մը հետ կռուիս՝ մեծ մարդոց կամ հակառակորդի մը հետ պիտի կռուիս կամ մեծ փորձանքի մը մէջ պիտի իյնաս. իսկ եթէ առիւծին յաղթես, իրական կեանքիդ մէջ ալ այդպէս պիտի ըլլայ։ Առիւծին վրայ հեծնես՝ կամ նստած ըլլաս և քշես անսպասելի մեծութիւն է քեզի։ Առիւծէն եթէ փախչիս և առիւծը չգայ ետեւէդ՝ չար կամքէ մը զգուշացիր։ Եթէ առիւծը քենէ փախչի՝ մեծ գործէդ սակաւ շահ կը ցուցնէ։ Առիւծը

եթէ դէմդ ելլէ և սպառնայ քեզի, մեծ մարդոցմէ քեզի սպառնալիք կուգայ։ Առիւծը եթէ անամօթանայ՝ այն երկիրը թշնամի կը յարձակի։ Առիւծի միս ուտել՝ չար կամքէն բարի պիտի գայ կամ հաշտութիւն և անդորրութիւն է։ Եթէ առիւծը քովդ ըլլայ՝ հաւատարիմ բարեկամ և պաշտպան է։ Առիւծը եթէ ետեւէդ գայ՝ թակարդի մէջ պիտի իյնաս։ Եթէ մոնչէ՝ կատաղութիւն և մահուան երկիւղ է։ Ծատակ և կորիւններ (ձագ) ընտանեկան վախ կամ մեծերու բարեկամութիւն է։ Եթէ առիւծը քեզի զարնէ հարուստէ մը պիտի փնտռուիս։

Առնէտ — Կռիւ է, եթէ մէկը չսպաննես։

Առու — Փոքր բայց յարատեւ վաստակ է։ Առու տանդ մէջ՝ գանձ պիտի գտնես։

Առուակ — Ցատակը՝ խաղաղ կեանք. պղտոր կամ տըղմուտ՝ գէշ հիւանդութիւն է։

Առուոյտ — Օրհնութիւն և խաղաղ կեանք է։

Ասեղ — Աղջիկ զաւակ կ'ունենայ կինդ։ Ասեղ գործածել, նեղութիւն և տառապանք է։ Ասեղ մը խնդրել՝ կը գուշակէ մինակութիւն և աղքատութիւն։

Ասուպ — Տունդ կամ խանութդ գող պիտի մտնէ, կամ ազգականի մահ է։

Ասպանդակ — Ճամբորդութեան պատրաստութիւն է։

Ասպար — Երկրի տիրանալ է, կամ նեղութիւնդ սկսած է աւելնալ։ Ասպար կրելը՝ պատիւ ստանալ է։ Տե՛ս սպանան։

Աստղ — Փայլուն աստղը լաւ նշան է, մանաւանդ ճամբորդի համար. կը ցուցնէ բարի յոյս, մխիթարութիւն և բարի լուրեր։ Աստղ տանդ մէջ՝ տանդ բարիքը կ'աւելնայ կամ զաւակ է. եթէ պանդուխտ ես, խաղաղութեամբ տունդ կը վերադառնաս։ Աստղեր տեսնելը՝ ճանապարհ երթալ և շահիլ է կամ մեծ պատուոյ և վաստակի նշան է։ Աստղեր պարզ գիշերին դիտելը՝ առողջութիւն և բարեբաղդութիւն է։ Ճեղուող աստղը՝ ցաւ կը ցուցնէ։ Գիսաւոր աստղ՝ անուն պիտի շահիս, ո՛չ թէ դրամ։ Աստղ խաւարած՝ անյաջող

ճամբորդութիւն է։ Լուսնի ասաղը՝ խիստ շահ է։ Ասաղ եթէ թը-
ռի կամ երկինքէն իյնայ՝ յոյսերուդ փճացումն ու փնասի են-
թարկուիլ է կամ մերձաւորի մահ կը ցուցնէ։ Ասաղեր որ
երկինքէն կ'իյնան՝ մեծամեծաց մահ և կորուստ։

Ասղաբաշխ — Անմեղի մը դատապարտութիւն է։

ԱՍՏՈՒԱԾ — Բարեբաղդութիւն, առողջութիւն և երջան-
կութիւն է։ Աստուած պաշտել՝ սրտի և մտքի հանդստու-
թիւն է։ Աստուած տանդ մէջ տեսնել՝ նորոգութիւն է։ Աս-
տուծոյ ներկայութեանը գտնուիլ՝ չարիք գործելու վախ. ան-
մեղութեան երաշխ է։ Աստուծոյ թռչիլը տեսնել. երկարա-
կեցութեան նշան է։

Ատամն (Ակռայ) — Անկեղծ բարեկամներ ունիս։ Ատա-
մըն կտրող՝ (առաջին) իյնայ, սուգ հանդիպիլ կամ ճանա-
պարհ երթալ է։ Կտրող ատամն հանել, մահ է որդւոյդ կամ
կնոջդ։ Ներսի ատամը հանել՝ տրտմութիւն է կամ մահը
քեզի մօտեցեր է։ Վերի ատամը հանել՝ ազգականդ կը մեռ-
նի։ Մեծ ատամը հանել՝ մօտաւոր ազգականներէդ մին պի-
տի մեռնի։ Ատամները սրբել՝ ուրիշի վաստակ ուտել կը
ցուցնէ։ Սեւցած ատամները հիւանդութիւն կը ցուցնեն։ Եթէ
ատամներդ ամէնքն ալ իյնան, մեծ հարստութեան նշան է
կամ, ոմանց, խոշոր գանձ մը գտնել է։ Սուր ատամդ եթէ իյ-
նայ, թշնամիդ կը մեռնի։ Ատամ բուսնիլ՝ ընտանեկան աճ-
ման նշան է։ Ատամ փնտռուած և լինտէն ելած մօտիկ դրա-
ցիի մը մահը կը ցուցնէ։ Ատամն քաշել տալ՝ պզտիկ վիշտ
ունենալ է։ Ատամներդ թափած տեսնելդ սիրեցեալ մէկը
կորսնցնելու նշան է։

Ատելութիւն — Եթէ երազիդ մէջ մէկը քեզ կ'ատէ,
բարեկամ թէ թշնամի, զէշ նշան է. կը ցուցնէ բացուած
գատ,

Արագիլ — Մօտալուտ ազէտներ. ճամբու վրայ գողեր։
Բայց ոմանք կ'ըսեն թէ օրհնութիւն և բարի խնամութիւն
է. իսկ ամուսնացելոց՝ զաւակ։ Եթէ արագիլը գլխուդ վրայ
նստի, զաւակներ պիտի ունենաս։

Արգանակ — Տե՛ս Մսի ջուր:

Արդուկ — Նոր գործ մը պիտի ունենաս, քիչ մը ծանր։ Արդուկել՝ յամառ աշխատութեամբ, վերջապէս լաւ դիրք մը պիտի ունենաս։ Երբ կին մը կ'երազէ որ արդուկելու ատեն իր ձեռքերը կ'այրէ, ատի հիւանդութիւն կը ցուցնէ։ Եթէ խանձէ հանդերձները, տագնապներ ակնկալելու է սիրոյ մէջ։

Արեգակ — Նշան է բարեբաղդութեան ու պատիւի։ Արեւի փայլիլը նշան է վստահութեան, մեծ մարդոց միջեւ, որոնք պիտի կրնան իրագործել իրենց ծրագիրները։ Արեւնագոյնը՝ չարիք երկչին նկատմամբ. խաւարը՝ կանխանշան կարեւոր վնասի. պայծառ ծագիլը՝ մեծ յաջողութիւն և պատիւ է։ Արեգակ աստղի հետ՝ գործիդ մէջ ընկեր մը կ'ունենաս որով յաջողութիւնդ կատարեալ կ'ըլլայ։ Արեգակ իր ձեռքը, մեծութիւն է տեսնողին։ Արեգակ խաւարած՝ այն տեղին մեծին վնաս պիտի հասնի. արեգակ իր տեղը՝ թագաւորը մեծ է. արեգակը եթէ երկինքէն իյնայ, թագաւորներու մահ կը ցուցնէ. արեգակը մէկ կողմէն տեսնել՝ նեղութիւն է. արեգակ և լուսին իրարու ետեւէ վազվռտել տեսնելը՝ թագաւորներու մէջ կռիւ և հիւանդութիւն կը ցուցնէ։ Արեգակը և լուսինը ասդին անդին վազվռտելով տեսնել երկրի բաժանում է։ Արեգակ և լուսին նորիլը իր երկրէն բաժնուիլ է. արեւը արեւմուտքի մէջ տեսնել՝ կը ցուցնէ թէ լաւագոյն բաներն անցած են և դուն զգոյշ ըլլալու ես. եթէ արեգակը ամպերու մէջէն տեսնես՝ կը ցուցնէ թէ նեղութիւններն անցած են։ Իսկ եթէ ամպերու տակ կը տեսնես, վտանգի մը առջեւ կը գտնուիս։ Տե՛ս Լուսին:

Արիւն — Մօտաւորներուդ վնասը պիտի տեսնես։ Արիւն թափել՝ գաղտնիք մը պիտի յայտնուի, որով արիւն թափող անձը շատ պիտի վնասուի, մտահոգութիւն և զբաղումի կոչուած պիտի ունենայ։ Արիւն առնել՝ շնորհք է։ Եթէ ձեռքիդ վրայ արիւն տեսնես, անմիջական դժբաղդութիւն է. երազատեսը պէտք է զգոյշ ըլլայ օտարօտի բարեկամութենէն։

Արիւնոտած լաթեր տեսնել՝ թշնամիներ կը ներկայացնէ։ Կասկարմիր արիւն տեսնել՝ հարստանալու նշան է։

Արծաթ — Դժբաղդութիւն, նեղութիւն և ծանրութիւն է. կամ սիրային գործ մը, որուն վերջը կեռ կ'ըլլայ։ Արծաթ առնել՝ նեղութիւն և վնաս պիտի կրես. արծաթ տալ՝ չարիք մը պիտի գործես. սուրբ, յատակ արծաթը հաւատարմութիւն է. արծաթ հաւաքել յուսախաբութիւն և կորուստ կը նշանակէ. երազատեսը եթէ տեսնէ թէ արծաթ կ'ուտեն ուրիշներ, մեծ շահու նշան է. իսկ եթէ ինքը կ'ուտէ, ցաւոտի և բարկութեան նշան է։

Արծիւ — Հեռաւոր թշնամի է որ կ'սպառնայ քեզի. եթէ արծիւը բարձր տեղի մը վրայ նստած է, լաւ նշան է. եթէ մտադրած ես առուտուրի մը ձեռնարկել. լաւ նշան է նաեւ դինուորի մը համար որ պատերազմի կ'երթայ։ Արծիւը եթէ գլխուդ վրայ նստի, պիտի մեռնիս. արծիւ բռնել՝ մեծ փառքի տիրանալու նշան է. արծիւի վրայ նստիլ՝ մեծութեան տիրանալ է. արծիւի հետ կռուիլ կամ զարնել մեծ անձերու նախանձը շարժել և կռիւ կը գուշակէ. եթէ արծիւը քեզի զարնէ, հարուստէ մը պիտի վնասուիս կամ անպատշաճ լեզու գործածել է։ Բոյնէն ինկած արծիւի ձագերը՝ կորուստ կը ցուցնեն։ Եթէ արծիւը գլխուդ վրայ թեւերը տարածէ, ազդեցիկ մարդ մը քեզ պիտի պաշտպանէ. եթէ արծիւը ձախ կողմէդ թռչի, գլխուդ փորձանք մը կ'ուզայ. իսկ եթէ աջ կողմէդ թռչի, բաղդաւոր պիտի ըլլաս. եթէ արծիւը քեզ իր ճիրաններով բռնած օդը բարձրացնէ՝ մեծ հարստութեան տէր պիտի ըլլաս։

Արկղ — Լեցունը՝ թշուառութիւն է. իսկ պարապը՝ մրսխում։

Արհեստ — Տաժանելի աշխատութիւն է։

Արծագանգ — Ականջի հիւանդութեան նշան է։

Արծան — Նշան է երեխաներու և երազողի համակրանքին։

Արմաւ — Թշնամիդ հետ պիտի հաշտուիս. յաղթութիւն է։ Հաւաքուած արմաւներ տեսնել՝ օգտակար, գեղեցիկ և շնորհքով կնոջ մը հետ պիտի տեսնուիս։

Արմաւենի — Աղջիկ զաւակ պիտի ունենաս, թերեւս երկուորեակ. արմաւենի տեսնելը ամէն ծառէ աղէկ է։

Արմատ — Մ'աքրելը՝ ժուժկալութիւն է, իսկ ունենալը՝ խոր թշուառութիւն։

Արշաւ — Լաւ նշան է արշաւի մասնակցիլ եթէ հիւանդ չես։

Արջ — Անիրաւ, տգէտ, անգութ և հզօր թշնամի է. արուն զօրութիւնը հաստատութեան վրայ հիմնուած է. կամ ճարպիկ խաբեբայ մը քեզ բարեկամ ըրած ես, որմէ վեր եւ երբեմն կը կասկածիս, բայց նա քեզի պիտի մնասէ վերջապէս։ Եթէ արջէ հալածուիս՝ կռիւէ կ'ազատիս կամ չափահասի դէմ պատրաստ կեցիր։ Արջի հետ կռուիլ՝ թշնամիդ հետ պիտի վիճաբանիս։ Տե՛ս Գազան։

Արջառ — Լաւ նշան է, եթէ արջառները դէր են իսկ եթէ վտիտ ու նիհար են, նշան է յոգնութեան և նեղութեան. բայց շատ բարեբաղդ է կովը կթելու ատեն տեսնելը. արջառ պահել, աղքատին համար, շահու նշան է. իսկ հարուստին՝ կորուստ և շնորհքէ իյնալ է. հորթերը, գեռատի կենդանիներուն և մանուկներուն պէս, բարեբաղդ է։ Տե՛ս ցուլ, Հօտ։

Արտ — Լաւ ծանօթներ ունենալու նշան է, որոնց օգնութիւնը պիտի վայելես քիչ ատենէն. շատ լաւ է արտին մէջէն քալելը. եթէ նոր հերկուած է, ակնկալէ արագօրէն բաղդի մը տիրանալը նոյնպէս լաւ է մշտաղալարը։ Արտ ցանել՝ ժառանգ կամ զաւակ է, բայց ոչ լիովին վստահելի. արտ քաղել՝ ունեցածդ կորսնցնելու վտանգի մէջ ես. շատ գեղեցիկ նշան է արտեր և հաճոյալի տեղեր տեսնելը։ Եթէ ամուրի կամ այրի է երազատեսը, նշան է թէ պիտի ամուսնանալ գեղեցիկ կնոջ մը հետ։ Տե՛ս ցորեն։

Արտասուք — Ուրախանալու նշան է. արտասուել՝ մերձաւորներուդ մեռած պիտի ընես։ Տե՛ս Լալ։

Արտաքնոց — Կնոջ մը կողմէ խաբուելու մէջ են. արտաքնոց մտնել՝ խաղաղիլ կ՚ուզես։

Արտեւանունք — Երազե՛ս, եթէ արտեւանունքներդ աւելի մազոտ եղեր են, լաւ նշան է, մանաւանդ կիներու համար. իսկ եթէ երազես թէ արտեւանունքներդ աւելի հաստըցեր են և լայնցեր ու սովորականէն աւելի անշուք դարձեր են, յաջող ամուսնութիւն մը պիտի ընես։

Արտոյտ — Հարստութիւն է. իսկ մեռածը կամ խորոված՝ դէպք։

Արեւ — Արեւի խաւարումը տխուր կացութիւն է։ Տե՛ս Արեգակ։

Արքայախնձոր, Արքայակաղին — Տե՛ս Պտուղներ։

Արքայամօր — Դժուարութիւններ են. անշուշտ փուշերէն խաղող չի յուսացուիր։

Արքայութիւն — Ուրախութեան նշան է. եթէ ներս մտնես՝ ընտանեկան երջանկութիւն կ՚ունենաս։

Արօր — Եթէ կորուստ ունիս, պիտի գտնես. կամ շատ օգտակար գործ մը պիտի ձեռնարկես։ Իսկ եթէ ամուրի ես, լաւ ամուսնութիւն մը պիտի կնքես. միայն թէ ծրագիրդ յաջողցնելու համար բաւական ժամանակ պէտք է։

Աւազ — Թշնամի կը յարձակի երկրիդ վրայ։ Զինքը աւազ տեսնել՝ խլստ բարի և լաւ է։ Աւազի (մեծ անձնաւոր) հետ խօսիլ բարի շնորհք է. աւազի երթալը բարի է։

Աւազ — Դառն աշխատութիւն բայց լաւ շահ է։

Աւազակ — Փաստաբան կամ ուսուցիչ է. կռիւէ զգուշացիր։

Աւազան — Աւազան տեսնել կամ կոխել ձեռքը՝ նշան է թէ անծանօթէ մը շնորհք պիտի վայելես. պզտիկ աւազան տեսնելը՝ նշան է դեղեցիկ կնոջ մը սիրոյն. եթէ երազատեսը կին է, նշան է թէ սիրոյ բաղձանքները պիտի իրականանան։

Աւանդ — *Աւանդ առնել՝ կարեւոր կորուստ մը պիտի ընեմ. աւանդ տալ՝ սիրողէդ պիտի զրկուիս։*

Աւելներ, խոզանակներ — *Եթէ նոր են՝ կը ցուցնեն թէ արագ մը պիտի բարւոքի բաղդդ. եթէ ոչ, անոնք զեկուցում են։ Խոզանակ գործածելը՝ կը ցուցնէ դժբաղդութիւն, բուն իսկ քու սխալ վարմունքիդ համար. հանդերձի խոզանակը կը ցուցնէ թէ ծանր և դժուար գործ մը կայ առջեւդ. եթէ զբաղած ես լաթերդ խոզանակելով, ամէն բան լաւ պիտի երթայ։ Մէկ աւել տեսնել՝ կը ցուցնէ թէ, եթէ տկար ես, կը լաւանաս. թէ ոչ՝ վաստակ կամ ուրախութիւն և հաճոյք է։*

Աւետաբեր ըլլալ — *Շահ է, որով ուրիշներու նախանձը պիտի շարժես և չարիք պիտի զայ. զգո՛յշ եղիր։*

Աւետարան — *Արդար խնդրանք է։*

Աւերակ — *Շատ դժբաղդ նշան է այս երազը, եթէ անոնք հինաւուրց աւերակ կամ յիշատակարան են, ատի համբորդութիւն է։ Բայց ոմանք կ'ըսեն թէ աւերակ տեսնելը՝ զաղտնի հարստութեան սիրանալ է։*

Աւել — *Սենեակդ աւելելը՝ նշան է շահաւէտ գործերու. մառան աւելելը՝ գէշ գործերու նշան է. եթէ իյնաս, արունքդ կը կոտրի։* Տե՛ս Այրել։

Աքաղաղ — *Բարի լուր մը պիտի ստանաս այսօր. եթէ աքաղաղը խօսի՝ կնոջ մը հետ կռիւ և վէճ կ'ունենաս։ Կըրտած աքաղաղ՝ խաբուած սէր է։*

Աքսոր — *Մեծ դիրքի տէր պիտի ըլլաս քիչ ժամանակէն։*

Աքցան — *Ինչ բանի որ կ'սպասէիր պիտի կատարուի։*

Բ

Բաղ — Բամբասանք կամ անօգուտ խարտ մեծ անձնաւոր է։ Եթէ բաղը վազէ՝ տանդ Չ խռովութիւն կը ծագի. եթէ բաղը թեւերը թօթուէ, անստուգագիր նամակ մը կ՝ստանաս։ Եթէ աղջիկ մը բաղերու խումբի մը ջուրին վրայ լողալը տեսնէ՝ շուտով կ՝ամուսնանայ։

Բազէ — Մեծութեան և որդիի նշան է, կամ լաւ մարդու մը հետ պիտի տեսնուիս։

Բազմոց — Տեղէ մը ճաշի պիտի հրաւիրուիս։

Բազուկ (Բանջարեղէն) — Բարեկամէ մը հրաւէր պիտի ընդունիս և ուրախանաս։ Տե՛ս Բանջարեղէն։

Բազուկ (Թեւ) — Գաղտնի օգնութիւն պիտի գտնես. սեւ բազուկ՝ թշնամիդ գաղտնօրէն պիտի վնասէ քեզի։ Եթէ աջ բազուկդ կտրուած է, հայրդ կամ զաւակդ և կամ թէ եղբայրդ պիտի մեռնի։ Եթէ ձախ բազուկդ կտրուած է, մայրդ կամ դուստրդ և կամ թէ քոյրդ պիտի մեռնի։

Բաժնել (Ո եւ է բան) — Նամակ պիտի ստանաս։

Բալ — Կրքիդ չափազանցութեան նշան է. ոմանց, ուրախալի անակնկալի մը առջեւ գտնուելու նշան է։ Բալ ուտել՝ սիրտդ և միտքդ պիտի հանդարտին։ Տե՛ս Պտուղներ։

Բալուտ — Անսովոր լաւ նշան մը որ կը յայտնէ Ջուրթիւն և այժ. գեանէն ժողվելդ յաջողութիւն է ի գայ ջանքէ մը յետոյ. ծառէն թափելդ կը նշանակէ դրամ յաջողութիւն. բայց խակ վիճակի մէջ ցնցելդ կը նշանակէ ձեռքովդ պիտի աւրես յաջողութիւնդ անպէտ աճապարանքով։

Բակ — Շինել կամ հիմ դնել՝ բարութիւն է։

Բակլայ — Ծաղկածը՝ լիմարութիւն իսկ ուտելը՝ վիճաբանութիւն է։

Բաճ — Զար լեզու և խառնակութիւն է. պիտի մնասին քեզս, սակայն հետեւանքը լաւ պիտի ըլլայ։ Բահով փորելը դժուարութիւն է և լուսալքում. շատ դժուարաւ պիտի յաջողիս։

Բաղարջ. — Շահու կամ թոշակի յաւելում է։

Բաղդապնակ — Մերձաւորներէդ պիտի մնասուիս։

Բայլեղ — Թոռմած բաղեղը, կը նշանակէ աւրուած նշանախօսութիւն. տխրութիւն է։ Տե՛ս Դալարեղէններ։

Բաղնիք — Հոգ, վիշտ կամ թեթեւ հիւանդութիւն է։ Բաղնիք երթալ՝ մոլորութեան մէջ պիտի իյնաս։ Բաղնիք մտնել, տանդ մէջ աղմուկ և կռիւ պիտի ըլլայ (թերեւս ամուսնութեան ծրագիրներու մէջ)։ Բաղնեց դուրս գալ՝ հոգէ մը պիտի ազատիս։ Բաղնեց մէջ կենալ, մեծ նեղութիւն է։ Անջուր բաղնիքը՝ դժշխտութեան նշան է։ Բաղնեց մէջ լուացուիլը, չարչարանօք վաստակ է կամ հոգէ մը պիտի ազատիս։ Բաղնեց մէջ էշ տեսնել, անսպասելի լաւ հիւր մը պիտի ընդունիս։ Բաղնեց մէջ ձի տեսնել՝ տանդ մէջ խնդութիւն պիտի ըլլայ։ Տաք բաղնիքը՝ խըզուած ամուսնութիւն իսկ պաղը՝ ամէն տեսակ վշտակրութիւն կը ցուցնեն։ Տե՛ս ջուր, լոգնալ։

Բաճկոն — Նոր բաճկոն տեսնելը՝ լաւ նշան չէ իսկ աղտոտած և պատռտած տեսնելը, շատ մեծ դժբախտութիւն է. կիներուն համար երազել թէ իր բաճկոնը ինկած է՝ բարեհաճութիւն է։

Բամպակ — Դժուարին գործի մը ձեռնարկութիւն և յաջողութիւն կը ցուցնէ։ Սեւ բամպակը գործի անյաջողութեան նշան է։

Բան - իրք — Նոր իրք տեսնելը, օտարութեան երթալ է. եթէ քեզմէ բան մը ուզեն՝ քեզի պատիւ է։

Բանալիներ — Անակնկալ փոփոխութիւններ են, գլխաւորապէս դրամական խնդիրի մէջ. երազը նպաստաւոր է, եթէ տրձակ մը բանալիքի վրայ կը մտածես. բայց մէկը՝

կորուստ կը ցուցնէ, որը չպիտի գտնես։ Բանալիներ կորսընցնել՝ բարկութիւն կը նշանակէ։ Եթէ տանդ բանալին ժանդ կապեր է, կը նշանակէ թէ պանդխտութեան պիտի ելնես և ընտանիքդ հեռու պիտի ապրիս շատ տարիներ։ Բանալի մը եթէ ձեռքդ բռնած ես, բաղդաւոր առիթ կ'անցնի ձեռքդ. կղպանքին ծակին վրայ տեսնել՝ յառաջդիմութեան ճամբան կը բացուի առջեւդ։ Եթէ դրան մը առջեւ ինկած տեսնես՝ տունդ գող կը մտնէ։

Բանակ — Վիճակդ ծանր և սպառնական է։ Յաղթող բանակ՝ շուտով պիտի մնանկանաս։ Պարտուած բանակ՝ նեղութիւն և վիշտ է։

Բանջար — Մաքուրը՝ շահ կը գուշակէ. աղտոտը՝ զգուշանալու ես մեղքէ. աւրուածը լաւ չէ։ Տե՛ս Բազուկ։

Բանջարեղէն — Նշան է շահու և յարատեւութեան։ Տե՛ս Դալարեղէններ, կանաչեղէններ։

Բանտ — Զիրաւործուելիք ծրագիրներ են կամ ծանր մտածմունք ունիս, բայց մի վախնար. երկիւղալի ձերբակալութիւն։ Բանտի մէջ գտնուիլ՝ դրամական նեղութեան նշան է և կամ մեծ հոգ և սուգ է։ Անկէ ելլել՝ պարապ լոյս է։

Բանտարկեալ — Կնոջ մը դաւէն պիտի ապատիս։ Եթէ բանտարկեալներ մահուան պատիժին ենթարկուած են, կը նշանակէ քաջասրտութիւն և մաքուր խղճմտանք։

Բաշկուլ (Թռչուն) — աղէկ նշան է։

Բալապան — Ամբաստանութիւն է։

Բարբառոտի — Կամ ուրիշ սազերու ձայն լսես անուշ խօսք է։

Բարբարոս — Բարբարոսներու հետ նստիլ՝ նեղութիւն է։

Բարեկամ (Նոր) — Մտադրութիւնդ լաւ չէ, ետ կեցիր։ Բարեկամ տանդ մէջ՝ կոյր վստահութենէդ պիտի տուժես։ Բարեկամի հետ խօսիլ՝ ամուսնական բաժանում է։ Տե՛ս Ցանօթներ։

Բարեւել — Ծանօթ մը բարեւել՝ վոքը կոիւ մը պիտի ընեռ։ Օտար մը բարեւել՝ նոր բան մը պիտի սովրիս։

Բարկութիւն — Ձնշուած վիշտեր են։ Եթէ երագիդ մէջ կը բարկանաս և դրդուիս՝ կը նշանակէ որ շատ թշնամիներ ունիս։

Բարձ — Վերջին օրերուդ մէջ երջանիկ պիտի ըլլաս։

Բարձր տեղ պտտիլ — Ծիծաղելի վիճակ պիտի ունենաս. իսկ քալելը՝ մեծութիւն գտնել է. նստիլը՝ մեծերէ պատիւ ստանալ, իյնալը՝ վնասի մէջ կամ փառքէդ պիտի իյնաս կամ շահդ և պատիւդ պիտի կորսնցնես։

Բեմ — Շարունակական նեղութիւն և տանջանք է. հոն բարձրանալը՝ վաղանցիկ մեծութիւն։ Անոր վրայ քարոզելը՝ յոգնութիւն է։

Բեռ — Վնասակար հեւաքրքրութիւն ունիս։ Կրելը բարոյական կապէ ազատիլ է. բեռցնելը՝ ուրիշի գործէն օգտըւիլ է։ Բեռցնել ինքզինքը ուրիշի մը վրայ՝ շահ և բարի է. իսկ իրնալը ուրիշի վրայէն՝ մահուան վնաս է։ Բեռան տակ կքիլ՝ տհաճելի հոգեր, շատ դժուարութիւններ կան ճամբուդ վրայ, կորսնցնելը՝ ձախորդ շահադիտութիւն է։ Տե՛ս Շալկել։

Բերան — Օգնութիւն է. բերնի ցամքիլը կը ցուցնէ վատակի պակասում։ Եթէ բերանդ սովորականէն աւելի լայնցեր է, նշան է թէ ընտանիքդ պիտի բազմանայ և հարստութեան ու ճոխութեան մէջ պիտի ապրիս։

Բերդ — Թշնամիներուդ դէմ պիտի արդարանաս կամ ապահովութիւն պիտի գտնես. բայց փրկութիւնդ միշտ կասկածելի է. ոմանց նպատակի չհասնիլ է։ Բերդ մըտնել՝ ամրութիւն եւ պարիսպ է կամ թշնանիներդ պիտի յաղթահարես. կործանելը՝ նեղութիւնէդ կամ պարտքէդ պիտի ազատիս։

Բեւեկն (թէժ) — Տեսնել կամ ժողվել՝ մեծ բարութիւն է։

Բեւեռ (Գամ) — Գաղտնի հակառակութիւն կայ քեզի դէմ. ժողվելը՝ չար լեզուներ են կամ վէճի և կռիւի պիտի բռնուիս և իրաւունքիդ տէր պիտի ըլլաս։ Բեւեռ քակել, հանել՝ դրպարտութիւնէ մը կ'ազատիս։ Տե՛ս Գամ։

Բեթամատ — Եթէ կը ցաւի կամ քերթուած է, ակնկալէ դրամի կորուստ և բարեկամներէ յուսալքում։

Բժիշկ — Հարցաքննութեան և դատի նշան է կամ խնդրուած խորհուրդ։ Բժիշկին առանձին աշխատութեան մէջ տեսնել՝ լաւ նշան է և ոչ թէ կ'սպասէ գործով քեզ ընդունելու։ Տե՛ս Դեղեր։

Բիր (Հաստ գաւազան) — Տեսնել կամ առնել՝ օգնական եղբայր կամ որդի է. բիր կոտրել՝ եղբայրդ կամ ազգականդ պիտի մեռնի կամ մերձաւորիդ վտանգ պիտի հասնի։ Տե՛ս Գաւազան։

Բլուր — Վտանգէ յետոյ, երկրի շինութեան ու խաղաղութեան նշան է կամ փոքր յաղթութիւն և սակաւ շահ է։ Եթէ բարձր բլուրներու վրայէն կը ճամբորդես, մեծ դժուարութեամբ և ճամբադ կորսնցուցեր ես, կը նշանակէ որ աջակցութիւն պիտի գտնես և դժուարութեան մէջ լաւ խորհուրդներ պիտի լսես։ Տե՛ս Լեռ։

Բղուկ (ցունկ) — Նոր ստացուածքի տէր պիտի ըլլաս։

Բնակարան — Տուն չկարենալ գտնելը՝ կը ցուցնէ թէ վստահութիւնդ կորսնցուցած ես բարեկամներուդ մասին։ Տե՛ս նաև ցուն։

Բոզ — Հացդ ուտողները պիտի շատնան։ Բոզ կնոջ հետ խաղալ՝ շահ է։ Բոզ կնոջ հետ խօսիլը՝ փառք, վաստակ և պատիւ է։ Բոզ կնոջ հետ ննջելը՝ վնասակար է։

Բոկոտն — Զինքը բոպիկ տեսնել՝ վնաս պիտի դայ քեզի. բոկոտն մնալ՝ նեղութենէ պիտի ազատիս. բոկոտն քալել՝ անմիջական շահաւոր ճամբայ է. բոկոտն թափառիլդ՝ կը նշանակէ թէ չարիքը շրջապատած է ճիդերդ։

Բողկ — Կսկիծ և անհանգստութիւն է, կամ անհաճոյ

ժէկու մը հետ յարաբերութեան պիտի մտնեաւ։ Բողկ ուտել՝ առողջութիւն և շահ է։

Բոյն — Բաղցը գուշակութիւն և լաւ բաղդ է. թռչնոց բոյն տեսնելը՝ վաղանցուկ ուրախութիւն է. գտնելը ձագուկներով միասին՝ յաջողութիւն կամ հարստութիւն կը գուշակէ քեզի համար։ Պարապ բոյնը՝ տխրութիւն և յուսախաբութիւն է։ Զափահաս մարդոց համար յաճախ ընակարանի փոփոխութիւն է։

Բոյս — Գործդ աւելի պիտի յաջողի։

Բոյր — Անուշահոտութիւն զգծածելը՝ լաւ նշան է, պայմանաւ որ շիշը չկոտրեա կամ չթափեա բոյրը։ Տե՛ս Ա-ուշաիոտ։

Բոշա — Գնչուն որ բաղդ կը նայի, նշան է դժբաղդ ամուսնութեան։ Տե՛ս Գնչու։

Բոր — Տանդ կամ խանութիդ մէջ գող կայ։

Բորակ (Աղբորակ) — Տեսնել կամ ժողվել՝ կսկիծ է. կամ արդիլուած գործ մը պիտի ընեա և բաւական վնաս պիտի կրեա։

Բորոտ — Հեռաւորդ կամ անոր լուրը պիտի գայ. զինքը բորոտ տեսնել՝ գանձդ պիտի շատնայ կամ մեծութիւն և շահ է։

Բորոտութիւն — Նուաստութեամբ ստացուած շահ է։

Բոց — Ձախորդութիւնդ սկսած է վերջանալ. ոմանց մահ կամ սով կը ցուցնէ, սխրութիւն։ Բոցերու մէջ ինկնալ՝ ցաւալի դէպքի պատահում է։

Բու — Նեղութիւն է անծանօթի մը կողմէ, կամ դըժբաղդ և ցաւալի լուր է։

Բուստ — Գունաւորը՝ սնայուն բարեկամութեան, բայց ճերմակը նշան է անհաւատարմութեան և անցնող սիրոյ։

Բուրաստան — Բարիք է իդական սեռէ։

Բուրդ — Սպիտակը՝ տեսնել, գնել կամ առնել, մեծ ուրախութիւն և առողջութիւն կամ արդար վաստակ և շահ է։

Սև բուրդը՝ տրտմութիւն և դէշ լուր է։ Միւս գոյները տեսնել՝ տեւական վաստակ է։

Բուրվառ — Շողոքորդ և կեղծաւոր մարդոց հետ գործ կ'ունենաս. առնելը կամ շարժելը՝ բարի չէ, կռիւի նշան է, կամ դէշ համբաւ և տրտմութիւն է։ Ոսկի բուրվառը՝ մեծ մարդու այցելութեան նշան է։

Բուք (Ձիւն, կարկուտ) — Իյնալը լաւ նշան չէ. նշան է գոյժի մը որ երկիրդ կը հասնի։

Բռնաւոր — Օգնող ձեռք և բարեկամ է։

Բրաբիոն (քոյս) — Հարսնցու աղջիկ է։

Բրել — Գետինը կամ արտը փորել՝ մեծ բարութիւն և շահ է կամ ապագայ լաւ վաստակի նշան է։

Բրինձ — Վրադ նախանձողներ կան բայց ոչ մէկ կերպով պիտի կրնան քեզ վնասել. խաշած բրինձ՝ շահ և բարի է կամ բաղդ ալ բացուած է, նաև տաք վերաբերում է. հաճելի և բարեբաստիկ է եթէ եփես կամ ուտես զայն. շատ լաւ խրատներ պիտի լսես, կամ առատութեան նշան է։

Բրիչ — Ջանքերէդ մեծ օգուտ պիտի քաղես։

Բրուտ — Մէկը քեզի գաղտնիք մը պիտի յայտնէ։

Գ

Գաբրիէլ Հրեշտակ — Երկայն և բարեյաջող կեանք և հանդստութիւն պիտի ունենաս։

Գազան — Կռիւ և երկիւղ է բայց առանց վնասի. թեւաւոր գազան՝ թշնամի է. գազաններ՝ վախ է. գող գազանը նեղութիւն է. գազանի խաղալը, թղնամւոյն կողմէ հաշտութիւն է։ Գազանի փախչիլը՝ խաղաղութիւն է. յարձակող գազան՝ գործդ և շահդ վտանգի մէջ են։ Գազան սրսալ,

թշնամիէդ վրէժ պիտի լուծես։ Սատկած գազան՝ մեծ շահ և յաջողութիւն է. վայրի գազանէ հալածուիլ, զօրաւոր մարդոցմէ պատրաստ կեցիր, կամ թշնամիդ պիտի յաղթէ քեզ։

Գաթայ — Սպասած գործիդ պիտի տիրանաս։

Գահ — Պարապ յոյսերով փնաս պիտի կրես, բայց ոմանք կ'ըսեն թէ մեծութիւն է։ Գահ նստիլ՝ փառք է բայց հետեւանքը լաւ չէ. կանաչ գահը ցաւ է։ Տե՛ս թախտ։

Գաղտնիք — Առեղծուածային դէպքերու մէջ ինքզինքդ գտնելդ՝ կը ցուցնէ թէ ուրիշներ պիտի միջամտեն քու երջանկութեանդ, բայց իբր կանոն, եթէ երազները յստակ և գլալի չեն, բանի չեն դար քանի որ անոնք առհասարակ կը վերաբերին ֆիզիքական պատճառի մը։

Գամ — Գամ գամողը թշնամիին չարիք մը կը հասցնէ։ Եթէ դագաղի մը վրայէն գամ կը քաշես՝ մէկը մահէ մը պիտի ազատես։ Տե՛ս բեւեռ։

Գայլ — Բեղմէ վրէժ պիտի լուծեն, վտանգի նշան է, անխոստովանելի առեւտուր. սպաննելը՝ թշնամիդ պիտի յաղթես, կամ ապահովութիւն և բաղդ է, բայց ոմանք կ'ըսեն թէ, դրացիին շահ և մատուցուած ծառայութիւններ են։ Եթէ գայլին զարնես և չմեռնի նա, կնոջ հետ մեղք պիտի գործես. եթէ մեռնի՝ քու գործդ բարեյաջող պիտի ըլլայ։ Անամօթ գայլ՝ թշնամի է. գայլի միս ուտել, ձրի վաստակ պիտի ուտես մարդոցմէ։ Եթէ գայլը խօսի՝ մեղապարտ յարաբերութիւն է։ Գայլ որսալ՝ թշնամիէդ պիտի ազատիս։

Գայլագռաւ — Ահաւոր մարդ է։

Գանձ — Տեսնել կամ առնել կամ գտնել՝ շահ է. եթէ գտնին տակը թաղուած է՝ նախանձ և չարիք կը ցուցնէ. կոիւ, վիշտ և կորուստ կ'ունենաս։

Գանձանակ — Անհամաձայնութեանդ նշան է, որով չարունակ յառաջդիմութենէ պիտի զրկուիս։

Գառն — Մեծ շահ և ուրախութիւն է, ստանալը մխի-

Թարութիւն և ապագայ երջանկութիւն է. լուանալը փնաս և տրտմութիւն է. մորթելը՝ չարիքի մը զոհը պիտի ըլլաս. ծախելը՝ վաստակդ ուրիշը պիտի վայելէ. խուզելը՝ քրտնալիք վաստակ է։ Գառներ՝ նշան են դալիք լաւ լուրերու։

Գարի — Յառաջդիմութիւն, բարիք և գաղտնի ուրախութիւն է։ Սերմանելը կամ ժողվելը՝ առեւտուրի յաջողութեան և վաստակի նշան է. ուտելը՝ պաղութիւն և ազատութիւն է. քաղելը՝ վաստակդ հաղիւ քեզ կը բաւէ։

Գարուն — Միշտ յաջողութիւն է և բարեբաղդ ձեռնարկներու, ուրախ ընկերներու նշան է։ Եթէ օդը դէշ երեւի կը պակսեցնէ բայց չաւրեր շահը։

Գաւազան — Ուժէ վեր գործ բռնել և ձախորդութեան մատնուիլ է։ Ոմանք կ'ըսեն թէ թշնամիդ դէմ պիտի ամբանաս կամ դիմադրութեան պիտի յաղթես։ Կոտրած գաւազանը՝ անզօրութիւն և կորուստ է. գաւազան իւր ձեռքը՝ օգնական, որդի կամ մեծ շահ է։ Գաւազանով տփելը լաւ է. գաւազաններ տեսնելը՝ դժբաղդութեան նշան է. եթէ կոտրես գաւազանը՝ կռուազան աղջկայ կամ կնոջ մը հետ կ'ամուսնանաս։ Տե՛ս բիր։

Գաւաթ — Լեցունը՝ ուրախալի զաւակ է կամ օգնութիւն և շահ է։ Կոտրածը՝ մերձաւորիդ վտանգ պիտի հասնի։ Պարապը՝ շատ պիտի յուսահատիս. պարպելը կամ խմելը՝ պարունակած նիւթին համեմատ լաւ կամ վատ է։ Եթէ ամուրիի մը ջուրով լեցուն գաւաթ մը կը տրուի, շուտով ամուսնանալ և շատ զաւակներ ունենալ կը ցուցնէ։

Գդակ — Կորսնցնելը՝ կնոջմէդ կամ ամուսինէդ պիտի բաժնուիս։ Դնելը՝ յարգուիլ է։

Գեղեցկութիւն — Ո և է գեղեցիկ բան լաւէ. գեղեցիկ կին մը կը ցուցնէ յաջողութիւն գործիդ մէջ։ Գեղեցիկ մանուկ մը՝ երջանկութիւն է սիրոյ մէջ։ Գեղեցիկ նկարուած զինքը տեսնել՝ փառք է. նկարուած գեղեցիկ պատկեր տեսնել, միևնոյնն է։

Գետ — *Մաքուր հոսուն գետը բարեյաջող է, երբ կողմը կը հոսի, թէ հաճոյք և թէ յաջողութիւն կը ցուցնէ. իսկ երբ կողմէդ կը մեկնի, կորուստ և ապագայ մնաս է։ Ցատակ գետ նայիլը՝ առատութիւն է. գետ լուացուիլը՝ նեղութիւն է. պղտոր գետը՝ լիութիւն է, ոմանց տեղական հանրային չարիքի նշան է, կամ տհաճելի դէպքեր պիտի պատահին քեզի. ցեխոտը՝ միւնոյնն է։ Խաղալով կամ պրղտոր գետէ անցնիլը աղէկ չէ։ Հեղեղ գետէ ելնելը հառաչանքի նշան է. գետէ անցնիլը լաց է կամ եղած դժուարութեան մը պիտի յաղթես. գետէ ելնելը՝ պատիւ, չելնելը մեծ մնաս է. գետ իյնալ՝ անակնկալ բարիք պիտի գտնես, բայց ոմանք կ'ըսեն թէ ինչքերէդ պիտի զրկուիս և աղքատանաս։ Գետ մտնել՝ գործդ սկսած է աւրուիլ։ Յորդած գետը՝ կացութիւնդ վտանգի տակ է, զգո՛յշ։ Գետը եթէ սենեակիդ մէջը հոսի՝ պատիւի արժանանալ և դրամ ստանալ է։ Տե՛ս Ջրիոր։*

Գետին պատուաւոր — *Տեղական հանրային չարիքի նշան է, կամ մեծ և սոսկալի վտանգի մը մէջ ես։*

Գետնախնձոր — *Ասոնք միշտ բարեբաղդ նշան են. ըլլայ թէ դուն կը փորես, կ'եփես կամ կ'ուտես զանոնք, յաջողութիւն կը նշանակէ։*

Գետնի որդ (Սուղուլցան) — *Ծածուկ թշնամիներ կը ջանան ջախջախել քեզ և քանդել դիրքդ։*

Գերան — *Ոյժ, հաստատութիւն և օգնութիւն է. կոտրածը՝ կը ցուցնէ թէ իր պատկանած տան տէրը պիտի մեռնի և մնաս է. գերան կտրել բացարձակ մահու նշան է։*

Գերանդի — *Յարատեւութիւն վաստակի կամ մեծութիւն և շահ է։*

Գերեզման — *Լաւ չէ. հին դէպքերու կրկնութիւն է։ Գերեզման բանալը՝ մնաս է. գերեզմանի մէջ դրուիլ կամ մտնել՝ չարիքի և ձախորդութեան նշան է. փորելը՝ եթէ հիւանդ ունիս կը լաւանայ թէ ոչ գործերդ յաջողութիւն*

կ'ունենան։ Զինքը գերեզմանի մէջ տեսնել՝ դատաստանաց և բանտի հանդիպիլ է. գերեզման մը երազելը՝ յուսահատութեան և հիւանդութեան նշան է. գերեզմանի մէջ թաղուիլը կը նշանակէ ստորին պայմաններու մէջ մնալիս։ Տե՛ս ցուղարկաւորութիւն և ՈՂՋ։

Գերի — Գաղտնի թշնամիդ պիտի յայտնուի. գերի տանիլ կամ առնել՝ նեղութիւն է։ Գերի ըլլալ կամ զինքն գերի տեսնել՝ մեծութիւն և ամէն նեղութիւնէ ազատում է։

Գէր — Զինքն գէր տեսնել՝ տղայոց աճումն է. ոմանց՝ ծածուկ վախեր կը ցուցնէ. նաեւ հիւանդութեան նշան է. զգոյշ ըլլալու է դողէ և ցրտառութենէ։ Ուրիշներուն գիրնալը տեսնել՝ սեռ։ սողին լաւ է։ Տե՛ս Գիրնալ։

Գին կտրել — Բանի մը գին կարել՝ երկիւղալի հիւանդութեան նշան է։

Գինի — Հակառակորդ և ապագայ չարիք է։ Եթէ հիւանդ է տեսնողը՝ կ'աղէկնայ։ Անապակ գինի տեսնել կամ խմել կամ գնել՝ ոյժ և ուրախութիւն է։ Դեղով գինի խմել՝ ձրի վաստակ է։ Գինի թափել՝ վաստակի կորուստ կ'ունենաս. եթէ աղէկ է տեսնողը, կը նշանուի։

Գինձ — Անուշ խօսք է. ուտելը կամ ժողվելը՝ կոիւ է։

Գինովութիւն — Ճոխ և երկար կեանք. սակայն ցաւով և վշտով լեցուն։

Գիշեր — Պուխ գիշեր երազելը՝ կը ցուցնէ դժուարութիւններ և յուսալքում։ Եթէ գիշերը կ'անցնի և արշալոյսը կը ծագի, բաները և գործերը պիտի բարուոքուին։ Գիշերը ճանապարհ երթալ՝ նեղութիւն է։ Տե՛ս Պթութիւն։

Գիշերաթաւ — Թանկագին ստացուածքի մը պիտի տիրանաս. բայց չ'գնահատելով պիտի չ'օգտուիս անկէ։

Գիշերանոց — Հաղնիլը կը ցուցնէ թէ թեթեւ հիւանդութիւն մը պիտի ունենաս. եթէ տեսնես թէ ուրիշները հագած են, ատի կը ցուցնէ թէ տհաճելի լուր պիտի առնես բացակայ բարեկամներէ։

Գիշերապահ — Գաղտնիքդ դուրս ելլելու վրայ է։

Գիսաւոր (աստղ) — Մեծութիւն եւ պատիւ է։ Ոմանց սքանչելի գործ մը ձեռքը իրնալ և անհոգութեան պատճառով ջրոն կորսնցել է։

Գիր գրել — Դեղեցիկ գիր գրելը բարի և արդար մուրատ է որ կը կատարի կամ սիրային և այլ գործոց յաջողութիւն է։ Գիր կարդալ կամ տեսնել՝ քու մարմնոյդ նեղութիւն և ցաւ է կամ բարի մտքերէ պիտի հրաժարիս։ Մէկու մը գիր գրելը տեսնել՝ բարեկամէդ պիտի լանդիմանուիս։ Գէշ գիր գրելը՝ կը ցուցնէ սխալ մը որ գրեթէ քու քայքայումդ պիտի պատճառէ։

Գիրնալ — Երազատես մը թէ որ տեսնէ թէ իր այտերը լեցուեր են և գիրցեր է, լաւ նշան է, մանաւանդ կիներուն համար։ Հիւանդ մը եթէ երազէ թէ գիրցեր է, նշան է առողջութեան։ Տե՛ս Գէր։

Գիրք — Բարի մտադրութիւններդ անկատար կը մնան, բռնելը՝ մտքի ամփոփում է. անոր հետ քնանալը՝ յոգնութիւն, անգործութիւն և անկարողութիւն է։ Կարդալը՝ ժողովք կը ցուցնէ կամ շատ նպաստաւոր նշան է։ եթէ հեղինակ մը չերազէ իր գործերուն վրայով։ Ոմանց գիրք կարդալը, ուրիշներու հետ վէճ ունենալ կը ցուցնէ։

Գիւղ — Գործերդ հետզհետէ պիտի լաւանան և շատ պիտի օգտուիս անկէ։ Եթէ երազես թէ գիւղին մէջ ես, կը ցուցնէ թէ ատեն մը առողջ պիտի մնաս. եթէ գիւղը ամայի է կամ երազը որոշ է մանրամասնութեամբ, կը ցուցնէ թէ ցաւ և տագնապ պիտի հասնի քեզի շուտով։

Գիւղացի — Ընտանեկան սէր և յարգանք պիտի վայելես։ Գիւղացի տանդ մէջ՝ յաջողութիւնդ ապահովուած է։

Գլխատել — Գլխատուիլդ տեսնելդ՝ մահու չափ վնաս է։ Գլխատուած զինքդ տեսնել՝ գանձ պիտի գտնես։

Գլխարկ — Ուրիշի ազդեցութեան տակ պիտի մնաս. գտնելը՝ պիտի ստես և կեղծիք պիտի ընես։ Գլխարկ նետել՝

ամուսնութենէդ պիտի հրաժարիս։ Գլխարկդ եթէ հովը փչէ յանկարծական փոփոխութիւն կը նշանակէ որ միշտ բաղդաւոր չէ. նոր գլխարկ եթէ դրած ես կամ կը կրես՝ կը ցուցնէ փոփոխութիւն գործի կամ լաւագոյն բնակարանի։ Եթէ գլխարկդ պատռած կամ աղտոտած է, կը նշանակէ որ ինամներու պիտի ենթարկուիս և պիտի անպատուուիս։ Եթէ դրած գլխարկդ հաճելի է, ուրախութիւն, շահ և մեծ յաջողութիւն պիտի ունենաս առեւտուրի մէջ։

Գլուխ — Նոր բանի մը հանդիսատես պիտի ըլլաս. գլուխ երազելը միշտ լաւ նշան է, կը ցուցնէ թէ դրսեցիները պիտի ազդեն քու գործերուդ վրայ։ Եթէ գլուխդ արիւնոտած է, սպասէ յուսահատութիւններու։ Մանուկի մը գլուխ երազելը կերազանցապէս բարեբաղդ է. բաց գլուխ թափառականութիւն է։ Գլուխը իր անձէն զատ տեսնել, օտարութեան երթալ է։ Գլուխ զարդարողը օտարութեան պիտի երթայ։ Կտրուած գլուխը ձեռքը առնել՝ շատ գանձ պիտի գտնես կամ ուրախ լուր մը պիտի իմանաս։ Գլուխ կտրուած չափազանց ուրախութիւն ապա վնաս է. գլուխը դեղ քսելը՝ անուշ խօսք է, եթէ գլուխդ ածիլես՝ դժուար ցաւերէն կ'ազատիս։ Գլուխ լուանալ՝ վնաս կը ցուցնէ կամ թեթեւ հիւանդութիւն է։ Սպիտակ մազերով գլուխ տեսնել, յանկարծական շահ է կամ օրհնութիւն և վաստակ է։ Գլուխ խուզել՝ շահէ և պատիւ պիտի զրկուիս։ Մեծ գլուխ ունենալը՝ կամ գլուխ մը սովորականէն մեծ և բարձր տեսնելը, պաշտօն ստանալ և պատիւ արժանալ է, և ուրիշներու վրայ հրամայել ու անոնց հնազանդիլ կը ցուցնէ։

Գխտոր — Ցնորք և ապքաստութիւն է։

Գծալար (կէօնիա) — Անարդարութիւն է։

Գնդակ — Ձեռքդ լաւ առիթ մը պիտի ունենաս։ Գընդակ խաղալ՝ մեծ մարդոց համար լաւ է իսկ հասարակ մարդոց դէշ. ոմանց աննկարելի միջոցներ գործածել է շահելու համար, կամ դաւակ ունենալու նշան է.

Գնդասեղ — *Մանչ գաւակ մը պիտի ունենաս. գնդասեղներ՝ կոիւներ, փոքրիկ կորուստներ կամ անհամաձայնութիւններ են։*

Գնչու — *Բաղդագուշակ գնչուն՝ դժբաղդ ամուսնութեան նշան է, եթէ արդէն ամուսնացած է՝ նախանձ պիտի գրգռէ։* Տե՛ս Բոշա։

Գոգնոց — *Գէշ յայտնութիւն մը պիտի լսես։*

Գոհար, Գոհարներ — *ցանկութենէդ պիտի տառապիս. գոհար գնելը՝ սիրոյ գործի մէջ խաբուած ես։ Գոնդզոյն գոհար՝ կանանց երեսէն վնաս պիտի կրես. գոհար կորսնցնել, օտարութեան մէջ պիտի մեռնիս. գոհար տալ՝ նեղ օրերուդ մէջ մինակ պիտի մնաս։ Գոհարներ ունենալը՝ միշտ երջանկութեան նշան է. իսկ տալը՝ կը նշանակէ թէ անգիտակցաբար պիտի վնասես դուն քեզի։* Մեղեսիկը՝ *յաջող գործ։* Ադամանդները *կը ցուցնեն յաջող սէր և հարուստ բարեկամներ, բաղդաւորութեան նշան են։* Ադամանդ *կորսնցնելը շատ դժբաղդութիւն է։ Զմրուխտը՝ դժբաղդ է, եթէ մայիս ամիսին պաշտպանուած չէ, եթէ երազողին ծննդեան օրը կը հանդիպի մայիս ամսուան մէջ և կամ եթէ երազը այդ ամսուն տեսնուած է՝ բարեբախտ գոհար մըն է։* Մարգարիտները *ընկերական են և յաջողութիւն կը նշանակեն։* Լուտակները *գործի և դրամի բաղդաւորութիւն են։* Շափիւղաները (կէօք եագուէ) *բաղդաւորութիւն կը ցուցնեն սիրային խնդրոյ մէջ։* Գոճազմը (փերուզա) *շատ բաղդաւորութիւն է և ուզածդ պիտի կատարուի ամէն ուղղութեամբ։* Ակներ *կամ մատանիի քար տեսնել՝ աղախինի և ծառայի կը վերաբերի։* Տե՛ս Գոճազմ, Զմրուխտ, Զարդեր, Ցակինթ, եւն։

Գող — *Եթէ քեզմէ բան մը գողնան կամ գող տեսնես, նշան է թէ օտարականէ մը բարիք պիտի տեսնես։ Գողութիւն ընել՝ խեղճի մը բարիք պիտի ընես։*

Գոճազմ — *Այս քարերը երազելը՝ կը ցուցնէ թէ ապագօրէն պիտի անցնիս փափաքիդ. շատ նպաստաւոր են սի-*

բային խնդիրներու մէջ։ Անոնց զողցուիլը կամ կորսուիլը կը ցուցնէ թէ դժբաղդութիւններու պիտի հանդիպիս ընտանիքիդ մէջ կամ ուրիշներդ հետ, թերեւս յուսահատութիւններ ըլլան։ Տե՛ս Գոհարներ։

Գոմ — Ապագայի քաջալերութիւն և ոյժ է. գոմ շինելը շահ և ուրախութիւն է, կամ ամուսնական լուծի տակ պիտի մտնես։

Գոմէշ — Լաւ հարստութիւն է կամ շահ, և ընտանեկան ուրախութիւն է։ Գոմէշ դետի մէջ տեսնել՝ բարի զրոյց պիտի դայ քեզի։

Գոյներ — Տե՛ս Շագուստի տակը։

Գոնդուիթիւն — Գոնջ դլխով մարդ երազելը՝ զգուշութիւն է, զգոյշ եղիր գործերուդ մէջ, եթէ ո՛չ, նեղութիւններ պիտի գան քեզի։

Գոռում. գոչում — Բարի լուր և ուրախութիւն է։

Գորգ — Եթէ տեսնողը կին է՝ արդուզարդը սիրող կ'ըլլայ և ամուսինին աչքէն կ'իյնայ։

Գործ — Գէշ ընել գործ մը, գործերդ պիտի լաւանան։

Գործարան — Խորամանկ ես թէև, բայց պիտի խաբուիս։ Տե՛ս Աշխատանոց։

Գորտ — Լաւ նշան է։ Հաւատացեալ մարդ է կամ այլազգիներու հետ գործ պիտի ունենաս։ Գորտի ձայն լսելն՝ խնդութեան զրոյց է, ոմանց յուսահատ խօսքեր իմանալ կամ ամօթալի հիւանդութիւն է։ Գորտը եթէ սպաննես՝ հաւատացեալէ փնտրդ կ'առնես։ Գորտ բռնել՝ գեղեցիկ աղջկան մը հետ պիտի ծանօթանաս։ Տանդ մէջ գորտ տեսնել՝ ընտանեկան վիշտ և փնտրտ է։

Գուլպայ — Ճանապարհ կամ աղջիկ զաւակ է։ Գունաւորը խնդութիւն և կեղծ սէր է։ Հանելը՝ պիտի բամբասուիս և վշտանաս։ Հինը՝ դժբաղդութեան վերջաւորութիւն է։ Աստուիէնը՝ աղքատութիւն, բամպակէնը՝ չափաւոր բաղդ. ծակածը նախատինք, խակ դարձածը բարի լուր է։ Գուլպաներ

երազելը միշտ դժբաղդութիւն է, մանաւանդ սիրային խնդիրներու մէջ։ Ճերմակ գուլպաները հիւանդութիւն կը ցուցնեն։

Գրագիր — Մահուան մօտաւորութիւն կամ առեւտրական մեծ ձախորդութիւն է։

Գրասենեակ — Կարեւոր նամակ մը պիտի գողցնեն։

Գրաւ — Ազատութիւն, յաղթուած թշնամիներ. բռնելը՝ անհաւատարմութիւն է։ Գրաւ առնելը ու պահելը՝ ուղղամտութիւն է։ Գրաւական հանել տունէն՝ մահուան վնաս է։

Գրեխ — Գէշ միտք է։

Գրիչ — Լաւ նշան չէ, շատ դժբաղդութիւն է. եթէ դունանով չի կրնաս գրել՝ կամ կոիւի կը պատրաստուիս, լաւ չէ։ Տե՛ս կաղամար։

Գրչաթատ — Բարի ցանկութիւններ ունիս, որոնք սակայն չեն կատարուիր երբէք։

Գրչաման — Կին է։

Գրկել — Մատնութիւն է։

Գրպան — Լաւ նշան չէ գրպանի հետ խաղալը։

Գոտի — Ուժի և օգնութեան կը կարօտիս կամ ամուսնութիւն է. կապելը՝ ոյժ, իշխանութիւն և հարստութիւն է։ Կորսնցնելը՝ աղքատ և անպատիւ պիտի ըլլաս։ Կապոյտը փափաք է. կանաչը՝ յոյս, արծաթէն՝ քիչ շահ. ոսկիէն՝ փառասիրութիւն և սխալ ամբաստանութիւն է։

Դ

Դագաղ — Հարսանիք կամ այլ ուրախութիւն է։ Ոմանց խոր տխրութիւն և բարեկամի կորուստ է։

Դալարեղէններ — Ասոնք տարբեր նշանակութիւններ ունին, եղեսպակը (ատա չայի) կը ցուցնէ իմաստութիւն և

և գիտութիւն։ Գոթերը կամ Գաթերինը աղքատութիւն և ապերջանիկ ամուսնութիւն։ Բալասանը՝ հիւանդութիւն է Օշինդրը (փէլին օթու) ցաւ և յուսահատութիւն է։ Ազատ քեղը՝ բարի լուր։ Տե՛ս Բանջարեղէններ, կանանց եղէններ։

Դահիճ — Շուրջդ ոճիր մը պիտի գործուի։

Դայեակ — Դաղտնիքներդ երեւան պիտի ելլեն։ Բրոնութեան տակ ապրողներուն համար ազատիլ է։ Կին մը երբ զաւակով չէ և դայեակ կը տեսնէ յաճախ՝ կը նշանակէ թէ երկարատև հիւանդութեան պիտի ենթարկուի։

Դանակ — Տեսնել կամ գնել՝ չար լեզու կամ սպառնալիք է, քեզի դէմ բաժանում կը ցուցնէ։ Գտնելը՝ վտանգաւոր կացութեան մէջ ես։ Կորսնցնելը՝ վտանգի խափանում է։ Շինելը՝ գէշ գործերու մէջ պիտի գտնուիս։ Դանակ չինողը խարդախ մարդ է։ Եթէ դանակը գետին ինկած տեսնես մէկու մը դէմ կը դաւաճանես։ Դանակ տալ մէկուն՝ այդ մարդուն հետ կը սրդողիս։ Եթէ դանակը գետնէն վերցնես հեռաւոր ազգականներէդ մին կը մեռնի։ Դանակներ տեսնելը՝ բարեկամներու և ծանօթներու ոմանց հետ վէճ և կռիւ կը նշանակէ, տաք և բուռն խօսքերէ յետոյ հաշտուիլ է։ Ժանգոտած դանակները՝ կը ցուցնեն սիրահարներու միջև բաժանում. սուր դանակները տրտմութիւն են։

Դաշտ — Անօգուտ ձեռնարկ է, վատ հետեւանքով. ոմանց առատութեան և առողջութեան նշան է. դաշտ մըտնել՝ անդարձ կերպով վտանգի մէջ ես։ Դաշտէն դուրս ելլել նեղութենէ կ՝ազատիս։

Դաշտան — Տե՛ս Ամսական.

Դատաստան — Մեղաց քննութիւն է։

Դատարան — Յանցանք մը պիտի գործես։

Դատաւոր — Մեծ անձնաւորին ատիճանը կ՝ուզենայ՝ Դատաւոր ըլլալ՝ թշնամիներդ պիտի ուզենան։

Դարակներ — Պարապ դարակները դրամի կորուստ կը ցուցնեն, բայց լեցունները շատ յաջողութիւն կը ցուցնեն։ Թէև առանց Ջանքի։

Դարան — Լեցունը հունձքի իսկ պարապը անյաջողութեան նշան է։

Դարբին — Մեծ մարդու կողմէ ճնշում պիտի կրես։ Դարբին ըլլայ՝ պաշտպան, վաստակ և պատիւ է. դարբինի սայլ և կոանը՝ մեծութիւն է. դարբինի ոարուածը կամ ուրիշ ինչ գործիք որ ըլլայ, ամէնքն ալ լաւ նշան են։

Դգալ — Լաւ նշան է. եթէ պնակիդ մէջ երկու դգալ տեսնես, կամ դուն կ'ամուսնանաս կամ ընտանիքիդ մէկ անդամը։

Դգմաճ — Կարգադրելու երկար գործեր։

Դդում — Հիւանդին լաւութիւն է։ Տեսնողը եթէ կին է յղի կը մնայ և տղաբերքը դիւրին կ'ըլլայ։ Իսկ եթէ այր է, կինը յղի կը մնայ և տղաբերքը դժուար կ'ըլլայ։ Դդում ցանելը ջերմ է իսկ ուտելը՝ հիւանդութիւն։

Դեկտեմբեր — Կը դուշակէ դրամ շահիլ, բայց բարեկամներ կորսնցնել։

Դեղ — Եթէ դեղը ախորժելի է, յաջողութիւն կը ցուցընէ դժուարութենէ մը յետոյ, իսկ եթէ անախորժ է ակընկալէ կորուստ մը կամ վնասութիւն։ Տե՛ս բժիշկ։

Դեղսիայատ — Առնելը նեղութեան նշան է, որուն պիտի հետեւի լաւ բաղդ մը։ Աղէկ նշան չէ երբ զայն ուրիշ մարդոց տաս, կորիւներ կրնաս ակնկալել։

Դեղձ — Իր եղանակին մէջ տեսնելը՝ առողջութիւն, հաճոյք և զոհունակութիւն կամ սիրոյ յաղթանակ կը ցուցնէ։ Տե՛ս նաև պտուղներ։

Դեղձանիկ — Այս թռչունը կը նշանակէ անակնկալ հաճոյքներ։ Տե՛ս թռչուններ։

Դերասան - Դերասանուհի — Ասի պարզապէս կը նշանակէ ներկայ հաճոյք մը, որ իրականապէս անկարեւոր է։ Տե՛ս թատրոն։

Դերձան — Ճամբորդութիւն և քիչ վաստակ է. դերձան ոլորել, ամուրի համար ամուսնութիւն, իսկ ամուսնացեալի համար աղջիկ դաւակ ունենալ է։

Դեռ — Վնաս է, նեղութեան և մեղաց նշան է. խղճի խայթ։

Դէզ — Դէզ ընել՝ շահուդ հակառակ դիրք պիտի բռնես։

Դժոխք — Նեղութեան մէջ իյնալ է։ Ցաւ ու տանջանք։

Դժուարութիւն — Ո և է դժուարութեան մը մէջ ըլլալդ և ինքզինքդ անկէ ազատելդ, լաւ նշան է. սիրահարներուն համար սակայն՝ հաճելի դարպասում կը նշանակէ։

Դիակ — Բարի զրոյց է, ոմանց աղէտքի և հիւանդութեան նշան է։

Դիմակ — Մէկու մը շատ պիտի բարկանաս և անոր հացէին պիտի հայհոյես։

Դիպակ (ազնիւ գործուած լաթ) — Տեսնել կամ հագնիլ՝ մեծ պատիւ է։

Դիպուած — Սոսկ զգուշութիւն է, երազին միւս մանրամասնութիւնները ուշադրութեան առնելու է։

Դիտակ — Հեռաւորութիւն կը ցուցնէ բարեկամներէ։

Դմակ — Տեսնելը կամ ուտելը՝ հիւանդութիւն կամ անհոգութիւն է։

Դոյլ — Բարի լուր, խնդութիւն և առատութիւն է։

Դուռ — Տեսնել կամ առնել՝ յոյս, պատիւ և վստահութիւն է, նաև մեծ անձնաւորներու հետ կը ծանօթանաս։ Դուռ բանալն կամ բացուիլը բաղդ, յաջողութիւն և կամքի կատարում է. եթէ տանդ դուռը ինքնիրենը բացուի, տանդ անդամներէն մին կը հիւանդանայ։ Բաց դուռը անթիւ զեղծում կը ցուցնէ, իսկ զոցը պահուած գաղտնիք։ Դուռէն ներս մտնել կամ ելլել՝ բարքերու նախատինք է։ Դուռ ձգելը կամ այրելը՝ տիրոջը սնանկութեան և կործանման նշան է։ Դուռ կոտրելը կամ կտրածը՝ ընտանեկան բաժանում է, երբեմն ալ մահու նշան է։ Եւկաթէ դուռը՝ ոմանց բաղդ ոմանց բանտ և աքսոր է։ Դուռ փակելը մէկուն վնաս պիտի հասցընես։

Դուռ (քաղաքի, ագարակի կամ մեծ շէնքերու խոշոր

դուռ)— Դրան և ցանկերու նման ասի ալ կը ցուցնէ դժուարութիւն մը որուն պիտի յաղթես. դուռ կղպելը կը ցուցնէ ծրագիրներուդ լրանալը, յանդգնութեանդ մէջ։

Դուր (տէմիր գալէմ)— Պատիւ է. կամ դժուար գործ մը գլուխ պիտի հանես։

Դպրոց — Պատրաստուէ կնքահայր ըլլալու, սիրուն մանչ սանուկ մը պիտի ունենաս, կամ քեզմէ աւելի ճարպիկ մէկը ձեռքէդ պիտի առնէ դիրքդ։ Դպրոցի մէջ ըլլալ՝ մանկան ծնունդ է։

Դրախտ — Հին ժառանգութիւն մը պիտի հետապնդես և դրամ ու աշխատութիւն պիտի վատնես. դրախտ մտնել, ճիշդ Ադամայ վիճակն է, արդիլեալ պտուղ և փորձանքի հանդիպիլ է։

Դրամ — Զար գուշակութիւն, հաճոյք և մխիթարութիւն, վաստակի նուազութիւն և կորուստ է. ժողվելը, ագահութիւն է. համբելը, քեզմէ բան մը պիտի գողնան. փոխ տալը, բարեկամէդ վնաս պիտի կրես։ Դրամ ստանալը՝ լաւ է, քանի որ ան կ՚ազդէ սիրային գործերու, ամուսնութեան կամ զաւակ լինելու վրայ։ Գտնելը, պզտիկ նեղութիւն է, կորսնցնելը կամ վճարելը, կը նշանակէ սիրոյ մէջ դժբաղդութիւն։ Ոմանց՝ դրամ ուրիշ մէկուն տալը, կամ կորսնցնելը, կամ գողցուիլը՝ ամէն հոգերէ ազատիլ. եթէ հիւանդ է կ՚առողջանայ. դրամ աշնան մէջ տեսնելը, արիւնահեղութիւն է. բայց գարնան ժամանակին, բոր և ծաղիկ է։ Ծերերուն համար, դրամ կորսնցնելը՝ կեանքի կարճնալ կը ցուցնէ։ Մանր դրամ տեսնելը՝ գէշ նշան է. բաները չպիտի յաջողին. զանոնք կորսնցնելը կը նշանակէ պզտիկ նեղութիւններ և յուսահատութիւններ. զանոնք գտնելը կը ցուցընէ թեթեւ բարեքում մը գործերուդ մէջ։ Դրամներուն ինչ մետաղէ ըլլալը, հարկաւ զատ-զատ մեկնութիւններ ունի։ Տե՛ս Ոսկի, արծաթ, պղինձ դրամներ, ինչպէս նաեւ Առատութիւն, ողորմութիւն և Թաղել։

Դրացի — Նախանձ և ատելութիւն է, իսկ բարեւ տալը՝ կռիւ։

Դրօշ — Ջերմ ցանկութիւն, բայց միշտ անկատար. ծածանողը՝ հաստատուն վախ, պարդեալը՝ գոյնին համեմատ լաւ կամ վատ, կրելը՝ ուղղամտութիւն է։

Դոդօշ — Դոդօշներ սպաննելը՝ լաւ նշան է. թշնամիներ ջախջախելու նշան է։

Ե

Եգիպտացորեն — Եգիպտացորենով լեցուն ախոռ տեսնելը՝ հարուստ կնոջ մը հետ ամուսնանալու նշան է. եգիպտացորեն հաւաքել, նշան է հարստանալու։

Եզ — Վախը կը փարատի կամ օրհնութիւն, շահ և քաղցր կեանք է. եզի վրայ նստիլ անհոգութիւն է կամ մեծ աւետիս մը կ'առնես կամ զուգակից սիրելի մը կ'ուզայ. եզին միսը ուտելը աղէկ է, բայց սմանց նեղութիւն և հիւանդութիւն է. եզ մորթելը՝ առատութեանդ փճացում և մահ ու փնաս է. լծուած եզը՝ յարատեւ շահ ու ապահովութիւն է. պարարտ եզները հարստութիւն, բերքի առատութիւն և խաղաղութիւն կը ցուցնեն. նիհար, քոսոտ եզները նշան են փնասի, աղքատութեան և սղութեան։ Եզներ կերակրելը՝ լաւ նշան է, բայց տեսնել որ եզները ջուր խմելու կ'երթան, դէշ նշան է։ Սայլի վրայ լծուած եզներ տեսնելը՝ նեղութիւն է. եզներու կռուիլը՝ երկրի վախ կամ թշնամութիւն է։ Տե՛ս Արջառ։

Եզերք — Թափառուած մը յետոյ հանգիստ կեանք է։

Ելակ — Այցելու հիւր է զոր պիտի ընդունիս. անյուսալի բաղդ։ Ժողվելը՝ ազդեցիկ կամ բարեկամ պիտի տես-

Նես. ուտելը՝ անմեղ հաճոյք և ուրախութիւն պիտի վայելես. ելակներ տեսնելը՝ շատ բարեբաղդ նշան է, երկար ատենէ ի վեր փափաքած առարկաղ պիտի սատանաս։ Տե՛ս նաեւ պտուղներ:

Ելնել — Շատ լաւ նշան է եթէ մագլցած տեղուդդ մինչեւ վերը կ'ելնես, ինչպէս սանդուխին, բլուրին կամ լերան։ Իսկ եթէ դուն կը սայթաքիս կամ չես լմնցներ վեր ելլելդ, այն ատեն դժուարութիւններ պիտի գան։ Օդին մէջ վեր ելնելը՝ արդիւնք է անխորհուրդ մտածումներուդ։ Տե՛ս նաեւ Լեռ, Մագլիլ, Սանդուխ, եւ այլն:

Եկեղեցական — Աբեղայ՝ փոքր հաճոյքէ մը վերջ շատ պիտի տրտմիս կամ կոիւ է. իսկ ոմանց համար փառք և պատիւ է։ Երէց՝ վտանգի մը պիտի պատահիս. ալեւոր երկայնամօրուս երէց՝ աւելի վտանգաւոր է, չարատանջ հիւանդութիւն կամ մահ է. մեռած երէց՝ մեծ զրոյց կը խափանիս։ Մեռած երէց կամ աւագերէց կենդանի տեսնել՝ հին խօսքեր կը նորոգուին։ Սեւազգեստ պատմուճանով եկեղեցական տեսնելը՝ չարագուշակ է։ Երեցէն խաչ առնել՝ տրտմութիւն է։ Երաժիշտ՝ դպրութեան պիտի հասնիս կամ նեղութիւն է։ Տե՛ս Աւագ, Վանք, Վարդապետ, Քահանայ:

Եկեղեցի — Սրտի հանգստութիւն պիտի ունենաս։ Եթէ երազես որ եկեղեցիի մէջ նստած կամ պառկած ես հոն կամ անոր մօտ, կը նշանակէ թէ հաղուստդ պիտի փոխես։ Եկեղեցի շինել՝ փառք է, ոմանց ալ նեղութիւն. եկեղեցի երթալ՝ ծանրութենէ կ'ազատիս կամ բարի կեանք կ'ունենաս։ Զարդարուած եկեղեցի՝ արքայութեան արժանի կ'ելլաս։ Եկեղեցի մտնել լաւ է կամ մեծ աշխատանքի փոխարէն սակաւ շահ ստանալ է. եկեղեցիին մէջ աղօթել ՝ներմեռանդօրէն, նշան է թէ ուրախութեան և հանգստութեան մէջ պիտի ապրիս։ Բայց ոմանք կ'ըսեն թէ եկեղեցի տեսնելը՝ գէշ է ընդհանրապէս, յանդիմանութիւն լսել է։ Հեռուէն տեսնել եկեղեցին, սակաւ վատ է և կը նշանակէ յուսահատութի

Մայր եկեղեցի տեսնելը կը ցուցնէ թէ փափաքներդ գոհացում չպիտի գտնեն։ Սեւապատ եկեղեցին՝ դատ և շահ կը նշանակէ։

Եկեղեցւոյ գաւիթ — Եթէ եկեղեցւոյ գաւիթին մէջ կը պտտիս՝ կը նշանակէ երկար և սոսկալի չարչարանք մը. եթէ ձմեռուան մէջ երազես՝ կը ցուցնէ բաժանում բարեկամներէ և ընտանիքէ, իսկ եթէ գարնան մէջ է՝ ամէն բան ինքնին լաւ պիտի երթայ։ Սիրահարներուն համար եկեղեցւոյ գաւիթը գտնուիլը՝ կը ցուցնէ բաժանում և ալ յոյս չկայ միութեան՝ ապագային։

Եղբայր — Անմիաբանութիւն, կեղծաւորութիւն. մեռած եղբայրներ երազել՝ երկարակեցութեան նշան է։ Եղբայրներու հետ վիճիլը՝ նշան է նեղութիւններու ենթարկուիլ. եղբօրը մահը տեսնելը՝ թշնամիներէն ազատուիլ և չի կրեր այն կորուստները ու վնասները, որոնց մասին երազատեսը մտատանջութեան մէջ կ'ապրի։

Եղեամ — Սաստիկ եղեամը շատ դժբաղդ է, ակնկալէ փորձանք և անբնական տագնապներ։ Տե՛ս ցօղ։

Եղէգ — Թշնամիդ զօրաւոր է, զգոյշ գտնուէ։ Ծողվելը դատարկ բաներով կ'զբաղիս։

Եղիճ — Մատնութիւն է։

Եղնիկ — Գեղեցիկ կին է բայց վտանգաւոր, զգոյշ եղիր։ Եղնիկ տանդ մէջ՝ զուգակից է, կամ հեռաւոր սիրելիդ պիտի տեսնես։ Եղնիկ որսալ՝ կնոջ թակարդի մէջ պիտի իյնաս։ Փարքի մէջ եղնիկ տեսնել՝ կը նշանակէ սիրահարի կամ սիրուհիի հետ վէճ ունենալ։

Եղունգ — Կարելը՝ նիւթական վնաս է. ունենալը՝ ազքատութեան նշան է. եղունգով քերել մարմինը՝ մէկ անդամդ պիտի վնասուի։ Կրծելը՝ չարութեան նշան է։ Ապտուած և կամ կոտրած եղունգները հիւանդութիւն և տկարութիւն կը ցուցնեն։ Եղունգներուն երկարիլը՝ շահ կը նշանակէ,

Հակառակը կորուստ։ Մատէդ խլուած եղունգը, յուսահատութիւն և հիւանդութիւն կը ցուցնէ։

Եղջերու — Երկրի վրայ գալիք նեղութիւն, ոմանց շահ է։ Եթէ այր է տեսնողը՝ իր կնոջմէն կը կասկածի, իսկ եթէ կին է՝ ամուսինը շատ սիրող կ'ըլլայ։ Եղջերուներու կռուիլը տեսնել՝ բաղդախաղի մէջ դրամ շահիլ է։ Հալածելը՝ յոգնութիւն իսկ սպաննելը՝ դրամի կորուստ է։

Եղջիւր — Դէմդ մրցող հոմանի ունիս, զգուշացիր։

Երազ — Երազի մէջ երազ տեսնել՝ շատ մտատանջութիւն ունիս։ Երազի մէջ երազ պատմել՝ խիստ աղէկ է, բայց ոմանց՝ գործերնուն լաւ չծառայելնուն նշան է։

Երաժիշդ — Տե՛ս Եկեղեցական։

Զրաժշդական գործիք — թէ փառք և թէ շահ միանգամայն կը փնտռես, բայց վերջինը չպիտի յաջողիս ստանալ։ Ուրիշին տալը՝ դէշ նշան է, այսինքն տանդ բարոյական վիճակը ինկած է, և պատճառն ալ դուն ես։

Երաժշդութիւն — Ցաւալի լուր մը պիտի առնես. ուռում և աղքատութիւն. մտիկ ընելը՝ անգործութիւն է. ընելը անշահ համբաւ մը պիտի հանես և շողոքորդութեանդ երեսէն պիտի խաբեն զքեզ և պիտի զղջաս։

Երախայ — Զուարթ և կայտառ երախան՝ լաւ նշան է, բարի լոյս և լաւ վաստակի նշան է, իսկ ճչող երախան կը գուշակէ հիւանդութիւն և յուսահատութիւն։ Գրկելը՝ բարի գործիդ համար պիտի վարձատրուիս։ Տեսնելը՝ բարեկամներէդ պիտի սերժուիս։ Կին մը եթէ երազէ թէ, երախայ մը ունեցած է առանց լղի ըլլալու, կը նշանակէ թէ, իր ծրագիրները գլուխ պիտի հանէ յաջողութեամբ. կոյսի մը համար այս երազը՝ զգուշութիւն կը ցուցնէ, եթէ ոչ պիտի կորսնցնէ իր առաքինութիւնը։ Եթէ մարդ մը երկու երեք երախաներու ծնունդը կը տեսնէ, կը ցուցնէ թէ ուրախանալու պատճառներ պիտի ունենայ, և յաջողութիւն պիտի գտնէ իր առեւտուրին մէջ։ Տե՛ս Ծանուկներ, Ցոյլ։

Երակ — Կտրելը՝ երակի տիրոջ մահուան նշան է։

Երանք (Գալլ ա) — Ուրախութիւն և առողջութիւն է։

Երգել — Տրտմութիւն և վատ լուր է. երազի մէջ երգելը՝ կը նշանակէ պիտի ազդուիս բանէ մը և պիտի արտասուես ու ցաւերուդ մէջ մինակ պիտի մնաս։ Թռչնոց երգ լսելը՝ խռովութիւն և դժտութիւն է։

Երգեհոն — Տրտմութիւն է։ Երգեհոնի երգ լսելը՝ դերազանցօրէն լաւ նշան է. տեւական բարեկամութիւն և հաստատուն յաջողութիւն կը ցուցնէ։ Եթէ զայն դարնես, ընկերական յաջողութիւն պիտի գայ քեզի։ Տե՛ս Նուագ։

Երես — Ճոյգ և ժպտուն երես տեսնելը՝ նշան է բարեմասնութեան և ուրախութեան, իսկ նիհար և տժգոյն երես տեսնելը՝ նշան է նեղութեան, աղքատութեան և մահու։ Կարմիր երես՝ գործերդ աղէկ պիտի երթան, իսկ դեղինը՝ մեղք է։ Երեսները լուանալ՝ նշան է մեղքերու զղջումի կամ յանցանքդ ծածկել պիտի ջանաս։

Երիտասարդ — Շատ բարեբաղդ նշան է երիտասարդ մարդիկ տեսնելը։ Երազել թէ դուն երիտասարդացեր ես՝ նշան է ջանքերուդ անյաջողութեան։

Երկաթ — Վհատութեան նշան մըն է, կարողութեան և ճարի կարօտ ես, ուստի՝ գետ, ծով մտնելէ զգուշացիր։ Երկաթի առուտուր ընել անծանօթի մը հետ՝ նշան է տրտմութեան, կորուստի և դժբաղդութեան։ Երկաթով ծեծելն՝ նեղութիւն և ցաւ է։ Հին ժանգոտած երկաթը՝ կը ցուցնէ աղքատութիւն և վհատութիւն։ Կարմրած երկաթը կը ցուցնէ անկում, բուն քու սխալ գործած ջանքերուդ պատճառաւ։ Երկաթէ մնասուիլ՝ կը նշանակէ ո և է մնաս մը պիտի կրես մարմնիդ վրայ։

Երկաթագործ — Կառավարութեան հետ գործ պիտի ունենաս, որ բաւական սուղի պիտի նստի վրադ։ Երկաթագործութիւն ընել՝ երկար ժամանակէ ի վեր հետապնդած գործդ պիտի յաջողի։

Երկաթուղի — Տե՛ս կառախումբ:

Երկանք — Կեանքի յարատեւ դժուարութիւն կամ անհանգստութիւն է։ Երկանքով աղալ՝ շարունակութիւն ներկայ վիճակիդ։

Երկինք — Պարզը՝ նշան է գործի յաջողութեան։ Աստղալին՝ անվրէպ լոյս և խնդութիւն։ Մթինը՝ յուսահատութիւն և վիշտ։ Կրակներու մէջ երկինք տեսնելը՝ մօտալուտ կռիւ է։ Երկինք ելնելը՝ մեծ փառք և պատիւ է։ Ձեռքը բանալով երկինք բարձրացնելը՝ մահ է. երկինք բարձրանալը փուճ փառասիրութիւն է։

Երկիր — Խնդութիւն է։ Իւր երկրէն ելանելն՝ նեղութենէ կ'ազատիս։ Տես նաեւ քաղաք:

Երկուորեակ — Ստացուածքդ վտանգի մէջ է։ Երկուորեակ ծնանիլ՝ ժառանգութիւն մը պիտի ստանաս, տաժանելի դատավարութենէ յետոյ։

Երկրագործ — Յաջողութիւն և առատութիւն է, իսկ եթէ երկրագործին գլխուն վրայ ագռաւներ կան՝ դառն վիշտ և նեղութիւն պիտի կրես։

Երկրաշարժ — Կնոջ հետ կռիւ պիտի ունենաս, կամ վիճակի և գործերու փոփոխութիւն կը ցուցնէ։

Երշիկ — Առ հասարակ լաւ նշան է, թէև պզտիկ գործերու վրայ է, բայց ոմանց անսովոր գործով մը վնասուիլ կը ցուցնէ։

Եփել — Հաց եփելը աննպաստ է, հիւանդութիւն և աղքատութիւն կը ցուցնէ, իսկ կերակուր եփելը՝ բարեկամներու այցելութիւն գալ կը ցուցնէ։

Չ

Չամբիկ — *Տե՛ս* Չի։

Չամբիւղ — *Խառնակ և անորոշ գործի մը պիտի խառնուիս։*

Չանգ (մեծ եկեղեցւոյ) — *Նեղութեան մը ձայն է, զգուշութիւնդ հարկաւոր է։*

Չանգակ — *Անատոյգ վիճակի ենթարկուիլ, առեւտրական գործերու մէջ. եթէ աշխատիս, կրնաս բարեւաւուիլ շուտ։ Չանգակներու հնչիւնը լսել՝ լաւ նշան է, բարի և ուրախ լուրեր կը նշանակէ, շատ պարագաներու տակ արագ ամուսնութիւն մը, բայց ասիկայ կախում ունի երազին միւս մասերէն։ Հնչող զանգակները սակայն դժբաղդ են, յաճախ մահ կը նշանակէ։ Զանգակը երբ կը տատանի, յուզում, յեղափոխութիւն կը ցուցնէ։ Զանգակ բռնել՝ միտքդ դրածդ պիտի կատարի. ոմանց զանգակի ձայն լսելը կը ցուցնէ թէ ուտ խօսքերու կը հաւատայ և կ՚ուրախանայ։*

Չանգակատուն — *Հալածանք, փլչածը՝ մահուան վըտանդ է։*

Չառիկ — *Անակնկալ շահ է։*

Չատիկ — *Եթէ երազես թէ զատիկ է, և դուն ցնցոտիներ հագած ես, հեռաւոր բարեկամէ մը դրամական օգնութիւն կը նշանակէ քեզ, իսկ եթէ ճոխ հագուեր ես, դրացիդ քեզ պիտի չարանայ և պիտի փնասէ։*

Չարդարանք — *Կանանցի զարդարանքը՝ ցաւ է. կը նշանակէ թէ նոր ծախքեր պիտի ընես, և կամ հրդեհի զոհ պիտի տաս. իսկ տնական զարդարանքը՝ կը ցուցնէ թ բարեկամներդ կեղծ են, զգուշացիր։ Երազել թէ սենեա կը զարդարես ծաղիկներով՝ կը ցուցնէ թէ գործերդ սկս*

են յաջող երթալ, բայց մեռեալի մը դերեզմանը կամ դագաղը զարդարելը՝ դժբաղդ նշան է, պէտք է իբր ազդարարութիւն նկատուի։

Զարդարուիլ — Դատ կամ զաւակ պիտի ունենաս. եթէ զաւակ է, արու կը լինի. իսկ եթէ դատ՝ կը շահիս։

Զարդեր — Կրելը, նպաստաւոր նշան է. զանոնք մէկդի դնելը կամ կորսնցնելը, կորուստի նշան է։ Տե՛ս Գոհարներ։

Զաւակ — Զաւակ մը ունենալը կը ցուցնէ թէ անակնկալ տեղէ մը օգնութիւն պիտի գտնես և ուրախանաս. զաւակ ծնանիլ՝ նորանոր վիշտեր պիտի կրես բայց անոնք կարճատեւ պիտի ըլլան և վերջը բարի. սիրելը՝ սրտի ցաւ պիտի քաշես ազգականներէդ։ Զաւակի մահը. կրկին ամուսնութեան նշան է։ Տե՛ս Որդի։

Զէնք — Մատնութեան և նենգութեան նշան է։

Զինուած մարդ — Նշան է քու անվախութեանդ։

Զինուոր — Տրտմութիւն է կամ դու անհոգ ես, բայց թշնամիդ արթուն է. գրուիլը՝ սիրային վիճակդ մտահոգիչ է։ Օտար զինուոր՝ քեզ յայտնի կինը դաւաճան է, որ. չափ կարելի է յարաբերութիւնդ շուտ վերջացուր։

Զղեար — Դանդաղ խնայողութիւններ։

Զմելի — Ամուսնական անհաւատարմութիւն, ատելութիւն. զմելիով բան կտրել՝ կնոջէդ պիտի բաժնուիս։

Զմրուխտ — Զօրաւոր իդձերդ և ցանկութիւններդ քեզ փորձութեան պիտի առաջնորդեն։ Կասկածելի է երբ մանաւանդ շատ մը բաներ կը ձեռնարկես, վստահէ ըրածիդ և այնպէս ձեռք զարկ, ի բաց առեալ եթէ երազես մայիսին մէջ կամ դուն ծնած ըլլաս այդ ամսուան մէջ, որ նուիրական է այս գոհարին։ Տե՛ս նաեւ Գոհարներ։

Զոքանչ — Ողջ կամ մեռած զոքանչդ տեսնելդ՝ նշան է թէ կնոջդ հետ վէճ և կռիւ պիտի ունենաս։

Զրահ — Մեծութիւն է. հագնիլը՝ առողջութեան նշան է. եթէ ուրիշներու տաս՝ ծանրութիւն և մեծ փնաս է։

Զօրանոց — Շատ կը հետապնդեն քեզ, զգոյշ եղի՛ր։

Զօրապետ — Հաստատ կամքով միայն կրնաս նպատակիդ հասնիլ, ներկայ ընթացքդ լաւ է. շարունակէ՛։

Է

Էշ — Լաւ նշան է երազել էշեր՝ եթէ բեռցուած են։ Եթէ դուն իշուն վրայ հեծնես, կը նշանակէ թէ յիմար կոիւի մը պիտի բռնուիս կամ պիտի ճամբորդես. շատ էշէր տեսնելը, նեղութիւն է. իշուն խրնջելը, նախանձ է. անամօթելը աղէկ չէ։ Իշուն մեղուախառ ծամելը, թշնամեաց կորուստ է. թուխ էշը, սովորական գործի մէջ սրտնեղութիւն է. պարապ կամ բեռցուած ճերմակ էշ տեսնել, Երուսաղէմ ուխտի պիտի երթաս կամ պիտի ամուսնանաս. սեւ էշ՝ անմիջական շահ սեփական գործէդ. էշ բռնել՝ վիպաքաշ նպատակիդ պիտի հասնիս. էշ գտնել՝ տղի համար նշանտուք է. էշ ծախել՝ սիրական մէկ անձէդ պիտի բաժնուիս։ Էշ պայտել շատ շահաւոր առեւտուր մը պիտի ընես, պարզապէս խաբելով մէկը։ Սատկած էշ՝ յաջողութիւնդ պիտի պակսի. էշ հեծնել ամէն կերպով բարգաւորութիւն է, էշ տանդ մէջ՝ թէեւ ցանկալի հիւր պիտի ունենաս, բայց անկէ շատ անհաճոյ առաջարկ մը պիտի լսես. էշէն իյնալ՝ սիրած մէկ անձէդ հարուած մը պիտի կրես. էշէն կից ուտել՝ մէկէ մը հայհոյանք պիտի լսես և պիտի վշտանաս։ Պառկած կամ նստած էշ՝ նշան է աշխատութեան և ապահովութեան։ Եթէ վազէ էշը՝ նշան է մեծ դժկամութեան։ Եթէ զոռայ էշը՝ բամբասանք լսել է պատիւդ մասին կամ դլխացաւութիւն, յոգնութիւն և փնաս է։ Եթէ ականջները տնկէ էշը՝ դայթակղութեան նշան է։ Եթէ կինդ հեծած է իշու մը վրայ, նշան է թէ

մէկը կնկանդ ետեւէն կը առնայ։ Երազել թէ էշ մը կանգնած է դրանդ առջեւ և դուռդի բացուիր, նշան է թէ բաղդդ դուռը եկած է իսկ դուն անտարբեր ես. եթէ էշդ բեռով է, զգուշացիր, կինդ կամ սիրուհիդ քակիդ վնաս պիտի հասցնէ. եթէ երազ տեսնողը կին կամ աղջիկ է՝ նշան է թէ դրացիներուն ծանօթները իր պատիւին վրայ կը խօսին։ Տե՛ս կենդանիներ։

Էշայծեամ — Հրէշ եւ բնականէ դուրս վատակ պիտի ունենաս։

Էրէ (վայր՝ անասուն) — Նորանոր յարաբերութիւններով ծանօթներդ պիտի շատնան և պիտի ուրախանաս։ Շատ էրէ մէկտեղ տեսնել՝ այլեւայլ անձերու խորհուրդները լսելով գործդ պիտի խանգարեւ։ Էրէ որսալ՝ եթէ կենդանին զարնելով մեռած ձեռք ձգես՝ լաւ է. իսկ եթէ կիսակենդան տունդ բերես զայն, օտարականէ մը վիշտ պիտի կրես։

Էրիկ — Երազել թէ բարեկամուհիդ էրիկը քեզի հետ կը խօսի բարկութեամբ, կը նշանակէ թէ քու էրիկդ ցանկութիւններ ունի բարեկամուհիդ հանդէպ, իսկ եթէ էրիկդ քեզի հետ կը սիրաբանէ ի սարակութեան մէջ, առանց քաշուելու, կը նշանակէ թէ քեզի չի սիրեր և ուրիշ կիներու առջեւ քու մասիդ լաւ չէ խօսիր։ Երազել թէ էրիկդ հիւանդ է, կը նշանակէ թէ շատ պիտի ապրիս, իսկ եթէ մեռած է, կը նշանակէ թէ օր մը պիտի լքէ քեզ և անծանօթ կնոջ մը հետ պիտի հեռանայ։ Երազել թէ էրիկդ ուրիշ կնոջ մը հետ կ՝ամուսնանայ, կը ցուցնէ թէ քու սէրդ պիտի պաղի անոր վրայ՝ պզտիկ կասկածներով. իսկ եթէ երազես թէ դուն կ՝ամուսնանաս ուրիշի մը հետ և էրիկդ ալ անտարբեր ու հանդիսատես է ալ տարաբդիդ, կը նշանակէ թէ էրիկդ շատ կը սիրէ քեզ և ամէն մէկ քայլերուդ հաւանութիւն պիտի տայ։ Երկու այր տեսնող կինը կ՝ամուսնանայ, մէկ այր տեսնող կինը սրտհատնում կ՝ունենայ։ Եթէ էրիկդ քեզ խաբէ՝ գլխուդ փորձանք մը պիտի գայ և դուն պատուաւոր ու պարկեշտ կին մ՝ըլլալդ պիտի ապացուցանես։ Տե՛ս նաեւ Ամուսին։

Ը

Ըմբիշ — Հոգեկան խռովք և երկիւղ կ'ունենաս։ Ըմբիշ մը եթէ գօտեմարտէ մը վերջ դէպի քեզ կուգայ, կը նշանակէ թէ ամուսնդ պիտի հիւանդանայ և դուն պիտի պարտաւորուիս գործել, իսկ եթէ երազատեսը այր է, կը նշանակէ թէ իրիտասարդ վիճակին մէջ իր [illegible] պիտի կորսընցնէ։

Ըմբշամարտիլ — Տեսնելիք չարիքներ նիս, բայց ամէնն ալ պիտի յաղթես և զօրանաս։

Ըմպել — Պաղ ջուր խմելը լաւ նշան է բայց տաք ջուր խմելը կը նշանակէ թէ քու ծրագիրներդ պիտի ուշանան կատարուելու։ Տե՛ս կաթ, խմել։

Ըմպելիք (ոգելից, օղի, եւն.) — Բաղալերութիւն են բարեկամներէ, առանց նիւթական օգնութեան։ Հաճոյք տանջանք։ Խմելը՝ յանդուգն ձեռնարկութիւն, որ կրնայ պէտքերու բերմամբ լաւ կամ վատ ըլլալ, ոմանց այրի մնալու նշան է։ Ըմպելի պատրաստելը՝ տանդ մէջ մահ պիտի պատահի։

Ընթրիք — Անստոյգ վիճակդ պիտի ծանրանայ։ Երազել թէ մինակ կ'ընթրես՝ կը նշանակէ թէ կինդ կամ ամուսնդ քեզ պիտի լքէ. իսկ եթէ բազմութեան մէջ կ'ընթրես՝ կը նշանակէ առատութեան մէջ պիտի ապրիս։ Ընթրել ծանօթի մը տանը մէջ, կը նշանակէ խղուիլ անոր կնոջը հետ (կնոջը համար), իսկ եթէ այրի է կը նշանակէ ծանօթին կնոջ մտերմանալ. առանց կորսնցնելու իրենց մէջ գոյութիւն ունեցող բարեկամութիւնը։ Տե՛ս խնճոյք, շացկերոյթ, ուտել։

Ընծայ — Ընծայ ընդունիլը բարեբաղդ է։ Առնելը՝ աւրիշի համար նեղութիւն պիտի կրես։ Մէկի մը դրկելը՝ դըժբաղդութիւն է. տալը՝ մէկ ակռադ պիտի կորսնցնես՝ որ լաւ

չէ։ Եթէ ընծան կնոջմէ մը կ'ստանաս։ կը նշանակէ կինդ իմացեր է չար մտքերդ ուրիշ կնոջ մը հանդէպ. իսկ եթէ կին ես, տղամարդէ մը ընծայ կ'ստանաս՝ կը նշանակէ թէ քու պատճառաւ ամուսինդ պիտի կորսնցնէ շատ մը բարեկամներ։ Եթէ ընծայ կուտաս ուրիշ կնոջ մը՝ զգուշացի՛ր, պիտի մերժուիս այն կնոջմէն, որուն աչք ունիս. իսկ եթէ ընծայ տուողը կին մըն է ո և է մարդու (կին կամ այր), կը նշանակէ թէ էրկանդ վատ ընթացքէն տունդ պիտի դատարկուի։ Տե՛ս նաեւ պարգեւ։

Ընկեր — Պանդխտութիւն պիտի կրես բայց ուշ։ Երազել թէ ընկերներդ շատցեր են. նշան է ապրատութեան։ Իսկ եթէ ընկերներդ մէկիկ մէկիկ կը հեռանան քեզմէ, կը նշանակէ թշնամիներդ ստրդ պիտի գան և ներողութիւն պետի խնդրեն քեզմէ։

Ընկերութեան մէջ մտնել — Շատախօս ես, և ծանօթներդ շարունակ կը ձանձրացնես, ոչինչ բաներով։

Ընկոյզ — Կռիւ և աղմուկ կը նշանակէ։ Ժողվելը՝ կռիւի մը պատճառ պիտի ըլլաս, կամ շատ մը ցաւերու տէր պիտի ըլլաս զաւակներուդ երեսէն։ Ուտելը՝ գործերդ յաջող և յաղթող պիտի ըլլան, ոմանց ծանր կերպով հիւանդանալ կը ցուցնէ։ Փուճը՝ չարաչար պիտի խաբուիս և զղջաս։ Տե՛ս նաև պտուղներ։

Ընկուզենի — Անփորձառութիւն է, թէև ուշ բայց յաջողութեան պիտի հասնիս և վաստակի տէր պիտի ըլլաս։ Ընկուզենի եթէ իյնայ՝ անոր տէրը մեծ կորուստ պիտի կրէ, անձին կամ զաւկին և կամ տանը վրայ։

Ընձուղտ — Մի վախնար թշնամիէդ, վասնզի նա միայն կ'ապառնայ, անկարող է քեզ վնասելու։ Ոմանց ճամբորդել է։

Ընչախոտ — Ջազիր գործերու մէջ ես, լաւ չէ։ Բաշելը՝ վտանգներդ անցած են, անհոգ եղիր։

Թ

Թագ — Սիրոյ եռանդդ սկսած է եռալ, բայց երջան կութեանդ համար թափած ջանքերդ ի դերեւ պիտի ելնեն Ոմանց թագ տեսնելը շատ բարի է։ Ոսկի թագ՝ պիտի հարստանաս։

Թագաւոր — Դորձի յաջողութիւն և պատիւ է։ Թագաւոր ըլլալ՝ գործիդ մէջ շուարած ես, կրնաս առաջի ընթացքդ նորոգել, գործել և յաջողիլ։ Թագաւոր ողջունել փառք է. ոմանց համար թագաւոր տեսնելը՝ նշան է խոշոր իրաբերու, որոնք չեն իրականանար այլ վտանգ կը բերեն. իսկ թագաւոր ըլլալը՝ պիտի հիւանդանաս։

Թագուհի — Հիմայ գրեթէ դրախտի մէջ ես ու Եւա կը վնտռես, բայց Աղամի նման կ՚արտաքսուիս։ Թագուհի ըլլալ՝ յոյսերդ և ջանքերդ յաջողութեամբ պիտի պսակուին։

Թախտ — Պարտակով շրջապատուած թախտը՝ բարի է։ Տե՛ս Դահ։

Թակ — Կոխէ զգուշացի՛ր և մի՛ բարկանար։

Թակարդ — Մէկին գաղտնիքը իմանալ կը ցանկաս, բայց շատ դժուար է, չպիտի յաջողիս։ Կամ յաջողութիւններուդ և կնքած ամուսնութեանդ շնորհիւ թշնամիներ պիտի ունենաս և բարեկամներդ պիտի պաղին քեզմէ։ Ինչալը՝ ոպառած փնասդ պիտի ընես, և երկար ժամանակէ ի վեր ունեցած վախդ պիտի փարատի։ Լարելը՝ բարեկամ կարծածէդ պիտի խաբուիս։

Թաղար — Տնական աւելորդ և անսովոր ծախք է. կամ անդաւակ պիտի ապրիս կեանքիդ վերջին օրերուն մէջ։ Ծաղկալի թաղար՝ աշխատութիւնդ պիտի վարձատրուի։

Թաղել — Բան մը թաղել՝ գաղտնիքդ մէկու մը պիտի

յայտնես և յետոյ շատ պիտի զղջաս ու տրտմիս։ Դրամ թաղել՝ շռայլ ծախք ընել պիտի ստիպուիս։ Տե՛ս Ծածուկ։

Թաղում — Յաջողութիւն է։ Ողջ վիճակի մէջ թաղուիլ՝ կը նշանակէ թէ քաջառողջ պիտի ըլլաս և երկար պիտի ապրիս։ Տե՛ս նաեւ ցուղարկաւորութիւն։

Թամբ — Ճամբուդ վրայ լիրբ կին կայ, զգուշացի՛ր։ Երազել ձիու թամբ որուն ձին չկայ, կը նշանակէ թէ կինդ պիտի հիւանդանայ և դուն ուրիշ կնոջ մը թակարդը պիտի իյնաս։

Թան — Յուսախաբութիւն և թեթեւ վիշտ կայ։ Խմելը՝ շատ հասարակ մէկու մը պիտի կարօտիս և անկէ օգնութիւն պիտի խնդրես։

Թանաք — Անմիջական վատ լուր է։ Վրադ թափելը՝ կռիւ և վնաս կը ցուցնէ։ Իսկ եփելը՝ լաւ է։ Տե՛ս Գրելան։

Թաշկինակ — Լաւ ընկեր և հաւատարիմ բարեկամ մը պիտի գտնես և ուրախանաս, ոմանց տրտմութիւն և լաց է։ Գտնելը՝ տուն տեղ ըլլալ կամ սովորականէ աւելի վաստակ է։ Կորսնցնելը՝ բարեկամէ մը պիտի զրկուիս, անոր վրայ դէշ խօսելուդ պատճառաւ։ Եթէ թաշկինակդ կորսնցնես, ցաւերէդ և հոգերէդ պիտի ազատիս։ Թաշկինակներ տեսնելը՝ դարպասում կը նշանակէ։

Թառ — Պարապը՝ կը ցուցնէ թէ պիտի աղքատանաս։ Թռչունով լեցունը՝ բարի լուր և վաստակ է։

Թատրոն — Ուրիշներուն գործերովը շատ կը հետաքրքրուիս, ուստի վնասի պիտի ենթարկուիս, կամ ուրախ կ՚երեւիս դրոանց, բայց շատ վիշտ ունիս։ Երթալը՝ շուտով պիտի զղջաս, եթէ մտադրած գործդ կատարես, քիչ մը լուրջ եղի՛ր։ Թատրոնի մէջ գտնուիլը բարեկամներու հետ՝ բարեբախտ է, բայց լաւ չէ եթէ կը խնդաս կամ կը ծափահարես։ Թատերախաղ կամ դաւեշտ մը տեսնելը՝ առեւտուրի մէջ յաջողութիւն կը ցուցնէ։ Ողբերգութիւն մը տեսնելը՝ բեմին վրայ, կը նշանակէ վիշտ, աշխատանք և ստացուած-

քի կորուստ։ Դերասան ըլլալ երազելդ կը ցուցնէ թէ տեւական չպիտի ըլլայ յաջողութիւնդ։ Տե՛ս Դերասան։

Թարախ — Եթէ մարմնոյդ ո և է մէկ մասին վրայ է՝ շահ և հարստութիւն կը ցուցնէ։ Թարախը եթէ արիւնախառն ելլէ՝ մեղք գործելու յանդգնիլ է։

Թաց — Դժբաղդութիւն է հարկաւ, բարեբաղդ ես, եթէ զերծ ես անձրեւէն։ Տե՛ս նաև Անձրեւ։

Թաւիշ — Յաջող ձեռնարկութիւն կը ցուցնէ։

Թաքստոց — Զինքն թաքստոցի մէջ տեսնել՝ բարի է

Թել, չուան — Լարին պէս ասիկայ ալ կը նշանակէ դժուարութիւններ պիտի ելնեն քու առջեւդ, բայց եթէ հեռու է այնչափ կարեւոր չէ, թերեւս պիտի ուշանաս անպէտ պատասխանատուութիւններ ստանձնելով։ Հնարք։ Եթէ կորսուի կարժին չիլէին մէջ՝ կը նշանակէ դէշ գործեր։ Եթէ փթթի՝ սնանկութիւն է։ Ոսկիէ թելը աղքատութիւն է։ Տե՛ս Դերձան, չուան։

Թեւաւոր — Զինքն թեւաւոր տեսնել՝ հոգիներու հանդիպիլ է։

Թեւնոց — Այսօր գործիդ արդելք մը պիտի պատահի։

Թզենի — Պատրաստ փորձանք մը կայ գլխուդ շուրջ, լիրբ մարդէ մը նիւթուած։

Թէյ — Թէյ շինելը՝ կը նշանակէ թէ դուն քու ձեռքովդ պիտի աւրես քու խոհականութիւններդ։

Թթենի — Հարուստ մարդէն քեզ խոստացուածը չպիտի կատարի։

Թթու — Թթու մածուն ուտելը՝ ձրի վաստակ է։ Թթու բան խմելը՝ կռիւ է երկու սիրականի միջեւ։ Թթու կերակուրը լաւ է։

Թթուաշ — Սիրոյ մէջ տանջուիլ է։

Թիթեղ — Վնասակար տարաձայնութիւն է։

Թիթեռնիկ — Սիրային ցանկութիւններդ քեզ կը նեղեն և քեզ փորձանքի մէջ կը ձգեն։ Ծաղիկներուն մէջ թի

թեռնիկ տեսնելը՝ յաջողութիւն է. անոնց անհանգիստ կերպով թռչիլը՝ նամակ ստանալ կը ցուցնէ։ Թիթեռնիկը բռնելու համար ետեւէն վազողը՝ պարապ խնդիրներու մասին ունայնամիտ մարդոց հետ կը վիճաբանի։ Բռնելը՝ անորոշ կացութեան մէջ գտնուիլ է։

Թիւեր (Համրանքի) — Ասոնք նշան են նեղութեան և դժուարութիւններու։

Թխսել — Հաւը իրեն թխսած վառեակներուն հետ տեսնելը, շատ զգուշութիւն կը նշանակէ, հաւը թուխս դնել, ճոխութեան և առատութեան մէջ պիտի ապրիս։

Թղթաբեր — Բացակայէ մը լուրեր։

Թղթախաղ — Ասոնք միշտ դժբաղդ են. կը ցուցնեն անվերջ խռովութիւն և շարունակական յուզում։ Եթէ հաճոյքի համար կը խաղաս ուրիշին հետ, շատ կարեւոր չէ. բայց եթէ կը խաղաս գրաւ դնելով, շատ մտահոգիչ է. եթէ կորսնցնես, անձնական թշնամիներ ունենալ կը նշանակէ. եթէ շահիս, հաւանաբար գործդ յաջող պիտի երթայ բայց շատ տագնապէ յետոյ։ Քառեակները (օրեա)՝ կ'ազդեն դրամական խնդիրի վրայ. առոյտը (ապաթ)՝ նկատի առնելու ես բարեկամներդ. սրտիկը (գուբա)՝ կառավարելու ես սիրոյ խնդիրներդ. իսկ սլաքը (մաչա)՝ առողջութեանդ զգուշութիւն ըրէ։

Թմբուկ — Պարապ երկիւղներով անձդ կը տանջես. բոլոր վախերդ անտեղի են։ Զարնելը, անձնագովութիւն կ'ընես. լաւ չէ. ոչ մէկը կը հաւատայ խօսքերուդ։

Թնդանօթ — Խաբէութիւն, աւերումն կամ մահ է ազգականներու, եթէ հարուածները կրկնուին։ Տե՛ս նաեւ Թընդիւն։

Թնդիւն — Եթէ երազիդ մէջ այլ և այլ դէնքերու թընդիւններ (ձայներ) կը լսես՝ կը ցուցնէ թէ լուր պիտի ստանաս լաւ կամ վատ։ Իսկ եթէ երազես թէ թնդանօթի կամ զէնքի և կամ զանազակի մը գլուխն անցած ան-

ձամբ զուն կը նետես կամ կը զարնես, կը ցուցնէ թէ գործ մը պիտի ձեռնարկես. եթէ չյաջողիս ձայնը հանել կամ անձայն նետուի կամ հնչուի թնդանօթը, զէնքը կամ զանգակը, ուղղղող կամ չուղղղող, այն ատեն գիտցիր որ ձեռնարկներուդ մէջ չպիտի յաջողիս։ Եթէ կարողանաս նետել կամ հնչեցնել ուժգին մինչեւ ետքը, իրական կեանքիդ մէջ ալ այդպէս պիտի ըլլայ գործդ յաջողելով։

Թշնամի — Ճամբորդութեանդ մէջ վտանգ է։ Թշնամիդ ետեւէդ՝ շուտով պիտի յաղթես և խնդաս. եթէ հետը խօսիս՝ զգոյշ եղիր անկէ. եթէ հետդ կռուի՝ անոր հետ պիտի հաշտուիս։ Թշնամի ըլլալ մէկուն՝ իրաւարար մարդ է։

Թոթովել — Ցամառութիւն, չարութիւն է։

Թոյն — Ներքին ուրախութեան նշան է։ Առնելը կամ ուտելը՝ կը նշանակէ թէ վիճակդ պիտի փոխուի լաւագոյնի, պատիւի և պաշտօնի տէր պիտի ըլլաս։

Թուզ — Իր եղանակին մէջ լաւ նշան է. կը ցուցնէ ուրախութիւն և հաճոյք. եղանակէն դուրս կը ցուցնէ լկտի կնոջ սէր և թակարդ, կամ ամէնքէն լքուիլ է։ Թարմ թուզ ուտել, վտանգաւոր հաճոյք և փնաս կը ցուցնէ. չոր թուզ տեսնելը, խելքովդ չարիք մը պիտի ազատիս և խրատուիս, իսկ ուտելը շահ է. կանաչ թուզ տեսնելը, զղջում և փնաս է ոմանց յոյս է. ուտելը, կորսուած ծրար է։

Թուխ — Փոքր յուսահատութեան նշան մըն է. թուխ ուտել, անհաճոյ լուր կամ դէպք մը կը ցուցնէ։

Թուխակ — Շատախօսութիւնդ քեզ կը փնասէ։ Բռնելը, լկտի կին կամ համբ զաւակ է։

Թուխ — Թուխ մօրուքով ալեւոր տեսնել շահ է, զինքն թուխ տեսնել, մեծութիւն է անձին։

Թուղթ — Գէշ նշան է թուղթը կամ փաստաթուղթը. հաւանաբար գրամ պիտի կորսնցնես։ Թուղթի վրայ գիր գրել կամ կարդալ՝ կը նշանակէ լուրեր ստանալու։ Ճերմակ թուղթը, խորհրդածութեան պակաս. կարճատեւ հիւանդու-

թիւն է. ծալլուածը, լուր. կնքուածը, դատավճիռ. ներկըլուածը, վայրկեանի մը ուրախութիւն. սեւը, տխուր լուր կամ սուգ պիտի ունենաս. գրուածը, ծանր մէկ գաղտնիքդ պիտի իմացուի։ Եթէ պատուես կամ աղտոտես թուղթը, կը նշանակէ թէ գործերդ լաւ վիճակի մէջ պիտի դնես։

Թունաւորել մէկը — Շատ կը ծախսես և շռայլ ես. բայց տունդ և սերնդաւորներդ կը զրկես, որոնց համար շատ պիտի զղջաս։

Թուր — Վրադ շատ կը խօսին և կը բամբասեն, որուն շարունակութիւնը կրնայ քեզ վնասել. թուր կապելը՝ սեծերէ պատիւ պիտի վայելես։ Մերկ թուր տեսնելը, նշան է տաք վէճերու որոնք շուտով կը խաղաղին։ Տե՛ս նաև Սուր։

Թռուցիկ — Նշան է զողերու և աւազակներու կողմէն վտանգի հանդիպիլ։

Թռչիլ — Շատ մեծ կարեւորութիւն ունի թռչիլ երազելը, ասի սովորաբար կը նշանակէ ստոյգ յաջողութիւն մանաւանդ երբ ուղիղ կը թռչիս կամ ուրիշ տեղ երթալ ու մեծութեան հանդիպիլ է։ Բայց եթէ շատ բարձրէն է, կը նշանակէ ամուսնական տագնապ, իսկ եթէ շատ ցած, հիւանդութիւն է։ Եթէ իր տանիքէն ուրիշ տանիքի վրայ թռչի՝ իր կինը կամ ամուսինը թողուլ և ուրիշ կին կամ ամուսին առնել կը ցուցնէ։ Եթէ թռչելով բարձրանաս՝ վիճակդ երթալով պիտի բարւոքուի, կամ պաշտօնի բարձրացում է։

Թռչուն — Վարքիդ և բարքիդ փոխուելուն և լուր ստանալու նշան կը համարուի։ Երգողը, շատախօսութիւն, տուաւելութիւն ուրիշի վրայ. կռուողը, կռիւի նշան է. սեռածը, երեսէ ձգուած ընտանիք. արձակելը, մեծ բարութիւն և կամ սիրոյ նշան մը պիտի տաս մէկուն։ Թռչնոց կռիւը՝ տեղական թեթեւ վնաս է։ Եթէ թռչունը քու անձիդ մօտենայ, մարդիկ « երանի » պիտի ըսեն քեզի։ Թռչունի փախչիլը, վնաս կը ցուցնէ. թռչունը եթէ հետդ խաղայ, քու թշնամիներդ քեզ պիտի սիրեն. թռչուն բռնելը, շահու և

հաճոյքի տիրանալ է. ոևէ գիշերային թռչուն, գէշ նշան է. եթէ առեւտուրի պիտի ձեռնարկես, լաւ է որ գոյշ ըլլաս և հետեւեալ օրը գործի չի ձեռնարկես։ Երգեցիկ կամ ծառի վրայ ճռուողող թռչունները գերազանցօրէն լաւ նշան են. բայց որսի կամ սեւ թռչունները, նեղութիւն կը գուշակեն։ Ցաջողութեան նշան է եթէ թռչունները վանդակէն դուրս հանես, բայց թռչուններ սպաննելը աղէտի մը նշան է. վիրաւորուած թռչունը, կը նշանակէ թէ խորունկ ցաւ մը պիտի կրես քու ընտանիքիդ մօտիկ մէկ անդամէն, յաճախ մանուկներէն։ Թռչող թռչունները, յաջողութեան նշաններ են, մանաւանդ եթէ անոնք գեղեցիկ փետուր ունին. Թռչուններ բռնելը՝ միշտ գէշ նշան է։ Թռչուններ թակարդի մէջ ձգելը՝ նշան է թշնամիները խորամանկութեամբ ծուղակի մէջ ձգել։ Խոշոր թռչունները, յաջողութիւններ կը ցուցնեն հարուստին համար, իսկ վնասներ աղքատին համար։ Մանր թռչունները, հարուստին աղքատանալ իսկ աղքատին հարստանալ կը ցուցնեն։ Թռչունները եթէ գլխուդ վրայէն թռչին՝ կը նշանակէ որ թշնամիներդ պիտի նախապաշարուին քեզի հանդէպ։ Թռչուններուն մեծ իրարանցումով կըռուիլը՝ նշան է հակառակութիւններ տեսնել և մէջը դըստնուիլ։ Տե՛ս նաեւ Աղաւնի, Բոյն, Գեղձանիկ, եւ այլն։

Թրթուր — Դառնութիւն և վիշտ կը ցուցնէ։

Թրիք — Տե՛ս Աթար։

Ժ

Ժամադիր ըլլալ — Գործիդ մէջ զանցառութիւն ընելով պիտի վնասուիս և տուժես։

Ժամացոյց — Լաւ նշան է ժամացոյց երազելը, բայց

այելու չես ժամանակը կամ զարնելը որը կը ցուցնէ թէ շատ անհմբեր ըլլալուդ համար, ոչ մէկ գործդ լաւ չես կատարեր. ծանր եղիր, որովհետեւ դէշ շրջանի մէջ կը գըտնուիս. կորսուած ժամանակ, անօգուտ վիշտ։ Դադրածը, անակընկալ վնաս կը ցուցնէ. կոտրածը կամ կոտրելը, գործէդ կամ պաշտօնէդ պիտի հրաժարիս. կորսնցնելը, կը նշանակէ ընտանեկան վրդովում որուն համար չպիտի ցաւիս. ընծայելը, նշան է թէ դուն պիտի կորսնցնես բուն իսկ քու շահդ։ Պատի ժամացոյցը պատի վրայ տեսնելը, հոգերէ ազատիլ կամ նպատակդ իրագործելու ժամանակը հասած է, շուտով գործդ պիտի յաջողի։ Կոտրածը կամ վար ինկածը, վտանգ կը ցուցնէ։ Անոր հնչիւնը լսելը, տհաճելի լուրեր լսելէ։

Ժամկոչ — Ծանօթներէդ մէկը պիտի մեռնի կամ ձեր տունէն մէկը կղերական պիտի ըլլայ։

Ժայռ կը ցուցնէ աւելի տհաճելի պարագայ քան թէ երջանկութիւն քեզ համար, կամ. անդութ մէկու մը հովանաւորութիւնը պիտի խնդրես և պիտի մերժուիս։

Ժանգ — Վնասակար գործ մը պիտի գործեսւ Կանաչ ժանգը, ծանր հիւանդութեան նշան է. ժանգ մաքրելը, սխալներդ պիտի դարմանես, բայց խիստ քիչ պիտի կրնաս յաջողիլ։

Ժանեակ — Բամբասանք է. կամ կինդ ծուռ ճամբաներէ պիտի քալէ։ Եթէ երազողը կին է, իր ամուսինը զինքը պիտի ձանձրացնէ իր շատ կլքոտ սիրովը. կրելը, բաղդաւոր նշան է. գնելը կամ ծախելը, դժբաղդ է։

Ժանիք — Թշնամիդ կարծածէդ աւելին պիտի ընէ։

Ժանտախտ — Բնակած տեղիդ նկատմամբ հարցուփորձի և գուցէ վնասի ալ պիտի ենթարկուիս.

Ժապաւէն — Անոնք կը վերաբերին սիրային խնդիրներու և եթէ նոր և փայլուն են, նպաստաւոր է. եթէ կին մը ժապաւէն տեսնէ, երկրորդ անգամ պիտի ամուսնանայ. իսկ

եթէ այր է տեսնողը, իր կնոջ սէրը պիտի կորսնցնէ և անիրաւ տեղը պիտի զրպարտուի։

Ժառանգութիւն — *Տեսնել կամ տիրանալ, նիւթական մեծ մնաս է բարեկամի կամ ազգականի երեսէն։*

Ժժման, Ժժունք (Ցովու կակղամորթ ճճի) — *Ունեցածիդ մեծ մասը կորսնցնելու հարկին մէջ կը գտնուիս. կորուստ և ցաւ է։*

Ժողով — *Խաղաղ ժողովը կը ցուցնէ թէ սպառնալի վիճակի մէջ կը գտնուիս. աղմուկ և կռիւ մօտալուտ են։ Աղմկալից և անկանոն ժողովները կը նշանակեն տարիներէ ի վեր քէն պահող մէկ մտերիմիդ կամ ազգականիդ հետ պիտի հաշտուիս, անոր առաջարկութեամբ։*

Ի

Իժ — *Զարախօտութիւն է։*

Իյնալ — *Դժուարութիւն կը ցուցնէ ձեռք բերելու համար փափաքներդ։ Եթէ ինքզինքդ կազդուրես կը նշանակէ բաղդաւոր ճամբայ մը դժուարութենէ ելլելու. եթէ նաւին քով իյնաս, կը նշանակէ հիւանդութիւն և աղքատութիւն։ Եթէ շատ վախցած երեւնաս, մեծ դժուարութիւն կը ցուցնէ եթէ փնտռուիս, բարեկամներ պիտի կորսնցնես։ Տե՛ս Անդունդ, Ջի, Նաւ։*

Ինձ (Ընձառիւծ) — *Փափաքներդ շուտով պիտի իրականան։*

Իշամեղու — *Յանկարծական տաղնապ պիտի կրես զօրաւոր թշնամիէ մը և պիտի վշտանաս։*

Իշխան — *Պարտքերդ պիտի պահանջեն և դուն պակասութեանդ համար պիտի նեղուիս։ Ոմանց համար իշխան*

տեսնելը փափաքներու իրականացում կը ցուցնէ։ Իշխանի հետ խօսիլ, անսպասելի շահ և յանկարծական բարի շնորհք է։

Իշխանուհի — Ցոյս, պատիւ և խնդութիւն է. բայց ոմանք կ'ըսեն թէ կինդ պիտի պարի քեզմէ. իսկ կին մարդոց՝ պիտի դարձին իրենց սիրահարին կամ ամուսինին իշխանուհի ըլլալէ։

Իջեւան — Փոքր կորուստ պիտի ունենաս։

Իրիկուն — Դժբաղդ պատահար է. անիրականանալի յոյսեր, բաժանում սիրահարէ և բարեկամներէ։

Իւղ — Մէկը քեզ խաբելու պիտի ձեռնարկէ, բայց ինքը պիտի մնասուի։ Իւղ ուտելը՝ բարի է. շիշով իւղ՝ շահ և վաստակ է. տարածուած իւղ՝ կորսուած խօսքեր կը ցուցնէ. իւղ հագուստներու վրայ՝ հունձքի նշան է։ Կիներուն համար իւղով օծուիլը՝ լաւ նշան է, իսկ այր մարդոց՝ ամօթի։ Իւղ խմելը՝ թոյնի նշան է։

Իւղաբլիթ — Խնճոյք պիտի վայելես։ Ուտելը՝ փափաքիդ պիտի հասնիս։ Տե՛ս նաեւ խմորեղէն։



Լ

Լաբիւրինթոս — Ընտանեկան հոգեր կը ցուցնէ։

Լաթ — Նշան է բաղդի և առատութեան։ Տե՛ս կտաւ։

Լալ — Առհասարակ բարեբաղդ նշան է լալդ, մանաւանդ մեկնած բարեկամի մը համար կը նշանակէ ոյժ և ուրախութիւն։ Սիրահարներուն համար սակայն, սխալ հասկացողութիւն և բաժանում է. եթէ նստած կուլաս՝ շատ նեղութիւն է։ Տե՛ս Արտասուք։

Լալկան կին — Վտանգաւոր թշնամի է. բարեկամի ձեւով քեզ պիտի մօտենայ և պիտի մնասէ։

Լամբար — Յաջողութեան տկար յոյս և օգնութիւն է կամ ճանապարհ. ոմանց կարեւոր լուր մը առնելու նշան է։ Վառելը՝ յաջող ապագայ և բարի գաւակներ կը գուշակէ։ Վառածը՝ շահ, հաճոյք և վաստակ է։ Եթէ յանկարծ մարի՝ սիրային դժբաղդ պատահար և կորուստ է մօտաւոր անձի. ուն։ Լամբարներ, ասոնք կ'ազդեն գործառնութեան վրայ։ Պարապ լամբարները կը նշանակեն վհատութիւն և վիշտ, բայց լեցունները նշան են բաղդաւորութեան։ Եթէ սենեակիդ մէջ երեք լամբար վառած տեսնես՝ դժբաղդութեան նշան է։

Լապտեր — Տե՛ս Լամբար։

Լար — Տե՛ս Ջուան։

Լեարդ — Տեսնել կամ ուտել տրտմութիւն է. գաղափարներու դառնութիւն։ Եթէ մարդու լեարդ է կերածդ գանձ կը գտնես։

Լեզու — Այրած կերակուր կամ բամբասելու փափաք է։ Եթէ տեսնողը այր է, կռիւ և աղմուկ. իսկ եթէ կին՝ փաստաբան որդի կ'ունենայ։

Լեղակ — Դէշ գործերուդ համար ինքզինքդ կը ծածկես բայց պիտի յայտնուիս և վիշտ կրես։

Լեռ — Յուսահատութիւն է որ քեզ պատած է։ Լեռնել՝ թէև ուշ բայց նպատակիդ պիտի հասնիս։ Բարձր լեռ՝ տրտմութենէ կ'ազատիս։ Շարժուն լեռ՝ տնական ս վտանգի նշան է, և գրեթէ ընդհանուր փճացում գործիդ. մագլցիլը բլուր մագլցելու ոգէս դժուարութեանց նշան յաջող կերպով բարձրանալդ լաւ նշան է։ Տե՛ս Ելնել։ Մագլ

Լիճ — Հարբուխէ պիտի նեղուիս։ Մտնելը՝ վկայութեան պիտի կանչուիս։ Հանդարտ լիճը՝ կը ցուցնէ թէ գործերուդ մէջ ոչ է փոփոխութիւն չպիտի տեսնես։ Եթէ ջուր պղտոր է, ատի սիրոյ կռիւ է։

Լկտի կիներ — Դէշ հունձքի նշան է։

Լճակ — Յատակը՝ տեւական բարեկամութիւն, խոռվածը՝ փոթորիկի նշան է։ Լճակ մեռած ձուկերով լեցուն՝ սովի նշան է։

Լոգնայ — Շատ անհանգիստ պիտի ըլլաս հակառակ սեռի վերաբերողէ մը. տաք բաղնիք առնելը գրեթէ հոյնպէս դէշ նշան է, իսկ եթէ ցուրտ է կրնայ լուսալից ըլլալ։ Տե՛ս Բաղնիք, Լուացք, Ջուն։

Լոլիկ — Շատ բաղդաւոր նշաններ են, մանաւանդ ընտանեկան և սիրային խնդիրներու մէջ. հաւասարապէս բարեբաղդ է անոնց ամիլը կամ գանոնք ուտել երազելը։

Լողալ — Լաւ նշան է երբ կը լողաս կամ ջուրի մէջ կը սուզիս, նաև երբ գլուխդ ջուրէն բռնուած է։ Տե՛ս նաեւ Լուացք։

Լոյս — Սէր, պատիւ, աշխարհի խաղաղութիւն և հասարակաց յարգանք է։ Մարելը՝ բարեկամներուդ ինաս պիտի տաս։ Մարածը առաջնորդաց տրտմութիւն է։ Վառելը՝ մէկին գաղտնիքը պիտի յայտնես ուրիշին և ատով ինաս պիտի պատճառես։ Եթէ մէկին ձեռքին մէջ լոյս մը տեսնես՝ կը ցուցնէ թէ գործուած չարիքը երեւան պիտի ելնէ և յանցաւորը պիտի պատժուի, իսկ եթէ ազօտ կամ բոլորովին մարած է, ճիշդ հակառակը պիտի պատահի։ Տե՛ս Ճրագ, Լամբար։

Լորամարգի — Նշան է պտղաբերութեան։ Սպանուածը նշան է իրական հոգերու։

Լորտնուկ — Կը ցուցնէ պատուոյ պաշտօն։ Երկայն բազուկներովը՝ նշան է անհաւատարմութեան։

Լու — Օրավարձդ քարէն կը ճարես։ Ուտելը՝ անհանգստութեան մէջ պիտի իյնաս։

Լուացարար — Դէշ մարդէ մը լաւ բան պիտի սորվիս։

Լուացուիլ — Գործերդ աւելի պիտի յառաջանան։ Գետակի մէջ լուացուիլ՝ նշան է վաղանցիկ ծրագիրներու. ջրանցքի մէջ լուացուիլը՝ բաղդաւորութեան, իսկ ողմուտ լճակի մէջը՝ հիւանդութեան նշան են։ Տե՛ս նաեւ Երես։

Լուացք — Նշան է կարգաւորութեան և մաքրութեան. Եթէ տղամարդ մը տեսնէ որ լուացք կ'ընէ կամ կը լոգնայ լոգարանին մէջ, կը նշանակէ որ պիտի հարստանայ. հիւանդին համար այս երազը առողջութիւն կը ցուցնէ. առանց զգեստի լուացք ընել կամ կամ զգեստով լոգնալը դէշ նշան է. հիւանդութիւն և մեծ վտանգ կրնայ պատահիլ։ Աղբիւրի, լճի կամ հոսուն ջուրերու մէջ և կամ մաքուր յատակ հոսանքի առջև լոգնալ՝ լաւ նշան է, պայմանաւ որ չի լողաս, իսկ լողալը՝ նշան է վտանգի և հիւանդութեան։

Լուբիա — Վիճակէդ միշտ դժգոհ ես, բայց համբերէ. շուտով լաւ շրջան մը պիտի գայ։ Եփած լուբիա ուտել՝ կանխանշան նոր յաջողութեան. իսկ չեփածը ուտել՝ կը ցուցնէ թէ նեղութիւններու պիտի հանդիպիս և անհամաձայնութիւններ պիտի ունենաս։

Լուծ — Լուծ դնելը. վատ է. նեղութիւն պիտի կրես. եղանց լուծքը բարի է, կը ցուցնէ շարունակութիւն ներկայ կեանքիդ։

Լուղորդ — Հաճոյքներ ու ցանկութիւններ ունենալու նշան է։

Լուսանկարը — Բարեբաղդ նշան չեն. հոգ չէ թէ թուղթ կամ քարթ ըլլալը։ վստահաբար դժուարութիւն ակընկալէ։ Լուսանկար քաշելը, նշան է ուրախութեան, առանց շահու. կնկայ դէմք տեսնողը, էրիկ կնիկ իրարմէ կը բաժնուին. եթէ երազողը ամուրի է, աղջականէն կամ սիրուհիէն կը բաժնուի։ Եթէ լուսանկարը այր մարդու դէմք է էրիկ կնիկ կը հաշտուին, կամ եթէ երազողը ամուրի է, իր աղջականներէն մին հեռու տեղէ մը կ'ուզայ։ Տե՛ս նաեւ Պատկեր։

Լուսավառութիւն — Նշան է մօտաւոր վշտակցութեան։

Լուսին — Անակնկալ հաճոյք կամ պզտիկ ուրախութիւն է։ Ոմանց համար նշան է այլանդակ սէրի, անկայուն բաղդի և պարապ երազներու։ Բոզարկուածը, սուգ կը նշա-

նակէ. լեցունը թեթեւ սէր, կին ունենալ և առողջութիւն է կամ երկրէդ պիտի հեռանաս. նորը, շահ, զաւակ կամ ամուսնութիւն է։ Ջոյգը՝ երկու ազգեր պիտի զոռոգանան իրարու դէմ, կամ կարճատեւ պատերազմ է։ Լուսիններ՝ երկրին զարգացումն է։ Կասկարմիր եղած լուսինը՝ վիշտ և վնաս է, կամ տեղական ծանր վտանգ է։ Մթին լուսինը՝ վիշտ է տիրող անձերուն խաւարը՝ թագաւորի մահ է. եթէ լուսինը և արեգակը այդին տեսնես, ազգին վնաս է։ Եթէ լուսինը երկինքէն իյնայ՝ թագաւորի մը մահ է։ Լուսնի խաւարումը՝ խոնարհութեան նշան է։ Եթէ լուսինը փայլուն է՝ կինդ քեզի շատ կը սիրէ. եթէ ծածկուած ըլլայ, մէկը քեզի հանդէպ իր խոստումը պիտի մերժէ. եթէ դէմքիդ վրայ խնդայ ու ծիծաղի՝ տանդ մէջ անհամաձայնութիւն պիտի ծագի. եթէ լուսինին դէմքը անուշ երեսիդ վրայ ժպտի՝ պիտի ամուսնանաս կամ պիտի նշանուիս։ Տե՛ս նաեւ Արեգակ։

Լուցկի — Ասոնք կը նշանակեն անակնկալ դէպքեր. ընդհանրապէս լաւ նշաններ են։ Վառելը՝ վտանգէ մը պիտի ազատիս. ումանց համար տեսնելը՝ կռիւի մը պատճառ ըլլալու նշան է, իսկ վառելը՝ փնտռածդ չպիտի գտնես, մի՛ յոգնիր։

Լրագիր — Շատ դժբաղդ նշան է, կը ցուցնէ թէ գործերդ լաւ չեն և բոլորովին պիտի աւրուին։ Կարդալը՝ գործիդ մասին անհոգ ես, պիտի վնասես։

Լրտես — Բարեկամներդ քեզ պիտի դաւաճանեն։

Լքել — Ամուսինը լքել՝ նշան է ուրախութեան։ Իր գործը լքել՝ նոր բարեկամներու տիրանալ է։ Լքել իր սիրականը՝ հանգստութիւն. լքել իր տունը՝ մեծ վատակութիւն բարեկամներէդ կամ ընտանիքէդ լքուիլ երազելդ, կը նշանակէ դժուարութեան և հակառակութեան պիտի հանդիպիս

Խ

Խաղալ — Վիճակդ երթալով վտանգուելու վրայ է։

Խաղալիք — Միայն շահդ կը մտածես. տունդ ալ յիշէ։

Խաղեր — Անմեղ խաղերը նշան են արտի հանդարտութեան։

Խաղող — Անձրև և ցնորք է. խաղողի ատենը լաւ է կը ցուցնէ ուրախութիւն և վասատակի յաւելում։ Սպիտակը կը ցուցնէ ուրախութիւն. հաւաքելը՝ շահ ձեռք բերել է կամ գործի յաջողութիւն և պատիւ է։ Մեռը՝ լաց է, իսկ հաւաքելը՝ վնասներու ենթարկուիլ է։ Խաղող ուտել՝ պզտիկ հիւանդութենէ մը կ՝ազատիս, կամ՝ ապագայ չես մտածեր, լաւ չէ. իսկ քամելը՝ խորհուրդներդ չափազանցութեան կը տանիս. գուցէ անյաջողութեան մատնուիս։

Խայթում — Վրդ կը նախանձին առանց վնասելու։ Եթէ կը խայթուիս՝ ցաւ և վիշտ պիտի ունենաս։

Խանձարրել — Հայրական կամ մայրական սէր։

Խաչ — Մեծ ցաւ և չարչարանք, բայց վերջդ լաւ է. զղջում. բռնելը՝ քեզ մօտեցող մէկը կայ, զգուշացիր անկէ։

Խաչակնքել — Մեծ պատուոյ նշան է։

Խաչափար — Նշան է դատարկ մարդու կամ արդարութեամբ բաժանումէ իսկ կործանումամուսիններու համար։

Խար — Հարստութեան նշան է։ Կտրելը՝ յոգնութիւն է։ Իսկ այրելը՝ նշան է վրէժխնդրութեան փափաքներու։ Տե՛ս նաեւ խոտ։

Խարազան — Ըրէ ինչ որ կը մտածես, պիտի յաջողիս։

Խարիսխ — Ցոյսերդ պիտի իրականանան, կամ պաշտպանութեան նշան է։

Խաւար — Նեղութիւն է, կամ տանդ գործերուն մէջ չարակամ մը կայ։ Տե՛ս մթութիւն։

Խաւարծիլ — Հաճելի զբաղում մրն է ասոր աճիլը երա-զելը. բաղդաւոր չէ եփել կամ ուտել զայն։

Խաւեար — Հիւանդութիւն կը ցուցնէ։

Խափշիկ — Պանդխտութիւն պիտի քաշես։

Խեղդուիլ — Սեփականութեան կորուստ է, բայց եթէ ազատիս, երկար ատեն պիտի պահես դիրքդ։ Իսկ եթէ ուրիշ մ'է խեղդուածը և դուն Չուրին մէջ է, ատի մօտակայ վտանգ է. իսկ եթէ Չրէն հանուած է, անվնաս դէպք է։

Խենդ — Երջանիկ ամուսնութիւն և լաւ վիճակ է։ Խենդենալ՝ յոյսերդ լիովին պիտի կատարին, մասնաւոր անոնց համար որ պզտիկներու ուսուցիչ են։

Խեչեփառ — Տե՛ս Խաչափար։

Խեցեղէն (կաւէ անօթ) — Նշան է պարապ տան. իսկ խեցեղէն ման ունենալը՝ նշան է ուրախութեան։

Խէժ — Տե՛ս Բեւեկն։

Խիթ — Գոհացուցիչ փափաք։

Խիւսանոյշ — Դէշ նշան է։ Տե՛ս նաեւ Ցաւ։

Խլուրդ — Տանդ մէջ գաղտնի բաներ կը դառնան, Չանա՛ իմանալ, թէ ոչ կ'ուրծանուիս մօտ է։

Խղունջ — Ինքզինքդ շատ անարժէք կը նկատես երբեմն, որ առաջ չերթալուդ պատճառ կ'ըլլայ։

Խմել — Տաք Չուր խմելը՝ նշան է հիւանդութեան և գործերու ձախողանքի։ Տե՛ս նաեւ Ըմպել։

Խմոր — Առատութիւն պիտի վայելես. ուտելը՝ շահ է. ոմանց խմոր ուտելը՝ նշան է իրենց յարգին ու աստիճանը պակսելուն։

Խմորեղէն — Օրհնութիւն և լաւ բաղդ է։ Ուտելը՝ շահաբեր գործեր կամ նպաստակիդ շուտով պիտի հասնիս։ Տե՛ս Իւղաբլիթ, Փոխինդ։

Խնդալ — Դէշ նշան է թեթեւակի խնդալը, կը ցուցնէ ցաւ և տրտմութիւն. սակայն բաղդաւոր է երջանկաբեր դուարթօրէն ծիծաղիլդ։ Շատ բարեբաղդ է նաեւ խնդացող մանուկներ երազելը։

Խնկաման — Նշան է տխրութեան.

Խնձոր — Տղայ և աղախին է, կամ նախանձորդ կիներէ պատիւ պիտի վայելեն։ Փորձութիւն, անպատիւ, շահ։ Ուտելը շահ է կամ յաջողութիւն կ'ունենաս սիրոյ մէջ։ Եթէ խնձոր տան քեզ՝ սիրոյ լուր պիտի ունենաս։ Իսկ եթէ դուն տաս մէկու մը՝ անոր սիրոյ նշան պիտի տաս. ուստի համար խնձոր ուտելը՝ նշան է կսկծալի վէրքերու, հաւանաբար եղանակէն դուրս ըլլալու է։ Տե՛ս նաև խնձորենի, պտուղներ։

Խնձորենի — Տեսնել և քաղցր ու հասուն խնձոր ուտել՝ կիներուն համար զաւակ բերելու նշան է, իսկ այրերուն ուրախութիւն և հաճոյք վայելել է։ Ծաղկած խնձորենին՝ նշան է կուսութեան, բարի յոյսի և դաշտային զոհունակութեան։ Վաղնջուց և կոտրածը՝ թշուառութեան և աղքատութեան նշան է։

Խնճոյք — Երազի մէջ ճաշելը և հաճոյանալը յաջողութիւն կը ցուցնէ. անօթի մնալդ յուսահատութիւն է. լաւ է ուրիշ մարդոց ճաշելը երազելդ, նշան է գործերու յաջողութեան. անյագ կերպով ուտելդ դժբաղդութիւն է։ Տե՛ս նաև դան, ընթրել, ուտել, հացկերոյթ եւ Ուրախութիւն։

Խոզ — Բարի և չար բաղդի նշան է. եթէ առողջ դիրուկ են, բարեբաղդ է, կը ցուցնէ ապահով շահ. իսկ եթէ վտիտ են, ակնկալէ թէ դժբաղդ պիտի ըլլաս, կամ շէկ մազերով թշնամիէդ զգուշացիր։ Մեծ խոզ երազել՝ նշան է ժահու։ Էգ խոզ և խոզերու ազտեղութիւն տեսնել՝ կը նշանակէ թէ մեծ ընտանիք մը պիտի ունենաս, առանց զայրի խնամելու նիւթական միջոցներով։ Խոզի միս՝ լաւ կարծուն գործէդ պիտի փնասես։ Խոզի միս ուտել՝ ազգականաց մահ է։ Տե՛ս նաև վարազ։

Խոզանակներ — Գէշ խօսքեր լսելու նշան է։ Տե՛ս նաև Աւելներ։

Խոզկաղին — Առ հասարակ լաւ զեկոյց մըն է. կը նշանակէ առողջութիւն և ոյժ։ Գեղանէն հաւաքելդ կը ցուցնէ

թէ յաջողութիւնդ պիտի դայ քիչ մը ջանքով։ Ծառը ցընցելով շուտով զանոնք թափելդ՝ արագ յաջողութիւն կը նշանակէ, բայց անոնց կանաչ վիճակի մէջ եղած ատեն ծառը ցնցելդ՝ կը նշանակէ թէ քու ձեռքովդ աճապարանօք պիտի աւրես բաղդդ։

Խոհանոց — Բեզ եղած վստահութիւնը սկսար կորսընցնել, կամ բարեկամի մը դարձ է։

Խոհարար — Իր տանը մէջ տեսնել՝ լաւ նշան է անոնց համար, որոնք պիտի ամուսնանան. լաւ նշան է նաև աղքատներուն համար, իրենց սեղանը ճոխանալ կը ցուցնէ։

Խոյ — Տառապանքի նշան է. եթէ իր եղջիւրներով զարնէ, անպատուութեան նշան է։

Խոնջենք — Դժուարութեան նշան է. յաջողութենէդ առաջ կը ցուցնէ թէ շատ պիտի տագնապիս։ Տե՛ս նաև ցոգնած։

Խոստովանիլ — Վտանգի մը ազդարարութիւն է։

Խոտ — Միտքդ և փափաքդ լաւ են, բայց անոնց չը պիտի կրնաս տիրանալ, արժանիք չունիս. բարձր խոտ՝ նշան է երջանկութեան։ Ժողվելը՝ նպատակիդ մօտենալու վրայ ես, կամ պատիւ է։ Ուտելը՝ լեզուի չորութիւն է։ Ջորը հին առնելիք մը պիտի ստանաս։ Տե՛ս Դալարեղէններ, խար։

Խորան — Զեկոյց է. խորանի սեղանէն հաղորդութիւն առնելդ՝ հիւանդութիւն է, քու ընտանիքիդ մէջ. մահ բարեկամներու կամ դժբաղդ ցաւ մը։ Տե՛ս ցաճար։

Խորխորատ — Մարդու և ապրանքի կորուստ, նաև կրակի վտանգ է։ Տե՛ս նաև Ընդունդ։

Խորոված — Ուժէդ վեր գործի մը պիտի ձեռնարկես։ Ուտելը՝ շահ է կամ բաղձանքիդ հասնելով պիտի հասկնաս անոր ոչնչութիւնը և պիտի լրջանաս։

Խոց — Ունեցած սէրդ պիտի պաղի յանկարծ։ Խոցոտիլ՝ վատահէդ կորուստ պիտի ունենաս։ Տե՛ս նաև վէրք։

Խուզել — Ոչխար խուզել՝ ճոխութեան և առատութեան մէջ պիտի ապրիս։

Խուլ — Խուլ և համր տեսնել շահ է։

Խունկ — Հեղինակութեան մը տէր պիտի ըլլաս. ծխելը նշան է հարստութեան և անուշ խօսքի, կամ անուն պիտի ստանաս բայց ոչ շահ։

Խրճիթ — Խրճիթին մէջ բնակիլ, անտառին խորը՝ նշան է առանձնութեան։

Խցիկ — Նշան է ծանր աշխատութեան։

Խօսակցիլ — Վիշտ և դժուարութիւն, կամ նշան է չարութեան։

Ծ

Ծաթրին — Ջերմի հիւանդութիւն պիտի քաշես։ Ուտելը՝ յիշողութիւնդ պիտի վրիպի և պիտի վնասես։

Ծալլել — Ո և է բան ծալլել՝ դաղտնիքդ պիտի յայտնուի։

Ծախել — Ո և իցէ բան ծախելդ՝ անյաջող գործ և վիշտ յետադիմութեան նշան է։

Ծախք (տան եւ այլն) — Ապահովութիւնդ կը պակսի։

Ծաճուկ — Ծաճկուած բան գտնելը՝ անակնկալ յաջողութիւն է։ Բայց ծաճկելը՝ կը ցուցնէ դժուարութիւններ ճամբուդ վրայ, որ երեւան կուգան քու սխալիդ կամ պակաս դատողութեանդ հետեւանքով։ Տե՛ս Թաղել։

Ծակ — Դէմդ շատ վտանգներ կան, զգուշացիր։

Ծալ — Խաբուելու նշան է։

Ծաղիկներ — Բարի լուր կամ աղջիկ զաւակ է. երջանկութիւն, առողջութիւն։ Զորցածը՝ երախայի հիւանդութիւն

է։ Բաղելը՝ հաճոյք, խնամութիւն կամ ամուսնութիւն է։ Կանաչը բարի է։ Ծաղիկներու եղանակին փունջ մը հոտաւետ ծաղիկներ հոտոտել՝ նշան է ուրախութեան, հաճոյքի և մխիթարանքի։ Խոտերու մէջ ծաղիկ՝ անսպասելի բարիք պիտի գտնես։ Բաղդաւոր է ծաղիկներ ժողվելը։ Բայց դըժբաղդ՝ ձեռքիդ մէջ թառամիլը։ Ծառեր և տունկեր ծաղկածը՝ կը նշանակէ թէ քեզի բաղդ պիտի գայ. ճերմակ արեւածաղիկները կորուստ կը նշանակեն, բայց գունաւորները բաղդաւոր են։ Ծաղկած արտը՝ կը ցուցնէ շահ և ուրախութիւն։ Եթէ ծաղիկներ կը հաւաքես և փունջ մը կազմես՝ դժբաղդութեան նշան է, կը նշանակէ թէ յոյսերդ պիտի թառամին, ինչպէս ծաղիկները ծաղկեփունջին մէջ։ Կեղծ ծաղիկները՝ վաղանցուկ հաճոյք կը ցուցնեն։ Եթէ նարինջի ծաղիկ տեսնես՝ հանդիստ կեանք մը կը վարես։ Տե՛ս Ջարդ Պարգարտածաղիկ, Վարդ, Այծտերեւ, Փունջ։

Ծաղկախտ — Ծաղիկն ու բորը, սրտնեղութեան և անհոգութեան նշան է։

Ծաղկեպսակ — Նշան է փառասիրութեան որ լաւ չէ։

Ծաղրածու — Շատ ցաւալի լուր մը կ'ապասէ քեզի։

Ծամ — Տե՛ս Ցազ։

Ծամակալ — Գործերդ խառնակ վիճակի մէջ են. բայց վախկոտ ես, ուստի բաւական վնաս ունիս կրելու։

Ծանօթ — Ծանօթ մը երազելը յաճախ տեսնել է զայն կամ լսել է իրմէն. բայց վստահելի երազ չէ։ Անոր հետ կռուիլը, շատ դժբաղդութիւն է. սիրահարը կը կեղծէ. գործի մէջ կորուստ. գէշ արտի հունձք ունենալ է, կամ արջառդ ու ոչխարդ պիտի հիւանդանան, և այլն։ Շատ գէշ նշան մըն է.— դրամ — փոխ մի տար, մի ճամբորդեր, նոր գործի ձեռնարկեր, սնոյաշող պիտի ըլլաս։ Տե՛ս Բարեկամ։

Ծառ — Ընտանեկան ուրախ կեանք է. նոր ծաղկածը, գործդ սքանչելի ապագայ ունի. տնկելը՝ յիշատակելի գործ մը կատարել է, կամ կատարեալ առողջութիւն և խնդութիւն

է։ Պտղալին՝ հարստութեան և հանդստութեան նշան է։ Ծանրաբեռնուած ծառերէն պտուղ հաւաքել՝, շատ լաւ նշան է. շահ ցոյց կ'ուտայ։ Ծառ կտրել կամ այրել, ձախորդութիւն է. եթէ ծառը ծուխ ելլայ, լաւ չէ։ Տերեւաթափը կամ տերեւները դեղնածը, հիւանդութիւն և կորուստ է կամ կռիւ և արիւնահեղութիւն է։ Ծառը թէ որ կ'իյնայ՝ անոր տէրը կը մեռնի. մեծ ծառ արմատէն խլել, մեծ մարդոց մէկը կը մեռնի։ Եթէ զքեզ ծառի վրայ տեսնես, քալես կամ նստիս, փառք է։ Կանաչ և ծաղկած ծառերը երջանկութիւն և յաջողութիւն են ամուսնութեանց մէջ կամ գանձ են։ Ծառերը արմատախիլ ընելը՝ պարապ ժամանակ վատնել է. անգործադրելի ծրագիրներու վրայ որ հաւանաբար դժբաղդ հետեւանք պիտի ունենան։ Ծառէն վար իյնալը՝ կորուստ կը նշանակէ. ծառն ի վեր մագլցիլ, պատիւներու արժանանալ է ապագային։ Տե՛ս Մագլցիլ։ Կանաչ ծառերը կտրել և կոտրելը, շատ գէշ նշան է և ապերջանկութիւն կը նշանակէ։ Չորցած ծառը, յուսահատութիւն է և չարակամ վատ անձ մը արտմութիւն կ'ուզայ քեզի, կամ վտանգ, ցաւ և մահ կը նշանակէ։ Տե՛ս Ցերեւ։

Ծառայ— Աւետիս և խնդութիւն է, բայց ոմանք կ'ըսեն թէ թշնամիդ պատեհ առիթի կ'սպասէ, զգոյշ։ Ծառայ ըլլալ, թշնամիդ պիտի հաշտուի հետդ։

Ծառաստան — Բարի և շատ դաւակներու նշան է։

Ծառուղի — Ընելիքդ կը յայտնես և չես յաջողիր։

Ծարաւ — Ծարաւ ելնալդ կը ցուցնէ թէ քու ծրագիրներուդ մէջ առաջ չես կրնար երթալ ներկայիս, բայց եթէ հաճելի խմելիքներ կ'առնես, յաջողութիւն ակնկալէ։ Եթէ ծարաւդ անցեր է և դուն խմած ես ամբողջ ջուրը, որ լրատակ և ախորժելի կը թուէր քեզ, կը նշանակէ թէ հարստութեան մէջ պիտի ապրիս ուրախութեամբ։ Եթէ ջուրը պղտոր, գաղջ կամ աղտոտ երեւի քեզ, կը նշանակէ թէ մնացած օրերդ պիտի անցնին վշտով։

Ծափահարութիւն — Քեզ պիտի խաբեն միայն զովեցողով։

Ծեծ — Գեղեցիկ յոյս է որ պիտի իրականանայ։ Մեծել մէկը՝ այն մարդուն պիտի օգնես։ Մեծուիլ մէկէ մը, օգնութիւն և հանդստութիւն պիտի ստանաս։

Ծերանալ — Բարեկամներդ քեզ վտանգէ մը պիտի ազատեն, որոնց դէմ ապերախտ պիտի դտնուիս։

Ծերունի — Պակասութիւնդ սկսած ես դարմանել։

Ծիածան — Մէկ հեռաւոր սիրելիդ պիտի տեսնես ու ներկայ վիճակդ ու կեանքիդ ձեւերը պիտի փոխուին։ Ծիածանը եթէ Արեւելքի կողմէն ելնէ, ապաքինում է. եթէ Արեւմուտքի կողմն ըլլայ, նշան է սուտ խոստումներու։ Եթէ մեր գլխուն վրայ է, նշան է արկածի։ Տե՛ս Ծիրանի Գոտի։

Ծիծ — Գեղեցիկ յոյս և ուրախութիւն է. ոմանց՝ նշան է զաւակի կամ մեծութեան։ Եթէ ծիծդ չոշափեն, գործդ շուտ կը յաջողի։ Տե՛ս նաեւ Ստինք։

Ծիծաղիլ — Տե՛ս խնդալ։

Ծիծաւ (Ծիծեռնակ) — Զարմանալի նոր լուր մը պիտի իմանաս. քաղցր դուշակութիւն, օրհնութիւն երկնքի, իմաստուն ամուսիններու։ Սատկածը, գէշ նշան է. կը ցուցնէ սուգ և վիշտ։ Եթէ տանդ մէջ բոյն դնելը տեսնես, բազմանդամ ընտանիքի տէր կը դառնաս։ Եթէ ծիծեռնակը ձեռքովդ բռնես, աղջիկ զաւակի մը տէրը կ'ըլլաս։

Ծիրան — Վաղանցուկ հաճոյք մը պիտի վայելես. ուտելը, հիւանդութիւն է։

Ծիրանաիայ — Անյուսալի հարստութիւն է։ Սպաննելը՝ նշան է մօտալուտ հիւանդութեան։

Ծիրանի Գոտի — Գործդ պիտի յաջողի։ Տե՛ս Ծիածան։

Ծխախոտ, ծխել — Շատ բաղդաւոր է մանաւանդ երբ կը ծխես. լաւ բարեկամներ և յաջող ձեռնարկ կ'ապահովէ, բայց օտարի հաւատ կսկիծ և վիշտ է։

Ծնած օր — Աղքատանալ, կեղծիք և դժուարութիւն է։

Ծնեբեկ— Ցաջողութիւն ձերոնարկներուդ մէջ։ Ուտելը՝ կը գուշակէ սեղմացած հիւանդութիւն։

Ծննդաբերութիւն — Նոր բարեկամ մը պիտի ունենաս կամ մեծ շահ մը պիտի գայ քեզի։ Կին մը երազին մէջ եթէ տեսնէ թէ զաւակ կ'ունենայ՝ կը ցուցնէ թէ իր ամուսինը շատ կը սիրէ զինք։ Դժուար ծննդաբերութիւն՝ թշնամիդ պիտի զօրանայ. իսկ դիւրինը՝ ծնող կինը վտանգի մէջ է. երկուորեակինը՝ բաղդախաչէ մը պիտի շահիս. ծնածը՝ եթէ մանչ է, մեծ բաղդի պիտի տիրանաս. իսկ եթէ աղջիկ՝ զաւակդ պիտի հիւանդանայ։ Անասնոց ծննդաբերութիւնը լաւ կամ վատ է անոնց գոյնին և սեռին համեմատ։ Արու սեռը միշտ լաւ է։

Ծնողք — Գէշ ճամբու մէջ կը գտնուիս, զգուշացի՛ր։

Ծնունդ — Մեծ ուրախութիւն է։

Ծնօտ — Եթէ կոիւ ընես, ակռադ պիտի կոտրի։

Ծով — Շատ լաց է կամ դժուարութիւն և թշնամի է։ Ծով մտնելը՝ դժուարակիր վիճակի կ'ենթարկուիս. մթինը՝ սպառնալիքի տակ կը գտնուիս, լաւ չէ. փոթորկալին՝ ժառանգութիւն մը ստանալու համար շատ պիտի աշխատիս. և եթէ այդ փոթորկալի ծովէն յաջող կերպով դուրս ելնես, ժառանգութիւնը պիտի ստանաս։ Պղտոր ծովը, նեղութիւն է. ցամաք ծովը, աշխարհի լիութիւն է։ Ծովուն մէջ լուացուիլ՝ շահ է. լողալը՝ շահաւոր գործեր ընել է։ Ծովուն վրայ քալելը, լաւ նշան է քալողին համար. ծովին մէջ երթալ՝ թշնամիներուդ մէջ կ'արդարանաս. ծովը եթէ քեզ ներս քաշէ՝ անբնական մահ պիտի ունենաս ուշ կամ կանուխ, հաւանաբար գողի կամ աւազակի մը ձեռքով պիտի սպաննուիս։ Տե՛ս Ջրիոր։

Ծովակ — Ծովակի քով նստիլը՝ իր անձին զուարթութիւն է։

Ծովահէն — Մեծ թշնամի է։

Ծուխ — Ուրախութիւն առանց պատճառի։

Ցունկ — Պաղութիւն և սոսկում է. վիրաւորը՝ զգալի կորուստ է:

Ցունր — Աստուծոյ ծունր դնելը յոյս է:

Ցուռ — Ո և է ծուռ բան տեսնել՝ նեղութիւն է:

Ցրար — Ճամբորդ մը պիտի գայ որուն չէիր սպասեր: Ցրար տանիլը՝ դժուարութիւն ունենալէ. շատ ցրարները մեծագոյն Ջանք կ'ենթադրեն գործդ շիտկելու համար:

Կ

Կաթ — Յաջողութիւն, շահ, սէր և առատութիւն է մանկամարդ կնոջ բարեկամութիւն: Խմելը՝ ցանկութիւնդ պիտի կատարուի. կանանց համար շատ բարեբաղդ նշան է կաթ խմելը: Տալը՝ անպէտ բարերարութիւն է. կամ պարտքերէդ պիտի ազատիս. տաք կաթը՝ նեղութիւն է. թափելը՝ տանդ մէջ վտանգ պիտի պատահի. թափուածը՝ անդարմանելի կորուստ է. կաթնտու կուրծք տեսնել՝ շահ ունենալ է: Կաթ տանելը լաւ նշան է. եթէ սայթաքիս, իյնաս ու կաթը թափես, դժբաղդութեան պիտի հանդիպիս ուր շատ դժուար պիտի ըլլայ ազատիլդ:

Կաթիլ — Գործդ պիտի ընդարձակուի, եթէ շարունակես: Ոմանց՝ հիւծում, ծուլութիւն և թշուառութիւն է:

Կաթուած — Ունենալը՝ կորուստդ պիտի գտնես կամ մեծ շահ մը պիտի ընես մօտ օրէն:

Կաթսայ — Գլորուած կաթսաները՝ տան և ընտանիքի ծանր վտանգ կը ցուցնեն. լեցունները՝ բաղդաւորութիւն և պատիւ կը ցուցնեն: Պարապները՝ կը նշանակեն թէ անօգնական պիտի մնաս նեղ օրերուդ մէջ: Կաթսայ լուանալը՝ ծանր հոգէ մը պիտի ազատիս,

Կալ — Լաւ ընկերութեան մը մէջ պիտի մտնես:

Կախաղան — Յանցանքներդ պիտի ներուին. կախ-

ուած մէկը տեսնել՝ վիշտ և կորուստ կը ցուցնէ։ Եթէ մէկը հիւանդ վիճակին մէջ երազէ թէ կախուելու դատապարուած է, պիտի առողջանայ և ուրախութեամբ ու զոհունակութեամբ պիտի անցընէ օրերը։

Կածան (քարակ նեղ անցք) — Առողջութիւն կը նշանակէ։ Եթէ լայն է ճամբաղ՝ նեղութիւն չեմ ունենար։ Եթէ երազես թէ ուղիղ ճամբաղ չես կրնար գտնել, կը ցուցնէ թէ ծրագիրներուդ չպիտի յաջողիս։

Կաճաւորում — Ճոխ կահաւորումը՝ խաբէութիւն. իսկ աղքատ կահաւորումը, դժբաղդ սիրոյ նշան է։

Կալ — Առեւտուրիդ ընդհատումն է։

Կաղամար — Վաստակդ ուրիշներ պիտի ուտեն. բայց ոմանց ճանապարհ կամ կնոջ մը խելքով շարժելու նշան է։

Կաղամբ — Կորուստ և գաղտնի հիւանդութիւն է. բայց ոմանց առողջութիւն է։ Կաղամբը արմատէն հանել՝ վնասակար է։

Կաղանդ — Հին կեանքդ կը փնտռես, բայց լիշէ որ դուն էիր զայն կոչնցնողը. համբերէ, զուցէ վերադառնայ այն և ուրախանաս։

Կաղանդչէք — Եթէ ամուրի ես, պիտի ամուսնանաս. իսկ եթէ ամուսնացած ես, զաւակ պիտի ունենաս։ Ընդունիլը՝ նշան է թշուառութեան, իսկ բաժնելը՝ ազահի ցնորք է։

Կաղին — Կը նշանակէ դժուարութիւններ, յաղթելու համար։

Կաղնի — Թանձր կաղնին՝ նշան է երջանկութեան և երկարակեցութեան։

Կամար — Կամարի տակէն անցնիլը շատ բաղդաւոր է, բայց մշտական ջանք ունենալու ես։ Կործանած կամարը յոյսերու փճացում կը ցուցնէ։

Կամուրջ — Ընդհանուր վտանգէ մը պիտի փրկուիս կամ զէշ գործի մը հանդիսատես պիտի ըլլաս։ Խարխուլ կամուրջի վրայէն քալելը՝ վախեր ունենալ է. կամուրջէն

վար իջնալը՝ տեւեւուրի մէջ արգելքներու հանդիպիլ է։ Կամուրջ շինել՝ պատիւդ պիտի բարձրանայ և գործերդ պիտի կանոնաւորուին։ Եթէ կամուրջէն կ'անցնիս դժուարութեան պիտի յաղթես։ Եթէ կամուրջը երկար է և մութին մէջ կորսուած, կը նշանակէ կորուստներ և մեծ դժուարութիւններ, յուսահատութիւն սիրային խնդիրներու մէջ. ապահով կերպով կամուրջը կտրել անցնիլը՝ վերջնական յաջողութիւն է դժուարութիւններուդ վրայ։

Կայծակ — Կորուստ է կամ մեծէդ պիտի յանդիմանուիս և վշտանաս, նաև խռովութիւն է։ Կայծակի իջնալ տեսնելը՝ ծանօթ անձի մը մահ է։ Առանց փոթորիկի կայծակը՝ և թէ կայծակը քովը ինկած տեսնելը՝ առանց մարմնոյն դպչելու, նշան է տեղի փոփոխութեան։ Երազել թէ կայծակը առջեւդ ինկած է, կը նշանակէ ճամբորդութեանդ մէջ արգելքներու պիտի հանդիպիս. ասի նշան է նաև ամուսնութիւն ամուրիներուն համար, ըլլան հարուստ կամ աղքատ։

Կայմ — Յաջող երազ մըն է նաւաստիներու և անոնց համար որոնք ծովու վրայ կը նաւարկեն. ուրիշներուն համար բարեկամներէ բաժնուիլ է։ Սիրահարները կոիւ կ'ընեն եթէ կայմը տեսնեն։ Եթէ մինակ կայմն է՝ երազը կապուած է ուրիշ բաներու հետ կը նշանակէ թէ անակնկալ բաղդաւորութիւն կ'ունենաս։ Տե՛ս նաւ, նաւակ։

Կանաչեղէն — Ուտելը նշան է խաբուսիկ բաղդի, հեղ մը կը խորհիս թէ լաւ կը գործես և յաջող ես, բայց քիչ ետքը պիտի խաբուիս։ Թոռման բանջարեղէնները կը բերեն ծայրայեղ տխրութիւն և շատ դժբաղդ նշաններէն մէկն է։ Տե՛ս նաև Գալարեղէն, Բանջարեղէն։

Կանթեղ — Տե՛ս Լամբար։

Կանկառ — Զարիք պիտի գործես որմէ բարիք պիտի ծնի. նշան է. նաև շփոթութեան և հակառակութեան։ Ուտելը անվայել գործի մը մէջ պիտի գտնուիս, զգուշացիր։

Կանչել — Մէկը կանչել՝ այն անձը պիտի հեռանայ քեզմէն։ Մէկէն կանչուիլ՝ այն անձը քեզ վնասելու միտք ունի։

Կաշի — Դրամական նեղութիւն պիտի կրես։

Կապար — Հակառակորդէդ պիտի տանջուիս։

Կապիկ — Կնոջ մը խաղին զոհ պիտի ըլլաս։ Կապիկներ՝ կը ցուցնէ ծաղրանքի ենթակայ ըլլալ, իրմէ վար դասակարգի մարդոց կողմէ։

Կապուած — Նշան է անհոգութեան։

Կառախումբ — Կառախումբ շարել տեսնելը՝ ճամբորդութիւն կը ցուցնէ։ Ապրանք փոխադրող կառախումբ, կը ցուցնէ թէ բնակարանդ պիտի փոխես։

Կառուղի — Դժուարութիւն կը ցուցնէ, միայն թէ ուրիշներ պիտի հակառակին քեզի։

Կառք — Յանկարծական փոփոխում վիճակի. կառք փնտռելը՝ կը ցուցնէ թէ ճամբուդ վրայ դժուարութիւններ կան։ Երազել թէ կառքին մէջ նստեր ես՝ կը նշանակէ թէ դուն ծուլութեան և դատարկապորտութեան տուած ես ինքզինքդ, հպարտ ես և մուրացիկ պիտի մեռնիս։ Եթէ կառքէն դուրս կ'ելնես, կը նշանակէ պատուազուրկ պիտի ըլլաս, ոճրային գործերու երեսէն։ Կառք նստիլը՝ մեծ պատիւ է. բայց ոմանց տարտամ խորհուրդներու նշան է որոնցմով կը պարծին, առանց օգտուելու, կամ հիւանդութիւն մը կրել է։ (Սակայն պէտք է երազին միւս մասերը նկատի առնել և այնպէս մեկնութիւն մը տալ)։

Կատակերգութիւն — Կատակերգութիւն կամ ուրիշ զբօսանք տեսնելը՝ յաջողութեան նշան է առեւտուրի մէջ։

Կատու — Նշան է մատնութեան և նենգութեան։ Օրինական խնամիներու հետ բարի կամ չար յարաբերութիւն կը նշանակէ, ոմանց՝ շողոքորթներէ բռնուիլ և տափական միտումներ ունենալ կը ցուցնէ։ Կատու բռնելը՝ նշան է ամուսնալուծման. անոր հետ խաղալը՝ կնոջմէն խաբուիլ կը

ցուցնէ։ Սեւը՝ նշան է շահաւոր դանձի, իսկ ճերմակը նեղութեան։ Դժբաղդութիւն է եթէ ան ճանկէ։ Կատուն փախցընելը՝ լաւ է։ Տե՛ս կատուիկ։

կատուիկ — Կատուիկներուն հետ խաղալը լաւ է։

կարագ — Գործի դժուարութիւն պիտի ունենաս։ Զայն ծեծելը՝ ժառանգութիւն է. ուտելը՝ տեղէ մը ոպասած շնորհդ պիտի վայելես կամ անհաճոյ անակնկալ է։ Թափելը՝ խեղանդամ զաւակի ծնունդ է։

կարապ — Ուրախութեան, առողջութեան և դաղտնիքներու յայտնումի նշան է։ Եթէ կ'երգէ՝ մահուան կամ յուսահատութեան նշան է։

կարաս — Դաղտնիքդ պահել ա՛լ անկարելի է։ Իրարու վրայ դիզուած պարապ կարասները՝ նշան են առատութեան և հարստութեան։

կարասի — Սիրային յարաբերութեան մէջ պիտի մտնես։ Գնելը՝ խնամութեան կամ ամուսնութեան նշան է։ Ծախելը՝ ամուսնալուծման կամ ճամբորդութեան նշան է։

կարդալ — Բաղդաւոր նշան է, պայմանաւ որ ուրիշ մը կարդայ քեզի և բառերը որոշ լլլան քեզի։ Եթէ դուն կը կարդաս, շատ և անօգուտ մտածումներ ունենալուդ նշանն է։

կարել — Միշտ բաղդաւոր նշան է, բայց ասեղ գործածելը քեզի համար օգտակար չէ։ Ոմանց համար երկար ճամբորդութիւն կը ցուցնէ։

կարթ — Նշան է վստահութեան զեղծումի։

կարթընկեցութիւն — Ձուկ բռնելը լաւ նշան է, ձախողիլը պէշ. խոշոր ձուկ բռնելը շահու նշան է։ Մանր կենդանի ձուկեր բռնելը կը նշանակէ անհանգստութիւն և հիւանդութիւն։ Տե՛ս Ձուկ, Ձկնորս։

կարժ — Ընտանեկան նեղութեան նշան է։

կարժել — Գործերդ հետզհետէ կարգի պիտի մտնեն և լաւ ապագայ պիտի ունենաս։

կարիճ — Դժբաղդութեան նշան է։

կարկանդակ — Յուսահատութիւն. պզտիկ խնդիրներու հետ կապուած է, ուստի մեծ կարեւորութիւն չունի. կամ գաղտնի քեզ ակամայ մէկու մը պիտի յայտնես. նշան է նաև ընտանեկան համախմբումի։ Կարկանդակ շինելը՝ շահ և ուրախութիւն ունենալ է։

կարկին — Գործերդ խառնակ և անկանոն կ'երթան։

կարկուտ — Անակնկալ վնաս մը պիտի ընես և ցաւիս։ Եթէ վրադ տեղայ՝ աւելի դժբաղդ է։ Տե՛ս նաև բուք։

կարկտան — Նեղութեան նշանէ վրադ կարկտնուած երազելը։

կարմրիլ — Ցաւ և վհատութիւն է։

կարօտ — Նշան է բարեգործութեան։

կացին— Թշնամութիւն. ծանր վտանգ կ'սպառնայանձիդ։

կաքաւ — Ցանկութիւնդ շատ պիտի վնասէ քեզ. կաքաւներ՝ նշան է գործ ունենալ չարամիտ, անխիղճ, ապերախտ և վտանգաւոր կիներու հետ։

կեղցաւ — Բարեկամներու կորուստ։

կենդանիներ — Ընտանի կենդանիները՝ կը նշանակէ բացակայ բարեկամներու վերադարձ, վայրի կենդանիները՝ նեղութիւն են։ Հեծելանի կենդանիները (ձի, ջորի, էշ, ուղտ) կը ցուցնէ մեծութեան հասնիլ։ Սեւ կամ մթագոյն կենդանիները՝ դժգոհութիւն կը բերեն։ Տե՛ս նաև գազան։

կեռաս — Նշան է պարկեշտ հաճոյքներու։ Քաղելը՝ անսասոյգ յաջողութիւն է։ Թթուն՝ վաղանցիկ վիշտերու նշան է։ Հասուն կեռաս ուտելը՝ կը ցուցնէ թէ պատրաստալից հաճոյքներ պիտի ունենաս, բայց յետոյ պիտի յուսախաբուիս։ Տե՛ս նաև պտուղներ։

կեռնեխ — Կասկած, չարութիւն և խիստ քննադատութիւն է։

կերպաս — Սպիտակը՝ արդարութիւն, կանաչը՝ հարբստութիւն, սեւը տրտմութիւն է։

կէսօր — Երազել թէ կէսօրուան ատեն դէպքեր կը

պատահին՝ կը նշանակէ հաստատուն և օգտակար բարեկամութիւն. ուրիշներու լաւ նշաններ զօրացնել կը նշանակէ կամ թէ կը պակսեցնէ այժդ դժբաղդ նշաններով։

Կիթառ — Նշան է զբօսանքի։

Կին — Առհասարակ լաւ է, իսկ թխադոյնը՝ անհաւատարմութիւն և կռիւ է, փորձութիւն։ Շատ կիներ՝ նշան է հեշտութեան։ Գեղեցիկ կամ զարդարուած կինը՝ նորանոր երկիրներ կամ քաղաքներ տեսնել է։ Կին առնել՝ մահու չափ վնաս է։ Երկայնահասակը՝ նշան է բաղդաւորութեան և վստահութեան։ Կարճահասակը՝ բամբասանք և ապերախտութիւն է. կարմրագոյնը՝ թշուառութիւն և վիշտ։ Հերարձակը՝ պղծութիւն և մահու չափ վտանգ՝ տան մէջ։ Մեռածը՝ ընտանեկան երկպառակութիւն է. տգեղը՝ ընտանեկան խաղաղ կեանք է։ Լալկան կինը՝ վտանգաւոր թշնամի է որ բարեկամի ձեւով քեզի պիտի մօտենայ և պիտի վնասէ։ Կնոջ հետ խօսիլ՝ արատութիւն է իսկ կռուիլը՝ խիստ վնասակար։ Երազել թէ կինդ ամուսնացած է ուրիշի մը հետ, կը նշանակէ կեանքիդ պայմանները պիտի փոխուին։ Կնոջ մը երազելը թէ ամուսնացած է ուրիշի մը հետ, միևնոյնն է։ Անպատիւ կին տեսնողը՝ շահաւոր գործեր կ'ընէ. կնոջ մը մազերը՝ կտրելը վնասաբեր է. երկու կնոջ հետ ամուսնացողը դրամական մեծ նեղութեան մէջ կ'ըլլայ. երեք կին ունեցողը անձնասպան կ'ըլլայ։ Իր կինը հաւատարիմ տեսնողը մէկէջ մը կը խաբուի։ Տե՛ս Աղջիկ. ցոի կին։

Կիտրոն (Լեմոն) — Հիւանդի ապաքինում և լաւ նշան է, կամ անուշ խօսք։ Կիտրոնի ջուր տեսնել կամ խմել՝ անդորրութիւն և առողջութիւն է։ Տե՛ս նաև Պտուղներ։

Կղզի — Առանձնութիւն է. անհասանելի նպատակիդ մէջ մինակ պիտի մնաս և պիտի լքուիս բարեկամներէդ։ Անմարդաբնակ կղզիին մէջ գտնուիլը՝ կը գուշակէ բարեկամի մը կամ սիրականի մը մահը։ Եթէ կղզին արգասաբեր է, նոր բարեկամներ պիտի ունենաս. կղզիին վրայ մարդ տեսնելդ կը ցուցնէ թէ կռիւ պիտի ընես։

Կղպանք — Գաղտնի գործով անպատիւ վաստակ է, կամ դժուարութիւն և ապերջանիկ հարստութիւն է։ Տե՛ս Սողնակ։

Կնիք — Քեզ յայտնուած գաղտնիք է մը պիտի օգտուիս։

Կնունք — Այժ, շահ և պաշտպանութիւն է։

Կնքահայր կամ Կնքամայր — Ուրիշներ գործիդ պիտի միջամտեն։ Ըլլալը՝ գէշ մտքով գործածդ լաւ պիտի բլլայ։

Կշիռ — Ձեղծումներդ պիտի յայտնուին, և գուցէ դատի պիտիմատնուիս ու տուժես։ Ոսկի կշիռը՝ կը ցուցնէ թէ կորսուած իրաւունքդ պիտի պաշտպանուի. պիտի շահիս և ուրախանաս։ Տե՛ս նաև Նժար։

Կշռել — Դատարան պիտի ներկայանաս և ուրախ դուրս պիտի ելնես, անմեղ հռչակուելով։

Կոկորդ — Նշան է զոհունակութեան։ Կտրուածը՝ կը ցուցնէ վազելու վտանգ. եթէ կոկորդդ կտրուած է, կը ցուցընէ թէ ո և է անձէ մը պիտի վնասուիս։

Կոկորդիլոս — Նշան է որոգայթի և ագէտներու։

Կողով — Կողով տանիլը՝ մեծ յաջողութիւն և գոհունակութիւն է, մանաւանդ երբ սակաւը կամ կողովը լաւ լեցուած է. իսկ պարապը՝ յոյսերուդ կորուստն է։

Կոճակ — Ամուսնական գործի մէջ պիտի գտնուիս։ Գնելը՝ վատ գործի ետեւէ կը քալես, լաւ չէ։ Գտնելը՝ օտար մարդ տունդ տանելէ զգուշացիր։ Ճերմակ կոճակը՝ լաւ նշան է. եթէ ժանգոտած է, դժբաղդութիւն և հիւանդութիւն է։ Հանդերձիդ կոճակը կորսնցնելը՝ ծանր հիւանդութիւն է։

Կոճղ — Կոճղեր կոտրտել կամ ճեղքելը՝ նշան է տունդ օտարականներ պիտի գան։

Կոյս — Կնոջ համար զինքն կոյս տեսնել՝ խիստ շահ է. կոյսի հետ հաց ուտել բարի է։

Կոյր — Միամտաբար շատ կը խաբուիս, լաւ է որ ամէն բանի չի հաւատաս. կոյր ըլլալ ոմանց յաջողութիւն է, իսկ ոմանց կը նշանակէ թէ պիտի յանդիմանուին տես-

նելով իրենց սխալները. կ'ազդարարուի զգուշութիւն՝ սիրային գործերու մէջ։

Կոչունք — Միշտ բաղդաւոր երազ է, միայն թէ օդը փոթորկոտ չըլլայ։

Կով — Տեսնել կամ ունենալ, ճոխութեան և հարստութեան տիրանալ է։ Տե՛ս նաև Արջառ և կենդանիներ։

Կոտրել — Գէշ նշան է երազի մէջ բան կոտրելը. կահ կարասի կոտրելը՝ ընտանեկան նեղութիւն կը ցուցնէ. սրունքդ կոտրելը՝ անկում և գէշ բաղդ է։ Ապակի կամ ոնէ տեսակ բաժակ կոտրելը ձախորդութիւն է։

Կորեկ — Տեսնել կամ ուտել լիութիւն է։ Բայց ոմանց տեսնելը, նշան է օդի ձգուած բաղդ է, իսկ ուտելը թշուառութիւն է։

Կուժ — Պարապ կուժը ունայնութիւն է. իսկ ջրովը շատ բարի է։

Կուռք — Պաշտելը՝ մնանկութիւն է։

Կուիւ — Գէշ նշան է, կամ գժուարութիւններ են որոնց յաղթելու ես, կռիւ ընել՝ հակառակութիւններու հանդիպիլ է. եթէ երկու հոգի իրարու հետ կռուին՝ հոգի մը կ'ազատես. երկու կիներ իրարու հետ կռուին՝ կեղծաւորութիւն մը երեւան պիտի հանես։

Կռնակ — Քու կռնակդ երազելը քեզի գէշ նշան է. եթէ մէկը որ հաւանաբար օտարական է և կռնակը դարձուցած քեզմէ ու հեռու կը քալէ՝ կը ցուցնէ թէ քեզի մնաս պիտի գայ։

Կռունկ — Ընտանեկան յարկի մէջ ձանձրոյթ է։

Կռփամարտ (պոքս) — Անակնկալ լուրեր լսել է, կամ ակնկալած ուրախութիւնդ պիտի ունենաս։

Կտակ — Մերձաւորներէդ պիտի բաժնուիս. կտակ ընել՝ նշան է երկար և երջանիկ կեանքի մը. երբ կին մը կտակ կ'ընէ, կը ցուցնէ թէ այլոց վաստակին աչք ունի կամ դժբաղդութիւն է. կտակ կարդալ՝ ուրիշի չարիք պիտի հասցնես չուզելով։

Կտաւ — Լաւ մատակարարութեամբ վաստակ է. գործելը՝ երկար և շահաւոր ճամբայ է։ Հնարելը՝ բարի չէ։ Տե՛ս նաև Լաթ։

Կտաւատ — Առողջութիւն և առատութիւն է գործի։

Կրակ — Վառուած կրակը լուր է. թեթեւ վառուածը՝ տեւական սէր է։ Մէջը իրնալ՝ քուկիններուդ մէկուն համար անխուսափելի աղէտք է. կրակի իրնալը՝ սով և մահ է. կրակով այրիլը՝ ջերմ ունենալ է։ Տե՛ս նաև Հրդեհ։

Կրօնաւոր — Տե՛ս եկեղեցական։

Կօշիկ — Կօշիկ հագնիլը՝ ճամբորդութիւն է. նոր կօշիկը՝ վիշտ է, իսկ հագնիլը՝ անշուշտ բաղդաւոր է։ Լայն կօշիկը առատութիւն է։ Ծակածը՝ առօրեայ թշուառութիւն, առանց դրամի ճամբորդութիւն է։ Հին և մաշած կօշիկները հիւանդութիւն կը ցուցնեն։ Կօշիկ ներկելը՝ գործերուդ մէջ յաջողութիւն կը ցուցնէ. կօշիկի քակուիլը, կը ցուցնէ կորուստներ, կռիւ և հիւանդութիւն. մաշած և ցեխոտած ըլլալը, կը զգուշացնէ քեզ թշնամիներու դէմ. կօշիկները կորսուիլ և բոկոտն քալելը, ցաւի և հիւանդութեան հանդիպիլ է։



Հ

Հագուստ — Հագուստ կրել երազելը շատ կարեւոր է, բայց մեկնութիւնը կախում ունի գոյնէն։ Հանդ՛ները հին թէ նոր են, շատ մեծ թէ շատ պզտիկ են։ Ճերմակը յաջողութեան նշան է. կամ խնդութիւն և վաստակ է, միայն թէ կը վերաբերի առաջին բանին որ կը ձեռնարկես. կանաչը կը նշանակէ յաջող ճամբորդութիւն։ Սեւը՝ գժբաղդ է, կը ցուցնէ անսիրական ցաւալի արկած. կապոյտը՝ նշան է երջանկութեան։ Ծիրանի գոյնը աղէտ. գեղինը հիւանդութեան

նշան է, բայց սմանք կ'ըսեն թէ ոևէ մէկ գոյնէն աւելի բարեբաղդութիւն է. բայց ոևէ կերպով զօրաւոր ազդեցութիւն չունի։ Մութ կարմիրը վնաս է, բայց սմանց չէզոք գոյն մըն է։ Գոյնզգոյնը խնդութիւն է։ Խայտը՝ աւագի մահ է։ Զանազան գոյներ հագնիլդ լաւ նշան չէ, խոնարհման և բարձրացման բաղդ կը ցուցնէ։ Նոր ձեռք մը հանդերձ ունենալ կամ լաւ յարմարած և հանգստաւէտ հանդերձները, լաւ բաղդ կը ցուցնեն, բայց անճաշակ հանդերձները՝ հակառակը, մինչև անգամ կրակէն վնասուիլ։ Մաշած և պատռած հանդերձները, ցաւ և խաբէութիւն են, որմէ պիտի տառապիս։ զդոյշ եղիր օտարականներու հետ ունեցած վարմունքէդ։ Երազել թէ շատ հանդերձ ունիս կամ տեսնես կասկածելի նշան է, լալ և թշնամի է, կամ ցանկութիւն և վատ մտադրութիւն. երիտասարդի մը կամ սիրահարի մը համար ասիկայ կը նշանակէ անդոհացուցիչ յոյսեր և յուսահատութիւններ։ Վառած հանդերձները՝ մահու չափ վնաս և երկիւղ է։ Այրած հանդերձը՝ կնոջմէ մը շահիլ է։ Հագուստ հագնիլ, պարտաւորիչ նեղութիւն բայց և պատիւ է մերձաւորներէդ։ Հագուստ հանել՝ գաղտնիք մը պիտի տառուրիշին. կորսնցնելը՝ իշխանութեան սակ մտնել է։ Տե՛ս Կոճակ, Շապիկ, Սեղմիրան (քորսէ), Ծնրակալ, Ջեռնոց, Գլխարկ, Ժապաւէն, Գիշերանոց, վերարկու և Փետաքս։

Հազալ — Յանցանքի մը համար պիտի ամչնաս։

Հակառակորդ — Երազել թէ հակառակորդներդ քեզի տրգելք կը հանդիսանան, կը նշանակէ թէ գործդ յաջող պիտի երթայ։

Հաղարջ — Կարմիրը քաղցր բարեկամութիւն է։ Դեղմակը, նշան է գոհունակութեան. իսկ սեւը՝ յուսահատութիւն։

Հաղորդութիւն — Ծանօթիդ մէկին բարիք մը պիտի ընես։ Առնելը՝ ընկերներդ քեզի դէմ դինուած են, կամ քեզի ծեծ ուտել է։ Տե՛ս նաև Խորան։

Համբուրել — Գործիդ մէջ նոր ընկեր մը պիտի ունե-

նաս։ Մարդ համբուրել զէշ նշան է, առհասարակ բարեկամի մը կողմէն մատնուիլ կը նշանակէ. համբուրել մէկուն ձեռքը անոր խորհուրդին պիտի հետեւիս, բայց յետոյ ինքս կրելով պիտի վշտանաս։ Երեսը համբուրել, յանդգնութիւն է։ Գետինը համբուրել՝ խոնարհութիւն և վիշտ է։ Մանուկներ համբուրելը բարի նշան է։ Համբոյր տալ մէկին՝ համբուրողէն ինքս պիտի կրեմ։ Դեռատի կոյս մը համբուրել. նշան է մեծ ուրախութեան. մեռած մէկը համբուրել՝ երկայն կեանք ունենալ կը ցուցնէ։ Տե՛ս Ողջերթ, Շրաժեղտ։

Համբ — Համբ ըլլալ, մէկը պիտի խաբես խօսքով միայն. համբը թէ խօսի, մեծ բարիքի պիտի սիրտանաս։ Տե՛ս խուլ։

Համբիչ — Տե՛ս Ուլունք։

Հայելի — Գէշ նշան է. կը ցուցնէ խորհուրդներուդ ոչնչութիւնը, նշան է նաև կեղծաւորութեան, մատնութեան։ Շրջանակի մէջ եղած հայելին՝ նշան է վստահութեան զեղծումի։ Հայելիին մէջ նայիլ՝ ամուսնացողի համար զաւակներ ունենալ է, իսկ ամուրիի համար, սիրահար կամ սիրուհի։ Կոտրած կամ ճաթածը՝ երախտագիտութիւնդ մէկու մը պիտի յայտնես. եթէ հայելին կոնակդ առած ես՝ մէկը քեզի ապերախտութիւն մը պիտի ընէ։ Տե՛ս Ապակի։

Հայր — Սխալներդ սկսած են շատնալ։ Հայրդ սպասնելը, նշան է անպատուութեան և գէշ հակումներու։ Մեռած հայրդ ողջ տեսնել, մեծ շահ է, կամ պատիւ և զոհունակութիւն է։

Հայրապետ — Նշան է մեծ զրոյցի։

Հանգոյց — Ցաւ է չնչին բանի համար, ոմանց՝ ընկերութեան մէջ մտնել է. հանգոյց կապելը, կոիւ է քեզմէ անկախ մէկէ մը կամ քեզի դէմ եղող մէկէ մը. հանգոյց քակել՝ օգնութիւն ստանալ է ընկերէ կամ զաւակէ։

Հանի — Նշան է մահու և մօտալուտ ժառանգութեան։

Հանդերձ — Տե՛ս Հագուստ։

Հանուիլ — Օգտակար չէ հանուիլը. ուրիշներուն հանուիլ տեսնելդ, ցաւ և տրտմութիւն է։

Հաշտուիլ — Բարեկամի մը հետ պիտի աւրուիս։

Հառաչանք — Հառաչանք լսելը՝ նեղութիւն է. եթէ դուն կը հառաչես, շրջահայեաց եղիր, անակնկալ գալիք հաճոյքի մը համար։ Տե՛ս Աղաղակ, Ադմուկ։

Հասկ (ցորենի) — Ջանքերդ պիտի արդիւնաւորուին. քաղելը՝ ուրախութիւն և յաջողութիւն է։

Հարկինք — Ընտանեկան ադմուկ և կռիւ է. հարկինք ընել՝ սնոտի վիճաբանութեան մը համար բարեկամներդ պիտի վշտացնես։ Տե՛ս նաև խնճոյք։

Հարս — Բարի յոյս և խնդութիւն է, բայց ոմանց շատ դժբաղդ նշան է, յաճախ սիրելի բարեկամի մը մահը կը դուշակէ։ Հարսը պսակով՝ անոր մահուան նշանն է. հարս համբուրելը սակայն, բարեկամներու միջև զուարթ հանդիպողութիւն կամ երջանիկ հաշտութիւն մըն է։ Եթէ հարսը քեզ համբուրէ՝ լաւ առողջութեան նշան է։

Հարսանիք — Տրտմութիւն և վիշտ է կամ անյուսալի խռովութիւններու նշան է։ Տե՛ս Ամուսնութիւն։

Հարսնքոյր — Տե՛ս Հարս։

Հարստութիւն — Նշան է տնական խռովութեան կամ աղքատութեան։ Եթէ մէկը հարուստ ըլլալէ վերջ աղքատանայ և երազէ թէ նորէն տիրացած է նոյն ստացուածքներուն, կը նշանակէ թէ իր նախկին հարստութիւնը պիտի վերադառնայ։

Հաց — Բարի նշան է. կը ցուցնէ բաղդ, յաջողութիւն և բարեկամութիւն։ Ուտելը՝ շուտով բաղդի մը պիտի հանդիպիս. կոյսի հետ հաց ուտել՝ բարի է։ Վատ նշան է ուտել այն հացէն որուն վարժուած չես, որը կը ցուցնէ թէ ապրուստդ ճարելու համար նեղութիւն պիտի քաշես։

Հացագործ — Բարի և յուսատու լուր մը կ'իմանաս։

Հացկերոյթ — Նոր թշնամի մը պիտի ունենաս, կամ անսահման շռայլութիւն է։ Տե՛ս Ընթրել, Խնճոյք, Ուտել։

Հաւ — Զուարթութիւն է։ կամ շատախօս և անօգուտ բարեկամ է. հաւը հաւկիթին վրայ՝ յանկարծական շնորհք է։ Թուխս նստածը՝ յաջողութիւն է. եթէ հաւի մը կոկոչը տեսնես՝ գործերդ կը ձախողին և կը անանկանաս. հաւերու կոկոց լսելը կամ հաւեր բռնելը, շահ ունենալ կը նշանակէ և առեւտուրի մէջ ապահովութիւն։ Երազել թէ հաւ մը հաւկիթ կ՚ածէ, պիտի շահաւորուիս, ոմանց կռիւի նշան է։ Հաւը իր վառեակներով երազել, կսրուստի և մնասի ենթարկուելու նշան է։ Տե՛ս նաև թխսել։

Հաւկիթներ — Եթէ հաւկիթները ամբողջ են՝ բարեբաղդ է, կը դուշակէ գործիդ մեծ ապագայ ունենալը. կոտրած հաւկիթները նեղութիւն, կորուստ և կռիւ կը ցուցնեն. կամ տանդ մէջ հիւանդ պիտի ունենաս և կամ պաշտօնէ իյնալ է։ Եթէ կը գնես կամ կը ծախես հաւկիթներ՝ շատ բարեբախտ նշան է. հաւկիթը ձեռքդ առնելը յաջողութիւն է։ Հաւկիթ ունեցող բոյն գտնելդ՝ գրամ ընդունիլ է, նաեւ սիրային խնդիրներու կը վերաբերի։ Հաւկիթ ծեծուրցնելով շահիլը լաւ է, իսկ կորսնցնելը մնաս։ Տե՛ս Ձու։

Հեղեղ — Ջերմ սէր մը քեզ պիտի յիմարացնէ։ Մեծ հեղեղներ տեսնելը՝ կը նշանակէ խիստ դատաւորներ, բարկացող տէրեր, ամբոխ, հաւաքոյթ և ապմկալի ժխոր։

Հեռագիր — Նամակին նման տրտմութիւն կը ցուցնէ. հեռագիր քաշելը՝ կը նշանակէ թէ բարեկամի մը հետ սխալ հասկացողութիւն պիտի ունենաս։

Հեռախօս (թելէֆոն) — Օտարականէ նեղութիւն պիտի կրես։ Եթէ երազես թէ լաւ չես լսեր, կը նշանակէ թէ սիրոյ մէջ դժուարութիւններ պիտի ունենաս։

Հեռու — Հեռաւոր ղինքդ կամ ուրիշ մը տեսնես՝ բարի է, կը ցուցնէ լաւ շահ. հեռու ըլլալդ կամ հեռու տեղ երթալդ կը ցուցնէ թէ կարեւոր ճամբորդութիւն մը պիտի ունենաս

Հերկել — Եթէ կը հերկես՝ լաւ նշան է, բայց եթէ հերկելու ժամանակ կը տեսնես, որ անասունը կ'ընկղմի գետնին մէջ՝ այդ կը նշանակէ աշխատանքի կորուստ և գէշ հունձք։

Հիմ դնել — Հարստութիւն է, կամ դաւակներէ պիտի օգտուիս։

Հիւանդ — Նեղութիւն կամ գործի և շահու նուազութիւն է. հիւանդանալ՝ տանդ մէջ կորուստ է, կամ ետ ձգած մէկ գործդ պիտի կատարես։ Երազել թէ մէկը կը խնամէ և կը հանդստացնէ հիւանդները և դեղագիր կուտայ անոնց, կը նշանակէ շահ, շնորհաւորութիւն և անձնուիրութիւն։ Տե՛ս Բոխիր, վառել։

Հիւանդութիւն — Այս կարգի երազը ազդարարութիւն է թէ զգոյշ ըլլալու ես, քանի մը շաբաթ։

Հիւանդանոց — Նշան է սոսկալի թշուառութեան։

Հիւանդապահ — Նշան է առողջութեան։

Հնդկահաւ — Օտար կնիկ մը ինկած է քու ետեւէդ. ոմանց յիմարներու այցելութիւն ընել կամ յիմար ըլլալու վախ. հնդկահաւերուն հոս հոն թափառիլը՝ կը ցուցնէ թէ դժուարութիւններուդ պիտի յաղթես և պատահաբար գործուդ մէջ պիտի յաջողիս. տեսնել թէ փետտուած շուկայ կը տարուին՝ կը ցուցնէ թէ գործդ պիտի բարուոքի, բայց ոչ այնպէս, ինչպէս որ ողջ թռչուններ տեսնել է. նմանապէս շատ բաղդաւոր է, եթէ երազես թէ հնդկահաւ կ'ուտես։ Զանոնք զարնելը՝ դժբաղդութիւն է, բայց դուն պիտի շահիս միայն ո՛չ թէ հաճելի եղանակներով։

Հոգեվարք — Հոգեվարքի մէջ ըլլալ՝ ժառանգութիւն ստանալ է։

Հոլ — Հոլ դարձնելով խաղալը՝ կը նշանակէ աշխատանք և ցաւ, միայն թէ ատոնց վերջը բարի կ'ըլլայ։

Հոկտեմբեր — Ձեռնարկած գործդ հաճելի պիտի ըլլայ. նոր և տեւական բարեկամութիւններ պիտի ունենաս։

Հող — Հող բեռցնել՝ նեղութիւն է. հողակոյտ՝ կը ցուցնէ վաստակ և անհետացում ցաւերու։ Երազել թէ լաւ հողեր կը տրուի քեզ, ազուոր մը ցանկապատուած և հաճելի արօտավայրներով, կը նշանակէ թէ սիրուն կին մը պիտի ունենաս։ Բայց եթէ հողերը ընդարձակ են և ոչ լաւ մը ցանկապատուած՝ կը նշանակէ որ հաճոյք, ուրախութիւն և հարստութիւն պիտի ունենաս։

Հոդաթափ — Կօշիկի կամ կիսակօշիկի նշանակութիւն ունին. մեծ մասով ինչ վիճակ ունենալէն կախում ունի։ Տե՛ս Կօշիկ։

Հոդմ — Տե՛ս Հով։

Հողմաիար — Հաճելի լուրեր առնել է. սիրահարներուն համար սակայն, սիրային դէպք և արկած է։

Հով — Համբաւ և հռչակ է բայց անօգուտ։ Ջեփիւռ փչելը՝ քեզի շատ բաղդաւոր է։ Զուարթօրէն հովին դէմ քալելը կը ցուցնէ թէ դժուարութիւններուդ պիտի յաղթես, բայց եթէ հովը երեսիդ զարնէ, կը ցուցնէ թէ դիւրին կերպով մը պիտի յաջողիս, բայց տեւական չպիտի ըլլայ անիկայ։

Հովաիար — Տե՛ս Հողմաիար։

Հովանոց — Հովանոց կրելը՝ կը ցուցնէ նեղութիւններ և յապաղումներ։ Ուրիշներուն գանոնք կրել տեսնելը, կը կը ցուցնէ թէ ողորմութեան կարօտ պիտի ըլլաս։ Փոխ առնելը՝ կռիւ է. փոխ տալը՝ բարեկամէ մը վնասուիլ է. նոր հովանոց ունենալը վրադ անձրեւի ատեն շատ բարիբախտ է, հաճոյք ստանալ և նպաստաւորուիլ կը ցուցնէ. կամ նեղութեանդ մէջ ապաստան պիտի գտնես։

Հովիւ — Զարգդիութիւն է։

Հոտ — Դէշ հոտ առնելը՝ զէշ խօսք է։ Տե՛ս Անուշահոտութիւն, Բոյր։

Հոր — Որչափ խոր՝ այնչափ վնասակար է. հոր փորելը խիստ վնասակար է. հոր խմելը՝ նեղութենէ ազատիլ է։ Տե՛ս Ջրհոր։

Հորթ — Ընտանեկան թեթեւ նեղութիւն է։ Տ. Արջառ։

Հուն (Անցք) — Հունէ ջուր խմելը՝ մեծ տրտմութիւն է. հունի մէջ լողնալը՝ երջանկութիւն է բայց ոչ տեւական. դիպուածական հաճոյք է. եթէ մանուկներ կը լողնան՝ գերազանցօրէն լաւ նշան է։

Հսկայ — Հսկայ մը կամ խոշոր մարդ մը տեսնել լաւ նշան է։

Հրաժեշտ — Զուարթ հրաժեշտի տեսարանը լաւ նշան է, բայց տխուրը, կորուստ կը ցուցնէ։ Սիրահարներու համբոյր տալ առնելը, կը ցուցնէ թէ պիտի ճամբորդես։ Տե՛ս Ողջերթ։

Հրախաղութիւն — Բարձր պաշտօն է, բայց ոչ շահաւոր, նշան է նաև վաղանցիկ երջանկութեան։

Հրաշք — Խիստ բնաւորութիւնդ պիտի մեղմանայ և շատերուն սիրելի պիտի դառնաս։

Հրացան — Ուրախութեան ձայն մը՝ պիտի լսես։ Հրացան պարպելը՝ մեծ թշնամի կը դուշակէ։ Մտահոգութիւն է, եթէ մէկը զարնես կամ դուն զարնուիս։

Հրդեհ — Պատիւ է. եթէ սաստիկ՝ անսպասելի ձախորդութեան պիտի հանդիպիս կամ կռիւ է, զգուշացիր և ոչ ոքի չարիք ըրէ և ոչ ալ մէկուն դէմ բարկացիր։ Հրդեհ տանը մէջ՝ կասկածներդ պիտի իրագործուին և պիտի փնտռուիս, եթէ լաչողիս մարել կրակը վերջը բարի պիտի ըլլայ։ Եթէ երազես թէ դուն կը ձգես կրակը հաճելի անակնկալներ պիտի ունենաս։ Տե՛ս Աճուխ, Կրակ և Մոխիր։

Հրեշտակ — Առ հասարակ լաւ նշան է. կը դուշակէ թէ նոր դիւտի մը տէր պիտի ըլլաս. յայտնութիւն. բարեբաստիկ լուր։ Թէև ոմանց վրդովում և փոփոխութիւն կը ցուցնէ։ Հրեշտակի հետ խօսիլը նշան է չարիքի հեռացման։ Հրեշտակ ըլլալ՝ այնպիսի գործ մը պիտի կատարես որ, շատ մարդիկ վրադ պիտի խօսին։ Հրեշտակի թռչելը՝ մխիթարական խօսքեր լսել է. եթէ հրեշտակները քալեն՝ զաւակ մը կամ թոռնիկ մը կ'ունենաս։ Տե՛ս Գաբրիէլ Հրեշտակ։

Հրթիռ (փամփուշտ) — *Պաշտօնի հասնելու փափաքդ չի կատարուիր։*

Հրուշակ (հելվա) — *Առժամեայ յաջողութիւն ապա անստոյգ կացութիւն է։*

Հօտ — *Տեսնես թէ հօտը գիւղին մէջ կուգայ՝ մեծ մարդու դալուստ է։ Հօտը եթէ շուրջդ կուգայ խոովութիւն է։ Տե՛ս* Արջառ։

Հօրաքոյր, Մօրաքոյր — *Նեղութիւն և ամօթխածութիւն է, սուր գայթակղելի ընթացք մը կայ։ Եթէ տիկինը կը ժպտի և երջանիկ է, պիտի ներուի քեզի։*

Հօրեղբայր — *Ժառանգութեան վերաբերեալ աննշան բաներու համար վիճաբանութիւն է։*

Ձ

Ձագ (կենդանեաց) — *Անոյշ ուրախութիւն պիտի վայելես։*

Ձագար — *Շատ դժուար գործ մը կատարելով մեծ շահ և անուն պիտի ստանաս։*

Ձախորդութիւն — *Անյաջող ըլլալ կը նշանակէ. զգուշացիր։ Զգոյշ եղիր բոլոր գործերուդ մէջ։*

Ձայն — *Ձայն լսել՝ կասկածներու պիտի ենթարկուիս։ Տե՛ս նաև* Թնդիւն։

Ձեռն (ձեռք) — *Օրհնութիւն և աշխատութիւն է։ Եթէ ձեռքերդ աղտոտ են՝ կ'զգուշացնէ թէ սխալ մը կամ ոճիր մը գործելու վտանգին մէջ ես, հոգածու եղիր և ուշադրութիւն տուր գործերուդ։ Աջ ձեռք գործածելը՝ բարեբաղդութեան նշան է իրեն և իր ընտանիքին համար. իսկ ձախ ձեռք գործածելը՝ դժբաղդութիւն և կորուստ կը ցուցնէ։*

Գեղեցիկ ձեռքեր տեսնելը՝ բարեբաղդ նշան է, շուտով պիտի բարձրանաս։ Ձեռքերուն վրայ արիւն տեսնելը՝ ընտանեկան նեղութիւն և պաղութիւն է. ձեռքերդ այրելը կորուստ է։ Ձեռքերդ լուանալը՝ անմիջական հաճոյք կը նշանակէ կամ նեղութենէ ազատիլ է։ Երազել թէ ձեռքերդ կապուած են՝ նշան է դժուարութեան և խոչընդոտներու մէջ ես կամ քնկած ես։ Ձեռքիդ մէջ եթէ ճրագ մը բռնած ես՝ կը ցուցնէ թէ ճար մը կամ ճամբայ մը պիտի գտնես, նեղութենէ ազատելու համար։ Տե՛ս ճրագ։ Բայց ոմանք կ՚ըսեն թէ ձեռքերը լուալը անհանգստութիւն է։ Սիրուն ձեռքը անկարողութիւն կը ցուցնէ. կտրած ձեռքը՝ մեկնումի նշան է բարի ծառաներէ. իրարու միացածը կը ցուցնէ բարեկամութիւն փորձի մէջ. ուռեցածը՝ նշան է օրական ծախսի։

Ձեռնամուշտակ — Նշան է պչրանքներու և մխիթարի։

Ձեռնոց — Բարեբաղդ նշաններ են. եթէ հին կամ ազատ ըլլան՝ կ՚ազդէ բարեկամութեանց և նպաստի վրայ, կամ անհանգստութիւն և աշխարհային տանջանք է։ Եթէ ձեռնոցները քաշես հանես՝ պզտիկ յաջողութիւն մը պիտի ունենաս։ Ձեռնոց դնելը՝ ապահովութիւն ունենալ և պատիւի արժանանալ է։

Ձերբակալում — Յաջող դէպք առուտուրի մէջ։

Ձէթ — Պարտքդ վճարելով պիտի հանգստանաս։ Ձէթ եփել՝ հիւանդութիւն է։

Ձի — Միշտ լաւ բաղդ կը բերէ։ Ձիու վրայ հեծնել՝ փափաքներդ պիտի կատարուին։ Ճերմակ ձին՝ շատ բարեբաղդ է, բարի լուր և լաւ բարեկամ կը ցուցնէ։ Սեւը՝ կէս բաղդաւորութիւն և դէշ կին է. ձիու վրայ հեծնել՝ լաւ լուր մը առնել կամ պատիւ է։ Սեւ ձիու վրայ հեծնել՝ շահ պիտի տեսնես մեծերէդ։ Խելացի ձիու վրայ հեծնել՝ շահ և աւետիս է։ Վազող ձիու վրայ հեծնել՝ խիստ աղէկ է։ Գնացող ձիու վրայ հեծնել շահ է. ձի գնել՝ ուրախութիւն և սակաւ հոգ պիտի ունենաս. ձի ծախել՝ մեծ սիրալ մը գործելով

պիտի վշտանաս. ձի սպաննել՝ նշան է աւերումի. ձի համբուրել՝ աղջկան մը վրայ շատ մտածելուդ նշան է. միտքդ ամփոփ պահէ։ Սատկած ձին՝ բոլոր յոյսերդ պիտի փճանան կամ կը ցուցնէ ամէն կարգի դժբաղդութիւն և յուսահատութիւն։ Ձիէն իյնալը՝ դժուարութիւններու կամ դժբաղդութեանց հանդիպիլ է. ձիերը պայտելը՝ յաջողութիւն կ'երաշխաւորէ. ձիուն վրայ մերկ կոնակով հեծնել քշելը՝ դժուարութեանց հանդիպիլ է յաջողութենէ առաջ, սակայն դըժբաղդութիւն է ձին բլուրէն վար քշելը. եթէ ձին աքացէ քեզ՝ հիւանդութիւն և նեղութիւն կը ցուցնէ։ Ձամբիկ (էգ ձի) յայտնի պոռնիկ է կամ առատութիւն է։ Ձամբիկ տանդ մէջ՝ անբարոյականութիւնը բոյն դրած է ընտանեկան կեանքիդ մէջ։ Տե՛ս Կենդանիներ:

Ձիաւոր — Ձիաւորը ձիէն վար իջած տեսնես, նշան է սաստիկ վախու, եթէ վրան հեծած է՝ յաջողութեան։

Ձիթապտուղ — Այսօր մէկը քեզ պիտի խաբէ, կամ քաղցր ազատութիւն է։ Կանանչը՝ աճապարելուդ համար փոքր վնաս մը կրելով պիտի ցաւիս։ Ժողվելը բարի է։ Ուտելը՝ դուն ուրիշը պիտի խաբես, կամ գոհունակութիւն և հաւատարիմ բարեկամութիւն է։ Գետնէն հաւաքելը՝ աշխատանքի և ցաւի նշան է։ Տե՛ս նաև Պտուղներ:

Ձիթենի — Ձիթենիով օծուիլը՝ շնորհք է։

Ձիւն — Շատ լաւ նշան է, մանաւանդ երկրագործին համար, լաւ և ապահով հունձք կը ցուցնէ։ Հալածը՝ վախերդ ուրախութեան պիտի փոխուին. ամանց նշան է ցրուած բերքերու։ Լաւ նշան չէ տեսնել թէ ձիւնի փոթորիկ մը պատուհանէն ներս կուգայ, որը կը ցուցնէ թէ, մէկը քեզ պիտի սպառնայ և վշտացնէ։ Տե՛ս նաև Բուք:

Ձիւնիալք — Շատ բարեբաղդ է, կը ցուցնէ թէ հիմայ դժուարութիւն տուող գործերդ քիչ չանցած պիտի բարուքուին և պիտի բարգաւաճին։

Ձկան փուշ — Մարդիկ զէշ խրատներ կուտան քեզի։

Ձկնորս — Մէկուն զործը պիտի խանդարես և զղջաս։ Եթէ ձկնորսութիւն ընես՝ կը նշանակէ շատ մը նեղութիւններու և վշտերու պիտի հանդիպիս, փափաքած բաներդ ձեռք բերելու համար կատարած ջանքերովդ։

Ձմեռ — Հիւանդութենէ զգուշանալ կը ցուցնէ։ Այս երազը կը ցուցնէ թէ ջանքերդ ակնկալած արդիւնքը չպիտի բերեն։ Սակայն սիրահարներուն համար իրար փնտռել և առաստ հունձք կը ցուցնէ։

Ձմերուկ — Սպիտակ, սեւ կամ կանաչ տեսնել՝ ողէկ է։ բայց ուտելը՝ հիւանդութիւն է։

Ձոր — Անորոշ նշանակութիւն ունի. եթէ կանաչուտ և արգասաբեր ըլլայ՝ բարեբաղդութիւն և յաջողութիւն ակնկալէ։ Եթէ խոպան և քարուտ է, կը ցուցնէ թէ դժուարութիւնները դիմազրաւելու ես։ Եթէ ճախճախուտ է, հիւանդութիւն պիտի ունենաս։ Ձորէն յաջողապէս անցնիլդ կը ցուցնէ թէ նեղութենէ պիտի ազատիս։

Ձու (Թռչնոց) — Ձեռքովդ փորձանք պիտի բերես զըլխուդ. ձու ժողվել՝ կռիւ է։ Տե՛ս Շաւկիթ։

Ձուազեղ — Տանդ մէջ կռիւ մը պիտի պատահի։

Ձուկ — Լաւ նշան մըն է, կը ցուցնէ դաշտային ուրախութիւն. բայց չ՚ազդեր դրամական խնդիրներու վրայ։ Մաքուր ջուրին մէջ ձուկ տեսնելը՝ բարեկամներէ շնորհքներ ակնկալել է։ Մեռած ձուկը՝ կը նշանակէ թէ ընկերական ազդեցութիւնդ պիտի կորսնցնես. խաբեբայ մէկու մը պիտի հանդիպիս։ Որսալը՝ խնայողութիւն կը նշանակէ, կամ յաջողութիւն է զործիդ նկատմամբ. ձուկը ջրին մէջէն հանել կամ ելնելը տեսնելը՝ օգը կ՚ամպոտի կամ ձիւն կամ ջերմ կ՚ըլլայ, ձուկը կլակին մէջէն հանել՝ երկրի նեղութիւն է։ Կարմիր ձուկը դժգոհանք է։ Տապկուածը՝ յանկարծական մահ է։ Մեծ քանակութեամբ ձուկ բռնելը՝ նշան է խաբուած յոյսի։ Զանազան գոյներով ձուկ տեսնել՝ նշան է վշտի և ցաւու, իսկ հիւանդին՝ թունաւորման։ Տե՛ս նաև կարթընկեցութիւն, Ձկնորս, Ծաձուկ։

Ղ

Ղեկ (նաւու) — *Յոյս և ուրախութիւն է։ Կոտրածը՝ գործերդ պիտի աւրուին և վնաս պիտի կրես։*

Ղեկավարել — *Յաջողութեամբ ղեկավարել՝ նպատակիդ պիտի հասնիս։*

Ղենջակ — *Ստացուածքէդ պիտի զրկուիս։ Ղենջակ կապել՝ նեղութիւն և օտարութեան երթալ է։*



Ճ

Ճագար — *Փոքր երախայ է և ուրախութիւն։ Ճերմակը ուրախութեան, անմեղութեան նշան է։ Սեւը՝ աղաստ շահադիտութիւն է։ Եթէ ճագարը տապակէն ցատկէ՝ մտքի շուայտութեան նշան է։* Տե՛ս նաև Նապաստակ:

Ճախարակ — Տե՛ս Ջաիրակ:

Ճակնդեղ — *Յաջողելու համար երկար պիտի վնասուիս։*

Ճաճիճ — *Հանրային չարիքէ մը պիտի վնասուիս. եթէ արագ կերպով կը մխրճուիս ճահիճի մը ցեխին մէջ, նեղութեան նշան է։*

Ճամբայ — *Ուղիղը՝ բաղդաւորութեան, իսկ օձապտոյտը չքաւորութեան նշան է։*

Ճամբորդ — *Հին առնելիք մը պիտի ստանաս։*

Ճամբորդել — *Հեռաւորէդ լուր պիտի առնես՝ կամ նեղութենէ կ՚ազատիս. լաւ նշան է, շահ և հաճոյք միացած են։ Ճամբորդել և ետ դառնալ՝ բարի է։ Եթէ կը ճամբորդես անտառի մէջէն, և թէ քեզի կը կառչին փուշերն ու մացառ-*

ները, կը նշանակէ որ շատ մը նեղութիւններու մէջ պիտի իյնաս։ Բարձր բլուրներու և լեռներու վրայ ճամբորդելը՝ կը նշանակէ յառաջդիմութիւն՝ մեծ դժուարութեամբ։ Գիշերով ճամբորդելը նեղութիւն է։ Եթէ ամայի և ժայռոտ տեղերէ կ'անցիս, ակնկալէ վտանգաւոր հակառակորդներ. թերեւս հիւանդութիւն կուգայ։ Բայց եթէ բլուրները արդասաբեր և կանաչուտ են, շատ բարեբախտ նշան է։ Բայց երազես թէ մինակ կը ճամբորդես, վիշտ կուգայ քեզի, լքուած ես։ Բայց եթէ խռնուած հանրակառքի մէջն ես, շատ բաղդաւորութիւն է։ Տե՛ս նաև Ուղեւորութիւն, կածան։

Ճանկուիլ — Երազել թէ կը ճանկուիս՝ պարտքերէդ պիտի ազատիս։ Ուրիշներու համար վնաս կը նշանակէ։

Ճանճ — Գործիդ մէջ սկսած ես ձանձրոյթ զգալ, զգոյշ եղիր, գործիդ լաւ նայէ, թէ ոչ կը վնասուիս։ Ճանճերու երամ տեսնել՝ կը ցուցնէ թէ թշնամիներդ և անմիտ անձեր քեզ պիտի գայթակղեցնեն։ Ճանճ քշելը՝ անօգուտ տաժանք է։ Ճանճերէն խայթուիլը՝ փոքր հալածանք է։

Ճաշ — Տե՛ս ընթրել, խնճոյք, ուտել։

Ճաշակ — Տե՛ս Շաղորդութիւն։

Ճառ — Կարդալը, օտարներ սկսած են վաստակդ ուտել. գրելը, քեզ գործիք ըրած են, լուր չունիս. ճառ գրուած տեսնել և լսել՝ հոգ է։

Ճատրակ — Ճատրակ խաղալ ծանօթի մը հետ, կը նշանակէ թէ պիտի աւրուիս ծանօթներուդ մէկուն հետ։

Ճարմանդ (կոճակ) — Տարբեր սեռի հետ յարաբերութեան և կամ ամուսնութեան նշան է։

Ճգնարան — Նշան է մատնութեան և եղբօր մը մահուան։

Ճգնաւոր — Այսօր ուրախ ժամեր պիտի անցնես։ Ճգնաւոր ըլլալ՝ բարեկամներդ պիտի խաբես ու շահիս։

Ճերմակեղէն — Կնոջ հետ յարաբերութիւն կ'ունենաս։ Եթէ տեսնողը կին է՝ անպատիւ գործի մէջ պիտի գտնուի և խայտառակուի։ Երբ կին մը երազէ իր ճերմակեղէններուն մասին, աննպաստ նշան է։

ՃՆՃՂՈՒԿՆԵՐ — Ասոնք պզտիկ թռչուններուն պէս յաջողութեան նշան են մանաւանդ սիրոյ մէջ։ Ճնճղուկ բռնելը՝ սիրային յաջողութիւն և ապա զղջում է։ Ճնճղուկ ունենալ բարի է։ Սատկած ճնճղուկ տեսնել՝ սիրոյ մէջ քեզ կը խաբեն։ Տե՛ս Թռչուններ:

ՃՈՊԱՆ (ՏԷՅՍԷԿ) — Երկար ճանապարհ։

ՃՐԱԳ — Զաւակի փափաք է, որ պիտի կատարուի։ Վառածը՝ յոյսերուդ զօրացում և շահ է. կամ դաղտնի գործերը կը յայտնուին։ Մարածը կամ սպառելու մօտը, նոյնտանը կործանումը կը ցուցնէ կամ շուրջդ դաղտնիքներ կան քեզի համար վնասակար։ Զեռքդ ճրագ տեսնել՝ որդի մը պիտի ըլլայ քեզի: Տե՛ս Լոյս:

Մ

ՄԱԳԼԻԼ կամ ՄԱԳԼՑԻԼ — Բլուր մագլիլը կը ցուցնէ թէ դժուարութիւններու պիտի հանդիպիս և պիտի յաղթես անոնց ջանքերով. եթէ ծառին դագաթը ելնես յաջողութիւն կը ցուցնէ. սանդուխէ վեր ելնելը երջանիկ ամուսնութիւն կը ցուցնէ։ Տե՛ս Ելնել, Ծառ:

ՄԱԳՆԻՍ — Ուրիշին հրամանին կամ ազդեցութեանդ տակ պիտի մնաս. ազատութեան կորուստ է։

ՄԱԶ — Մազերդ թափիլը կամ ճաղատ ըլլալդ կը ցուցնէ թէ հիւանդութիւն պիտի դայ քեզի կամ ազգականներդ մէկուն։ Մազերդ կտրելը՝ բաժանում է կամ լաւ կարգ ծելով վատ գործ մը պիտի ընես և պիտի յուսահատիս։ Եթէ կին մը կ'երազէ թէ դեղեցիկ մազեր ունի, կը ցուցնէ թէ անհոգ է իր անձնական գործերուն մէջ, և ուստի բուն իսկ իր զանցառութեանը պատճառաւ պիտի կորսնցնէ։ Ինչպէս ճերմկցած տեսնել մազերդ, կը ցուցնէ հաճելի և ուրախ կեանք։ Ուրիշին մազերը ճերմակ տեսնել՝ կը ցուցնէ թէ, քեզ տրուած խրատները լաւ են. ուրեմն կատարէ։ Սեւ

մազերը՝ կը ցուցնէ թէ յանդուգն գործ մը պիտի կատարես կամ մէկը սիրել և անկէ չսիրուելու կամ խաբուելու նշան է։ Դեղինը՝ մէկէ մը բան մը պիտի յուսաս։ Շագանակագոյնը՝ տխուր գործի մը մէջ մնալու նշան է։ Կարմիրը մէկու մը շատ սիրահարելու նշան է։ Մազերը սանտրել՝ մէկու մը հետ կը սիրաբանիս։ Մազերուդ մէջ ծաղիկ ունենալը նեղութիւն է։ Կնոջ մազ հիւսել՝ ատսրին գործերու մէջ կը գտնուիս և սիրային գործով անպատիւ պիտի ըլլաս։ Մազ քակել՝ մօրդ մէկ յիշատակը պիտի կորսնցնես։ Եթէ այր մը երազէ թէ իր մազերը կտրած են կնոջ մազերու նման, նշան է կանանցիութեան. և թէ այս երազը տեսնող անձը պիտի խաբուի կնոջմէ մը։ Կին մը թէ զինքը առանց մազերու տեսնէ՝ կը նշանակէ աղքատութիւն և հիւանդութիւն։ Եթէ այր մը զինքը ճաղատ տեսնէ՝ նշանակութիւնը ճիշդ հակառակը կ'ըլլայ։

Մատուն — Անոներելի ցանկութիւններ ունիս որոնց պատճառաւ վիշտ պիտի կրես։ Ուտելը՝ ըրածէդ դուն գոհ ես, բայց ուրիշները ոչ։

Մակոյկ — Երազել թէ մակոյկի մը մէջ ես՝ գետի, լճի, կամ լճակի մը վրայ, լաւ նշան է։ Եթէ ջուրերը յստակ են, պիտի ուրախանաս, զարգանաս և գործերուդ մէջ յաջողութիւն պիտի գտնես։ Երազել թէ կ'զբօսնուս մակոյկի մը մէջ անվախօրէն, պիտի յաջողիս գործերուդ մէջ. եթէ ջուրերը ալեկոծ ըլլան և փոթորկայոյզ, արդիւնքը ճիշդ հակառակը կ'ըլլայ։ Տե՛ս նաև Նաւել։

Մակտրայ (Խմորի թէքնէ) — Լեցունը նշան է առատութեան։ Պարապը՝ լքումի։

Մահ — Երազին կապուած է, սակայն և այնպէս միշտ լաւ նշան է, պայմանաւ որ ոչ եղողի մը մահը չի տեսնես ինչ որ դժբաղդ է։ Եթէ մեռածը կը կողոպտէ երազողին դրամը կամ հանդերձները, շատ ծանր հիւանդութեան նշան է։ Իրական մեռած մարդ մը երազելը աղդարարութիւն է երազո-

զին որ զգոյշ ըլլայ իր գործերուն քիչ մ'ատենն։ Բարեկամի մը մահը տեսնելդ լաւ նշան է կամ կը ցուցնէ թէ այդ բարեկամը մօտեցեր է իր ծանօթները։ Տե՛ս Պատանք, Մեռել։

Մահացում — Այլոց բարիքներէն պիտի օգտուիս։

Մաղ — Շռայլութեան մէջ ինկած ես, հաշուով ծախսէ։

Մայիս — Հաճոյալի և բարեբաղդ նշան է։ Մայիսի ծաղիկներ հաւաքելը բարեբաղդ նշան է, միայն թէ տուն չի բերես զանոնք որ միշտ դժբաղդութիւն է։

Մայր — Լաւ նշան է. բարեբաղդութիւն և յաջողութիւն կ'ունենաս, կամ ապահովութիւն, պաշտպանութիւն և բարի լուր։ Մօրդ հետ ննջելը՝ նշան է անհոգութեան։ Մեռած մայրդ երազելը՝ դժբաղդութեան նշան է,

Մանանեխ — Քեզի օտար կին մը պիտի մօտենայ։ Ոմանց նշան է վէճի և բարկութեան։

Մանեակ — Սիրոյ դաշինք և կապ է։ Մանեակ դնել մէկու մը պիտի սիրահարիս։ Կտրուած մանեակը՝ ընտանեկան խանդարման նշան է։ Շատ բաղդաւոր է ոսկեղէն մանեակ վզէն կախելը, կամ ոսկեղէն վզկապ դնելը։

Մանել — Վշտի նշան է այրիին համար։

Մանուկներ — Մանուկներ կամ պզտիկ կենդանիներ տեսնելը յաջողութիւն է, միայն թէ մանուկը չի մեռնի և կամ ցեխի, ցնցոտիներու մէջ չըլլայ։ Եթէ մայր մը իր զաւակը հիւանդ տեսնէ՝ կը ցուցնէ թէ նեղութեամբ մը կը տառապի, բայց տղուն հետ յարաբերութիւն չունի։ Տղոց հետ խաղալը կամ անոնց գործելը և ուսնիլը տեսնելը յաջողութեան նշաններ են։ Տե՛ս նաև Երախայ, Տղայ։

Մանուշակ — Մեծերէ գովեստ պիտի լսես։ Մանուշակ հաւաքելը՝ բաղդաւոր նշան է. կը ցուցնէ թէ բաղդաւորութիւն մը պիտի գայ բարեկամներէ։ Երիտասարդ կին մը եթէ հաւաքէ զանոնք, բարեբաղդ պիտի ըլլայ, միայն թէ հաւաքելէն՝ վերջը չի թառամին անոնք։

Մառան — Գաղտնիքդ դեռ դուրս ելած չէ։ Շատ լեցունը նշան է հիւանդութեան, իսկ պարապը բարօրութեան։

Մատանի — Տեսնել կամ շինել տալ՝ պատիւ, իշխանութիւն, նաև մօտալուտ ամուսնութեան նշան է։ Մատանի դնելը՝ բաղդաւոր է, իսկ ոմանց նշան է ամուսնութեան վրայ մտածելնուն։ Եթէ մատանին մատէդ իյնայ՝ կը ցուցնէ մահ կամ կորուստ բարեկամի մը, կամ խզում նշանախօսի։ Բարեբաղդ է, եթէ ուրիշներուն մատանի դնելը տեսնես։ Մատանի կորսնցնել՝ մեծ վատանդ կամ մահ է կնոջ կամ սիրելիի։ Ուրիշի մատանի առնելը անհոգութիւն է. երկրորդ մատանի ունենալը նշան է երկրորդ անգամ ամուսնանալու։ Արծաթի մատանի՝ նեղութենէ կ'ազատիս, իսկ ոսկին՝ հանգիստ կեանք մը պիտի վարես։ Մատանի նուիրել մէկու մը՝ կորուստի նշան է։ Կտրած մատանին վնաս կը ցուցնէ, կամ հարսնցուդ կոյս չպիտի ըլլայ։

Մատենադարան — Կը ցուցնէ պատիւ և յառաջացում։

Մատիտ — Լաւ է, միայն թէ գրած բառերդ չաւրես։

Մատներ — Եթէ մատներդ կը կարես, կամ ուրիշ մը կը կտրէ զանոնք. վնասի պիտի ենթարկուիս։ Եթէ կը կորսնցնես. մատներուդ մէկ մասը կամ ամբողջը, կը նշանակէ որ, ապաւորներդ պիտի կորսնցնես և կամ ապաւորներդ պիտի վնասուին։

Մատնոց — Մատնոցն ալ ասելի նման բաղդաւոր բան չէ, նեղութիւն և կորուստուք պիտի ունենաս։ Բայց եթէ մատնոցը նոր տուած են կամ բերուած է քեզի, կը ցուցնէ թէ փափաքած կինդ պիտի առնես, և կամ աղջիկ զաւակ մը պիտի ունենաս և կամ թէ հաճոյութիւն պիտի ունենաս առանց մեծ ջանքի։

Մարախ — ~~Նեղութիւն~~ նշան է կամ վաստակիդ մէջ դաղտնի ձեռք մը մտած է։

Մարգ — Ասի և բոլոր կանաչեղէնները բարեբաղդ շաններ են։ Տե՛ս Մշտադալար։

Մարգագետին — Գոհացուցիչ վաստակ և լաւ ապագայ է։

Մարգարիտ — Մեծութեան նշան է. եթէ զայն առնես կրելու համար, բաղդաւոր պիտի ըլլաս, կամ ապրիկ զաւակ և կամ հարստնցու մը պիտի ունենաս։ Պարապի ելած աշխատութիւն։ Զանոնք կորսնցնելը թշուառութիւն է։

Մարգարտաձաղիկ — Դաշտին մէջ այս ծաղիկներուն հանդիպիլը կը ցուցնէ թէ հաճելի ճամբայ պիտի գացուի քու առջեւդ. բայց եթէ ձմեռ ատեն տեսնես այս ծաղիկը՝ դժբաղդութիւն է։

Մարդ — Սէր իր նմաններուն. փոքր մարդ տեսնելը՝ շնորհք է։ Տե՛ս նաև Շսկայ։

Մարդասպան — Վախ և վիշտ պիտի կրես։

Մարմարիոն (քար) — Թշնամիդ անողոքելի է. զգուշացիր։

Մարտ (ամիս) — Գործի մէջ անյաջողութիւն և դրամական տագնապ է, կիներուն հետ սրտմաշուք գործ կ'ունենաս։

Մաքի (էգ ոչխար) — Մեծ վտանգ մը պիտի անցընես, եթէ շատ չի պտտիս։

Մաքսատուն — Անփնաս և փոքր վախ պիտի կրես։

Մաքսատուրք — Ազգատանալու վախդ անտեղի է, նոյն վիճակիդ մէջ պիտի մնաս երկար ժամանակ։

Մելան — Սեւ մելանը՝ զէշ նշան է բայց կարմիրը կը ցուցնէ թէ լաւ լուրեր կրնաս ակնկալել. եթէ կարմիր մելանը թափած է հանդերձիդ վրայ, ակնկալէ չարախօսող մաշեցուցիչ կարգ մը լուրեր։ Տե՛ս Գանաք։

Մեծահասակ — Զինքը մեծահասակ տեսնել փառք է։

Մեղու — Հաճելի է, շնորհալի հարստնցուի, սիրուհիի կամ կնոջ հանդիպիլ է։ Մեղու մը եթէ խայթէ կամ կծէ քեզ՝ առեւտուրի մէջ կորուստ կ'ունենաս կամ թէ պզտիկ վնաս մը պիտի ունենաս, միայն թէ վնասդ բարեկամէ է։ Եթէ ծաղիկի վրայ տեսնես՝ գործերդ լաւ պիտի յաջողին։ Իսկ եթէ սպաննես՝ գործաւորդ, ծառադ կամ ընկերդ վշտա-

նալով քեզմէ պիտի բաժնուի։ Մեղու մը եթէ փեթակ մտնէ՝ տանդ մէջ անյայտ ընկեր մը ունիս։ Մեղու բռնել՝ նշան է շահու և վաստակի։

Մեղր — Շատ բաղդաւոր նշան է, մանաւանդ անոնց որ ամուսնանալու վրայ են։ Նշան է նաև շահաբեր աշխատութեան և արհեստի քաղցրութեան։ Ասիկայ կը վերաբերի թէ դուն կ'ուտես թէ կը տեսնես զայն։ Բայց ոմանք կ'սեն թէ մեղր տեսնելը՝ շատախօսութիւն և կռիւ է, իսկ ուտելը՝ մեղք և սրտնեղանք է կամ շահու և գործի ճնաս է։

Մեռել — Տեսնել կամ ազգականը կամ մեռելէ իրք առնելը կամ մեռել կենդանանալը՝ մեծ և անցած, կամ հին և անհաճոյ խօսքեր պիտի նորոգուին։ Զինք մեռած տեսնել՝ շատ պիտի ապրիս։ Մեռելի խօսիլը՝ զգուշացիր, ամէն մարդու մի հաւատար։ Մեռելը գերեզմանի մէջ տեսնել՝ չարը կը խափանի։ Շատ մեռել տեսնել՝ թշնամիներ կը յարձակին։ Մեռելներէն բան առնելը՝ շահաւոր և բարի է։ Մեռելները հողէն հանել, բացականները տեսնելու փափաք է։ Մեռելներէն պագ առնելը՝ ճնաս և կորուստ է։ Մեռել թաղելը՝ խուճապի մատնուելու նշան է։ Եթէ մեռած մը քեզ համբուրէ, պիտի հարստանաս։ Մեռելներու հետ խօսիլը լաւ նշան է, ցոյց կուտայ որ, քաջութիւն ունիս և յանդուգն ես, նշան է նաև մաքուր խղճմտանքի։ Եթէ մեռած մէկը տեսնես, որ իրականին մէջ ողջ է և քաջառողջ, գիտնալու ես թէ նեղութիւն կայ առջեւդ։ Եթէ երազես թէ հայրդ, մայրդ, կինդ, եղբայրդ, քոյրդ կամ ուրիշ բարեկամներ և պարագաներ մեռած են, և կամ եթէ անոնց հետ կը խօսիս, կը նշանակէ թէ գործերուդ պէտք է ուշադրութիւն դարձնես և ինքզինքդ լաւ կառավարես։ Տե՛ս նաև Մահ։

Մետաքս — Շատ բաղդաւոր է կը ցուցնէ թէ նոր և լաւ շրջան մը սկսած է քեզ համար, պայմանաւ որ մետաքսը փտած չըլլայ, որ ատեն թէև կրնայ ըլլալ որ կը յաջողիս, բայց միշտ կասկածելի է արդիւնքը։ Եթէ մետաքսեղէն

հագուստներ հագուած են, պատիւի նշան է։ Եթէ օտարականի մը հետ մետաքսի առուծախ ընես, նշան է շահու և ուրախութեան։ Տե՛ս նաև Ապրշում։

Մերկութիւն — Մերկ ըլլայ՝ ամբաստանութիւնն է անմեղ պիտի ելնես։ Բայց ոմանք կ'ըսեն թէ, այս երազը ծաղրուելէ կ'զգուշացնէ. բայց եթէ կին մը մերկ է և զեղեցիկ կ'երևնայ, երջանկութիւն և յաջողութիւն է. եթէ ծեր կամ տգեղ է՝ ամօթ, զղջում և դժբաղդութիւն է։ Մերկ այր մը տեսնել նշան է վախու և սոսկումի։

Մեքենայ — Միշտ նեղութիւն է. եթէ գործ ընկերացած է, քիչ նեղութիւն է։

Մէգ — Դժբաղդ երազ է. ընտանեկան ապերջանկութիւն կը ցուցնէ։

Մթութիւն — Մթութեան մէջ գտնուիլ դժբաղդութիւն է, լաւի կը փոխուի, պայմանաւ որ չանաս անկէ ազատիլ։

Միատարազ — Լաւ նշան է, յաջողութիւն և բաղդաւորութիւն կը ցուցնէ փափաքածիդ մէջ։

Միս — Գէշ նշան է տանդ նկատմամբ, փնաս և կորուստ կը ցուցնէ։ Հում միս ուտելը՝ մեծ զրոյց է։ Աղին՝ տեսնել կամ ուտել, հիւանդութիւն է։ Եփածը՝ լաւ է, վախդ պիտի փարատի. բայց ոմանց, մանր հումը կամ եփածը՝ յուսահատութիւն կը բերէ։ Տե՛ս Ապուխտ։

Միրգ — Շատ պարապ բաներ մտածելուդ նշան է. իսկ ուտելը՝ թեթև հիւանդութիւն պիտի կրես։ Տե՛ս պտուղներ։

Մկրատ — Շատ դժբաղդ է. նախանձ, ձանձրոյթ կամ փնասակար վիճաբանութիւն է, որուն կռիւ պիտի հետեւի։ Մկրատի շեղբերը փակուած՝ ամուսնալուծում է, որուն պատճառը կինը պիտի ըլլայ։

Մշակել — Ամուսնական երջանկութիւն է։

Մշտադալար—Ամէն պարագայի տակ բաղդաւոր է, տեւական երջանկութիւն կը ցուցնէ՝ չանկարծական յաջողութիւն։

Մոխիր — Շատ դժբաղդ նշան է. շատ սոսկալի փոփոխութիւններ պահուած են երազողին։

Մոխրաջուր — Կը ցուցնէ պարտականութիւն, ծառայութիւն։

Մողեզ — դժբաղդութիւն է, որուն պատճառը ծածուկ թշնամիներդ են։

Մոմ — Ընտանեկան խաղաղ ու երջանիկ կեանք է։ Մամ մարելը՝ վախ, տրտմութիւն և սուգ է։ Վառածը՝ յոյս, օգնութիւն, ուրախութիւն և որդի է։ Բայց ոմանք կ'ըսեն թէ վառուած մումը նամակ կը ցուցնէ. եթէ լոյսը պայծառ է՝ հաճելի նամակ ա՛ընդունիլ է. իսկ եթէ աղօտ է՝ յուսահատեցուցիչ է. մարած մումերը՝ հիւանդութիւն, աղքատութիւն և տխրութիւն կը ցուցնեն։

Մորէք (Սալամուրա) — Լայ և նեղութիւն է։

Մորթ (զանազան գոյներով) — Հիւանդութիւն է։

Մորմենի — Տե՛ս Պտուղներ։

Մուկ — Դժբաղդ է. ընտանեկան նեղութիւն կը ցուցնէ կամ մերձաւորներդ քեզ կը խաբեն և կը կողոպտեն։ Մուկ. բռնել՝ տանդ մէջի գաղտնիքը պիտի իմանաս։ Իսկ սպանելը՝ գործդ կարգի դնել է։ Եթէ փախչի՝ չարաբուչակ և դժբաղդ պարագայ է։ Մուկեր՝ նշան է թունաւորման։

Մուշկ — Սիրային խնդիրներու մէջ բարեբախտ երազ է։

Մուրացկան — Դրամ պիտի ստանաս։ Մուրացկան ըլլալ՝ շատ գաղտնիք պիտի իմանաս։ Մուրացկան տունդ նստած՝ վիճակահանութենէ պարգեւ պիտի շահիս և ուրախանաս։ Մուրացկանին ողորմութիւն տալ մերժելը՝ գէշ նշան է, կարօտութիւն և նեղութիւն կը ցուցնէ։ Ողորմութիւն տալը՝ կը ցուցնէ յաջողութիւն, շա՛տ դժուարութենէ յետոյ։ Մեր դժբաղդ մուրացկան տեսնելը կը ցուցնէ թէ գործերդ կառավարած չես, որուն պատճառաւ կորուստ մը պիտի ունենաս. եթէ աղքատներն և խեղճանձերորոնք տունդ կը մտնեն և բաներդ դուրս կը տանին՝ գողութեամբ կամ ոչ, նշան է մեծ ձախողանքի։ Տե՛ս նաև Աղքատ։

Մուրճ — Նեղութիւն, աղքատութիւն, կամ ծանօթներէդ մէկը պիտի վշտացնես։ Տե՛ս Նալ։

Մսագործ — Վնասի և վտանգի նշան է, իսկ հիւանդին՝ մահուան նշան է։

Մսի ջուր — Ուտելը՝ լաւ նշան է, շահ և հարստութիւն կը ցուցնէ։

Մրգաստան — Մրգաստաններ, պարտէզներ և ծաղկաստաններ երազելը՝ հանոյքի նշան է. եթէ այդ վայրերը լեցուն են լաւ պտուղներով, հարստութիւն և առատութիւն կը նշանակէ։ Մրգաստանի մէջէն անցնիլը, պարտէզի նման շատ բաղդաւոր է։ Հասուն պտուղներ ժողվելը՝ նպաստաւոր է։ Եթէ ծառերը չորցած են, առանց տերեւներու, նեղութեան և մտահոգութեան նշան է։ Բայց եթէ ծառազուրկ մրգաստանէ կ'անցնիս, կը ցուցնէ թէ քու թերութեամբդ պատեհութիւնը կորսնցուցած ես։

Մրուր (գինիի) — Կեանքի դառնութիւն է։

Մրջիւններ — Նշան է ազահութեան և շահամոլութեան։ Եթէ անոնք կ'աշխատին և կը շարժին՝ կը ցուցնէ արգասաւորութիւն։

Մրտենի (մշտադալար թուփ) — Նշան է միրոյ արտայայտութեան։

Մօրաքոյր — Տե՛ս Հօրաքոյր։

Մօրուք — Խնայասէր ըլլալու և պատուրուելու նշան է Զինքն մօրուք մարդ տեսնել՝ շնորհք է կամ մրցակիցներէդ պիտի պարտուիս։ Գէշ մօրուքը՝ վնասակար է. իսկ փետելը՝ խաղաղութիւն։ Մ'օրուք ածիլել՝ շնորհքէ և շահէ պիտի զրկուիս։ Մ'օրուք կնոջ վրայ՝ հրաշալի գործ մը պիտի ընես և աշխարհ գովեստով պիտի խօսի վրադ։ Ճերմակ մօրուքը՝ խրատ և զգաստութիւն է։ Շէկը՝ ունակաւ անհաճոյ կեանք է։ Սեւը՝ աշխատանք և վաստակ է։ Եթէ կին մը երեսին վրայ մօրուք բուսած տեսնէ՝ տանտիկին կ'ըլլայ։ Մ'օրուք ազջկան մը վրայ՝ նշան է մօտալուտ ամուսնութեան։ Տե՛ս նաև Թուխ։

Ց

ցաղջապակի — *Մեծամեծ խորհուրդ ունիս, իսկ գործ ելբէք, ուստի ջանքերդ ապարդիւն պիտի մնան։*

ցակինթ — *Տոփական ցանկութեան շատ հետամուտ ես, կամ մէկու մը ծառայութիւն պիտի մատուցանես։*

ցաջորդ — *Եթէ յաջորդներդ մանուկներ են մնացած՝ ցաւի և բարկութեան նշան է, իսկ եթէ չափահաս մարդիկ են, նշան է նեցուկի։*

ցարդ — *Վաստակիդ յարգը չես գիտեր, շռայլ ես, հետեւանքը նեղութիւն և թշուառութիւն է։ Խուրձ կապուածը՝ երջանկութիւն է։ Այրածը՝ ուլախութիւն և խնճոյք է. իսկ ժողվելը՝ անանկութիւնդ մօտ է, զգուշացիր։ Ցարդի ծուխը՝ չսրիք մը պիտի գործես։ Ցարդի դէզ կամ կալը՝ կը ցուցնէ թէ սիրել թէ չսիրելու մէջ կը վարանիս։*

ցարդանոց — *Նեղ վիճակի մէջ ես, մէկը չպիտի օգնէ քեզ։*

ցիսուս — *Շատ նեղութենէ վերջ երջանիկ պիտի ըլլաս։ Հաւատք, մխիթարութիւն և զղջում է։ Ոմանց մանչ զաւակ ունենալու նշան է։*

ցոի կին — *Մպասած բարի լուրդ շուտով կ'ստանաս։ Զինքը յոի տեսնել՝ հոգեր ունենալու նշան է։*

ցոգնած — *Ցոգնիլը առանց պատճառի, բաղդի մը տիրանալ կը ցուցնէ. տեսնել թէ ուրիշները յոգնած են, հիւանդութիւն է։ Տե՛ս նաև թոնջենք։*

ցոյս — *Նշան է անարժէք ծառայութեան։*

ցուդայ — *Վատ ձեռնարկով մը պիտի հարստանաս։*

ցուլիս — *Աղօտ կամ տխուր նայուածք է որ շուտով պիտի բարւոքուի։*

ցուղարկաւորութիւն — *Տարակուսելի նշան մըն է. նշանակութեան համաձայն հաճոյք, բայց հաւանաբար սե-*

սակ մը մտահոգութիւն և յուսախաբութիւն է։ Եթէ յուղարկաւորութեան դացեր ես, և կը մասնակցիս մէկ բարեկամիդ կամ ազգականիդ թաղման, լաւ նշան է քեզի համար, որովհետեւ այդ կը նշանակէ որ բարեկամիդ կամ ազգականիդ կողմէն կալուած պիտի ստանաս, և կամ պիտի ամուսնանաս սրտիդ ուզածին հետ և կամ ճամբորդութիւն ընելու նշան է։

ցունիս — Բարեբաղդ ամիս մըն է. անսովոր յաջողութիւն ամէն ձեռնարկներուդ մէջ։

ցունվար — Անսիրելի մանուկներ և ընկերներ կը ցուցնէ։

ցուշատեսր — Թուղթին նման չեն կրնար ակնկալեր հաճելի բաներ այս երազէն։

ցուռուռ (նուսխա) — Շինելը՝ վատութեան նշան է։

ցօրանջել — Կեղծ գովեստներ պիտի լսես։ Շատ դրժբաղդութիւն է երազի մէջ յօրանջելը. պարապ տեղը առողջութիւն և յաջողութիւն պիտի փնտռես։

Ն

Նախնիք — Նախնիքներու մասին երազել, (մեծ հայր՝ մեծ պապիւ է) կը նշանակէ հոգատարութիւն կամ մօտալուտ յաջողութիւն։

Նաիատակ — Թէև շատ դժուարութեամբ՝ բայց վերջապէս նոր պատակիդ պիտի հասնիս։

Նամակ — Անյուսալի լուր. սիրային խնդիրներու կը վերաբերի, առ հասարակ դաւ և մտահոգութիւն կը բերէ։ Պատուլուածը՝ կը դուցնէ անյուսալի սխալմունք։ Եթէ նամակ կը գրես բարեկամներուդ, և կամ անոնք կը գրեն քեզի, կը նշանակէ թէ լաւ լուր մը պիտի ստանաս։ Ստանալը՝ գործը կարգադրել է. գրկելը՝ հոգէ ազատիլ է. կարդալը՝ սիրահարուած ըլլալու նշան է. գրելը՝ տանջանք կամ մէկուն

վստահուած գաղտնիք է. եթէ զայն պատեհ նեռես՝ հակառակորդներուդ պիտի յայտնես։

Նայիլ — Բարձր տեղէ մը վար նայիլ և կամ լուսամուտէ մը, նշան է բարձր փառասիրութեան և ձգտումի, հետաքրքիր բաղձանքներու, դեղերող երեւակայութեան և խառնակ մտածումներու։

Նապաստակ — Խաբեբայ մարդու մը պիտի հանդիպիս. եթէ ամուսնացած ես, հաւանաբար աղջիկ պիտի ունենաս. պարապ ելած ձեռնարկ. ունենալը՝ քեզի նման զաւակ մը կ'ունենաս։ Օրհասականը՝ նշան է նուազ անկեղծ ցաւու։ Էգը՝ որկրամոլութեան և զեղխութեան նշան է։ Տե՛ս նաև ճագար։

Նարինջ — Տեսնել կամ ուտել՝ կը ցուցնէ վէրք, դաւ և մտահոգութիւն. հասունը կամ խակը սիւնոյն է։ Բայց ոմանց համար նարինջ տեսնելը՝ կը ցուցնէ աղջիկ զաւակ ունենալ կամ զեղեցիկ կնոջ մը հետ տեսնուիլ է։ Եթէ նարինջը խոշոր և աղուոր է՝ կինդ շատ զաւակներ կ'ունենայ։ Պարկեշտ փափաք։ Տե՛ս նաև պտուղներ։

Նաւ — Նշան է անակնկալ յաջողութեան. շատ նպաստաւոր զեկոյց մըն է, կը ցուցնէ նաև հեռաւոր ազգականի մը կամ բարեկամի մը անակնկալ ժամանումը. կատարուած փափաքներ։ Ոմանց հեռաւորը հիւանդ ըլլալը կը ցուցնէ։ Նաւ մտնել՝ նոր գործի պիտի ձեռնարկես։ Նաւաբեկութիւնը կամ փոթորիկէ վտանգուած նաւերը՝ աղէտալի են կամ վտանգ կը ցուցնեն։ Կոտրած նաւը՝ մահուան նշան է, նոյնպէս այրիլը։ Եթէ դուն կը քալես կամ ձի հեծած [illegible], կամ ջուրը իջեցուցած նաւի մը քովէն կը քալես, որոշ նշան է թէ՝ դժուարութիւններ կան քու ընթացքիդ մէջ և նեղութիւն յաջողութեանդ համար։ Նաւ նստիլ՝ շատ ժամանակ պիտի ապրիս կամ պատուոյ կ'արժանանաս։ Գանձով լի նաւ տեսնել՝ նեղութիւն է։ Ապրանքներով բեռցուած նաւերը՝ կը ցուցնեն բարգաւաճում։ Ոսկիէ կամ արծաթէ նաւ

տեսնել՝ բարի է։ Նաւատորմ — *Հեռու տեղաց քեզի շահ պիտի գայ, բայց ոմանց՝ իրենց գործերը շատ դէշ վիճակի մէջ ըլլալը կը ցուցնէ։ Տե՛ս նաև* Նաւաբեկութիւն, Նաւել։

Նաւաբեկեալներ ժողվել — *Բարեսիրութիւն է։*

Նաւաբեկութիւն — *Եթէ նաւաբեկութեան մէջ ես, և թէ նաւը չախչախուած է, դէշ նշան է բոլորին համար։ բացի այն անձէն, որ այդ երազը տեսնելու ժամանակ ունի և կապանքի ենթակայ է, որուն համար ազատութիւն կը նշանակէ։*

Նաւազ կամ Նաւաստի — *Ճամբորդութիւն է. նաւազ ըլլալ՝ զրոյցներ կ'ելնէ։*

Նաւակ — *Դժբաղդ է երազողին որ նաւակին վրայ կ'իյնայ. եթէ ծովը անհանդարտ է և փոթորկալից՝ զգուշութիւն ընելու է. դժբաղդ փոփոխութիւններ կ'սպառնայ։ Տե՛ս* Նաւել, Մակոյկ։

Նաւաստ — *Տե՛ս* Նաւազ։

Նաւել — *Անսասոյդ ճամբորդութիւն և վտանգի ենթարկուած ազատութիւն է։ Հանդարտ ջուրի վրայ դիւրին նաւելդ՝ յաջողութիւն է։ Եթէ նաւակը պզտիկ է, յաջողութիւնդ փոքր պիտի ըլլայ, բայց դուն զոհ պիտի մնաս։ Փոթորիկի ատեն նաւելը՝ կը ցուցնէ դժուարութիւններ և վտանգներ ճամբուդ վրայ, ըլլայ թէ նաւուն սախտակամածին վրայ ըլլաս կամ միայն կը դիտես զայն։ Տե՛ս նաև* Նաւ, Նաւակ, Մակոյկ, Ովկիանոս։

Նետ — *Մերձաւորներդ քեզ կը դաւեն, զգուշացիր, երիտասարդական սեղքեր։*

Ներկ — *Սուտ լուրով մը պիտի խաբուիս։ Նոր ներկուած տունը յաջողութիւն կը ցուցնէ. հանդերձիդ վրայ ներկ թափելը կոիւ և անպէտ մտահոգութիւն է։ Գեղեցիկ ներկերով նկարները շատ անպատեհ են, պիտի տեսնես թէ ակնկալութիւններդ ի դերև պիտի ելնեն։ Նկարդ շինելդ՝ անպատեհ է աքրայքն խնդ ոյ մէջ։*

Ներկարար — Ուրիշը խաբելու միտում ունիս, բայց միամտաբար դուն պիտի խաբուիս։

Նժար — Նժար գործածելը, ո և է բան կշռելու համար բաղդաւոր նշան է. կրնաս ակնկալեր յաջողութիւն քու ձեռնարկներուդ մէջ։ Տե՛ս նաև կշիռ։

Նիզակ — Վատակդ վտանգի մէջ է։

Նիզակ-սմարտ — Տանգ կարասեաց կորուստ պիտի պատահի, արթուն կեցիր։

Նիհարնալ — Եթէ այտերդ նիհարցեր և տժգոյն կնճիռներով լեցուած են, նշան է վշտի, ծանրութեան և թշուառութեան։ Եթէ հարուստ մը տեսնէ թէ նիհարցեր է, պիտի աղքատանայ։

Նկար — Տե՛ս գեղեցկութիւն, լուսանկար, ներկ։

Նշայ — Եթէ ճերմակեղէն նշայ կ'ընես՝ պիտի օգտուիս եթէ աղքատ ես։ Իսկ հարուստին համար կորսնցնել կը նշանակէ։

Նշան առնել — Եթէ դուրս ելած ես և նշան կ'առնես, լաւ նշան է, եթէ միշտ նպատակի կը զարնես։

Նոճի — Նշան է իրական վշտակցութեան։

Նոյեմբեր — Ամէն ուղղութեամբ յաջողութիւն է, բայց բաղդաւոր չէ։

Նոր տարի — Շատ բաղդաւոր նշան է։

Նուագ — Նուագ լսելը՝ նշան է թէ բաղդաւոր լուրեր պիտի գան քեզի։ Անսերդաշնակ կամ խռպոտ նուագը՝ ընտանեկան նեղութիւն կը ցուցնէ։ Տե՛ս երգեհոն, ջութակ։

Նուէր — Գթութիւն է։ Տե՛ս նաև ընծայ, պարգեւ։

Նուշ — Լաւ հիւրեր պիտի ընդունիս և ուրախանաս. նաև գործերու մէջ յաջողութեան նշան է։ Տե՛ս պտուղներ։

Նուռ — Քեզ շուարեցնելու չափ մեծ վաստակ կամ շատ աղջիկներ պիտի ունենաս. հեշտութիւն։ Բայց ոմանք կ'ըսեն թէ օտարաց համար վաստակ կամ մէկէ մը շահագործուիլ է։ Եթէ նուռը չարդես՝ գործդ կը ձգես, կ'ելնես։

Նստարան — Գործէդ սկսած ես ձանձրանալ. փայտէ նստարան՝ ապահով վիճակի մէջ ես, վախ չկայ։ Երկաթէն՝ եթէ դատ ունիս, պիտի կորանցնես, թէ ոչ գործերդ պիտի աւրուին։

Նրբանցք — Միշտ դէշ նշան է նրբանցքի մասին երազելը, հոնկէ անցնիս կամ ոչ. այս բոլորը նշաններ են թէ դժուարութիւններ պիտի շրջապատեն, ինչպէս կ'ընեն ցանկերը և ճամբաները, և այլն։



Շ

Շագանակ — Կնոջ հետ պիտի վիճիս և սրդողիս։ Խորոված՝ նոր բան մը սորվելով պիտի ուրախանաս և ապագային պիտի օգուտիս։

Շալակ — Ծանր շալկել՝ մեծ տագնապ է։ Տե՛ս բեռ։

Շահ — Կը ցուցնէ ինչքերու կորուստ։

Շահագէտ կամ առեւտուրի միջնորդ — Լաւ չէ. քեզ շրջապատողներէն լաւ պահէ ունեցածդ։

Շահէն (Թուչուն) — Նշան է հինցած ատելութեան։

Շապիկ — Գործի նեղութեան և սրտի անձկութեան նշան է։ Սպիտակը՝ տեսնել կամ հագնիլ. արդարութիւն կամ լուսալի յաջողութիւն է։ Իսկ սեւը՝ տրտմութիւն է. գուցէ քիչ օրէն պատանք մը պիտի տեսնես։ Աղտոտը՝ նեղութիւն է, կը ցուցնէ յանցանք մը կամ անվայել արարք մը գործելդ։

Շատախօսել — Անօգուտ կերպով մսխում է։

Շատրուան (Ֆիսքիյէ) — Շիսթ գաղափարներ։

Շափիղայ — Բաղդաւոր նշան մըն է, մանաւանդ սիրային խնդիրներու մէջ։ Տե՛ս նաև գոհարներ։

Շաքար — Բարեկամներդ քեզ պարապ յոյսեր կուտան։ Շաքար բաժնել՝ շուտով կնքահայր պիտի ըլլաս։ Ուտելը՝ կը ցուցնէ թէ մտահոգութիւն պիտի ունենաս որ պիտի տեւէ երկար ժամանակ մը, մասնաւորապէս ընտանեկան յարկի ներքեւ։

Շաքարեղէն — Ուտելը՝ կը ցուցնէ կիներու նենգամտութիւններ։

Շեղը (Դանակի) — Թշնամիդ շատ կը դրդռես, լաւ չէ։

Շերամ — Բաղդախաղէ զգուշացիր, վնաս կ'ընես։

Շեփոր — Սիրականէդ բարի լուր պիտի առնես։

Շէնք — Ժառանգութիւն է։ Հոյակապ շէնքեր և գեղեցիկ պարտէզներ տեսնելը՝ առ հասարակ բաղդաւոր ճամբորդութեան նշան է։ Շէնք շինելը՝ վաստակ և բարի համբաւ է, իսկ քանդելը՝ կորուստի և վնասի նշան է։

Շիշ — Պարապ շիշը կը ցուցնէ թէ ամուլ ամուսնութիւն մը պիտի կնքես, իսկ լեցունը ուրախ կեանք և վաստակ է։

Շիրիմ — Դամբան մը ունենալ՝ լաւ նշան է առ հասարակ։

Շպարշ — Շատ ծիծաղելի գործ մը պիտի ընես։

Շղթայ — Թշնամիներդ քեզ դէմ միացած են։ Ոսկի շղթայ՝ ամուսնութեան և ընկերակցութեան նշան է. եթէ զայն խորտակես, կը ցուցնէ երկար և տաժանելի աշխատութիւն։ Եթէ կիները տեսնեն թէ՝ մարգարիտէ, թանկագին քարերէ և ամէն տեսակ զարդարանքէ շղթայ ձգեր են իրենց գլխուն և վզին վրայ, լաւ նշան է իրենց սիրոն համար։

Շողգաւներ — Արտին մէջ ասոնց ճռիլը տեսնելը՝ կը ցուցնէ թէ բաղդ կը յաջողի և թէ հիմայ յաջողութիւն կրնաս ակնկալեր. զանոնք քաղելը կը ցուցնէ թէ՝ անձնապէս պիտի բարուքես քու պատահութիւններդ և շատ բաղդաւոր նշան է, բայց զանոնք ուտելը հիւանդութիւն է և վերջնական յաջողութիւնդ պիտի ուշանայ. մէկ շողգամ տեսնելը՝ նշան է իսոնիխուն երազներու։

Շողոքորթութիւն — Եթէ դուն դիւրաւ կը շողոքորթուիս, դէշ նշան է, մանաւանդ եթէ շողոքորթողը քեզի ընտանի անձ մըն է, որովհետեւ այդ, մատնութիւն կը ցուցնէ անոր կողմէն։

Շուկայ — Լեցուն բարիքներով և մարդոցմով շուկաներ տեսնելը՝ լաւ նշան է անոնց համար, որ առեւտուրի մէջ են։ Դատարկ շուկայ մը՝ կը նշանակէ ճիշդ հակառակը։

Շուն — Պզտիկ շունը և կամ ո և է փայփայելի կենդանի լաւ նշան է. բայց եթէ երազես օտարական շուն մը (կամ շուներ), թշնամի է, կամ դժուարութիւն կը նշանակէ, մանաւանդ եթէ ան հաչէ կամ խածնէ քեզ, իսկ եթէ վրադ յարձակի, խարդախութիւն և խաբէութիւն կը նշանակէ քեզի դէմ նաև կը ցուցնէ չար լեզուներ, զգոյշ եղիր չարակամ մարդոցմէ որ կը ջանան քեզ զրկել քու ապրուստէդ։ Շուներուն հաչիւնը կը նշանակէ աղէտալի նկարագիր կամ պիտի նախատես թշնամիներդ և խափանարարներդ։ Եթէ շունդ կը հետեւի քեզի, վստահելի բարեկամ է։ Շան լողալը տեսնել՝ հաճելի ժամանակ է քեզի համար։ Եթէ շուն մը կը փայփայէ քեզ, կը նշանակէ տեւական բարեկամներ։ Շունդ տեսնելը՝ նշան է յոյսի, ուժի և օգնութիւն դտնելուդ։ Շունդ եթէ հաչէ՝ լաւ է, դատդ պիտի շահիս։ Շունդ եթէ լուանի ատեն հաչէ՝ քեզմէ օգնութիւն կ'ուզեն։ Շուներ եթէ վրադ յարձակին՝ շատ թշնամի ունիս և խենդենալու վտանգի մէջ ես։ Շանը ոռնալը լսել՝ տհաճելի լուրեր ստանալ է։ Եթէ շուներ իրարու հետ կռուին, աղէկ չէ, կը ցուցնէ թէ թշնամիներդ ի զուր տեղը քեզ կը հալածեն, բայց չպիտի կրնան վնասել։ Սեւ շունը՝ մատնութիւն է։ Եթէ շուն մը շատ գլուխներ ունենայ, նշան է դատապարտելի մոլութիւններու։ Տե՛ս քերծ։

Շուշան — Մէկ ազգականուհիդ պիտի տեսնես և շատ պիտի ուրախանաս, կը ցուցնէ նաև ունայնութիւն և արհամարհանք։

Շալար — Նշան է սիրոյ որոգայթներու։

Շտեմարան — Նիւթապէս շատ պիտի յառաջդիմես։ Լեցունը՝ ժառանգութիւն է, իսկ պարապը կը ցուցնէ ժողովելու հունձք։

Շրջազգեստ — Դէմդ լարուած որոգայթ կայ։

Շրջափակ — Ճամբուդ վրայ դժուարութիւն ունենալ կը ցուցնէ. եթէ յաջողիս միւս կողմը անցնիլ՝ նեղութիւններուդ պիտի յաղթես, բայց եթէ շրջափակին վրայէն ցատկես, կը ցուցնէ թէ՝ դուն քիչ մը կասկածելի պարագաներ պիտի ունենաս, նպատակիդ հասնելու համար։

Շփոթութիւն — Հարստութեան յաւելում է։

Շքանշան — Ստանալը՝ աստիճանի բարձրացում և դրամական յաջողութիւն է։ Տե՛ս նաև Պատուանշան։

Ո

Ոգի կամ ուրուական — Վհատութիւն, վիշտ և խաբէութիւն է։ Եթէ մեռած բարեկամիդ ուրուականը տեսնես՝ վհատեցուցիչ ճամբորդութիւն է. մանաւանդ դէշ է, եթէ ոգին խօսի։ Տե՛ս նաև Սատանայ, Ուրուական։

Ոզնի — Որբերու բարիք ընելով պիտի ուրախանաս։

Ոլորն — Բարեբաղդ է և կը խոստանայ շատ առողջութիւն։ Անոնց ածիլը՝ յաջողութիւն կը նշանակէ, բայց չորնալը՝ կը զգուշացնէ թէ բեռնաւորած ես ուժգ։ Ձայն տընկելը և կամ ուտելը՝ լաւ նշան է։

Ոդոդում — Նշան է պտղաբերութեան։

Ողորմութիւն — Լաւ երազ մըն է, պայմանաւ որ տալդ կամ առնելդ պակաս չելլայ։ Ողորմութիւն ընդունիլդ՝ կարօտութեան նշան է։ Տե՛ս նաև Աղքատ, Մուրացկան։

Ողջ — Ձինքն վերեզմանի մէջ ողջ տեսնել, մեծ զրոյց է։

Ողջերթ — Ուրախ ողջերթ մը լաւ նշան է, բայց տըրտումը՝ կորուստ. եթէ մեկէողը համբուրես, ճամբորդութիւն կը ցուցնէ քեզի։ Ողջերթի ատեն ձեռք թօթուելը՝ ընդհանրապէս լաւ նշան է, բայց կախում ունի այն անձէն որուն ձեռքը կը թօթուես։ Տե՛ս նաև Հրաժեշդ։

Ոչխար — Ցաջողութիւն է. վիճակդ կը լաւանայ, նախանձդ ալ կ՚աւելնայ, բայց և այնպէս վերջդ միշտ բարի է։ Եթէ խուզուած են, կը ցուցնէ թէ դրամի կորուստ պիտի ունենաս։ Ոչխարներու հօտ տեսնելը՝ մասնաւորապէս շատ բարեբաղդ է. մորթելը՝ նեղութեան մէջ պիտի իյնաս, կամ հարբուխ պիտի ըլլաս. ճերմակ ոչխարը՝ շահ է, իսկ սեւը՝ բախտդ աւրուիլ սկսած է կամ կռիւ, սուգ և տրտմութիւն է։ Ոչխարներու իրարու հետ կռուիլը՝ նեղութիւններ են։ Տե՛ս Խոյ, Խուզել, Մաքի։

Ոգիլ — Լաւ չէ. երկու ոգիլ տեսնել՝ կռիւ է. կոսրելը՝ օրերուդ սահմանն է, առանց նպատակիդ հասնելու։ Եթէ մեծ քանակութեամբ ոգիլ կայ վրադ, նշան է հիւանդութեան, ադքատութեան և գերութեան. եթէ դուն զանոնք կ՚ապանեես, կը նշանակէ որ պիտի ազատես հոգերէ և ծանրութիւններէ. եթէ մէկը երազէ որ ոգլոսեր է և թէ շատ նեղութեան մէջ կը գտնուի զանոնք ապաննելով և ոչնչացընելով, կը նշանակէ թէ ինք հարստանալու վրայ է։

Ոսկեզօծել — Հարստութիւնդ վտանգի մէջ է։

Ոսկի — Շահ, սէր և ուրախութիւն է. ոմանք կ՚ըսեն թէ անմիջական պղտիկ նեղութիւն է, որուն պիտի յաջորդէ բարեբաղդութիւն մը. ոսկի շարոց՝ անոր սէրն ալ քուկինիդ նման ջերմ է. զայն ձեռքով շօշափել, զննել, մեծ կորուստ է. իսկ մխսելը՝ անկարգութիւն։

Ոսկոր — Անփոյթ հաճոյք մը ետք քիչ մը վիշտ է. ոսկոր կրծել կամ քերել՝ թէև անիրաւ բայց լաւ շահ մը պիտի ընես, կամ կնոջմէդ գոհ պիտի մնաս. մարդու ոսկոր կրծել՝ դէշ նշան է, բանտարկութիւն կը ցուցնէ։

Ոսպ — Զրի վաստակ կ'ուզես, բայց ձրի աշխատանք կրել պիտի պարտաւորուիս. հրաժարում, փոփոխութիւն գաղափարի կամ կրօնական դաւանանքի։

Ոստիկան — Թշնամիդ տկարացած կամ վախցած է քեզմէ։

Ոստրէ — Բարեկամներու համախմբում է։ Եթէ ոստրէ կը բանաս և մէջերը կ'ուտես, կը նշանակէ թէ անօթութեան պիտի մատնուիս և կամ մեծ նեղութիւն պիտի կրես ապրուստիդ համար։

Ովկիանոս — Եթէ ծովը հանդարտ է, յաջողութիւն և բարգաւաճութիւն է. եթէ փոթորիկալից է, այն ատեն դժուարութիւններ ակնկալէ. եթէ ծովը ծանծաղ է, այնպէս որ դուն կրնաս հունէն անցնիլ, խառն են բաղդաւորութիւն և տրտմութիւն։ Տե՛ս նաև Ցով, Ջուր։

Ոտից — Տե՛ս կօշիկ։

Ոտք — Զար բնաղդ ունիս և գէշ կը մտածես, լաւ չէ, կամ իմացուած ճամբորդութիւն է։ Կտրուածը՝ վիշտ և նեղութիւն է. լուանալը՝ մեկնելու ուրախութիւն. մերկը՝ շփոթութիւն կամ հաճեստութիւն է։ Եթէ մօտ ես գետի մը կամ աղբիւրի մը և ուր կը լուաս ոտքերդ, կը նշանակէ խոշտանգում և նեղութիւն։ Եթէ մէկը ոտքերդ կը քերէ, շողոքորդութենէ յառաջ եկած կորուստ կը ցուցնէ, կամ քու անհոգութեանդ պատճառաւ ուրիշներ պիտի օգտուին։

Որբ — Գովեստ պիտի լսես բարի գործիդ համար։

Որդ — Տե՛ս Գետնի որդ։

Որդեգրել — Կեանքի երկարութեան նշան է. զինուոր մը որդեգրել՝ անբնական մահ է։

Որդեծնութիւն — Նշան է երջանկութեան։

Որդի — Եթէ որդւոյդ հետ կը քալես, կը նշանակէ որ դաւակդ ֆնասի մը պիտի ենթարկուի շուտով։

Որթ (խաղողի) — Անկումիդ սպասողներ կան։

Որթատունկ — Նշան է առատութեան, լիութեան, բարեբերութեան և հարստութեան։

Որմնադիր — Ստացուածքի փափաք է։

Որոտում — Որոտում լսելը՝ լաւ նշան է, բայց սաստիկ փոթորիկը բաղդաւոր նշան չէ։ Հարուստին համար որոտումի մասին երազել, վիշտ ու տրտմութիւն է, իսկ աղքատին՝ հանգստութիւն է։

Որսորդ — Լեզուէդ մնաս պիտի կրես։

Որսորդութիւն — Վաստակդ պիտի աւելնայ և շատ պիտի ուրախանաս, եթէ խոհեմ շարժիս, նաև կը ցուցնէ աղդականներու կամ բարեկամներու մահ։ Որսի երթալը բարի է. որսորդութենէ դառնալը՝ գոհունակութիւն է։

Ուլ — Երախայի հիւանդութեան նշան է։

Ուլունք — Համբելը կամ շարելը բաղդաւոր նշան է, ուրիշներէն շնորհք պիտի ստանաս. զանոնք ցրուելը կորուստ և կամ վնասութիւն է։ Առ հասարակ ասոնք կը վերաբերին աշխարհիկ բաներու։

Ուղեղ — Առողջ ուղեղը՝ հպարտութեան նշան է, իսկ հիւանդը՝ իրականութեան։

Ուղեւորութիւն — Տե՛ս բնակարան, շեռու, ճամբորդել Ողջերթ։

Ուղտ — Տեսնել կամ նստիլ՝ միշտ լաւ է. կը ցուցնէ մեծութիւն և պատիւ. խայտաբղեսը՝ լաւ չէ։ Մատակ ուղտ նստիլ՝ հիւանդութիւն է, չոքածը՝ նիւթական տաղնապի նշան է. ուղտերու խումբ տեսնելը՝ սովի նշան է։ Եթէ երկու ուղտեր կռուին, նախարարներու մէջ անհամաձայնութիւն կը ծագի։

Ուռեցք — Տոփական մտածումներդ կը զօրանան, չափաւորութիւն պէտք է. եթէ ուռեցք ունեցեր ես, ինչպէս նաև բշտիկներ մարմնոյդ վրայ, կը նշանակէ թէ պիտի հարստանաս։

Ուս — Մերկը՝ պչրանք է. վտիտը՝ զրկանք. իսկ ուռուցիկը՝ կարողութիւն և հնարք է։

Ուսնոց — Նոր պատուոյ նշան է։

Ուսում — *Ծուլութիւն կամ աշխատութեան չափազանցութիւն է։*

Ուտել — *Նշան է մխիթարի։ Եթէ իջեւանի մը մէջ կը ճաշես ընկերներուդ հետ, լաւ նշան է. բարգաւաճում և մեծ նախընտրութիւն կը նշանակէ։ Տե՛ս նաև* Եփել, Ընթրիք, Խընճոյք, Պանիր, Յուրցն։

Ուրախութիւն — *Ուրախութիւն և խնճոյք երազել՝ կը նշանակէ ամուսնանալու նման լաւ բաներ. աղքատին համար նշան է լաւ բանի։ Տխուր և վախկոտ մէկու մը համար նշան է ծանրութեան և սոսկումի վերջանալուն։ Տե՛ս* Խնճոյք։

Ուրուական — *Ուխտազնացութեան նշան է, և այդ պատճառաւ ըլլալիք միաս մը կը ցուցնէ. նշան է նաև մտքի տկարութեան և յոյսերուդ պարապը ելնելուն։ Եթէ ուրուականը ետեւէդ գայ՝ ցնորական պարապ բաներու ետեւէն կ՚իյնաս և յուսախաբ կ՚ըլլաս. եթէ դուն ուրուականին ետեւէն երթաս անցեալ գործունէութեանդ բաղդաւոր շրջանը կը յիշես և կը տրտմիս։ Տե՛ս նաև* Ոգի։

Ուրուր — *Վատակի և ստացուածքի սպառում է։*

Զ

Զաման — *Կոխ և աղաղակ է կամ չար գործերէդ ամբշնալով, կ՚ուզես ինքզինքդ ծածկել, չի տեսնուիլ, բայց միշտ պիտի յայտնուիս։*

Զամիչ — *Գործդ քեզի լաւ կ՚երեւի, բայց վերջը լաւ չէ, խիստ միաս պիտի կրես։*

Զարչարուիլ — *Կենսական զգուշութիւն. ամուրի չմնալ կամ անապատական չըլլալ, որովհետև բնութեան հակառակ է. լաւ խորհէ՛, չի զղջաս։*

Զիր — Քիչ շահ է։

Զոշիկ — Վախ կամ հիւանդութիւն է։ Տե՛ս նաև Զոշիկ։

Զմշկել — Շատ վտանգաւոր բան մըն է. ասոր վրայ մտածելը՝ զգուշութիւն ընելու ես օտարներու հետ առեւտուր ըրած ատենդ և փորձելու չես շահադիտութիւն կամ նոր արկածախնդրութիւն մը։

Զորթան — Շահ է, կամ հին բարեկամէ մը պիտի օգտուիս։

Զուան — Փոքրիկ շահ, բայց ապահով և յարատեւ։ Սեւը՝ բաժանում և երկար ճամբորդութիւն է, հաւանաբար ցամաքային։ Զուան քաշել՝ թշնամւոյդ ձախողուածին պիտի ուրախանաս։ Տե՛ս Թել։



Պ

Պալատ — Պալատ կամ պալատի դուռ շինելը կամ պալատ տեսնելը՝ հարուստ կնոջ մը հետ ծանօթանալ է. մեծցուած պալատը՝ մեծութեան նշան է. պալատ քակել՝ նոյն պալատին տէրը կը սնանկանայ կամ կը մեռնի. եթէ պալատին մէջ հրաւիրուիս, թագաւորէ կամ մեծ անձէ մը պիտի պատուիրուիս։ Այրածը՝ կործանում և աւեր է։ Մէջը բնակիլը՝ հնարք կամ յուսահատութիւն է։

Պալար — Եթէ մարմինդ վրայ պալարներով լեցուած է, հարստանալու նշան է։

Պայտ — Բաղդ շուտով պիտի բացուի։ Ձիու մը պայտ զարնել՝ նշան է դիւղական հանդարտութեան։

Պայտար — Մեծի մը հետ վէճ և կռիւ պիտի ընես։

Պանդոկ — Առաջուց մտածուած ճամբորդութիւն է կամ պանդխտութեան վրայ շատ կը մտածես. վաճառականաց համար կորուստ կը ցուցնէ։

Պանիր — Լաւ բան չակնկալուիր այս երազէն. շատ ցանկալուդ քիչ պիտի գտնես միշտ, պատիժ։ Ուտելը՝ նշան է շահու և վաստակ է։

Պաշար — Կնամոլութենէ զգուշացիր, լաւ չէ։

Պատ — Շատ մը դժուարութիւններ ունենալու նշան է, մանաւանդ եթէ կիսափուլ կամ խախտած է։ Վրայէն ցատկելը կամ պատուելը դայն, ճամբայ բանալու անցնելու համար՝ վերջապէս յաջողութեան նշան է. պատի մը չուանին վրայէն անցնիլը նմանապէս շատ բաղդաւորութիւն է. եթէ փլած՝ մերձաւորի մը մահ է։ Ոմանց համար պատ կամ ցանկ տեսնելը՝ նշան է թէ ունեցածը գողնալու կը պատին։ Տ. նաև ցատկել։

Պատանք—Դժբաղդ է, մահը կը ցուցնէ սիրելի և արժէքաւոր բարեկամի կամ բարեկամուհիի մը։ Շատ դժբաղդ նշան է վաճառականի համար, կը ցուցնէ թէ առնելիքները չպիտի վճարուին. երկրագործին՝ հասկերու փճացում. երիտասարդին՝ դժբախտութիւն և սիրելիներու կորուստ։ Բայց ոմանց համար պատանք տեսնելը՝ կը ցուցնէ թէ գրամօժիտով կին պիտի առնեն կամ ժառանգութեան յաջորդ պիտի ըլլան։

Պատառաքաղ — Վաստակդ ուրիշներ կ'ուտեն, լաւ չէ, կամ դժուարութեան և խոչընդոտներու նշան է։ Եթէ կին է տեսնողը՝ կը ցուցնէ թէ նեղութիւն պիտի ունենայ, կամ կծու խօսքերու նշան է։

Պատարագ — Վիճաբանութիւն և կռիւ է. պատարագ առնելը աղէկ է։ Զայնաւոր պատարագ լսելը՝ ամուսնական վայելք կամ չափազանց անձնասիրութիւն և շահախնդրութիւն է։ Տե՛ս նաև Եկեղեցի։

Պատեան — Ցայտնուած գաղտնիք է։

Պատերազմ — Սիրոյդ ոնաս բարով ըսէ. որովհետև սիրականդ ուրիշ մը գտած է, կամ նեղութեան և վտանգի նշան է. նոյնպէս պատերազմական գործիք տեսնելը։ Զինուորներն ու հրամանատարները և անոնք որ իրենց կեանքը պատերազմի մէջ կ'անցընեն, զերծ են այս մեկնութենէն։

Կեանքդ մեծ փոփոխութիւն պիտի կրէ եթէ պատերազմին մասնակցիս, մեծ յաջողութիւն մը ձեռք կը բերես։ Եթէ պատերազմի դաշտ տեսնես՝ նշան է սխուր բաներու վրայ մտածելուդ։

Պատկեր — Պարզ ուրախութիւն և սէր է։ Գունաւորը՝ զոյնին համեմատ լաւ կամ վատ է։ Տե՛ս նաև Գեղեցկութիւն, Լուսանկար, Ներկ,

Պատմուճան — Տեսնել կամ շինել, պատիւ և իշխանութիւն է։

Պատշգամ — Ընդհանրապէս տհաճելի լուրեր պիտի լսես, բացակայ բարեկամներուդ վրայով։

Պատուհանշան — Հպարտ ես և այդ պատճառաւ չես սիրուիր, քիչ մը մեղմացիր։ Տե՛ս Եքանշան։

Պատուհան — Դրացիէդ գաղտնիք մը պիտի իմանաս։ Պատուհանին առջև նստիլ և դուրս նայիլը՝ վստահաբար նեղութեան և անպէտ ջանքերու նշան է. պատուհանէն փախչիլն իսկ լաւ նշան չէ. անկէ դուրս ելլելը՝ մնանկութիւն է. վար գահավիժիլը՝ մէջդ ամփոփուած վշաեր են։

Պատրոյգ — Շատ կը չարչարես անձդ և ի զուր կը յոգնիս։

Պար — Խօսքերդ լաւ, բայց գործի մէջ թոյլ ես, այդ պատճառաւ շահերդ կը պակսին։ Պարելը՝ շատ յաջող նշան է, ըլլայ քու կամ խորհած անձիդ վրայով։ Տ. Պարահանդէս։

Պարահանդէս — Սիրահարուած ըլլալու նշան է. պարելը՝ դրամ ժառանգելու նշան է. պարահանդէսին մէջ ըմպելիք խմելը դրամական նեղութեան նշան է։ Եթէ պարասրահին մէջ անձեր կը պարեն, կամ թէ դուն ալ կը մասնակցիս պարերուն, նշան է ուրախութեան և հաճոյքի։

Պարան — Դժուարութիւններ են. մնացած պարագաները կապուած են երազիդ միւս մասերուն. եթէ ցատկես մէկուն պարանին վրայէն, պիտի յաջողիս, բայց եթէ կ'իջնես՝ ձախորդ է։

Պարգեւ — Ընդունիլը՝ տանջանք է, իսկ ընծայելը՝ հաճոյանալու պէտք է։ Տե՛ս նաև ընծայ, նուէր։

Պարտէզ — Ասոր պէս բաղդաւոր նշան չիկայ, մանաւանդ նիւթական յաջողութեան տեսակէտով։ Եթէ լեցուն է մշտադալարով և ծաղիկներով, մտքի խաղաղութիւն և զուարթունակութիւն է, կամ կնոջ մը ձեռքով բարիք պիտի վայելեսս։ Բանջարեղէններով զարդարուած պարտէզը սակայն, յաջող նշան չէ։ Զորցածը՝ տան մէջ հիւանդութիւն և անանկութիւն է։ Եթէ պարտէզի մը մէջ կը քալես, հոս ու հոն ծաղիկ կը հաւաքես, կը նշանակէ որ անձնատուր պիտի ըլլաս հպարտութեան և յափշտակութեան։ պարտէզին մէջ աշխատիլը առողջութեան նշան է։

Պարտիզպան — Հաճոյքիդ ետեւէն շատ ինկած ես, գուցէ հիւանդանաս։

Պարտք ընել — Այս տարի շատ պիտի շահիս, տարիներ իրարու կը յաջորդեն, բայց չեն նմանիր։

Պաքսիմատ — Ուտել կամ եփել՝ նշան է ընտանեկան յիմար վիճաբանութեան։

Պեխ — Դաղտնի հիւանդութիւն ունենալու նշան է. եթէ պեխերդ ածիլուած տեսնես՝ խարդախութեան մը զոհ կ՚երթաս, բացի անոնցմէ որ արդէն սովորութիւն ունին ածիլելու իրենց պեխերը։

Պէպէկ — Տրտմութիւն է։

Պիծակ — Հալածանք կը ցուցնէ։

Պիինձ — Դժուար գործ և մարմնական աշխատութիւն կը ցուցնէ, կամ վանականի կեանք պիտի ունենաս։

Պղպեղ — Կոկիծ և անակնկալ ցաւ է. ուտելը՝ թշնամիներուդ դէմ պատրաստ կեցիր։

Պնակ — Լեցունը՝ բախտ և պատիւ պիտի գտնես. իսկ պարապը՝ սպասումներդ անօգուտ են և բարեկամներդ քեզ խաբելու ետեւէ են։

Պողոտայ — Անծանօթ ճամբու մէջ ըլլալը՝ կը ցուցնէ

թէ նոր ձեռնարկութիւններ պիտի ընես. աւելի մտահոգութիւն քան թէ շահ պիտի ունենաս ատեն մը։ Եթէ պողոտան պատած է ծառներով, կանաչ ցանկերով և ծաղիկներով, պիտի յաջողիս։

Պսակ — Կոիւ է։ Չարդարուած պսակը խիստ աղէկ է։ Արծաթէն՝ հիւանդութիւն է. փշէ պսակը՝ մեծ պարգեւ մը կը շահիս կամ շահաբեր գործ մը կ'ընես. ծաղկէ պսակը՝ նշան է սիրոյ բանաստեղծութեան, իսկ արքայականը՝ կործանման։

Պսակուիլ — Խիստ աղէկ է, բայց ոմանց կոիւ է։

Պտուղներ — Եղանակին չի վերաբերած կամ տհաճ կամ աւրուած պտուղը՝ հիւանդութեան նշան է։ Երբ իր եղանակին մէջ և հասուն է՝ առողջութիւն, ուրախութիւն և բախտաւորութիւն է։ Աւարի տալը՝ նախանձոտի հաճոյք կը ցուցնէ։ Նարինջը և կիտրոնը՝ միշտ հիւանդութիւն կը ցուցնեն։ Նուշը և Ընկոյզը դժուարութիւններ են։ Արքայակաղինը՝ առողջութիւն է։ Խնձորները՝ լաւ նշաններ են շատ մարդոյ, բայց ծառէն փրցնելու չէ։ Խնձոր հաւաքելը՝ կը ցուցնէ թէ կնոջ որոգայթի մատեցեր ես, զգոյշ եղիր։ Ոսկի խնձոր տեսնելը՝ պատիւ է. կարմիր խնձոր մէկուն տալը՝ զայն ուրախացնել է, իսկ ուրիշէ մը ստանալը խնդութիւն։ Տիրանը և Դեղձը դժբաղդութիւն է և կը ցուցնէ թէ ժամանակ կը վատնես բաներու վրայ որ անարժէք են։ Պանանը՝ նեղութիւն է։ Կեռասները լաւ բաղդ կը ցուցնեն, նոյնպէս Բալը՝ լաւ է, բայց ուտելու չես։ Մորմենին՝ երջանկութիւն է նեղութենէ յետոյ։ Խաղողը՝ բաղդաւոր է, եթէ չուտես։ Ձիթապտուղը՝ հաւատարիմ բարեկամութիւն է։ Անանասը կամ Արքայախնձորը՝ շատ բաղդաւոր է ինչպէս նաև Ելակը։ Սալորը՝ եթէ կանաչ է, նեղութիւն է, բայց եթէ հասած է, բաղդաւոր է, թէև երկար չպիտի տեւէ։ Տե՛ս Մրգաստան, Ցանց, Անանաս։

Պտուտակ — Տե՛ս Հոլ։

Պտտիլ — Պտտիլը՝ աղէկ չէ։

Չ

Չսի — Ընտանիքիդ անդամները պիտի շատնան։ Լուսաւոր Չահ տանիլը՝ կը ցուցնէ թէ գործի յաջողութիւն պիտի ունենաս, բայց եթէ մարի, դժբախտութիւն և աղէտ կը ցուցնէ։

Չահիրակ կամ Ճախարակ — Ապահով վիճակ է։

Չաղացպան — Եթէ օտարութեան մէջ ես, հայրենիք պիտի երթաս, եթէ ծննդավայրդ ես, պիտի ամուսնանաս, իսկ եթէ ամուսնացեալ ես, զաւակ պիտի ունենաս։

Չաղացք — Մեծ տեղէ մը օգնութիւն պիտի գտնես։ Շինելը՝ բարիքիդ դէմ չարիք պիտի գտնես, իսկ փլցնելը՝ շինութիւն է որ ամէնքը պիտի հասնին. ոմանց համար Չաղացք շինելը՝ մեծութիւն է։ Չաղացքի աղուն կամ ցորեն աղալը՝ հիւանդութիւն է։

Չայլամ — Նեղութենէ պիտի ազատիս. ոմանք կ'ըսեն թէ խենթ գործով մը ծաղրելի պիտի ըլլաս։ Մեռածը՝ նախանձորդներդ քեզ կը ոչնչացնեն։

Չերմ — Զափազանց փափաքներ։ Եթէ շատ տաքութիւն ունիս, կը ցուցնէ թէ դժուարութիւններու պիտի հանդիպիս։

Չերմուկ — Սիրային անյաջող փորձ մ'ալ պիտի ընես։

Չղջիկ — Շատ դէշ նշան է, կը ցուցնէ թէ սիրոյ խաղերդ միշտ կը նշմարուին։ Տե՛ս նաև Չղջիկ։

Չորի — Անակնկալ ճամբորդութիւն է. լաւ նշան է, մանաւանդ երկրագործներուն համար։ Կատղած կամ խենթ Չորի տեսնելը, որ վնաս կը հասցնէ, ցոյց կուտայ խաբէութիւն, ընտանիքիդ մէկ անդամին կողմէն։ Սև Չորի նատիլ՝ մեծերէ շահ պիտի տեսնես։

Ջուլթակ — Եթէ Ջուլթակ կ'ածես կամ կը տեսնես թէ ուրիշ մը կ'ածէ, նշան է թէ լաւ լուրեր պիտի առնես. բայց եթէ թելերը կարես, բնաւ չպիտի ամուսնանաս։ Տ. Ղուազ։

Ջուր — Մաքուր Ջուրը՝ բարի կենցաղ է, ամէն կերպով լաւ բաղդ կը ցուցնէ։ Ջուր խմելը խիստ աղէկ է. մաքուր Ջուր խմելը, գերազանցօրէն լաւ նշան է. բայց եթէ ցեխոտ է, կորուստ պիտի ունենաս։ Օրհնուած Ջուր խմելը՝ խիստ աղէկ է. եթէ տանդ մէջ Ջուր տեսնես, աղէկ չէ։ Պղտոր Ջուր տեսնել կամ խմել՝ ընտանեկան խռովութիւն, վիշտ և տրտմութիւն կամ հալածանք է։ Սառած Ջուրը՝ վէճ, կռիւ և բաժանում է. հոսուն Ջուր կամ Ջուրին վազելը տեսնել, բարի է, կը ցուցնէ թէ բռնած գործդ կը յաջողի։ Գետէ Ջուր առնել վնաս է, իսկ աղբիւրէ առնելը բարի է։ Շատ Ջուր տեսնել կամ անցնիլ վրայէն, հեծեալներու հանդիպիլ է. Ջուրի տակ տեսնել, յարատեւ վաստակի տէր պիտի ըլլաս. եթէ լեցուն գաւաթով Ջուր տեսնես, որ քեզի տրուած է, կը նշանակէ թէ շուտով պիտի ամուսնանաս, և թէ շատ երախաներ պիտի ունենաս։ Ջուր թափողը, ազատ կնիկ մը կ'առնէ. եթէ կին է թափողը, երկան հետ պտտիկ կռիւ մը կ'ընէ. Ջուրի մէջ իյնալը, նշան է քեզ հալածող վշտերու։ Տե՛ս Լդբիւր, Գաւաթ, Ըմպել, Լոգնալ, Խեղդուիլ, Ովկիանոս, Ցատանիլ։

Ջրակոյտ — Եթէ ոտքերդ թրջին, կը ցուցնէ թէ ի վերջոյ դժուարութեան պիտի հանդիպիս. մինչև իսկ Ջուրը մաքուր ալ ըլլայ, կը ցուցնէ թէ նեղութիւն և վնաս պիտի կրես։

Ջրամբար — Նշան է կորուստի և զրպարտութեան։

Ջրհեղեղ — Յոդուածացաւ պիտի ունենաս։

Ջրհոր — Վաստակ է բայց շատ տաժանելի։ Լաւ նշան է, եթէ Ջրհորին Ջուրը խաղայ։ Ցամքածը՝ շահու պակասութիւն և ցաւ է. Ջրհորի կամ գետի մէջ իյնալ՝ նեղութեան մէջ իյնալ է. Ջրհորի, գետի կամ ծովի մէջէն ելնելը, պատիւ և ազատութիւն է. չելնելը, մեծ վնաս։

Ռ

Ռահան կամ Ռեհան — Բարի է կամ կնոջմէ մը կարօտդ պիտի առնես։ Քաղելը, սիրային յոյսդ պիտի կատարուի։

Ռումը — Ճամբուդ վրայ վտանգ կայ, զգուշացիր. ձգելը՝ յուսահատական վիճակի մէջ ես և վերջդ շատ արդահատելի պիտի ըլլայ։ Կանգնած ռումը տեսնել՝ մեծութիւն և պատիւ է։ Եթէ ձեռքդ ռումը ունենաս, երկիւղալի է ճանապարհդ։

Ս

Սագ — Բաղդաւոր նշան է մասնաւորապէս բարեկամութեան մէջ, կը ցուցնէ ապահովութիւն, ուրախութիւն, մեծ մարդու ծանօթանալ և ամուսնացելոց փոխադարձ հնազանդութիւն։ Սագի միս ուտել՝ հիւանդութիւն է։ Սագ հացնել՝ ճոխութեան և առատութեան մէջ պիտի ապրիս։ Եթէ սագերու կրկոցը լսես, նշան է շահու, ապահովութեան և գործու յաջողութեան։

Սաթ — Պատիւ բայց միշտ վտանգաւոր։

Սալ (Էօրս) — Դժուարին աշխատասիրութիւն է։ Դարբինի մը սալին վրայ գործելդ նշան է ծրագիրներով լեցուն ուղեղի մը։ Փքոցը փչելը նշան է կին մը ունենալ։ Սալը մրճահարելը՝ կնոջ կողմէն գայթակղելից լեզու է։ Տ. Դարբին:

Սալոր — Առողջութիւն է։ Ոմանք կ'ըսեն թէ դրպանէդ դրամ պիտի կորսնցնես։ Սալոր բաժնել՝ ճամբան դրամ պիտի գտնես։ Դամասկոսի սալոր տեսնել՝ հիւանդութիւն է։ Տե՛ս նաև Պտուղներ:

Սակառ — Տե՛ս կողով:

Սաղաւարտ — Անհոգութիւն և կոիւ կամ ճամբորդութիւն է. դնելը՝ ապահովութիւն և պատիւ է։

Սամիթ — Դալար սամիթը՝ լաւ է, չորը լաւ չէ։

Սայլ — Տեսնել կամ նստիլ՝ հիւանդութեան նշան է։ Վրան ելլելը կարողութեան նշան է, իսկ իջնելը պաշտօնի կորուստ է։

Սան — Սանին մէջ ջուր եռալը, կը նշանակէ թէ ղըժուարութիւններդ շուտով պիտի վերջանան։

Սանդուխ — Սանդուխէն վեր ելնելու կամ վար իջնալու պարագային հետ կապուած է նշանակութիւնը. վեր ելնելդ, նշան է պատիւի. իսկ վար իջնելդ՝ վնասի։ Վար իջնալը նեղութիւն կը ցուցնէ. եթէ լայն է և դիւրագնաց, բաղդաւորութիւն է։ Սանդուխին վրայ նստիլը՝ բաղդաւոր նշան է, միայն թէ կամաց կամաց պիտի գայ յաջողութիւնդ։ Սանդուխին վրայ կանգնիլը՝ մեծութիւն և բարի է։ Տե՛ս նաև ելնել։ Շարժական Սանդուխ — Տաժանելի վիճակ ունիս, բայց վերջդ շատ լաւ պիտի ըլլայ։ Եթէ տան մը պատին կամ պատի մը վրայ դնես, մատնութիւն կը ցուցնէ։ Իջնելը՝ շահու նշան է։

Սանձ — Ուրիշներ վրադ պիտի իշխեն։

Սանտր — Գործերդ շատ անկանոն կ'երթան։ Սանտր դարնելը մազերուն վրայ՝ վնաս է։

Սառ — Սառը երկրագործին համար լաւ հունձքի նշան է, կը նշանակէ որ հողը պիտի բեղմնաւորի ամէն բարիքով։ Զինուորներուն համար կը նշանակէ թէ, ծրագիրները ի դերև պիտի ելնեն։ Վաճառականին և ուրիշ զրաղում ունեցող անձերու համար՝ գէշ նշան է, կը ցուցնէ արգելք ճամբորդութեան և առեւտուրի մէջ։ Սիրահարներուն՝ իրարմէ բաժնուիլ կը ցուցնէ։ Սառ կոտրել՝ չարը կը խափանի։ Անոր հալիլը տեսնել՝ կը ցուցնէ թէ վիշտերդ պիտի սկսին պակսիլ։

Սատանայ — Մեծ վաստակ մը պիտի ունենաս. բռնելը՝ յարձակում պիտի կրես կամ ծեծուիս. ծեծելը՝ նոր սիրական մը պիտի ունենաս. սիրային խնդիրներու մէջ այս երազը վիշտ

կը ցուցնէ. եթէ անոր հետ խօսիս, մէկէ մը չարիք պիտի տեսնես. եթէ պոչէն քաշես թշուառութեան կը մատնուիս. եթէ հետը կռուիս, մէկու մը հետ կը արդդիս։ Սատանան դժոխքի մէջ տեսնել ուրիշ ոգիներու հետ, գէշ նշան է, հիւանդին մեռնիլ կը ցուցնէ, առողջը մելամաղձոտ պիտի դառնայ և կամ բարկացոտ, աղմկարար և գէշ տեսակէն հիւանդոտ։

Սար — Յաջողելու համար պիտի չարչարուիս։

Սարդ — Տրտմութիւն է. ոստայն հիւսելը տեսնել՝ յիմարական գործ, պատիւի և դրամի կորուստ է. ոստայնը եթէ քանդես՝ մէկու մը բարիք պիտի ընես և փոխարէնը չարիք պիտի ստանաս։ Եթէ սարդը քեզի կծէ, զրպարտութիւն պիտի նետեն վրադ։ Սիրահարներուն համար այս երազը կը ցուցնէ սիրոյ թակարդի մէջ իյնալ և դատ ունենալ։ Սարդեր — Բաղդաւոր նշան մըն է, միայն թէ անոնցմէ մէկը ապանած չըլլաս, որ կը ցուցնէ թէ դրամ պիտի կորսընցնես։ Սարդը որչափ մեծ ըլլայ այնքան բաղդաւոր է։

Սարփինայ — Նշան է պաղաբերութեան։

Սափոր — Կնոջ մը համար յղութիւն և աղջիկ զաւակ է, իսկ էրիկ մարդու համար յաջողութիւն և վաստակ է։

Սափրիչ — Կը ցուցնէ պչրանք։

Սեխ — Բարիք մը վայելելու կամ մէկու մը բարիք ընելու նշան է, որով նարանոր փափաքներ պիտի ունենաս։ հիւանդին համար՝ առողջութեան նշան է. ուտելը՝ եթէ անուշ է, պիտի օգտուիս։ Սեխը բարձրացնել՝ հրճուանք է, իսկ գլորելը՝ աղէտք և տղու մահ է։

Սեղան — Ուրիշներու կարօտ պիտի ըլլաս։ Ճաշի սեղանին նստիլը լաւ նշան է, երջանիկ միութիւն և բաղդաւոր պարագաներ պիտի ունենաս։ Եթէ սեղանը պարապ է, կռիւ և դժտութիւն կը ցուցնէ. եթէ սեղանը կը մաքրես, կը ցուցնէ թէ մեծագոյն յաջողութիւնդ անցած է և տագնապ ու վրդովում պիտի յաջորդէ։ Կոտրածը՝ չարաշուք է։

Սեղմիրան (քօրսէ) — Ամրացնելդ կամ թուլցնելդ, պըզտիկ կոիւ ունենալ կը ցուցնէ։

Սենեակ — Ամուսնութենէդ դժգոհ պիտի մնաս. սենեակ շտկելը կամ կահաւորելը, ամուսնանալու նշան է. իսկ քակելը՝ ամուսնալուծում է. մտնելը՝ ապահով շահ է. սեւ սենեակը՝ հաւանական կորուստ է։

Սեպտեմբեր — Գործիդ մէջ լաւ կամ դէշ, ո և է կերպով փոփոխութիւն չպիտի ունենաս։

Սեր — Մէկ ազգականուհիդ պիտի տեսնես. ուտելը՝ ազգականէդ բարիք մը պիտի վայելես։

Սերկեւիլ — Քեզի անյարմար մարդոց հետ ես, լաւ չէ։

Սերմ — Ցոյզդ պիտի կատարուի, բայց ուշ։

Սերմանել — Մօտակայ բարիք և յաջողութիւն է։

Սէր — Նշան է կատարեալ երջանկութեան։

Սիսեռ — Ցառաջդիմութեան և յաջողութեան նշան է, ոմանք կ'ըսեն թէ դէշ խօսելով թշնամի պիտի շատցնես։

Սիրաբանել — Շատ դէշ և դժբաղդ նշան է։

Սիրահար կամ սիրուհի — Եթէ բացակայ սիրահարդ կամ սիրուհիդ տեսնես և նկատես որ ան աւելի զեղեցկացեր է, քան որ էր սովորաբար, կը նշանակէ որ ան մաքուր և հաստատամիտ է։ Բայց եթէ ան սեւ կ'ելնէի և հիւանդոտ, կը նշանակէ որ ան դժբեր է իր ուխտն ու հաւատարմութիւնը և կամ կը գտնուի նեղութեան մէջ,

Սիրամարգ — Լաւ նշան է, մանաւանդ ծովագնացութեան համար, կամ մեծ իշխան մը տեսնել է. նաև նշան է ամուսնանալու սիրուն կնոջ հետ, նոյնպէս հարստանալու, յարգուելու և սիրուելու։ Եթէ աղջիկ մ'է տեսնողը, կը նշանակէ որ, իր ամուսինը գեղեցիկ պիտի ըլլայ, բայց ապուշ. եթէ սիրամարգը պոռայ՝ անձրև կամ կարկուտ կուգայ։

Սիրտ — Եթէ սիրտդ զօրաւոր կերպով կը զարնէ՝ կը ցուցնէ բուռն սէր. եթէ զգաս թէ այլ ևս չի զարներ, հիմնական երկիւղ է։

Սիւն — Հաստատուն յոյս և յաջողութիւն է, ճեղքուածը՝ նեղութիւն և կռիւ է, իսկ կոտրածը ծանր վտանգ կամ մահ կը ցուցնէ։

Սխտոր — Կսկիծ է կամ խաբէութիւն. յայտնուած գաղտնիք. ուտելը՝ տրտմութիւն է։

Սկիւռ — Ցաւալի անակնկալ է։

Սղոց — Ակռայի ցաւ պիտի կրես։

Սնանկութիւն — Նշան է մեծ ձեռնարկի։

Սմբուկ — Փոփոխափոխ ես և չես յաջողիր։

Սնդիկ — Շատ խարդախ մէկուն հետ գործ պիտի ունենաս և խաբուիս։

Սնտուկ — Սկսելիք գործդ կը յաջողի, եթէ մարդու չըսես. սնտուկ գնել՝ ճամբորդութեան վրայ կը մտածես, իսկ շինելը՝ տունէդ մէկը պիտի ճամբորդէ։ Սնտուկներ՝ ճամբորդութիւն և դժբաղդութիւն է. եթէ սնտուկին մէջի բաները ցրուած են հոս ու հոն, կռիւ է թերեւս, կամ փութկոտ ճամբորդութիւն է, անզգոհացուցիչ արդիւնքով։ Պարապ սնտուկները ամուսնութիւն և սիրային գործեր են. եթէ ջանաս կղպել կամ բանալ սնտուկդ առանց յաջողութեան, կը ցուցնէ թէ ծանրապէս պէտք է կորսնցնես, քու սխալիդ պատճառով։

Սոխ — Կսկիծ է թշնամիդ համար, անոր վրայ գէշ լուր կ'իմանաս։ Ուտելը կամ ժողուելը՝ հիւանդութիւն է, իսկ կեղուելը՝ կը նշանակէ ծածկուած գաղտնիքներու յայտնուիլին, որուն հետեւանքով կռիւ և անհամաձայնութիւն կ'ըլլայ ընտանեկան գործերուդ մէջ։ Սոխեր — Մրցակցութեան նշաններ են, եթէ զանոնք ուտես, յաջողութիւն պիտի ունենաս, մինակ թէ պզտիկ գործերու մէջ։

Սոխակ — Սոխակի երգը լսել՝ թատերասիրութեան նշան է. զայն բռնել՝ կը ցուցնէ հրապոյր, հաճոյքի համար։

Սողալ — Դժուարութիւն և ձախորդութիւն կը նշանակէ։

Սոդնակ — Կը ցուցնէ աղէտաւոր արգելքներ յաջողութեանդ մէջ։ Տե՛ս կդալանք։

Սոսինձ — Գործերդ շատ աւրուած են, լաւ չէ։

Սովրիլ — Տե՛ս վարժուիլ։

Սուգ — Ուրախութիւն է։

Սուլել — Օգնութեան կարօտ պիտի ըլլաս։

Սուլիչ — Քեզմէ օգնութիւն պիտի խնդրեն։

Սունկ — Ունեցած յոյսդ տկար է, մի՛ վստահիր. բարեկամներդ ալ կեղծ են։

Սուտակ — Բարեբաղդ պիտի ըլլաս գործի և սիրոյ մէջ։ Կորսնցնելը՝ դժբաղդութիւն է։ Տե՛ս նաև Գոհարներ։

Սուր — Զար լեզու է. վիրաւորուիլը՝ բամբասուելու նշան է։ Տե՛ս նաև Դուր։

Սուրբ — Խարդախ մարդու մը պիտի հանդիպիս։

Սուրբ հոգի — Յոյսի նշան է։

Սուրհանդակ — Նամակ կ'ստանաս և առհասարակ նեղութիւն ունենալ կը ցուցնէ կամ ճամբորդութիւնդ ետ պիտի մնայ։

Սուրճ — Այէն կերպով լաւ նշան է, գրամական յաջողութիւն կը նշանակէ, քանի որ սուրճը կապուած է ամուսնական խնդիրներու հետ։

Սպանութիւն — Մեծ նեղութիւն է։ Եթէ դուն մէկը կ'սպաննես, նշան է առեւտուրի ապահովութեան և վստահութեան։

Սպունգ — Մարդահաճոյ խաբեբաներու մէջ պիտի իյնաս, որոնք վաստակդ պիտի ուտեն։ Սպունգ գործածելը՝ կը ցուցնէ թէ կեղծ բարեկամէ մը զգուշանալու ես։

Ստել — Շատ դէշ նշան է ստելը. բացի դերասաններն ու մանկլաւիկները, որոնց զբաղումն ան է։

Ստեպղին — Շահ և ուժ կը նշանակէ անոնց համար, որոնք ժառանգութեան համար դատարան կը մտնեն։

Ստինք — Մարրական սէր է. եթէ կաթ կ'ելնէ, շռայլութիւն է. եթէ տափակ կամ տձեւ է, չարութեան, ագահութեան և անկարգութեան նշան է։ Տե՛ս նաև Ծիծ։

Սրափուշ — Հանդարտութիւն և երջանկութիւն է։

Սրինգ — Տեսնել կամ ձայնը լսել՝ կոիւ է, կամ շատ ամի՝ խոնարհիր, ստորնութեան կը մատնուաս. բայց ոմանք կ՚ըսեն թէ սրինգը ամուրիին՝ պաշտօնի բարձրացում է, իսկ ամուսնացողին մանչ զաւակ ունենալու նշան է,

Սրուակ — Վարքիդ վրայ դէշ կասկածներ կան։ Լեցունը՝ նուէր կամ բարի լուր մը կ՚ստանաս։

Սրունք — Դիւրաշարժ սրունքը կը ցուցնէ կարդի մտած գործեր, նաև ճամբորդութիւն. իսկ փայտէնը՝ անդամալուծութիւն։



Վ

Վագր — Հզօր և օգտակար բարեկամ է։ Եթէ վագրը վրադ յարձակի, կը ցուցնէ թէ թշնամիներդ պիտի փնտռեն չանքերդ. վանդակին մէջ վագր տեսնելը՝ յաջողութեան նշան է. վագրի մորթով գորդ տեսնելը լաւ նշան է։

Վազել — Ուրիշներուն հետ վազելը առ հասարակ լաւ նշան է. եթէ դուն շարունակես վազելդ՝ յաջողութիւն կը նշանակէ. եթէ իյնաս՝ յուսահատութիւն ակնկալէ. միայնակ վազելը՝ առհասարակ շատ բաղդաւոր նշան է. եթէ երազես թէ պիտի վազես. բայց չես կրնար ոտքերդ վերցնել, կը նշանակէ որ կը փափաքիս գլուխ հանել այն գործը, զոր շատ դժուար կը գտնես. իսկ հիւանդին համար վազելը՝ լաւ նշան է։

Վախ — Զինքը վախցած տեսնել՝ հարստութիւն է։

Վաճան—Առողջութեան և զօրութեան նշան է։ Տ. Ասպար։

Վաճառականութիւն — Շահու հրապոյր է։

Վանական — Խաբեբայէ մը պիտի շորթուիս։

Վանդակ — Սիրտդ բոլորովին ուրիշին տուած ես, անտիրտ մնալու աստիճան, չափաւոր եղիր. կը ցուցնէ նաև ազատութիւն և յաղթուած թշնամիներու բանտարկութիւն։

Վանդակ խորտակելը՝ վիշտ է. թռչուններ կամ կենդանիներ վանդակին մէջ տեսնելը, ջանքերովդ ստանալիք յաջողութիւն է։

Վանք — Սրտի և քսակի երկարատև նեղութիւն է։ Վանքի մէջ աբեղայ տեսնել, նեղութեանց խոնում է։

Վառարան — Շռայլութիւնդ քեզ պիտի աղքատացնէ։

Վառիլ — Զինքը վառած տեսնել՝ ձախորդութիւն, թէև ոմանք կ'ըսեն թէ հարստութիւն է։ Իսկ ուրիշ մը վառած տեսնել՝ վնաս է։ Տե՛ս նաև Այրիլ, կրակ։

Վառօդ — Թշնամւոյդ կողմէ վտանգ և չարիք է։

Վարագոյր — Սիրային գործերդ պիտի յայտնուին։ Կակուղ և արժէքաւոր վարագոյրներ տեսնելը, լաւ նշաններ են, խնդիրներու մէջ։

Վարազ (վայրի խոզ) — Անձրեւ և փոթորիկ կը նշանակէ անոնց համար, որոնք կը ճամբորդեն։

Վարդ — Նշան է սիրոյ և խնամութեան։ Վարդեր քաղել և հոտոտել, շատ բաղդաւոր նշան է, միայն թէ թոռոմած չ'ըլլայ կամ չի թոռոմի ձեռքիդ մէջ։ Ճերմակ վարդերը երբեմն հիւանդութեան նշան են։ Տե՛ս նաև փունջ։

Վարդապետ — Երկրիդ մէջ խռովութիւն կը ծագի և քեզի վնաս կը հասնի. վարդապետ ըլլալ՝ ազնուութեան և մաքրութեան նշան է։ Վարդապետին հետ խօսիլը, շնորհքի արժանանալ է։

Վարժուիլ — Բան մը սովրելու երթալը լաւ նշան է։

Վարունգ — Տեսնել կամ ուտել ուրախութեան նշան է։ Թէեւ ոմանք կ'ըսեն թէ պարապ յոյսեր, տխրութիւն և գործի վնաս է։ Բայց հիւանդ մարդուն համար այս երազը առողջութեան նշան է։ Վարունգ քաղելը՝ ուրիշին տունը քննալու նշան է։

Վարտիք — Երկարատեւ տաղնապ կը ցուցնէ կամ մեծ յանցանքի մը մէջ պիտի բռնուիս։ Հագնիլը՝ բարի է։

Վեր — Ո և է բան գլխուդ վրայ կախուիլ տեսնելը

վտանգ կը ցուցնէ. եթէ ապահով կերպով հաստատուած է, միայն դժուարութիւններ ունենալ կ'ենթադրուի, հաւանական յաջողութիւն մը պիտի հետեւի եթէ յարատեւես քու ջանքերուդ մէջ։

Վերարկու— Գողի հետ գործ պիտի ունենաս։ Մէկէ մը վերարկու փոխ առնելդ, կը ցուցնէ թէ դուն դժբաղդ պիտի ըլլաս ուրիշներուն պատճառաւ։ Վերարկու հագնիլը՝ ուրախութիւն է։

Վերմակ— Բաղդաւորութեան և դրամի նշան է։ Ոմանց անխոստովանելի գործերու մէջ ըլլալ կը ցուցնէ։

Վէրք — Ակնկալութիւնդ քեզ պիտի խաբէ, կամ կըռուադան մէկու մը խօսքերը մտիկ ընել պիտի ստիպուիս. զինքն վիրաւորուած տեսնել՝ փոխ դրամ տալու նշան է, իսկ մէկը վիրաւորելը՝ փոխ դրամ առնելու նշան է։ Տե՛ս նաեւ վիրաւորուիլ, խոց։

Վիժում — Սիրոյդ մէջ խաբուած ես։

Վիճաբանութիւն — Պատժուած հպարտութիւն է։

Վիճակահանութիւն — Կործանում է։

Վիշապ — Մեծ անձնաւոր կամ նեղութիւն է և կամ տղայական մտքերու կը ծառայես, որոնք երբէք չպիտի կատարուին։

Վիշտեր— Շատ զգոյշ ըլլալու ես այս երազին մասին. քանի որ ցաւերը յաճախ առաջ կուգան մարմնոյ մէկ վիճակին պատճառով։ Ինչպէս թեւդ ծռած վիճակի մէջ կ'ըլլայ, անկողնոյ լաթերուն ճնշումը, գիշերային աղտեղութիւնը, եւլն. բայց եթէ վստահ ես թէ երազի մէջ տեսնուած ցաւ է, ասիկա կը ցուցնէ թէ լաւ բաղդի մը պիտի արժանանաս։

Վիրաւորուիլ— Դրամի տեղ սէր պիտի ստանաս։ Տե՛ս նաեւ վէրք, սուր։

Վնասել — Եթէ երազիդ մէջ մէկը կը վնասես, կամ դուն մէկէ մը վնասուիս գէշ նշան է։

վ.տանգ — Ո և է վտանգի մէջ ըլլալդ, կը ցուցնէ թէ, դժուարութենէ պիտի ազատիս, պայմանաւ որ վտանգի մէջ չի մնաս կամ չի վիրաւորուիս։

Տ

Տախտակ — Հաստատ և անփոփոխ վիճակ է։

Տակառ — Մէկուն տուած գաղտնիքդ պիտի լսուի։

Տաղ — Լաւ նշան է տաղեր լսելը՝ ինչ որ կը նշանակէ զոհունակութիւն՝ ընտանիքիդ և յաջողութիւն գործերուդ մէջ։ Տե՛ս երգել։

Տաճար — Զարդարուած տաճար տեսնելը՝ բարի է, իսկ անոր այրիլը՝ խռովութիւն է։

Տանիք — Հպարտութիւնդ աւելնալու վրայ է։

Տանձ — Բարեբախտ նշան է և կը խոստանայ շատ առողջութիւն, ուրախութիւն և շահ. բայց եթէ միայն անոնց ճաթիլը տեսնես ծառին վրայ՝ կը ցուցնէ թէ քիչ ետք գործերուդ բարուոքում պիտի ըլլայ։ Ուտելը՝ զէշ լուրի կամ հիւանդութեան նշան է, իսկ քաղելը՝ պարապ փոխառութեան։ Ժողվելը՝ հաճելի անակնկալ է, ամբարանոցիդ լիութեան համար։

Տաշտ — Լիցուն ջուրով տաշտ տեսնելը՝ միշտ բաղդաւոր է և ընտանեկան երջանկութիւն կը ցուցնէ. պարապը՝ կը ցուցնէ թէ բաղդդ երթալով կը հակի. ճեղքուածը՝ կը ցուցնէ ընտանեկան կռիւներ և անհամաձայնութիւններ։

Տապակ — Հարստանալ պիտի սկսիս, լաւ է։

Տապանագիր — Անզգուշութիւն է։

Տատանիլ — Ջուրին մէջ տատանիլը, կը ցուցնէ թէ դժուարութենէ պիտի ազատիս և պիտի յաջողիս. եթէ ջուրը պղտոր է, յաջողութիւնդ զոհացուցիչ չըլլար։

Տատրակ — Շատ բաղդաւոր նշան է, մասնաւորապէս սիրային խնդիրներու կը վերաբերի։ Եթէ թռչունը կը թռչի քեզմէն, լաւ նշան չէ. զայն մորթելը՝ սուզի նշան է։ Տե՛ս նաև Աղաւնի:

Տարեխ (ձուկ) — Ճանապարհ է։

Տարեցոյց — Ասիկայ կը ցուցնէ փոփոխական բաղդ, երբեմն լաւ երբեմն վատ, իւրաքանչիւր ամիս տարբեր նշանակութիւն ունի։ Տե՛ս Յունուար, Փետրուար, եւ այլն:

Տարիք — Ծեր մարդոց վրայով երազելը միշտ բարեբախտ է, բայց դժբախտ է երազել թէ ծերանալու գացող մարդոց և կամ բուն իսկ քու ծերացած տարիքդ երազելը։

Տաւիղ — Սելամաղձութիւն է։

Տափան — Շատ լաւ նշան է տափանելը, մասնաւորապէս ամուսնացողներուն համար։

Տաքութիւն — Տե՛ս ջերմ:

Տեղատարափ — Եթէ փոթորիկ չկայ, շահ կը նշանակէ։ Տե՛ս Անձրեւ:

Տերեւ — Դրամ կը ցուցնէ եթէ կանանչ և լաւ է, իսկ եթէ թոռմած է՝ կորուստ. անոնց թափիլը տեսնել՝ հիւծախտի նշան է. տերև փրցնել՝ սատանայական գործ մը ձեռնարկել է։ Որթատունկի տերեւը՝ մէկը քեզի կեղծաւորութիւն պիտի ընէ. իսկ վարդինը՝ գինովնալու նշան է։ Տե՛ս նաև Ծառ:

Տզրուկ — Պարզև մը կը շահիս, ոմանց՝ կեղծաւորներէ կեղեքուիլ է։ Եթէ տզրուկը թեւդ փակած ըլլայ՝ կին մը քիթէդ կը բռնէ. եթէ երազողը աղջիկ է՝ շուտով կը նշանուի, իսկ եթէ կին՝ իր ամուսինէն շահ զոհ կը մնայ և զայն շատ կը սիրէ։

Տիկ — Անվստահելի մարդոց մէջ կը գտնուիս։ Միշտ դժբաղդ նշան է, քանի որ կը նշանակէ մշտական տագնապ, իրական անկում չի ցուցներ, բայց մշտական ջանքերու պակուելը։

Տղայ — Շարունակութիւն ներկայ վիճակիդ, յոյսիւն.

եթէ գիրկդ առնես՝ ցաւ և հիւանդութիւն է։ Ծիծ ուտող տղայ տեսնել՝ մօտակայ ծնունդ է։ Տե՛ս նաև երախայ։

ցուն — Պիտի զրպարտուիս, բայց անմեղաս պիտի մնաս ու ապահովութիւն պիտի գտնես։ Բարձր տուն՝ ամուսնութիւն կամ աղմուկ է. զայն շինելը՝ անօգուտ աշխատանք է իսկ կործանելը՝ փառասիրութիւն։ Տուն այրած՝ ապահովութեան տալու նշան է։ Նորը՝ արկածախնդրութիւն պիտի ընես։ Ցածը՝ խաղաղ կեանք և ուրախութիւն է. տուն շինելը խիստ բարի է, իսկ այրելը՝ բարի չէ, դանձի և ոսկւոյ կորուստ է. քու կամ ուրիշին տունը աւերուած տեսնել՝ լաւ չէ, անիրաւութիւն կամ դժբաղդութիւն է։ Եթէ արծաթէ շինուած տուն տեսնես՝ մէկը պիտի մեռնի և դուն շատ պիտի ցաւիս. եթէ ոսկիէ տան մէջ ըլլաս՝ շատ պիտի հարստանաս։ Տե՛ս նաև բնակարան։

ցունկ — Խանութէդ կամ զաւակէդ պիտի խնդաս. տունկ տնկելը՝ աղգերու օրհնութիւն է։

ցուփ — Ամուսնութեան նշան է. բանալը՝ ճամբորդութիւն է. եթէ տուփը պարապ է, յուսահատութիւն պիտի յաջորդէ։

ցպազիոն — Բազդաւոր նշան է, մանաւանդ հետաքրքրական է սիրային խնդիրներու համար։ Անշուշտ ձախորդ է տպազիոնէ զարդեր տեսնելը՝ մնաս կրնաս ակնկալեր նախանձորդ բարեկամներէ։

ցրցակ — Նշան է սխալ լուրերու։

ցօնական օր — Մեղք օր երազելը կը ցուցնէ թէ, օտարականներ պիտի հանդիպին քեզի։

ցօնավաճառ — Տօնահանդէսի երթալ, կը նշանակէ թէ գրպաններդ պիտի կողոպտուին։



Ր

Րուպլ — Ծանր դիպուած, կոիւ և վնաս է։ Ուսելը հիւանդութեան նշան է։

Րոք — Նախանձէդ վնաս պիտի կրես։ Րոք մանել՝ ներկայ գործովդ շատ պիտի հարստանաս։ Տե՛ս նաև Աղէկատ։

Ց

Ցախ — Թշնամուդ հետ պիտի հաշտուիս։

Ցանկ — Կանաչ մշտադալարին չափ բաղդաւոր է, բայց եթէ ցանկին մէջէն անցնելու կը ջանաս, նշան է թէ դժուարութիւններ պիտի գան ճամբուդ վրայ որոնց պիտի յաղթես։ Տե՛ս նաև Դուռ (մեծ), Շրջափակ, Պատ։

Ցանդ — Թեթև վտանգ մը պիտի անցընես։

Ցատկել — Ցատկելը նշան է ուրախ տրամադրութեան և կը ցուցնէ դժուարութիւններ, որոնց պիտի կրնաս յաղթել։ Պատին վրայէն ցատկելը, անզգոյշ շահագիտութիւն ձեռնարկել կը ցուցնէ։

Ցաւ — Ցաւ ունենալը կը ցուցնէ բարեբաղդութիւն մը. ուրիշներուն ցաւ ունենալ տեսնելը՝ նշան է թէ դուն սխալ մը կ՚ընես, կամ ազդարարութիւն է։ Տե՛ս նաև փոր։

Ցաւագարութիւն — Ծերութեան նշան է։

Ցեխ — Դժբաղդ նշան մըն է, կը ցուցնէ տրտմութիւն, հիւանդութիւն և անպատուութիւն կամ զրպարտութիւն և վնաս։ Ցեխի մէջ իյնալ՝ կը նշանակէ դաւաճանութեան մէջ իյնալ։

Ցեց — Բամբասող լեզու է։

ցից — *Զար լեզու է կամ ուրիշի վրայ զէշ խօսելուդ պիտի վնասուիս. ցից հանելը՝ նեղութիւն է, ամանք կ'ըսեն թէ աղէկ է. ցիցի վրայ հանուիլը նեղութեան նշան է։*

ցորեկ — *Եթէ ցորեկը պայծառ է, քեզի յաջող է, բայց եթէ մռայլ կամ ամպամած է՝ ձախորդ է։ Տե՛ս* Առաւօտ, Կէսօր, Իրիկուն, Գիշեր:

ցորեն — *Բարիք, խնդութիւն և վաստակ է. բայց ոմանք կ'ըսեն թէ ցնորական պարապ բաներով զբաղելու նշան է. ցորենի կոյտ տեսնել, հարստութիւն կամ տարի է. ցորենի արտ կամ ցորենի հասած հատակ տեսնելը՝ շատ բաղդաւոր նշան է. եթէ վերջինը հաւաքես, ամէնէն բաղդաւոր երազն է որ դուն տեսած կրնաս ըլլար. ցորենի այրիլը տեսնել՝ սովի նշան է. ցորեն գլխուդ վրայ կրել՝ թշուառութիւն է. ցորեն քաղել՝ շէնք պիտի շինես կամ ոտացուածք պիտի գնես։ Տե՛ս նաև* Արտ, Մշտադալար:

ցուլ — *Զի յաջողուելիք գործ բռնել և զայն ջանքերով յաջողցնել է, կամ քեզ հետապնդող թշնամի մը ունիս. եթէ ցուլը քեզ հալածէ՝ կը նշանակէ թէ դժուարութիւն և նեղութիւն պիտի կրես քեզ հալածող ուրիշ անձէ մը։ Եթէ ցուլը ճերմակ ըլլայ, պիտի շահիս. ցուլը եթէ քեզի վնասէ, կը նշանակէ թէ պիտի վնասուիս, բայց եթէ բարիք տեսնես ցուլէ, պիտի շահիս։ Ցուլ բռնելը՝ աղէկ է։*

ցող — *Առատութիւն և յաջողութիւն է։ Տե՛ս* Եղեամ:

Փ

փախչիլ — *Օրուան վշտակրութիւն է. ո և է դժուարութենէ կամ նեղութենէ ազատիլդ երազի մէջ, բաղդաւոր է։*

փամփուշտ — *Տե՛ս* Հրթիռ:

փայլակ — Լաւ նշան է, բայց եթէ քեզի զարնէ, ձախորդ է։

փայտ — Տեսնել կամ առնել՝ խիստ աղէկ է, կը ցուցնէ թէ դիրքդ հաստատ և անփոփոխ կը մնայ։ Եթէ փայտ կտրես, գործիդ մէջ օրէ օր կը յաջողիս և դրամ կը դիզես. եթէ կտրած փայտերդ շալակդ առնելով ճամբայ ելլաս, բազմանդամ ընտանիք մը կ'ունենաս. փայտ վառել, գործիդ ապահովութիւնը պիտի պակսի։

փայտակոյտ — Նշան է տխուր լուրերու։

փալուղի — Գործի և կամ սիրոյ մէջ լաւ նշան չէ. շուտով գործը կատարը պիտի հասնի և դուն վճռական կարգադրութիւն մը պիտի ընես։

փասեան — Երջանկութիւն է. զայն ոպանելը կորուստ է։

փաստաբան — Խարդախ մարդերէ շրջապատուած ես. անոր հետ խօսիլ՝ կը նշանակէ որ արդելքներու պիտի հանդիպիս առեւտուրի մէջ և թէ շատ քիչ յաջողութիւն գործերուդ մէջ։

փաստաթուղթ — Տե՛ս Թուղթ։

փեթակ — Մինակդ չպիտի յաջողիս, ընկեր ա՛ռ. վարձատրուած աշխատութիւն։

փեսայ — Ստացուածքդ վտանգի մէջ է։ Տ. նաև Հարս։

փետուր — Ճերմակ փետուրը բարի անուն և շահ է. իսկ սեւը՝ վիշտ, թաղում և սուգ է։ Օդի մէջ փետուր տեսնել՝ պատիւդ կորսուելու մօտ է։

փետրուար — Հիւանդութիւնդ կամ տկարութիւնդ կը շարունակուի։

փիղ — Բարեբաղդ նշան մըն է, մանաւանդ դրամական խնդիրներու մէջ. որչափ շատ փիղ տեսնես, այնչափ շատ բարեբաղդ է. քու կամ բարեկամի մը փիղ հեծնելը՝ բաղդաւոր է. նմանապէս փիղ կերակրելը լաւ նշան է, սակայն սիրահարներուն համար դէշ նշան է, կը ցուցնէ թէ զօրաւոր հակառակորդ մը կայ դէմը, որ սիրային գործերը

պիտի խանգարէ, չափազանց տանջանք է. փիլ բռնել՝ ամէն գործերդ պիտի յաջողին և պիտի շահիս. իսկ նուաճելը՝ ապարդիւն կարողութիւն է։

փղոսկր — Մեծարժէք բան մը պիտի ստանաս և անոր յարգը չգիտնալով ձեռքէ պիտի հանես։

փոթորիկ — Զարիքները պիտի հեռանան։

փոխինդ — Ուտելը՝ վնասակար է։ Տ. նաև խմորեղէն։

փող — Հարստանիք կամ ուրիշ հաճոյք պիտի վայելես. փող փչել՝ թշնամիդ և ցաւդ պիտի ազատիս. փողի ձայն լսել՝ կռիւ տեղի ունենալու նշան է։

փոշի — Դժբաղդութիւններ են որոնց յաղթելու ես։

փոս — Խորութեան չափովը վտանգ և վիշտ է։ Տե՛ս նաև Անդունդ, Խորխորատ։

փոր — Նոր պարտաւորութիւն մըն ալ պիտի ունենաս. փորդ ցաւելը՝ կը նշանակէ շատ հոգեր պիտի ունենաս և ընտանիքիդ մէջ հիւանդութիւն։

փորել — Տե՛ս բրել։

փունջ — Բարեկամութեան նշան է. ձեռքին մէջ ունենալը, ամուսնութեան. զայն ձեռքէն ձգելը, ամուսնալուծման. իսկ եթէ ձեռքիդ մէջ թոմի, հիւանդութեան նշան է։ Տե՛ս նաև վարդ, Ծաղիկներ։

փուշ — Փոքրիկ աղջիկներու շատ կը մօտենաս, լաւ չէ. փուշ կտրել՝ թշնամիներուդ կորուստ է. փուշը եթէ ափդ ժողվես կամ եթէ ձեռքիդ մէջ փուշերու փունջ մը տեսնես, դժբաղդութիւններ պիտի գան քեզի, կամ երկիրդ տագնապի մէջ պիտի ըլլայ և ադէտներ պիտի պատահին. փուշերու մէջէն կամ վրայէն քալելը առանց վնասուելու, լաւ նշան է, կը ցուցնէ թէ թշնամիներդ պիտի ոչնչանան. բայց եթէ փուշերը քեզ վիրաւորեն, դժդոհութիւն և յուսահատութիւն է։

փուռ — Տան փոփոխութիւն կը ցուցնէ, կամ կարողութիւնդ պիտի աւելնայ և շատերու բարիք պիտի ընես.

եթէ վառուած է՝ բախտ կը ցուցնէ. եթէ փուռը շատ սաստիկ կերպով կը վառի, տեղի փոփոխութեան նշան է։

փուք — Շահդ և ինամդ լաւ հաշիւ ըրէ, գործդ աւարտելու վրայ է։ Տե՛ս Սալ։

փոփոխութիւն — Անխուսափելի կորուստ է։

փունգտալ — Կը ցուցնէ թէ քու ծրագիրներդ անկմանդ պատճառ պիտի ըլլան, ժամանակին մտածէ և խորհէ թէ ինչ կ'ընես կամ ի՛նչպէս լաւ կրնաս ընել։

փսխել — Աղքատին համար փսխելը՝ շահ է. իսկ հարուստին՝ ինաս։

փրփուր — Մ՚իտքդ յիմար գործերու տուած ես և այդ պատճառաւ յաջողութիւնը հեռու է քեզմէ։

Ք

քալել — Հոս ինչպէս նաև ուրիշ շատ մը պարագաներու մէջ, աչի կախում ունի քու ընակած տեղիդ բնութեան վրայ ուր կը քալես. եթէ հաճելի է քալած տեղդ, բաղդաւոր նշան է և կը ցուցնէ յաջողութիւն բուն իսկ քու գործիդ մէջ. բայց եթէ կը հանդիպիս դժուարութիւններու և խոչնդոտներու, կը ցուցնէ դժուարութիւններ որոնց յաղթելու ես. լաւ նշան չէ, եթէ երազես թէ դուն կը քալես գիշեր ատեն։ Եթէ արագօրէն կը քալես աւելի բաղդաւոր է։

քահանայ — Վտանգի մը պիտի հանդիպիս կամ զըղջում է. քահանայ ալեւոր՝ Տե՛ս եկեղեցական։ Բայց ոմանք կ'ըսեն թէ քահանայ տեսնելը՝ բարիք ընել և այդ բարիքը օր մը ճանչցուիլ է։

քաղաք — Բարի նշան է. քաղաք մտնել՝ գործդ պիտի նորոգուի և լաւանայ։ Տե՛ս նաև երկիր։

Քաղցու — Դժբաղդութիւն և հիւանդութիւն է։

Քաղցը — Քաղցը բան ուտել՝ լաւ չէ, իսկ ձգելը՝ վնաս է։

Քաղցրաւենի — Ուտելը՝ հաճելի անակնկալ ունի, թեռեւս ճամբորդութիւն է. իսկ շինելը՝ բարեկամութեան մը նշան է։

Քար — Լաւ չէ. թշուառութիւն և ծանր գործ է. քար ժողվել՝ չար լեզու է կամ կամաւ կռուի մէջ պիտի իյնաս։ Քարը հիմը ձգել՝ թշնամութիւն է. քարի վրայ նստիլ՝ տարի է կամ մտածմունքներդ և հոգերդ կը շատնան։

Քարաձանք — Անիմաստ կռիւ մը զէշ նշանն է. բայց եթէ տեսնես թէ մարդիկ ժրաջանօրէն կը գործեն քարահանքի մէջ, քեզի համար ապագայ յաջողութեան նշան է։

Քարայր — Դրամի կորուստ է։

Քարափ — Յաջողութեան նշան մըն է երազել թէ, շուգենաւերը քարափին կը մօտենան։

Քացախ — Կծու խօսքեր լսել է. կամ կնոջ պատճառով վիշտ և կռիւ է. եթէ տեսնողը աղջիկ է՝ կ'ամուսնանայ և շատ անառակ զաւակ մը կ'ունենայ. խմելը՝ մեծ չարիք մը պիտի հեռանայ քեզմէ, եթէ պատահական դէպքի մը մէջ չի բարկանաս։

Քերծէ (շուն) — Յոյս, վաստակ և բարեկամ է։

Քթախոտ — Տե՛ս ընչախոտ։

Քթան — Բարի լուր և վաստակ է։

Քիթ — Եթէ զօրաւոր է՝ առատութիւն և երջանկութիւն է. երկայնը՝ վախ ու թերութիւններ են. իսկ աւրուածը խաբէութիւն է, եթէ խոշոր քիթ մը ունիս, լաւ նշան է, ցոյց կուտայ բարդաւաճում գործի և ծանօթութիւն՝ հարուստներու հետ։

Քնաշրջիկ — Ուրիշներու գաղտնիքն իմանալ կ'ուզես, բայց այդ կերպով թշնամի պիտի շահիս։

Քնար — Բանաստեղծի մը մահ է։

Քող — Դժբաղդ է երազել թէ քող մը ձգած ես, կը

ցուցնէ թէ դուն անկեղծ և վստահելի չես և հետեւապէս պիտի կորսնցնես. սակայն քող առած հարս տեսնելը՝ բաղդաւոր է, գործիդ մէջ լաւ փոփոխութիւն պիտի ըլլայ։

Քոյր — Ողջ քոյրդ երազել՝ թշնամի կամ անմիաբանութիւն և կեղծաւորութիւն է. իսկ մեռած քոյրդ կամ քոյրերդ տեսնել՝ երկայնակեցութեան նշան է։

Քուայք (զար) — Քուայք խաղալ և շահիլդ, կը նշանակէ որ ժառանգութիւն մը պիտի իյնայ քեզի, մէկ ազգականիդ մեռնելուն առիթով։

Քուն — Քնանալ երազելը՝ միշտ գէշ նշան է, պէտք չէ չափազանց վստահութիւն ընել մերձաւորներուն, շատ հաւատարիմ չեն. մահիճ մը մաքուր և ճերմակ ըլլալը՝ կը ցուցնէ մտահոգութենէ ազատ ըլլալ. ոմանք կ'ըսեն թէ բարեկամ մը անակնկալօրէն պիտի ամուսնանայ բայց ո և է անբնական, հանգիստ հիւանդութիւն կը ցուցնէ։ Այս մեկնութիւններէն զերծ են անոնք, որոնք արդէն կասկածներու մէջ կ'ապրին և վտանգ մը կը դուշակեն։

Քսակ — Լեցուն քսակը՝ կը ցուցնէ վիճակիդ բարուոքուիլը. իսկ պարապը՝ գէշ շրջանի մէջ մտնելդ կը ցուցնէ. եթէ պարապ և հին քսակդ կորսնցնես, լաւ նշան է։

Քրքում — Ծանր հիւանդութեան նշան է. քրքումով կերակուրը լաւ է։

Օ

Օգնութիւն — Ո և է մէկուն օգնութիւն տալը քեզի համար օգտակար է։

Օգոստոս — Սխալ հասկացողութիւն կայ սիրային գործերուդ մէջ. ամուսնութիւնդ դժբաղդ պիտի ըլլայ։

Օդ — Պայծառը՝ բարի լուր և գործի յաջողութիւն է. մաքուրը՝ առողջութիւն. գարշահոտը՝ հիւանդութիւն. մթընշաղը՝ յուսախաբութիւն և տագնապ. փոթորկալին՝ փոքր վիշտէ յետոյ ուրախութիւն է։

Օդանաւ — Եթէ օդին մէջ է, երազներուդ և յոյսերուդ ցնցումն է, իսկ եթէ գետնի վրայ է՝ յաջողութեան նախանշան է։

Օթօմոպիլ — Տեսնողը եթէ այր է, գործի յաջողութեան նախանշան է. եթէ աղջիկ է՝ քիչ ատենէն կը նշանուի. առ հասարակ լաւ է. օթօմոպիլ քալող՝ պտէն բանի մէջ չափաւոր եղիր. սրարշաւը՝ եթէ ձախորդութեան մատնուիս, քեզմէ զատ ուրիշ պատասխանատուներ մի փնտռեր. իսկ կոտրածը՝ կրելիք փնասդ թէև ծանր է, բայց դարմանումը անկարելի չէ։

Օժիտ — Կիներէ զգուշացիր, վրադ չարիքներ կը խորհին և պիտի գործադրեն։

Օձ — Կնոջմէ մը պիտի խաբուիս. եթէ օձը խօսի, այնպիսի գործ մը պիտի կատարես որ աշխարհ պիտի զարմացընես. օձէն խայթուողը, թշնամիէն փնաս մը կը տեսնէ, ոմանց՝ չարակամներէն աղատիլ կը ցուցնէ։ Եթէ օձը ինքներ վրայ կը դառնայ ու կը ֆշայ, նշան է վտանգի և բանտարկութեան. ցոյց կուտայ նաև հիւանդութիւն և ատելութիւն. սպանելը՝ թշնամիդ պիտի ընկճես կամ յաղթես. եթէ օձը անկողնիդ մէջ տեսնես, կ'ամուսնանաս կամ կին մ'է որ քեզի պիտի փնատէ։ Եթէ տանդ մէջ տեսնես, ընտանեկան մեծ տագնապ է կամ կինդ քեզի հետ պիտի թշնամանայ. եթէ վրադ յարձակի, թշնամիներէդ վախ պիտի գայ քեզի. եթէ փորդ մտնէ, թշնամիներէդ չար խօսք պիտի լսես. եթէ անկողնիդ վրայ սպանես, կինդ կը մեռնի։ Եթէ օձը տեսնես և չվախես, թշնամիներդ կ'արհամարհես կամ անոնցմէ կ'անհոգանաս. եթէ օձը երկու կտոր ըլլայ՝ թշնամիէդ շահ պիտի գայ քեզի։

Օձածուկ — Ընտանեկան երկպառակութիւն է։

Օձիք — Ամուլիի համար ամուսնութիւն է, իսկ ամուսնացեալի համար, նեղութիւն և չարիք է։

Օղ — Սիրային յաջողութիւն է. օղ ականջը դնել՝ մեծ շահ է կամ սիրահարական յաջողութիւն է. օղ ականջէն հանել՝ մահու չափ վնաս է կամ սիրային ձախորդութիւն է։

Օղակ — Սէր և բարեկամութիւն է. օղակ շինել՝ ամուսնական միջնորդութիւն է։

Օղի — Վտանգաւոր կացութեան մէջ ես. խմելը՝ ուրախութիւն է. եթէ կին է խմողը տրտմութիւն է. կամ յանդուգն գործ և վնաս է։

Օճառ — Կոկիծ և անհաճոյ լուր է, թէև ոմանք կ'ըսեն թէ բաղդաւոր է, մանաւանդ բարեկամութեան համար։

Օշարակ — Անդորրութեան և առողջութեան նշան է։ Խմելը՝ խելքի յաւելում է։

Օշինդր — Տեսնել կամ խմել՝ կռիւ է։

Օտարական — Բարեկամի մը վերադարձ է։

Օրացոյց — Տե՛ս տարեցոյց։

Օրէնք — Եթէ օրէնքի վայրերուն մէջ կը գտնուիս, դատարանի մը՝ ուր դատաւորներու և փաստաբաններու հետ գործ ունիս, նշան է նեղութեան, ծախսի և դաղտնիքներդ երեւան գալուն։ Տե՛ս նաև փաստաբան։

Օրինութիւն — Ուրախութիւն է։

Օրօրոց — Գործերդ առաջ յաջող իսկ ետքը անյաջող պիտի երթան, հետեւապէս գործերուդ լաւ նայիր, վնասդ մօտ է. եթէ նորածին մը կայ մէջը՝ մկրտութեան և ուրախութեան նշան է. պարապը՝ որդւոյ կորուստ է։

Հին ատենուայ (երազի մէջ տեսնուած) ազգերու մեկնութիւնը՝ Հայ-Գրաբար «Երազահան»էն

.....

Թուրք — *Կը դուշակէ թշնամիներու ազատութիւն։*
Հրեայ — *Անհաւատ կամ խաբեբայ մարդու հետ կը խօսիս կամ գործ կ'ունենաս. նշան է նաև ագահութեան։*
Ռուս — *Մեծ հակառակորդ կամ հակառակութիւն է։*

Արդ, ով որ երազ տեսնէ զարիւրի եւ վախէ, Թող յիշէ
Դանիէլ Մարգարէն եւ երեք մանկունքն ու Աթանա-
գինէ Հայրապետը, եւ երեք մոմ Թող վառէ եկե-
ղեցին ու եօթը ծունը աղօթք Թող ընէ, եւ
վերոյիշեալ սուրբերը Թող յիշէ, ամէն
չար երազ բարիի կը փոխուի
ԱՍՏՈՒԾՄՈՎ։



Mme, Roger Somail
a Varennay par St: Mihiel
Olympe Baron - Meuse
France

ԼՈՒՍՆԻ ԵՐԱԶԱՑՈՑՑ (*)

1 Լուսնի օրը բարի է ամէն իրերու, որովհետեւ Ադամ նոր ստեղծուեցաւ. սերմանել, տնկել, ճանապարհ երթալ, հիմ ձգել բարի է. որովհետեւ այսօր Նոյ տապանը սկըսաւ շինել, և Մովսէս այսօր հանեց ժողովուրդը Եգիպտոսէն և Գաբրիէլ այսօր ողջոյն տուաւ Մարիամի, և Սողոմոն այսօր սկսաւ տաճարը շինել. հիւանդը կ'առողջանայ, կորուստը կը գտնուի և երազն ի բարին կը կատարի։

2 Օրը՝ բարի չէ, որովհետեւ նախաստեղծն այսօր ինկաւ և Կայէն այսօր սպանեց Աբէլը, և անկից ասդին երկիրը աղտոտեցաւ. ով որ ծնի հեզ և խոնարհ կ'ըլլայ, նաև շնացող. հիւանդը չապրիր. կորուստը մինչև քառասուն օրէն կը գտնուի. տունկ տնկելը, նաւ շինելը աղէկ է։ Երազն երրորդ օրը կը կատարի։

3 Օրը՝ բարի է ամէն իրերու. ով որ ծնի շնորհալի կ'ըլլայ և պատերազմող, որովհետեւ այսօր Հեղինէ թագուհին խաչը գտաւ և Սողոմոն այսօր ծնաւ. գնել, վաճառել բարի է. կորուածը կը գտնուի. հիւանդը կ'առողջանայ. փախչողը կը դառնայ։ Երազն ի բարին կը կատարի։

(*) ՍՈՅՆ ԵՐԱԶԱՑՈՑՑը նայելու համար պէտք է գիտնալ Լուսնի ամիսներուն, օրուան թուականը: կը յանձնարարուի գնել Ս. ՓՐԿՉԵԱՆ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑի օրացոյցներէն օրինակ մը, որուն մէջ կայ նաեւ Լուսնի ամիսներուն թուականը:

4 Զգուշութեան օր է. մի՝ գներ, մի՝ վաճառեր, դուրս մի՝ ելլեր, որովհետեւ Նաբուզոդոնոսոր այսօր տաճարը քակեց, և մոգերը այսօր ընծաները բերին, և Հերովդէս մոգերէն խաբուեցաւ։ Ով որ ծնի շնորհալի կ'ըլլայ և մեծութեան կը հասնի. հիւանդը կը մեռնի։ Երազը սուտ է։

5 Օրը՝ բարի է ամէն իրերու. մեղուն լաւ կուգայ. սերմանել, տնկել, ճամբայ երթալ, նաւ շինել աղէկ է։ Ով որ ծնի՝ բաղդաւոր կ'ըլլայ, որովհետեւ այսօր Նոյ տապանը մտաւ և Սողոմոն տաճարը շինեց։ Կորուստը կը գտնուի, հիւանդը կ'առողջանայ, երազն ի բարին կը կատարի։

6 Օրը՝ բարի է ամէն իրերու. մանուկին ուսում տալ լաւ է. որոհետև Տէրը այսօր դպիրներուն քով գնաց և քարոզութեան դրկեց Իր առաքեալները. ամէն ինչ գործել բարի է։ Հիւանդը կ'առողջանայ. ով որ ծնի՝ բաղդաւոր կ'ըլլայ. կորուստը քառասուներորդ օրը կը գտնուի. երազը տարիէ մը կը կատարուի։

7 Զգուշութեան օր է. որովհետեւ Աստուած Ադամը այսօր դրախտէն վռնտեց. ով որ ծնի՝ գող և բորոտ կ'ըլլայ. հիւանդը խիստ կը չարչարուի բայց կ'ապրի։ Երազը սուտ է։

8 Օրը՝ բարի է ամէն իրերու, որովհետեւ թլփատութեան սկիզբի օրը, այսօր է և լեզուները այսօր բաժնուեցան։ Հիւանդը կ'առողջանայ, կորուստը կը գտնուի։ Ով որ ծնի՝ ձայնաւոր կ'ըլլայ և ծերութեան կը հասնի. երազը ութերորդ օրը կը կատարի։

9 Օրը՝ բարի է, որովհետեւ Քրիստոս այսօր մկրտուեցաւ. ով որ ծնի՝ երկարակեաց կ'ըլլայ։ Գնել, վաճառել,

ճամբայ երթալ, մանուկ մկրտել, թագաւոր տեսնել, իշխանի տեսան մտնել, բարի է։ Կորուսաը կը գտնուի. հիւանդը կը լաւանայ. երազն ի բարին կը կատարի։

10 Ծնունդի օր է. ո և է բան մի գործեր, աղէկ չէ, ամէն ինչէ պատրաստ կեցիր. երդում մի ըներ և երդում ընել միտաբ, մազ մի շոկեր։ Ով որ ծնի՝ խեղդամահ կ'ելլայ. հիւանդը կ'առողջանայ. փախչողը կը գտնուի. երազն երրորդ օրը կը կատարի։

11 Այսօր աշխարհը ջրհեղեղ եղաւ և ջնջուեցաւ. ամէն ինչ գործել՝ աղէկ չէ. երդում մի ըներ և երդում մի ընել տար, որովհետև այսօր կէտ ձուկը Յոնանը կլլեց. ջուր մի մտներ։ Ով ոչ ծնի շուտով կը մեռնի. ճամբայ մ'երթար, որովհետև Ադամ դրախտէն դուրս եղաւ. հիւանդը ոտքի վրայ կ'ելնէ. երազը նոյն օրը կը կատարի։

12 Օրը՝ բարի չէ. երդում մի ըներ և երդում ընել մի տար. ամէն ինչէ պատրաստ կեցիր և աղօթէ, որովհետեւ զգուշութեան օր է. հիւանդը կը մեռնի. երազը երրորդ օրը կը կատարի։

13 Օրը՝ բարի է ամէն իրերու. գործել, հիմ. դնել, հարսնիք ընել աղէկ է։ Ով որ ծնի՝ իմաստուն կ'ելլայ. հիւանդը կը ձանրանայ. երազն ի բարին կը կատարի։

14 Հնազանդութեան օր է ամէն իրերու. մի՝ գործեր։ Ով որ ծնի՝ չարութեամբ կը մեռնի. հիւանդը նեղութիւն կը կրէ, որովհետև Քրիստոս այսօր խաչուեցաւ. երազը քառասուներորդ օրը կը կատարի։

15 Օրը՝ բարի է ամէն իրերու. ով որ ծնի՝ զօրաւոր կ'ըլլայ և հիւանդացողը ոտքի վրայ կ'ելլէ, որովհետև Քրիստոս այսօր աւերեց դժոխքը։ Շինել, տնկել, վաճառել աղէկ է. ինչ որ գործես շնորհաւոր կ'ըլլայ։ Կորուստը կը դտնուի. երազը նոյն օրը կը կատարի։

16 Օրը՝ շատ բարի է ամէն իրերու. սերմանել, տնկել, հարսնիք ընել, մանուկի ուսում տալ, իշխանի երթալ աղէկ է, որովհետև Քրիստոս այսօր փառաւորուեցաւ մոգերէն։ Ով որ ծնի՝ գեղեցիկ, երկարակեաց և հարուստ կ'ըլլայ։ Կորուստը չպիտի դտնուի. հիւանդը կ'ապրի. երազն երրորդ օրը կը կատարի։

17 Օրը՝ բարի է. հիմ դնել, պատերազմիլ աղէկ է. հիւանդը ամբողջովին կ'ելլէ. երազը նոյն օրը կը կատարի։

18 Օրը՝ բարի է. հարսնիք ընել, ճամբայ երթալ աղէկ է, որովհետև Քրիստոս այսօր ազատեց հոգին, ով որ ծնի՝ խաբեբայ կ'ըլլայ. հիւանդը կ'առողջանայ, երազը բարի է։

19 Օրը՝ բարի է ամէն իրերու. սերմանել, տնկել, մանուկի ուսում տալ, իշխանի դէմ երթալ աղէկ է, որովհետև Քրիստոս այսօր պատուիրուեցաւ. ով որ ծնի՝ բաղդաւոր և իմաստուն կ'ըլլայ, բայց խմող և գէշ լեզուով ու շնացող, որովհետև Կայէնի և անոր աղջիկներու սկիզբի օրն է. հիւանդը կը մեռնի. թշնամիներէն պատրաստ կեցիր, երազն ի բարին կը կատարի։

20 Օրը բարի է ամէն իրերու, որովհետև Աստուած այսօր երեւցաւ Աբրահամի և օրհնեց զայն։ Սերմանել,

շինել, վաճառել, ճամբայ երթալ, իշխանի դէմ երթալ և ամէն ինչ գործել աղէկ է։ Ով որ ծնի՝ խոնարհ և աղօթասէր կ'ըլլայ, բայց կրակի կամ ջուրի մէջ կ'իյնայ, որովհետեւ Աստուած այսօր այրեց Սոդոմը. հիւանդը կը վտանգուի. երազը սուտ է։

21 Օրը բարի չէ. մի գործեր, որովհետեւ Զաքարիայի պապանձման օրն է. մի վաճառեր, մի գներ, երդում մի ըներ և երդում ընել մի տար. հիւանդը կը չարչարուի կամ կը մեռնի. ով որ ծնի՝ աղօթասէր կ'ըլլայ. երազը սուտ է։

22 Այսօր մեղք մի գործեր որ աչք չըլլաս. բայց հիմ դնել, վաճառել, գնել, մանուկի ուսում տալ և ամէն ինչ գործել բարի է։ Ով որ ծնի՝ երկարակեաց կ'ըլլայ և իշխաններուն սիրելի, որովհետեւ այսօր Աստուած հրաման տուաւ Գաբրիէլ Հրեշտակի, աւետիս տալու Ս. Կոյս Մարիամի. հիւանդը կը լաւանայ. երազն ի բարին կը կատարի։

23 Օրը՝ բարի է ամէն իրերու, որովհետեւ Քրիստոս աշակերտներուն այսօր երեւցաւ։ Ով որ ծնի՝ բաղդաւոր, առատամիտ և յաջողակ կ'ըլլայ։ Ճամբայ երթալ, գնել, վաճառել աղէկ է. փախչողը կուգայ, կորուստը կը գտնուի, հիւանդը մահառիթ վիճակի մէջ կ'ըլլայ. երազը երեսուներորդ օրը կը կատարի։

24 Օրը՝ բարի չէ. ամէն բանէ պատրաստ կեցիր։ Մի ճամբորդեր, մի վաճառեր, մի գներ և ոչ ալ իշխանի դէմ գնայ։ Ով որ ծնի՝ անօգուտ և անվաստակ կ'ըլլայ. փախչողը կը դառնայ, որովհետեւ այսօր Եղեմը աւերեցաւ. հիւանդը կ'առողջանայ. երազը սուտ է։

25 Զգուշութեան օր է ամէն իրերու. երդում մի ըներ և երդում ընել մի տար, և ոչ մէկ տեղ գնայ, որովհե-

տեւ չար է, այսօր ծնաւ նեռը։ Ով որ ծնի՝ շէկ, շատամօրուս և ցանկացող կ'ըլլայ. փախչողը կը դառնայ. հիւանդը կը մեռնի. երազը սուտ է։

26 Օրը բարի է ամէն իրերու. բայց երդում մի՝ ըներ։ Ով որ ծնի՝ շուտ կը մեռնի. գործել, փոխ առնել, սերմանել. ճամբայ երթալ, հարսնիք ընել աղէկ է. կորուստը կը գտնուի, որովհետև Քրիստոս այսօր ծնաւ. հիւանդը կը վտանգուի. երազը բարի է։

27 Օրը՝ բարի է ամէն իրերու, որովհետև Աբրահամ այսօր իր որդին ընծայեց և Տէրը այսօր Հրէից մանանան տուաւ։ Ով որ ծնի՝ կարգաւոր և Աստուծմէ վախցող կ'ըլլայ. կորուստը կը գտնուի. հիւանդը կ'առողջանայ. փախչողը կը դառնայ. երազը սուտ է։

28 Օրը՝ բարի է ամէն ինչ գործել, մանուկի ուսում տալ, իշխանի դէմ երթալ, հարսնիք ընել. որովհետև այսօր Քրիստոսի ընծայ տարին։ Ով որ ծնի՝ գեղեցիկ և շնորհաւոր կ'ըլլայ. կորուստը չի գտնուիր. հիւանդը չապրիր. երազն երրորդ օրը կը կատարի։

29 Օրը՝ բարի է. ամէն ինչ գործել, տնկել, շինել, հարսանիք ընել։ Ով որ ծնի՝ բաղդաւոր և իմաստուն կ'ըլլայ, բայց խմող. լեզուով սիրելի և գործքովը շնացող. հիւանդը կը մեռնի. երազը լաւ է։

30 Օրը բարի է ամէն իրերու. մկրտել, պսակել, հիմ դնել, ճամբայ երթալ, որովհետև ուրիշ ազգեր այսօր դարձի եկան։ Հիւանդը կ'առողջանայ. կորուստը կը գտնուի բայց նաւ մի նստիր։ Ով որ ծնի՝ խմող և բաղդաւոր կ'ըլլայ. երազը բարի է։

ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՐՄՆԱԽԱՂԻ

1.— Եթէ գաղտը խաղայ, շահու և մեծութեան նշան է, պարգև և բարիք կը գտնէ. համբաւ կ'ստանայ և բարի ճանապարհ կ'երթայ ու կ'ուրախանայ։

2.— Եթէ գագաթը խաղայ՝ բարի է, բոլորէն կը սիրուի. մեծութեան և փառքի կը հանդիպի. մեծ թագաւոր կը տեսնէ. իշխաններէն պատիւ կ'ընդունի, ճամբորդութիւն կ'ընէ, կը շահի և կ'ուրախանայ։

3.— Եթէ ծոցրակը խաղայ՝ հոգերէ, չարիքէ, նեղութենէ և տանջանքէ կ'ազատի։

4.— Եթէ գլխուն աջ կողմը խաղայ՝ իւր արհամարհածը կը սիրէ. երկայն ճամբայ կ'երթայ և շատ շահու և բարիքի կը հանդիպի ու սիրով կը վերադառնայ։ Եթէ գլխուն ձախ կողմը խաղայ՝ չարէն կ'ազատի կամ զաւակ կ'ունենայ. մեծ անձնաւորներէն և ազդէն մեծ բարիքներ կուգայ իրեն. ապրանքի կը հանդիպի, կը շահի և կը հարստանայ։

5.— Եթէ գլխուն վերեւի կողմը խաղայ՝ հոգերու մէջ կ'իյնայ բայց պատիւ կ'ստանայ։

6.— Եթէ բոլոր գլուխը խաղայ՝ շատ բարի առարկաներու կը հանդիպի, շատ առարկաներ կ'իյնայ իր ձեռքը, գաղտնի բաներ կը լսէ ու կը տեսնէ։

7.— Եթէ ճակատը խաղայ՝ շատերէն պատիւ կ'ընդունի, ինչ որ որոշէ կ'ընէ ու գանձ կը գտնէ, դատաւորութիւն կը վայելէ, մեծութիւն կ'ստանայ և փառաց կը հասնի։

8.— Եթէ աջ կողմի քունքը խաղայ, մեծերէն մեծութիւն կ'ստանայ, սուգէ կ'ազատի, բայց կիներու երեսէն

հոգերու մէջ կ'իյնայ և կը մեռնի։ Եթէ ձախ կողմի քունքը խաղայ. առատութեան և ուրախութեան կը հանդիպի, շնորհ կ'առնէ. նաև պատիւի և մեծութեան խորհուրդ և կամ մարդու հետ կը կռուի։

9.— Եթէ աջ յօնքը խաղայ՝ սրտի հանգստութիւն է և կորուստը կը գտնուի. իսկ եթէ ձախը խաղայ, առատութեան և ուրախութեան կը հանդիպի. երկար կեանք կ'ունենայ. կը քաջալերուի և կը շահի, կամ հիւանդանալու նշան է։

10.— Եթէ յօնամէջը խաղայ՝ նեղութեան ձայն կը լսէ. անվայել բան մը կ'առնէ, սրուն համար կը տրտմի և կը վիրաւորուի։

11.— Եթէ աչ աչքի առջեւի աղբիւրը խաղայ՝ սրտնեղութեան, ագոյ և տրտմութեան կը հանդիպի, բայց բարիք կը գտնէ. կամ թշնամիին հետ կը կռուի, կը վիրաւորուի և կուլայ։ Իսկ եթէ ձախը՝ շատ բարիքի և առողջութեան կը հանդիպի. իւր հեռաւորը կը տեսնէ և կը սրտնեղի։

12.— Եթէ աջ աչքի ետեւի աղբիւրը խաղայ՝ շատ բարիքի կը հանդիպի. իւր հեռաւորը կը տեսնէ ու կը խնդայ. ապրանքներու կը հանդիպի ու կը վայելէ։ Եթէ ձախը՝ հարստութեան և մեծութեան կը հանդիպի. մեծերու կը մոտենայ. իւր ազգականը կը տեսնէ ու կը խնդայ, բարիք կամ ապրանք կ'իյնայ անկէ իրեն. շատ կամ քիչ բան կը գտնէ։

13.— Եթէ աջ աչքի վերի կոպը խաղայ՝ հարստութիւն և նուէր է. կը մեծանայ մեծերէ. ապրանք կը ժողվէ և կ'ուրախանայ. կամ կը սրտնեղի և կուլայ բայց շուտով կ'ազատի։ Իսկ եթէ ձախը՝ ատելութիւն և լաց է, բայց յետոյ բարի է, կ'ուրախանայ և կը խնդայ։

14.— Եթէ աջ աչքի վարի կոպը խաղայ՝ հեռու ճամբայ կ'երթայ, հեռաւորը կը տեսնէ. բարիք կը գտնէ և կը խնդայ։ Իսկ եթէ ձախը՝ շատ բարիքի կը հանդիպի. կը ցանկայ և կը հասնի. կը ցնծայ և կ'ուրախանայ. կամ ազգի ատելութեան, լացի և սուգի կը հանդիպի։

15.— Եթէ աչ աչքի պտուղը խաղայ՝ սրտնեղութիւն է. իսկ եթէ ձախը՝ բարիք կը գտնէ։

16.— Եթէ աչ աչքը ամբողջովին խաղայ՝ շատ բարիքի կը հանդիպի. կ'առողջանայ և կ'ազատի դժուարութենէ. մեռելէ ժառանգ կ'իյնայ իրեն ու իր ընտանիքին և հեռաւորը կուգայ։ Իսկ եթէ ձախը՝ շատ և առատ բարիքի կը հանդիպի. կը պատուրուի մեծերէն. գանձ կը գտնէ և կը հարստանայ, բայց կը սրտնեղի և չարիք կը գործէ։

17.— Եթէ աչ աչքը ամէն վարօքը խաղայ իւր հեռաւորը կը տեսնէ։ Եթէ ձախը՝ կը հիւանդանայ բայց կ'ապրի։

18.— Եթէ աչ աչքի վերի թարթիչը խաղայ, հեռաւոր մարդ մը կուգայ իրեն. կը սրտնի, կուլայ. բայց իւր գործը իւր կամքին համեմատ կ'ըլլայ։ Եթէ ձախը՝ հեռու գտնուող կարեւոր մարդը կը տեսնէ ու կը խնդայ և բարիք կը գտնէ. առողջութիւն և խնդութիւն է։

19.— Եթէ աչ աչքի վարի թարթիչը խաղայ՝ լաց և սրտնեղութիւն է. կամ մեծ բարիք կը գտնէ մարդոցմէ։ Եթէ ձախը՝ լաց և սրտնեղութիւն է. բայց իւր հեռաւորը կուգայ։

20.— Եթէ ուղեղին ամանը խաղայ, մեծ մարդոցմէ հրաւէր կ'ստանայ։

21.— Եթէ քթին աչ կողմը խաղայ, քիչ մը կը հիւանդանայ. ատելութենէ և նեղութենէ կ'ազատի. կռիւի և վէճի կը հանդիպի որ կամակից չէ. բայց կը գօրանայ և կ'ազատի չարէն։ Եթէ ձախը՝ առարկայ կ'իյնայ իրեն կամ զաւակ կ'ունենայ, կը կռուի թշնամիին հետ և կը յաղթէ. բանի մը որ կը միտքանի բարի կ'ըլլայ իրեն համար. հիւանդութենէ կ'առողջանայ և սիրոյ կը հանդիպի։

22.— Եթէ ամբողջ քիթը խաղայ՝ մեծամեծներէն շահ կ'առնէ։

23.— Եթէ քթի ծայրը խաղայ՝ պարտքերէն կ'ազատի և կը հարստանայ։

24.— Եթէ աջ կողմի քթին ծայրը խաղայ, ցաւերու կը հանդիպի։ Եթէ ձախը՝ յանկարծ մարդ մը կը կռուի իրեն հետ։

25.— Եթէ աջ կողմի քթի ծակը խաղայ, մէկու մը հետ կը սիրահարի։ Եթէ ձախը՝ պարտքերէն կ'ազատի։

26.— Եթէ քթի օղը խաղայ, կը հարստանայ։

27.— Եթէ քթի ծակերուն դուրսի կողմը խաղայ, կը հարստանայ բայց իւր ընտանիքը կը մեռնի։

28.— Եթէ աջ այտը խաղայ՝ սրտմութեան կը հանդիպի. գործ կը գործէ և կ'ամաչէ. քիչ մը կը հիւանդանայ և կ'առողջանայ. յուսալի կալին դիպուածներ կը պատահին իրեն։ Եթէ ձախը՝ զաւակ կ'ունենայ և կը խնդայ. կը սրտհեշտի. կը սիրուի, գանձի և առատութեան կը հանդիպի։

29.— Եթէ աջ քնատեղը խաղայ՝ սրտնեղութիւն է. խիստ կը հիւանդանայ, բայց կ'ապրի. եթէ ձախը՝ զոյժի ձայն կը լսէ և կը տրտմի։ Ճանապարհ կ'երթայ և գործուն կուգայ։

30.— Եթէ աջ երեսը խաղայ՝ առողջութիւն է և գանձ կը գտնէ. իր տեղէն ուրիշ տեղ կը փոխադրուի և սիրտը կը հանդարտի։ Եթէ ձախը՝ քիչ մը կը տրտմի և կը տկարանայ. կը վիրաւորուի, քիչ մը ցաւի կը հանդիպի և շուտով կը մեռնի։

31.— Եթէ վերի կլափին աջ կողմը խաղայ՝ իւր ճամբէն կը դառնայ. կը սրտհեշտի և շատ բարիք կ'ըլլայ իրեն, կամ քիչ մը կը տկարանայ. եթէ ձախը՝ իւր ազգակիցներուն հետ կը կռուի. կը հիւանդանայ բայց կ'ապրի. դրամ կուգայ իրեն և կ'ուրախանայ։

32.— Եթէ կզակին աջ կողմը խաղայ՝ իր ազգակիցներուն հետ վէճ և կռիւ կ'ունենայ. քիչ մը կը տկարանայ և կը սրտհեշտի. նեղութեան մէջ կ'իյնայ և Աստուած կը փրկէ, չարէն և ցաւերէն կ'ազատի։ Եթէ ձախը՝ իւր ազգակիցներէն հեռաւոր ճամբորդ մը կուգայ, կամ հեռու ճամբայ կ'երթայ. քիչ ցաւերէն կ'առողջանայ և կը խնդայ։

33.— Եթէ աչ ականջը խաղայ՝ ազգականներէն համբաւ կը լսէ. խնդութիւն և առատութիւն է. յանկարծ բարիքի կը հանդիպի և սիրութիւն կ'ըլլայ իրարու հետ. կը շահի և կը զուարճանայ, բայց կը տկարանայ, կամ ազգականը կը մեռնի։ Եթէ ձախը՝ հեռաւորը կուգայ. իրեն բարիքը կը յիշեն ուրիշ տեղեր և բարի խօսքեր կը լսէ. յանկարծ կը խնդայ և կ'առողջանայ. մեծերուն աչքին ինքը անուշ կ'երեւայ և չսպասած տեղէն իրեն դրամ կուգայ։

34.— Եթէ աչ ականջի դմակը խաղայ՝ մէկու մը հետ դատ կը բանայ։ Եթէ ձախը՝ իւր բարիքը կը յիշեն։

35.— Եթէ աչ ականջի վրան խաղայ՝ հոգերու մէջ կ'իյնայ. եթէ ձախը՝ յանկարծ գանձ կը գտնէ։

36.— Եթէ աչ ականջի տակը խաղայ՝ չսպասած տեղէն բարիք կը գտնէ. եթէ ձախը՝ ապէկ չէ։

37.— Եթէ բոլոր բերանը խաղայ, իր սրտէն սիրած հեռաւորը կը տեսնէ և կը համբուրէ ու սիրելիէն կը մեծարուի։

38.— Եթէ լեզուն խաղայ, կռիւ և խռովութիւն է, ատելութիւն և աղաղակ. թշնամին իրեն հետ կը խօսի. արտնեղութեան, վէճի նշան է։

39.— Եթէ լեզուին աչ կողմը խաղայ՝ կը հարատանայ. եթէ ձախը՝ բարիքի կը հանդիպի։

40.— Եթէ լեզուն ամէն կողմովը խաղայ՝ մատնիչէ և զրպարտիչէ զգոյշ եղիր և պատրաստ կեցիր։

41.— Եթէ վերի շրթունքը խաղայ՝ ապասած համբաւը կը լսէ, վէճ և խռովութիւն, կռիւ և ատելութիւն, արտնեղութիւն և վնաս, կամ իւր հեռաւորը կուգայ. փորձանք է. զէշ խօսք կը լսէ և կը տրտմի։

42.— Եթէ վարի շրթունքը խաղայ՝ կը արտնեղի, կը վիճի և կը յաղթէ. որու որ ցանկայ կը հաանի. հեռաւորը կուգայ և բարիքի նշան է։

43.— Եթէ շրթունքներուն երկու կողմերը խաղայ՝

խօսք կը լսէ և կը վիճի, գաւակէն կը խնդայ. մարդոցմէ կը բամբասուի. ինաս, տրտմութիւն և սուգ է։

44.— Եթէ շրթունքները խաղան՝ իւր սիրելին կը համբուրէ։

45.— Եթէ աջ կողմի վերի շրթունքը խաղայ՝ խօսք և կռիւ կ'ըլլայ. մարդոցմէ կը սրտնեղի և տխրութեան մէջ կ'իյնայ, կամ գաւակ կ'ունենայ, կը խնդայ, կը սրտհեշտի և կ'ուրախանայ. եթէ ձախը՝ սէր, խնդութիւն և խաղաղութիւն է, բարի և շնորհաւոր գաւակ մը կ'ըլլայ իրեն, յանկարծ կը խնդայ գաւակէն. պարտքը կը վճարէ և իր սիրելին կուգայ։

46.— Եթէ վերի շրթունքներուն մէջը խաղայ, կը համբուրէ ով որ կ'ուզէ, խօսք կը լսէ և կը տրտմի. եթէ վարինը՝ կը սրտմի։

47.— Եթէ աջ կողմի վարի շրթունքը խաղայ, կը սրտհեշտի և կ'ուրախանայ. եթէ ձախը՝ կ'ուրախանայ։

48.— Եթէ աջ կողմի շրթանը խաղայ՝ իւր անձին առողջութիւն է. եթէ ձախը՝ կտրիճ տղայ մը կ'ըլլայ իրեն։

49.— Եթէ ղրթները խաղան՝ բարիք և դրամ կուգայ իրեն։

50.— Եթէ աջ կողմի քերնին կապը խաղայ՝ կը բարձրանայ և իր թշնամին կը կոխկռտէ. եթէ ձախը՝ թշնամին կը յաղթէ, հեռաւոր բարի տեղ կ'երթայ, կը կոխէ իր չար կամքին վրայ և կը մեծնայ։

51.— Եթէ աջ կողմի վերի քերանը խաղայ՝ գանձ կը գտնէ, կը սրտհեշտի և բարիքի կը հանդիպի, նաև ապրանքի և մեծութեան. եթէ ձախը՝ կը յաղթէ թշնամիին և բարիքի կը հանդիպի. հեռաւորը կուգայ և կը զօրանայ։

52.— Եթէ քերնին առաստաղը խաղայ, սրտնեղութեան մէջ կ'իյնայ։

53.— Եթէ աջ կողմի քերնին առաստաղը խաղայ, բարիք կը գտնէ և կ'ուրախանայ. եթէ ձախը՝ փիչ մը կը հիւանդանայ և շուտով կ'աղէկնայ։

54.— Եթէ աչ Թուղը խաղայ, Թշնամիներէն պատրաստ կեցիր. եթէ ձախը՝ մեծ բարութիւն կը գտնէ։

55.— Եթէ աչ որսիը խաղայ, հարստութեան նշան է. եթէ ձախը՝ իրերու և դրամի նշան է։

56.— Եթէ աչ կողմի վարի կլափը խաղայ, կը սրտնեշտի և կ'ուրախանայ ու իր աչքովը շատ բարիք կը տեսնէ. եթէ ձախը՝ դրամ կը գտնէ։

57.— Եթէ կլափի ծայրը խաղայ, ոսկիի և կերպասի կը հանդիպի։

58.— Եթէ ծնօտը խաղայ, շահու նշան է։

59.— Եթէ աչ կողմի խամ ծիծը խաղայ, առողջութիւն է. եթէ ձախը կը խնդայ և կ'ուրախանայ։

60.— Եթէ կոկորդը խաղայ, սրտնեղութեան խօսքեր կը լսէ։

61.— Եթէ վզին աչ կողմը խաղայ, հեռու տեղացի շահ կուգայ իրեն, շատ կերպասի կը հանդիպի և դրամի տէր կ'ըլլայ, չի յուսացած տեղէն կը մեծանայի ու կ'ուրախանայ. եթէ ձախը երեւելի կ'ըլլայ և կը խնդայ. մեծութիւն կ'առնէ և կը հարստանայ ու իր աչքովը շատ բարիք կը տեսնէ, խնդութիւն և ողորմութիւն կը գտնէ կամ անյարմար բան մը կը գործէ և մեծերէ կամ ազգականներէն պարապ տեղը խօսք կը լսէ։

62.— Եթէ վիզն ամէն խաղայ. մեծ նեղութիւն կուգայ իր վրայ, իւր կեանքը կը պակսի, կամ սրով կը կտրուի իր վիզը և տունն ալ կ'այրի։

63.— Եթէ աչ կողմի թիկնամէջը խաղայ, սրտնեղութիւն է. եթէ ձախը՝ բան մը կ'առնէ որ անվայելուչ է։

64.— Եթէ աչ թիկը խաղայ, թակարդէ թել պատրաստ կենայ. եթէ ձախը՝ իւր սրտովը խնդայ։

65.— Եթէ թիկնամէջը խաղայ, կը հարստանայ։

66.— Եթէ աչ անուշը խաղայ, իր ձեռաց գործը դրամ

կ'ընէ. եթէ ձախը՝ մեծութեան կը հանդիպի, խնդութեան և սիրոյ նշան է։

67.— Եթէ աջ բէճը խաղայ, կը հարստանայ և կը սրտհեշտի կամ ցնորք և տրտմութիւն է. պատրաստ կեցիր չարէն և կնոջմէ։ Եթէ ձախը՝ առողջութիւն է, նոր հագուստ կը հագնի և բարիք կ'ըլլայ իրեն կամ անյարմար գործ կը գործէ։

68.— Եթէ աջ թիկունքը խաղայ, նոր հագուստ կը հագնի։ Եթէ ձախը՝ իւր խնդիրքը կը կատարի։

69.— Եթէ աջ ծղին խաղայ, դլխացաւոց մէջ կ'իյնայ և կը լաւանայ. նոյնպէս լեղակի ցաւոց կը հանդիպի, կը սիրահարի։ Եթէ ձախը՝ խնդութիւն և ցնծութիւն է, ինչ բարիք որ ուզէ ընկերներէն կը գտնէ. մարդոցմէ պարգեւ կ'ստանայ և դրամ կը շահի։

70.— Եթէ աջ արմուկը խաղայ, սիրելիին կը հանդիպի, բարի և լաւ սէր է, արքունեաց խօսքի մէջ կը մտնէ կամ քիչ մը կը տկարանայ, գլուխը կը ցաւի և ցաւերէն կը տրտմի, կը հիւանդանայ և Աստուած հիւանդութենէ կը հանէ։ Եթէ ձախը՝ բարիք և խնդութիւն է. հիւրը կ'երթայ և կ'ազատի, կը ցնծայ և կը սրտհեշտի կամ օտարներէն կը վիրաւորուի և կը հիւանդանայ։

71.— Եթէ աջ բազուկը խաղայ, այր և կին կը հաւքուրէ, կնոջմէն կը սիրուի, խնդութեան կը հասնի և սիրելի կը գտնէ։ Եթէ ձախը՝ մեծ բարիքի և շահու կը հանդիպի, լաւ և շնորհաւոր. մարդոցմէ կը պատուրուի և դրամ կը գտնէ։

72.— Եթէ աջ թեւը խաղայ, ցաւերու և նեղութեան կը հանդիպի։ Եթէ ձախը՝ բանտ կը մտնէ։

73.— Եթէ աջ բազկի ծուկը խաղայ, դլխացաւութեան կը հանդիպի։ Եթէ ձախը՝ իւր ընտանիքէն բարի խօսք կը լսէ և կը լաւանայ։

74.— Եթէ աջ ձեռքի թաթը խաղայ, մեծ վէճ կ'ըլլայ և մեծ աղմուկ է, նոյնպէս կը վիրաւորուի մարդոցմէ։ Եթ

ձախը՝ առատ բարիք կը գտնէ. արծաթի, ոսկիի և գանձի կը հանդիպի, իշխանէ բան կ'առնէ կամ մէկու մը հետ կը վիճի։

75.— Եթէ աջ ափը խաղայ, բարի գործի կը հանդիպի կամ կռիւի և ապաղակի. եթէ ձախը՝ շատ բարիքի կը հանդիպի կամ դրամ կը շահի։

76.— Եթէ աջ բեռամատը խաղայ, մեծ մարդոցմէ կը սիրուի և կը պատուրուի, իշխանէ իրք կ'առնէ, անկասկած բարիք կը գտնէ, մեծերէն շնորհք, պարգևներ ու մեծութիւն կ'ստանայ, լաւ կը խօսին իրեն համար, ազգականները կամ եղբայրները իրմով կը խնդան։ Եթէ ձախը՝ հարստութիւն և նուէր է, իրեն համար լաւ կ'ըլլայ. բարիքի և գանձի կը հանդիպի. ինչ որ ուզէ կ'առնէ. իրեն համար զրպարտութիւն կ'ընեն և ինքը սեղքերու մէջ կ'իյնայ։

77.— Եթէ աջ ցուցամատը խաղայ, չարի կը հանդիպի դէշ խօսք կը լսէ. կը փորձեն զինքը. պարապ տեղը կը վիրաւորուի. բամբասանքի մէջ կ'իյնայ և մարդիկ դէշ կը խօսին իր վրայ։ Եթէ ձախը՝ ուրախութիւն և բարի է, լաւ խորհուրդ կը խորհի. իրեն կը գթան, զինքը կը գովեն և ուզածը կը գտնէ։

78.— Եթէ աջ միջնամատը խաղայ՝ վէճի մէջ կ'իյնայ, և վիճի և կը յաղթէ թշնամւոյն. չի յուսացած տեղէն բարիք կը գտնէ, մեծ բան մը կը փոխէ, մեծէ մը հարստութիւն և շատ դրամ կ'ըլլայ իրեն։ Եթէ ձախը՝ կռիւի և սրբտնեղութեան նշան է. կը վիճի և կը յաղթէ, բան կը գտնայ և կը խնդայ, կ'ապատի տրտմութենէ և բարիքի կը տիրանայ։

79.— Եթէ աջ մատնեմատը խաղայ՝ բարիքը կը լիշուի, շատ բարիք կը գտնէ, կը հարստանայ և կը շահի, ուզածը կը կատարուի, հեռաւոր տիրելին կուգայ, նոյնպէս Աստուծմէ բարիք կը գտնէ։ Եթէ ձախը՝ իր բարիքը կը լիշեն, շատ

բարիքի կը հանդիպի, իշխանէ կը մեծարուի։ սրտով կը խրատուի ու կը խնդայ և իր սրտի խորհուրդը կը յայտնուի։

80.— Եթէ աչ ճկոյթը խաղայ, դրամի կը հանդիպի, գանձ և հարստութիւն կը գտնէ, Աստուծմէ պարգեւ կ'ստանայ, ի զուր կը տրտմի, փորձանաց մէջ կ'իյնայ և կ'ազատի։ Եթէ ձախը՝ վէճ և աղաղակ է։ գէշ խօսքեր կ'ըսեն իր վրայ կամ կը բարձրանայ և կը հարստանայ, տրտմութենէ կ'ազատի և մեծ մարդոցմէ բարի տեղեր կը յիշուի։

81.— Եթէ աչ ձեռքը ամէնը խաղայ, կը պատուրուի մեծերէն և կը յարգուի մարդոցմէ, կը հարստանայ և կը խնդայ կամ չարիք կուգայ իրեն, պատրաստ թող կենայ։ Եթէ ձախը՝ չսպասած տեղէն բարիք կը գտնէ և մեծ անձէ մը կը պատուրուի, թագաւորէն պարգեւ կ'առնէ, կը խնդայ և կը հարստանայ. բոլորն ալ բարիք կ'ընեն իրեն։

82.— Եթէ աչ ձեռաց ամէն մատները խաղան՝ կը տրտմի բայց յետոյ կը սրտհեշտի. չարիքը կը հեռանայ իրմէն և Աստուած իրեն հետն է։ Եթէ ձախը՝ գանձի և պատիւ կը հանդիպի։

83.— Եթէ աչ ձեռաց վերի թաթը խաղայ՝ կը նախանձին և կը դինուին իրեն հանդէպ, բայց չպիտի կրնան յաղթել։

84.— Եթէ աչ ուսը խաղայ, առողջութեան նշան է, նոր հագուստ կը հագնի։ Եթէ ձախը՝ իրեղէններ կ'իյնայ իրեն և կը խնդայ, Աստուծմէ պարգեւ կ'առնէ, մեծերէն կը յարգուի։

85.— Եթէ աչ ծիծը խաղայ, օրավարձը կ'առնէ և կ'ուրախանայ. ազգականները կը զօրանան, սիրելիները և ծանօթները կը շատնան։ Եթէ ձախը՝ հեռաւոր մարդ կը տեսնէ, ընտանիքէն կը խնդայ, մեծութեան կը հասնի կամ վէճի կը հանդիպի. ակամայ կը վիրաւորուի և կը դժուարի։

86.— Եթէ աչ կողմի կուրծքը խաղայ, բարիքի կը հանդիպի. չարիքէ և հոգերէ կ'ազատի, կերպասի կը տիրանայ և մեծութեան կը հասնի, կամ անարժան գործ կը գործէ և կը զղջայ։ Եթէ ձախը՝ բոլորէն կը սիրուի, չարիքը որ կուգայ՝ Աստուած կը վերցնէ իր վրայէն։

87.— Եթէ ամէն կուրծքը խաղայ՝ ով որ կը սիրէ կ'ողջագուրէ, ուրախութեան սկիզբն է, իր անձին ուրախութիւն է, բարիքի աւետիս է, կը հարստանայ և սէր կը գտնէ։

88.— Եթէ սրտին աջ կողմը խաղայ՝ սիրելիները կը շատնան և կ'ուրախանայ։ Եթէ ձախը՝ տրտմութեան կը հասնի։

89.— Եթէ սիրտը խաղայ՝ սրտնեղութիւն և հոգ է, իր մարդը կը մեռնի, յանկարծ սրտնեղութեան և տրտմութեան կը հանդիպի։

90.— Եթէ աջ թեւի ներքի կողմը խաղայ՝ օտար երիր կ'երթայ։ Եթէ ձախը՝ կը հիւանդանայ և շուտ կ'առողջանայ։

91.— Եթէ աջ կողմի կողը խաղայ՝ շահու կը հանդիպի, տեղը կը փոխէ և ճամբայ կ'երթայ, քիչ մը կը տկարանայ բայց ոտքի վրայ կ'ելլէ։ Եթէ ձախը՝ դաւակ մը կը ծնի կամ նոյնպէս ճամբայ կ'երթայ և տեղաց տեղ կը պտտի։

92.— Եթէ աջ ոտն խաղայ՝ կին կ'առնէ և ուրախութեամբ դաւակ կ'ունենայ։ Եթէ ձախը՝ բարի դաւակ կ'ունենայ և մեծութիւն կը գտնէ։

93.— Եթէ ոտն խաղայ՝ իրեն համար բարի է։

94.— Եթէ աջ մատնը խաղայ, կը հարստանայ։ Եթէ ձախը՝ մեռնոյնն է։

95.— Եթէ երկու մատնները խաղան՝ հարստութիւն է իրեն համար։

96.— Եթէ աջ կուշտը խաղայ՝ մեծութիւն կը գտնէ, կին կ'առնէ. բարձրութիւն և խնդութիւն է, ինչ որ խնդրէ Աստուծմէ՝ կը կատարուի. եթէ ձախը՝ նոյնպէս կին կ'առնէ և ուրախութեամբ դաւակ կ'ունենայ. հոգերէ կ'ազատի, կը սրտհեշտի և կը մեծնայ։

97.— Եթէ փորուն աջ կողմը խաղայ՝ կը մեծնայ և կը հարստանայ. եթէ ձախը՝ շատ կուլայ և կը տրտմի կամ դաւակ կ'ըլլայ իրեն։

98.— Եթէ ամէն փորը խաղայ՝ ինչ որ ուզէ Աստուծմէ Աստուած կուտայ իրեն։

99.— Եթէ փորը խաղայ, բարիք և մեծութիւն է։

100.— Եթէ պորտը խաղայ՝ իրեն շահ կուգայ, իր բարիքը կը շատնայ, հոգերէ կ'ազատի, կին կ'առնէ կամ կնոջմէ կը խնդայ։

101.— Եթէ աջ կողմի փոքրափորը խաղայ՝ կը հարստանայ. եթէ ձախը՝ կը հարստանայ Աստուծմէ, և աղքատութենէ կ'ազատի։

102.— Եթէ փոքրափորը ամէնը խաղայ՝ բարի խօսք կը լսէ և կը խնդայ, իր ինչքերը կը շատնան, բարի կնոջ կը հանդիպի եւ կը հարստանայ։

103.— Եթէ երանքը խաղայ՝ իշխաններուն մեծ բարիք կ'ըլլայ. իր խնդրածը Աստուած կուտայ. ինչ որ ուզէ կ'առնէ, իր խորհուրդը կը կատարի և ուրախութեամբ մանչ զաւակ մը կ'ունենայ։

104.— Եթէ աջ կողմի երանքը խաղայ՝ կը հարստանայ. եթէ ձախը՝ կը մեծնայ եւ կ'ուրախանայ։

105.— Եթէ ճաճուկ մարմինը խաղայ՝ իր ազգակիցներէն բարիք կը գտնէ. խնդութիւն և ուրախութիւն է. եթէ անոր ծայրը կամ տակը խաղայ՝ կը մեծնայ կամ փնաս կուգայ իրեն։

106.— Եթէ աջ կոկովը խաղայ՝ կը հարստանայ, կը ծերանայ եւ իր կամքը կը կատարի. եթէ ձախը՝ ուրիշ կին կը մօտենայ եւ իրեն շնորհաւոր որդի մը կ'ըլլայ. խիստ կը սրտհեշտի, կը յարգուի եւ կը գովուի. ուրախութեամբ իր տունը կ'երթայ կամ հարսանիքի կը հանդիպի։

107.— Եթէ երկու կոկովը միատեղ խաղան՝ շնորհաւոր որդի կ'ըլլայ։

108.— Եթէ աջ կոկովի տակը խաղայ՝ չնպատակած տեղէն դրամ կ'առնէ կամ իրեն գաղտնիքները կը յայտնուին. ձախը՝ ով որ ուզէ կ'առնէ, կ'ուրախանայ, կամ սրտնեղանք է։

109.— Եթէ ցայլքը խաղայ՝ կնոջ հետ կը ննջէ և իր բարիքը կը յիշուի, իր ցանկութեան կը հասնի, նոյնպէս իրեղէններ որ ուզէ կ'առնէ, իր խորհուրդը կը կատարի և իր գործը կը յաջողի։

110.— Եթէ աջ ցայլքը խաղայ՝ իր գործէն կը հարստանայ. եթէ ձախը՝ մեղաց մէջ կ'իյնայ, չարիքէ պատրաստ կեցիր։

111.— Եթէ նստոյ տեղը խաղայ՝ դէպի կոկովը, չարիք է, տուգանքի կը հանդիպի, իր իրեղէնները կը ծախուին և կը վնասուի, իրեն սուգ կը հանդիպի, անկասկած կը տրտմի։

112.— Եթէ աջ բումքը խաղայ՝ մարդոցմէ կը մատնուի՝ դարձեալ Աստուած կը յաջողցնէ և կ'ազատի ու իր թշնամիները կը մեռնին. ի զուր տեղը իրմէն ուժով կը խօսին և անպատշաճ խօսքեր կ'ըսեն։ Եթէ ձախը՝ իրեն մասին սուտ բաներ կ'ըսեն. մարդոցմէ բարիք կ'առնէ և չի շահիր. մեղաց մէջ կ'իյնայ և կը սրտնեղի, բայց շուտով կ'ուրախանայ։

113.— Եթէ երկու բումքի տակը խաղայ՝ չսպասած տեղէն իրեղէններ կ'իյնայ իրեն, յանկարծ կը շահի, անշնորհք անձէ մը բարիք կ'առնէ։

114.— Եթէ աջ անդամը խաղայ՝ բարիք և խնդութիւն է, կը ցնծայ և կը սրտհեշտի, կամ իր վրայ գաղտնի բաներ կը խօսին. քիչ մը կը վախնայ իր անձէն, տրտմութիւն և վնաս է. եթէ ձախը՝ բարի է. Աստուծով ուրախ կ'ըլլայ, նոր հաղուստ կը հագնի և կը խնդայ, կամ զինքը կը փորձեն, մէկը իրեն հետ կը թշնամանայ և իր գործէն քիչ մը վնասի կը հանդիպի։

115.— Եթէ աջ անդամի դրսի կողմը խաղայ՝ զօրութիւն է, կը մեծնայ և խիստ կը բարձրանայ. եթէ ձախը՝ շատ ապրանքի կը տիրանայ և կը զօրանայ։

116.— Եթէ աջ անդամի ներսը խաղայ, սրտնեղութեան կը հասնի. եթէ ձախը՝ սրտհեշտանք է։

117.— Եթէ աջ ծունկը խաղայ՝ իշխանի կը մօտենայ. մեծութիւն և պատիւ է կամ վէճի և դատի մէջ կ'իյնայ. եթէ ձախը՝ իշխանի դէմ կ'երթայ, պատիւը կը բարձրանայ, իր գործը կը կատարէ իշխանը, կամ գէշ խօսք կը լսէ։

118.— Եթէ աջ ծունկի դրսի կողմը խաղայ, գինքը կը մատնեն և սիրով կ'ազատի. եթէ ձախը՝ շուտով կ'ազատի։

119.— Եթէ աջ ծունկի ներսի կողմը խաղայ, ալեւոր կը լսէ. եթէ ձախը՝ դատաստանէ կ'ուրախանայ և կը խնդայ։

120.— Եթէ աջ սրունքը խաղայ՝ հարստութիւն է, մեծերէն կը գովուի. եթէ ձախը՝ հարստութիւն է։

121.— Եթէ աջ ամէն սրունքը խաղայ՝ վախ մը որ կայ իր վրայ, կ'անցնի. եթէ ձախը՝ ամէն նեղութենէ կ'ազատի։

122.— Եթէ աջ ոլոքը (սրունքին բարակցած տեղը) խաղայ՝ բարիքի նշան է, կը վիճի և բարիք կը գտնէ, կը ցանկայ և կը խնդայ. իր մերձաւորներէն մէկը կը մեռնի. իշխանի կը մօտենայ և պատիւ կ'առնէ ու կը մեծնայ. եթէ ձախը՝ թշնամիներուն կը յաղթէ, շատ բարիք իրեն շնորհաւոր կ'ըլլայ, կամ սուգ ու տրտմութիւն է, դարձեալ բարիք կը գտնէ, պէտք է Աստուծոյ փառք տայ, պարգեւ և սէր կ'առնէ մեծ մարդոցմէ ու կը հարստանայ։

123.— Եթէ աջ ներսի ոլոքը խաղայ՝ բարի խօսք կը լսէ ու կ'ուրախանայ. եթէ ձախը՝ ճամբայ կ'երթայ։

124.— Եթէ աջ կոնը (աղրգ) խաղայ, ոգեգի և լալու կը հանդիպի, իր սիրելի մարդը կը մեռնի և կը տրտմի. եթէ ձախը՝ իր վրայ ուրախութեան և ցնծութեան խօսքեր կ'ելլէ, կ'ուրախանայ իր սիրելիներէն, իշխաններէն բարիք կը գտնէ և ուրախութեան կը հասնի։

125.— Եթէ աջ կոնի դրսի կողմը խաղայ, մեռելի հետ կ'երթայ. եթէ ձախը՝ սրտհեշտանք է։

126.— Եթէ աջ կոնի ներսի կողմը խաղայ, մեծ մարդոցմէ կը յարգուի, բարիք և սրտհեշտութիւն է. եթէ ձախը՝ շատ ուրախութիւն է։

127.— Եթէ աչ ոտքի թաթը խաղայ, սրտհեշտանք և շատ ուրախութիւն է, ուրիշի վրայ ծանրութիւն կ'ըլլայ, իր գործը Աստուծմով կը հաստատուի և գործը Աստուծով գնալ կը նշանակէ, ճամբայ կ'երթայ, կ'աշխատի իր ապրանքներուն համար և ոիրով կը դառնայ. եթէ ձախը՝ շահ և բարի է, ապրանքը կը շատնայ, իշխանի կը մօտենայ և կը փառաւորուի, խնդութեան և բարձրութեան ճամբայ է, արքունի պալատը կը մտնայ, շատ կը խնդայ և կը հարստանայ։

128.— Եթէ աչ կրունկի կախ ջիլը (սինիր) խաղայ, օտար խօսքեր կը լսէ. եթէ ձախը՝ կը յարգուի և կը սրտհեշտի։

129.— Եթէ աչ ոտքի ներբանը խաղայ, ճամբայ կ'երթայ, վերք կ'ըլլայ իր վրայ, իւր ազգակիցներէն, ծանօթներէն կը վոնտուի, կը տրտմի, վախէն բաներու կը հանդիպի բայց յետոյ բարիք կ'ըլլայ իրեն, տրտմութենէ կ'ազատի, իրեղէններ կը գտնէ և կը շահի, կը հարստանայ և կը խընդայ. եթէ ձախը՝ իշխաններուն ձեռքէն մեծութիւն, պատիւ և իշխանութիւն կ'առնէ. իր գործը կը յաջողի, պալատ կը կը մտնէ, կը մեծնայ և կը հարստանայ։

130.— Եթէ աչ ոտից ամէն թաթը խաղայ, կը տրտմի իր ազգակիցներէն և կը հեռանայ անոնցմէ, նոյնպէս իր ծանօթներէն իր յարաբերութիւնը կը թեթուրցնէ. կամ ճամբայ կ'երթայ, կը շահի ապրանքէ և իշխանութիւն կը գտնէ. եթէ ձախը՝ ազգականներէն կը հեռանայ և կը տրտմի. քիչ մը կը հիւանդանայ բայց կ'ապրի. ճամբայ կ'երթայ, չսպասած տեղէն պատիւ և շնորհ կ'առնէ, կը մեծնայ ու կը բարձրանայ։

131.— Եթէ աչ ոտքի տակը կամ վերեւը խաղայ, ճամբայ կ'երթայ և կ'արդիւնաւորի, մեծութեան կը հասնի և յանկարծ կը սրտհեշտի, կը խնդայ և կը հարստանայ. եթէ ձախը՝ յանկարծ բարիք կ'ըլլայ իրեն, իշխաններէն օրավարձք կ'առնէ, ճամբան կը խնդայ. սէր և բարձրութիւն է։

132.— Եթէ ոտքերու մէջը խաղայ, մէկու մը հետ կը վիճի և կը ծեծուի։

133.— Եթէ աչ կրունկին վերեւը խաղայ, երկրէն կը հեռանայ և խօսք կը լսէ. եթէ ձախը՝ չարիքի մէջ կ'իյնայ։

134.— Եթէ աչ կրունկը խաղայ, մեծութիւն է, բայց մեռելի հետ կ'երթայ, զինքը կը մատնեն և սիրով կ'ազատի. եթէ ձախը՝ բաղդաւորութիւն և բարիք է, կ'ուրախանայ և կը խնդայ։

135.— Եթէ աչ ոտքը ամէնը խաղայ, ճամբայ կ'երթայ. եթէ ձախը՝ չսպասած տեղէն բարիք կուգայ իրեն։

136.— Եթէ աչ ոտքի բոյթը (բթամատ) խաղայ, տրտմութիւնը կ'անցնի իրմէն, հեռաւորը կուգայ, մարդոցմէ կը շահի և կը հարստանայ. եթէ ձախը՝ իր անձին առողջութիւն է, հեռաւորը կը տեսնէ, սիրելիները կը շատնան, կը հարստանայ, կը խնդայ և ամէնքը կը սիրեն զինքը կամ ցաւերու. կը հանդիպի և խիստ կը հիւանդանայ։

137.— Եթէ աչ ոտքի ցուցամատը խաղայ, կը հիւանդանայ մինչեւ մահ, կը տրտմի և կը վախէ բայց յետոյ բարիք կ'ըլլայ իրեն, փորձութեան մէջ կ'իյնայ և կ'ազատի, իրմէ դացող մարդը կուգայ. եթէ ձախը՝ հարստութեան և պատիւ, մեծութեան և խնդութեան կը հասնի, կամ ոտքէն կը վիրաւորուի և կը տրտմի, կը վախէ շփոթութենէ որ իրեն չի պատահիր։

138.— Եթէ աչ ոտքի միջնամատը խաղայ, սրտնեղութիւն կուգայ, վշտի և տրտմութեան մէջ կ'իյնայ, մեծ փոթորիկ կուգայ իր վրայ, մէկու մը հետ կը կռուի և կը ծեծուի ու չարիք կ'ըլլայ։ Եթէ ձախը՝ վիճաբանութիւն է, մեծ աղաղակի մէջ կ'իյնայ, չար լուր կ'առնէ, կռիւ կը շատնայ, մեծ վնասի մէջ կ'իյնայ, ազգականի հետ կը վիճի կամ մտքի ուրախութիւն է, մարդոց հետ կը խօսակցի, շատ բարիքի կը հանդիպի և կ'ուրախանայ։

139.— Եթէ աչ ոտքի մատնեմատը խաղայ, կը գտնէ

ինչ որ ուզէ, պատիւ և սէր. կամ կը վիճի ծանօթի հետ և թշնամիները կը շատնան. եթէ ձախը՝ իր ազգակիցներէն կը հեռանայ, իր տան որդիներէն կը բաժնուի, կ'երթայ ուրիշ տեղ և կը յաջողի, շատ կը հանգստանայ և կը լաւանայ, կիները զինքը կը բամբասեն։

140.— Եթէ աջ ոտքի ճկոյթը խաղայ՝ մեծութիւն և հարստութիւն Աստուած կոչտայ իրեն, ինչ որ ուզէ կ'ըլլայ, իշխաններէն շնորհք կ'առնէ, ապրանքի և բարիքի կը հանդիպի կամ ինչքեր կը կորսնցնէ։ Եթէ ձախը՝ իշխանէ կը սրտմտի, աղմուկ սիրելիներէն, վէրք իշխաններէն, անպատշաճ խօսք կը լսէ, իր ազգականները կը յաղթեն կամ առուտուրէն կը շահի, գանձ, առողջութիւն և շատ բարիք կը գտնէ։

141.— Եթէ աջ ոտքի ամէն մատները խաղան, ոտքով ճամբայ կ'երթայ, բարիք կ'ըլլայ իրեն և կը խնդայ, ուրախութիւն և մեծ սէր կը գտնէ, պարգեւ կ'առնէ Աստուծմէ, հեռու եղող օտար մարդու հետ կը ծանօթանայ, մարդոցմէ կը յարգուի և բարիքի կը հանդիպի. եթէ ձախը՝ խիստ գաստումն է, նեղութիւն, վէրք և ցաւ կ'ըլլայ, խօսքերէ կը արտնեղի, կ'աղքատանայ և դարձեալ կը փորձէ։

142.— Եթէ տափողը խաղայ, կը խնդայ, ձի կը հեծնէ և բարի ճամբայ կ'երթայ։

Գիտողին ամենայն գաղտնեաց եւ յայտնողին զպարագայս՝ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, փառք յաւիտեանս ամէն։

ՎԻՃԱԿԱՐԱՆ

Ա	Բ	Ե	Վ	Թ	Կ
Լ	Փ	Ի	Զ	Ը	Խ
Քհ	Ց	Է	Ր	Ճ	Դ
Տ	Ի	Ռ	Ղ	Ժ	Ց
Գ	Ծ	Ջ	Ջ	Շ	Ո
Մ	Ձ	Ն	Պ	Ս	Հ

ՎԻՃԱԿԱՑՈՑՑ ՏԱՌԵՐ

Որոնց վրայ այէդ գոցելով մաւդ պիտի դնես

Այդն գործողութիւնը պէտք է ընել շաբաթ օրեր՝ արեւմա-
ւէն վերջ, մինչեւ կիրակի երեկոյ արեւմար. նայիլ մէկ անգամ:

Ա. Սիրտդ անարատ է և հոգիդ մաքուր, արտակարգ ձախորդութիւններ քեզ վշտացուցին, բայց դուն միշտ մնացիր սրտովդ բարի և ոչ ոքի չվնասեցիր։ Հեռու չէ մխիթարութեան ժամանակը։ Քաջ և վստահ եղիր և շուտով ամէն տրտմութիւն մոռնալով երջանիկ պիտի ըլլաս։

Բ. Բաղդաւոր և բարի ժամու ծնունդ ես. թէեւ տխրութեան օրեր պիտի ունենաս, բայց անփոյթ եղիր և հանդարտ, ամէն ինչ կ'անցնի և դուն կը վայելես շատ բարիքներ։

Գ. Գոհ եղիր, որովհետեւ չար ժամերը անցուցիր, ուր կրնայիր իյնալ խորխորատի մէջ։ Լսեցիր վատերու չար խորհուրդները, բայց հաւատքին զօրութեամբը խուսափեցար փորձանքներէ։ Զգուշացիր չար խորհուրդներէ։

Դ. Դրախտի դուռը բացուեցաւ քեզի, բայց դուն չդիմացար։ Ինկար բաղում սխալներու մէջ, վնասեցիր, առանց սակայն ծանր վտանգի մը ենթարկուելու, որովհետեւ շուտ սթափեցար։ Արդ, միշտ արթուն կեցիր որպէսզի բաղդ և բարի ապագայ ունենաս։

Ե. Երջանիկ և զուարթ եղիր, որովհետեւ չարիքը հեռացաւ քեզմէ և բարիքը մօտեցաւ։ Բոլոր զրկանքները որ կրեցիր, վերջացան։ Զրկուեցար ծնողական ժառանգէ և բարեկամներու օգնութենէ, առանց սակայն յուսահատելու։ Ակէ վերջ պիտի ունենաս բաղում վաստակ և շահ. պիտի ստանաս պատիւ և համբաւ, և պիտի ապրիս երջանիկ մինչ խոր ծերութիւն։

Զ. Դուն ընտանեաց զարդն ես և զուարթութիւն բարեկամաց, բայց սրտիդ պարզութիւնը և ուղղամտութիւնդ միշտ օգտակար չեն ըլլար քեզի և յաճախ կը վնասեն։ Ասվ

վերջ քիչ մըն ալ խորախորհուրդ եղիր և ոչ բոլորովին սրտաբաց, որով միայն յաջողութեան և երջանկութեան կը հասնիս։

Ի Ողորմելի՛ արարած, ինչո՞ւ կը տառապիս և կը տրտմիս, երբ դու ինքդ ես որ դժբաղդութիւններդ կ'ստեղծես։ Ծոյլ ես և չես աշխատիր. բարիին ճամբան թողելով չարին կը հետեւիս, կը ստես, կը խաբես, կը զրպարտես և յետոյ կ'ողբաս առանց զղջումի։ Զար ճամբաներէ հեռացիր, որպէսզի հանգստութիւն գտնես։

Ը Զրկուեցար հայրենի ժառանգութենէ, ընտանիքէդ օտարացար. բարեկամներուդ աւրուեցար, ճակատագիրը այսպէս տնօրինած էր քեզի համար։ Սակայն այժմ տխուր ճակատագիրը իր վախճանին մօտեցաւ և դուն շատ մօտ կը գտնուիս մեծ բաղդի, ճոխութեան և փառքի։ Քաջ եղիր և ուրախ։

Թ Թեւաւոր թռչունի նման թափառեցար՝ առանց հեռատեսութեան և հասուն խորհուրդներու։ Թափառեցար անհամատատ ճիւղերու վրայ, մտար անելանելի ճամբաներու մէջ, ամէն կերպով եղար միամիտ և ինամեցիր։ Արդ, բաւ համբերելով գժբաղդ մնցեալդ, ինքզինքիդ եկուր և հեռատես խորհրդով աշխատէ և ամէն գործ ու ձեռնարկ կը յաջողի քեզ։

Ժ Կեանքիդ օրերը պարապ անցուցիր, ցաւալի է, բայց ճակատագիրդ այդպէս էր, որուն հպատակեցար անտրտունջ։ Սակայն տխուր օրերդ անցնելով կուգան երջանիկ և բարի օրեր, երբ պիտի կրնաս անցեալդ յիշելով աշխատիլ յոյսով և հաւատքով, որովհետև կը վերջանան սև օրերդ և տխուր ճակատագիրդ։

Ի Իսկապէս պէտք էր մօտեցար հասնելու, երկմտեցար, առանց յոյսահատելու, որովհետև հաւատքդ զօրաւոր էր։ Վըստահ եղիր որ այդ հաւատքը քեզի պիտի առաջնորդէ դէպի

մեծ յաջողութեան և լաւագոյն ապագայի։ Քու նշանաբանդ — հաւատք և համբերութիւն — հաստատ պահէ, անոնք քու բաղդիդ և յաջողութեանդ կորիզն են։

Լ Մտիկ ըրէ։ Ամէն բան փոփոխական է և լաւ վիճակդ զոր ունիս այսօր, ինայուն չէ. կուգան դժուար և թշուառ օրեր՝ ներկայ կացութիւնդ փոխակերպելու համար։ Ուստի, ինչպէս մրջիւնը ձմրան համար կը պատրաստուի, արթնամտութեամբ պաշար հաւաքէ, շտեմարանէ և պահէ, որպէսզի կարօտ չըլլաս մինչև այն ատեն, երբ բաղդիդ անիւը դարձեալ դէպի բարին կը դառնայ։

Ի Կը կարծես թէ շատ խելացի ես։ Կը սխալիս։ Թ'ող անպէտ խորհուրդներդ։ Դուն կը նմանիս այն անմիտ քիմիագէտին, որ պղինձը ոսկիի վերածելու փորձերուն մէջ ոսկին է որ պղինձի կը վերածէ։ Բարին հետեւէ, օրինաւոր և մաքուր ճամբէն քալէ, որպէսզի չարէն ազատելով, յաջողութիւն և բարիք վայելես։

Ծ Մրծեւոնակի նման ճիւղէ ճիւղ կը թռչկոտիս առանց դադարի. չունիս հաստատուն, վճռական և ուղիղ գործ. փայլուն յոյսն ու խոստումները չեն կարող քեզի պարգեւել ո'չ լաւ ներկայ և ո'չ ալ բարի ապագայ։ Արդ, լիշելով անցեալդ, ցանկութիւններդ չափաւորէ, հաստատամտութեամբ գործէ և կը յաջողիս։

Կ Կռունկի պէս կ'ողբաս անցեալ փառքդ և դիրքդ զոր թշնամիներդ կողոպտեցին, կարօտը բրդին քեզի ամէն բանի, և դուն, տկար արարած, համակերպեցար ճակատագրիդ։ Բայց արդ, եկած է ժամանակը, երբ պիտի կրնաս բոլոր կորուստներդ կրկին ստանալ, հարստանալու և ճոխանալու։ Սակայն մի՛ մոռնար որ քեզի պէս շատ մը [illegible] խեղճեր կան որոնց պարտաւոր ես օգնել։ Վիճակդ լաւ է։

Հ Երբեմն հասարակաց սեղանէն կերակրուեցար, բայց երբ վիճակդ բարուոքեցաւ, հպարտ և ապերախտ եղար։ Բայց գիտցիր որ նորէն կարօտ և թշուառ պիտի ըլլաս, և եթէ կ'ուզես որ չքաւորութեան չի մատնուիս կրկին՝ աճապարէ երախտահատոյց և բարերար ըլլալ զոնէ՝ հացի կարօտ մերձաւորներուդ, թէ ոչ՝ փորձանքը շատ հեռու չէ քեզմէ։ Ապագայ լաւ չի թուիր, եթէ ընթացքդ չի փոխես։

Զ Շուտով ցնծութեան ձայնը պիտի լսես. յուսահատ վիճակիդ փոխարէն՝ վերահաս բարիք կայ քեզի համար։ Բաղդաւորութեանդ օրը մօտ է։ Սրտիդ մաքրութիւնը քեզի արժանի ըրաւ այդ մեծ բաղդին։ Արդ, փառք տալով Աստուծոյ, ապրէ զոհ և երջանիկ։ Քու բարութիւնդ քեզ վարձատրեց։

Ղ Ղաղարոս յարութենէ ետք չի խնդաց, իսկ դուն ո՛վ անդգաստ, այնչափ նեղութենէ ետք չի զգրեցար խընդալէ և միշտ չապաշխարած մնացիր։ Արդ, ժամակը եկած է քեզի սթափելու և մտածելու ապագայ կեանքիդ վրայ, որ այնչափ մթին է և տարակուսելի. փութա՝ ուղղելու վարքը ու բարքդ, եթէ ոչ՝ յետոյ չարաչար պիտի զղջաս։

Ճ Ճարտար լեզուդ և հանճարեղ միտքդ չկրցան քեզ օգնել, վասնզի ճշմարտութենէ հեռու, խոտոր ճամբու մէջ կը գտնուէիր։ Երբեմն կ'սթափիս թէպէտ, բայց դժբաղդաբար վատ ընկերներէ շրջապատուած ես։ Մի՝ հետեւիր անոնց, ուղիղ ճամբան մտիր և շուտով կը գտնես անձիդ փրկութիւնը և կ'ըլլաս երջանիկ ու անդորր։

Մ Մեծապատիւ մահը վատ է, և դուն միշտ մահը կը հալածես և ամէն բան միտքէ հանած, կեանքիդ վերջալոյսին կը դիմես յիմար գործերով, որոնք կեանքը կրճատելու կը ծառայեն։ Մոռացած խորհուրդդ շատ վտանգաւոր է, զանիկա շուտով հեռացուր քեզմէ և արդարութիւնը առաջնորդ

ընտրելով գործէ մաքուր սրտով ու խղճով եթէ չես ուզեր սաստկացնել դժբաղդութիւնդ, որ մահուան չափ մեծ պիտի ըլլայ։

Ցոյսը՝ յուսալով չիրականանար, եթէ գործդ չօժանդակէ անոր։ Բարի այլ միամիտ եռ և միայն կը յուսաս։ «Հաւատք առանց գործի մեռեալ է» կ'ըսէ Ս. Գիրքը։ Այսպէս, յոյսը առանց ջանքի անօգուտ է։ Թո՛ղ ծուլութիւնդ ու անհոգութիւնդ, և շուտով պիտի բախտաւորուիս, վասնզի աստղդ բարեգուշակ է։

Ն նաւու նման տատանեցար և քու կեղծ բարեկամներդ քեզի մինակ թողուցին։ Տակաւին քաշելիք ունիս, բայց ատոնք բոլորը պիտի անցնին և դուն որպէս կրակի մէջ փորձուած ոսկի, պիտի կտուիս և մաքրուիս ու հանիս խաղաղութեան նաւահանգիստը և ուրախ պիտի ըլլաս։

Շ նուշան էիր շնորհալի ու թառամեցար, բայց առաքինութեան արմատն ունէիր, կրկին ճիւղաւորուելով զօրացար, և ժամանակը մօտ է երբ բարերար ձեռքով մը զօրացած, առաւել շնորհազարդ և երջանիկ, պիտի բարգաւաճիս ու պիտի ըլլաս փառք և պատիւ անձիդ ու ներդաստանիդ։

Ո ՈրոգայԹ սրսացողին չկրցաւ ընկճել քեզ, վասնզի առաքինութեամբ կարողացար ոտնակոխ ընել զայն, բայց յաւալի է որ յաջողութենէդ շլացած հպարտացար։ Բաւական տուժեցիր և դեռ պիտի տուժես, եթէ երբէք յարատեւես հպարտութեան և անձնապաստանութեան մէջ։ Սրդ, յիշելով մեծ խրատը թէ « յասենայն ժամ արթուն կացէք » զգոյշ եղիր, յուսայ առ Տէր, որպէսզի ամէն չարիք անհետանայ քեզմէ։

Զ Զարիք չկայ առանց պատճառի։ Դուն մոռնալու գործած չարիքներդ, կրած չարիքդ դժբաղդութեանդ կը

վերագրես, ինչ որ պարզապէս հեսեւանք են անձնական արարքներուդ։ Եթէ կ'ուզես չարիքէ խոյս տալ, փոխէ՝ ընթացքդ և դարձիր դէպի բարին, որով պիտի գտնես յաջողութիւն և ապրիս երջանկօրէն։

Պ Շահամոլութիւնը և կիները առ հասարակ պատերազմի պատճառ նկատուած են։ Հոս տեղը չէ այս հարցով զբաղիլ, բայց դուն առաջնորդուելով այս երկուքէն, այսինքն շահամոլութենէ և կիներէ՝ բաւական չարիք կրեցիր և հիմայ թէպէտ զգաստացած կը թուիս, բայց և այնպէս չհեռացար առջի ճամբէդ։ Ուստի, եթէ կ'ուզես որ վերջդ լաւ ըլլայ, բոլորովին հրաժարէ յիշեալ մոլութիւններէդ։

Ջ Ջանքերդ չահերու նման վատեցան՝ լուսաւորելով ուրիշները։ Ջափազանց անձնազոհ եղար, առանց մտածելու անձնական շահդ։ Ապերախտութիւնը պաշարեց քեզի։ Սակայն մի յուսահատիր, բաժակ մը չուրն իսկ իր վարձքն ունի։ Շուտով պիտի գտնաս մխիթարիչ ձեռք մը, որ ամէն կերպով պիտի փոխարինէ քու բարեգործութիւններդ և դուն դոհ պիտի ըլլաս։

Ո Մանուկ հասակէդ սկսեալ կեանքդ ուսմ ու պատերազմ եղաւ, բայց դեռ լաղթական չելար այդ պայքարէն, որովհետեւ շատ անգամ յուսահատեցար։ Սակայն վստահ եղիր որ շատ մօտ է լաղթական ապագադ, որուն զբաղդը պիտի վայելես, հաւատարմութեամբ բառաջ վարելով ներկայ անվեհեր ընթացքդ։ Վիճակդ լաւ է։

Ս Սուրբ սիրտ և բարի գործ ընտրեցիր քեզի սկզբունք, բա... շուրջդ հակառակը դատելով վշտացար։ Սխալ է դատաստանդ, պարտիս բարի գործել և չի խոովիլ բնաւ, վասնզի աւետարանը ձայնը տիտի լսես հեռաւոր տեղէ և քիչ ատենէն, պէտք համբերես այս ճշմարտութեան, վայելելով արդարդ սաքրութեան և բարի գործերուդ պտուղները։

Վա՜ղ, միշտ վեր կը նային աչքերդ, վերեր կը սաւառնի և միտքդ Մոռցար երբեմնի խոնարհամտութիւնդ և խաղաղ կեանքդ. յափշտակուեցար փայլուն պատանարէ մը որ ասուպի նման անցաւ Պիտի գան դեռ նեղ օրեր, որոնք երկար պիտի տեւեն, այնքան երկար՝ որքան միտքդ բարձրէն կը թռչկոտի։ Ուրեմն, վիճակիդ փոփոխութիւնը քու ձեռքդ է։ Մառաջուններդ չափաւորէ և կը յաջողիս։

Տառուած քեզի տուած էր երջանիկ ապրելու միջոցները, բայց երկնային այս պարգեւը չգնահատեցիր և միշտ ստորին կիրքերու ետեւէ ինկար։ Բնական էր որ յետայ զղջայիր. և զղջացիր, բայց կորուստներդ չկրցար վերստանալ։ Արդ, հաշիւ տուր անձիդ և զգաստացիր. հեռու կեցիր վատ կիրքերէ, եթէ կ'ուզես որ կորսնցուցած բախտիդ վերըստին տիրանաս։

Ցայրկեան մը մի կորսնցներ, վասնզի ա՛լ չափազանց եղաւ ծուլութեամբ կորսնցուցած ժամանակդ և դրամդ։ Ճիշդ ատենն է գործելու. ինչ որ միտքդ դրած ես իսկոյն սկսէ գործադրել, վստահ ըլլալով որ պիտի կատարելապէս յաջողիս. քանի դեռ ուշ չէ։ Վիճակդ անմիջական է։

Ցանկացար և ստացար ան՝ որուն կը փափաքէիր. և յանկարծ սէրդ սառեցաւ. երջանկութիւն հատարածդ արժէ քեզի վիշտ կը պատճառէ։ Հնտրութեանդ մէջ չ
չար սխալեցար։ Թէև պատճառ մը կար քեզ այդ ե
թեան մղող, բայց դուն ազատ էիր և կրնայիր ը
սակայն թոյլ դտնուեցար . . . Արդ, փրկութեան
չկայ, եթէ ոչ ամէն բան թողուլ և ազատ ըլլ։

Ի հիւանդութեամբ մարմինդ հիւծեցաւ.
տարիմ եղար պարտականութեանդ

Ձայնը լսեցիր և ոչ օրինաց արդարութիւնը։ Քեզ զբաղում ընտրեցիր չար խօսքն ու գործը, որոնք քեզ հասցուցին դըժբաղդութեանց դուռը ուրկէ ազատելու համար պարտիս լեզուդ և գործդ փոխել ի բարին, որով միայն կարելի է ապասել բարի օրեր և մխիթարական վիճակ։

Փառք տուր Աստուծոյ որ փառաւոր աստղի տակ ծնար, եղար առոյգ, քաջառողջ և խելացի և ուշիմ կրթութեամբ։ Բայց աւա՜ղ, մարդկային վիճակը անփոփոխ կարծելով ապագայիդ մասին չխորհեցար, շահեցար ու շռայլեցիր։ Ուրեմն փութայ սխալներդ դարմանել և շուտով պիտի վերըստանաս կորսնցուցած բաղդաւորութիւնդ. վիճակդ լուսալից է։

Քեզ վիճակեցաւ «Ք» վերջին տառը՝ իբր նշան քաւութեան բոլոր գործերուդ, որոնց պատճառաւ կրեցիր շատ չարիք։ Սակայն ուրախ եղիր որ սխալներդ ճանչնալու կարողութիւնն ունեցար, որով դժուարութիւն չպիտի քաշես դանոնք ուղղելու ինչ որ անհրաժեշտ է։ Քաշածդ բաւական եղաւ. քաւութիւնը կատարեալ է և շատ վերահաս է ուրախութիւն և բախտաւորութիւն, զորս պիտի վայելես մինչեւ կենդանի վերջը։

Բրօֆ. ՄԵՍՐՈՊ Գ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

(ՍՈՆԺԱՆԵՍՈՒՆ ՀԱԿԻՐՃ ԱՌԱՆՑ)

Մեռած է 1880-ին, Խարբերդ հրատարակուած է անգլերէն երիտասարդ Ֆէյեր տ. Ամերիկայի Անդ. եւ Ազգերի Քրիստոս Հանգանակութեան։

Գրաքննուած է իբր Առաջ. Հասարակ. Հիմարէն. Հասարակ. Տիրապետութիւն, Մեկիրեն (Մ. Ազիզ), Պարտիզա, Զմիւռնոյ եւ Խարբերդի Գնդ. Վարժ. մէջ։ Ի. Ա. ազգ. Դպրոցներ՝ Գէնտասիրիէ անուանեալ Ցանն գրամ Հիմարէն եղած է նաեւ Ազգասէրներու Դպրոցներ։ Ազգ. Դպրոց։ Վարժ. ին, ինչպէս Բոլոր Դասերի Հայ. Աստուածաբանութիւն մէջ Հայ. Աղջամաքրուած Ազգասիրութիւն։ Ամերիկեան Միսիոնարներ։

Իր գործերն են՝—

1— ԱՐԴԻ ՀԱՅ ՄԱՅՐԻՆ. ՀՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ԵՒ ՀԱՅ ՏՈՒՆ ՊԻ ՄԷՋ [illegible]

2— ՄԱՅԱՆ ԱՐՊԵՆԱՒՈՒՆ. [illegible]

3— ՍՈՒՐԲ ԱՍՊԵՏԱՐԱՆ. [illegible]

4— [illegible]

5— ՀԱՅԵՐԷՆ Ի ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՍՈՒՐԲԵՐԷՆ [illegible] 1000 [illegible]

6— ԷՍԹԵՐԻՆ. [illegible]

7— [illegible]

8— [illegible]

9— [illegible]

10— [illegible]

11— [illegible]

ԳԻՆԻ [illegible] — [illegible]

[illegible]